

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>


E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՉԻԿ ՄՍԻՐԱՐՅԱՆ



ԸՆԿՉԱՆՈՒՐ Մ  
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի. Ի. Կ. Ժ  
1989

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՆՍԱՐԱՆ

ԱՐՁԻԿ ՄԻՒԹԱՐՅԱՆ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՇՈՒԹՅԱՆ ՈՒԹՅՈՒՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

50.087

Ատեփանակերտ  
2010

ՀՏԴ 159.9 (07)  
ԳՍԴ 88 ց 7  
Մ 793

Գիրքը տպագրվել է ԱրՊՀ գիտական  
խորհրդի երաշխավորությամբ

Գրախոս՝ **Ա. Զ. Արզումանյան**

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Երևանի հ. Աբովյանի անվան ՊՍՀ

Խմբագիր՝ Գ.Գ. Մուսայեյան  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մխիթարյան Արզիկ  
Մ 793 Ընդհանուր հոգեբանություն: Ռես. ձեռնարկ/  
Արզիկ Մխիթարյան: Խմբ.՝ Գ.Գ. Մուսայեյան: ԱրՊՀ.-  
Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2010.- 256 էջ+8 էջ ներդիր:

Սույն ուսումնական ձեռնարկն ընդգրկում է ընդհանուր հոգեբանության հիմնական թեմաները: Այն կթգնի կրթական նոր՝ կրեդիտային համակարգում սովորող ուսանողին՝ ձեռքի տակ ունենալու ուսումնական ծրագրին համապատասխան դասախոսությունների շարք:

Ձեռնարկը հեղինակի բուհական 40-ամյա գործունեության ու փորձի արդյունքն է, որը նախատեսվում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի համակարգում սովորող ուսանողների և հոգեբանության հարցերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 159.9 (07)  
ԳՍԴ 88 ց 7

ISBN 978-99941-2-487-9

© Մխիթարյան Արզիկ, 2010թ.

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Աշխարհի գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական սրընթաց զարգացումը նոր ու յուրատիպ պահանջներ է ներկայացնում բուհական կրթական համակարգին, և մասնագիտացնող բազում առարկաների (մոդուլների) շարքում առանձնահատուկ նշանակություն է ստանում հոգեբանություն գիտությունը՝ հոգեբանական գիտելիքների իմացությունն ու կիրառությունը:

Խորհրդային տոտալիտար պետության հզոր ճնշման տակ ձեւախեղված գիտությունները, որոնք ժամանակին կրել են իշխող գաղափարախոսության կնիքը, այսօր փորձում են ետ բերել կորցրածը և մտնել համաշխարհային գիտական նվաճումների չափորոշիչների դաշտ: Այս ձեռնարկով փորձ է արվում անկաշկանդ ներկայացնել գիտության արդի նվաճումներին համահունչ ընդհանրացումներ՝ հենվելով հոգեբանական գիտության նորագույն ուսումնասիրությունների ու առկա մեծաքանակ գրականության վրա:

Հրատարակի վրա հոգեբանական գրականության պակաս չկա, գոյություն ունեն հայրենական ու արտերկրի հոգեբանների բազում դասագրքեր, ուսումնական-մեթոդական ձեռնարկներ ու ժողովածուներ, սակայն սույն ձեռնարկում լուսաբանվում են ընդհանուր հոգեբանության ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական թեմաները, որոնք ներկայացված են բավականին հակիրճ, մատչելի լեզվով, առանց նյութի ամհարկի ծանրաբեռնվածության: Այն հասցեագրվում է բուհական նոր կրեդիտային համակարգում սովորող ուսանողներին, որոնք պետք է տիրապետեն մարդու հոգեկան երևույթների ուսումնասիրության հարուստ տվյալներին, ծանոթ լինեն բուն

զարգացում ապրող հոգեբանության արդի միտումներին ու լավ հասկանան տեսական նյութի գործնական կիրառության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը:

Ժամանակակից եռաստիճան կրթական համակարգում սովորող ուսանողը կստանա ընդհանուր հոգեբանության տեսական կարևոր հարցերի կոնկրետ պատասխաններ, ինչն, անկասկած, կբարձրացնի ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Մեր գոհունակությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդին, ռեկտորատին և բոլոր նրանց, ովքեր նպաստել են ձեռնարկի հրատարակմանը: Միաժամանակ պատրաստական ենք ընդունելու բոլոր այն առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են ծնվել ձեռնարկն օգտագործելու ընթացքում:

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

### ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

#### ԹԵՄԱ 1. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հոգեբանության առարկան
2. Հոգեբանության նպատակները
3. Հոգեկանի իդեալիստական և մատերիալիստական ըմբռնումները
4. Հոգեբանության խնդիրները

#### ✓ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Մարդը և նրա հոգեկանը բավականին բարդ ու բազմաբնույթ երևույթներ են:

Մարդկության գոյության ընթացքում ձևավորվել են մարդուն ուսումնասիրող բազմաթիվ գիտություններ՝ մարդաբանություն, կենսաբանություն, մշակութաբանություն, պատմություն, սոցիոլոգիա և այլն:

Մարդու հոգեկանի օրինաչափությունների, դրսևորման առանձնահատկությունների և արտաքին աշխարհի հետ նրա հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվում է հատուկ մի գիտություն՝ հոգեբանությունը:

«Հոգեբանություն» բառն առաջացել է հունարեն «psuxē» (հոգի) և «լոգոս» (գիտություն, ուսմունք) բառերից:

Հոգեբանության ուսումնասիրության առարկան մարդն է՝ գործունեության սուբյեկտը, նրա ինքնակառավարման համակարգային որակները, հոգեկանի ձևավորման ու դրսևորման օրինաչափություններն ու կենսաբնախոսական հիմքերը:

Հոգեբանություն գիտությունն ուսումնասիրում է.

- Հոգեկան ծագման և զարգացման առանձնահատկությունները:

- Մարդու գիտակցությունը, որը համարվում է հոգեկան զարգացման ամենաբարձր մակարդակը:

- Հոգեկան երևույթների պայմանավորվածությունը կենսաբանախոսական և սոցիալ-պատմական գործոններով:

- Հոգեկան երևույթների գործունեության ներդրող գիտական հիմքերը:

- Մարդու հոգեկանի կառուցվածքը:

- Հոգեկան երևույթների ձևավորման օրինաչափությունները:

- Իմացական և հուզականային երևույթներն արտացոլող-կարգավորող գործընթացների էությունը:

- Անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները:

- Մարդու վարքի առանձնահատկությունները սոցիալական միջավայրում:

- Մարդու գործունեության կոնկրետ տեսակների հոգեբանությունը:

Հոգեբանական գիտելիքները պետք են մարդուն այլ մարդկանց հետ հարաբերությունների կարգավորման, սեփական հոգեկան երևույթների վերլուծության, ինքնագիտակցության ու ինքնակառավարման և սեփական անձի զարգացման ու կատարելագործման համար:

Պատահական չէ, որ հնագույն մտածողները շեշտել են. «Ծանաչիր ինքդ քեզ»:

Հոգեբանական գիտելիքներ անհրաժեշտ են ամենուրեք, որտեղ անհրաժեշտ է մարդու հոգեկան ներուժի արդյունավետ օգտագործում:

Հոգեբաններ սպասվում են ամեն տեղ՝ դպրոցներում, հիվանդանոցներում, վերականգնողական կենտրոններում, արտադրության մեջ, տիեզերագնացության, սոցիոլոգիական վերլուծությունների կենտրոններում, կառավարման համակարգերում ու իրավապահ մարմիններում:

Ժամանակակից կյանքի գերլարվածությունն առաջացնող սթրեսորների առկայությունը, որոնք դրսևորվում են տեռորի, ահաբեկությունների, լոկալ պատերազմների, երկրաշարժների և բնական այլ աղետների ընթացքում, անհրաժեշտություն է առաջացնում, որ փրկարարների, բժիշկների և օգնող այլ մասնագետների հետ առաջիններից մեկն օգնության հասնի հոգեբանը: Իսկ ընտանեկան դաստիարակության և ուսումնական գործընթացի ողջ հաջողությունն, անկասկած, պայմանավորված է մարդու հոգեկանի, առավել ևս երեխայի տարիքային-անհատական առանձնահատկությունների իմացությամբ, որն անհնար է առանց հոգեբանական գիտելիքների:

Այսպիսով կարող ենք ասել, որ հոգեբանությունն ուսումնասիրում է օբյեկտիվ աշխարհի արտացոլման և հուզական ապրման այն բարդ ձևերը, որոնք, զարգանալով մարդկության պատմության ընթացքում, յուրաքանչյուր մարդու կողմից ձեռք են բերվում օնտոգենետիկական (անհատական) զարգացման ընթացքում և իրագործվում են ուղեղի կողմից:

### ✓ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հարց է ծագում, որո՞նք են գիտական հոգեբանության նպատակները: Թերեւս կարող ենք մշել այդ նպատակներից առավել կարևորները.

1. Ուսումնասիրել և նկարագրել հոգեկան կյանքի երևույթները:
2. Հասկանալ այդ երևույթները և կարողանալ բացատրել դրանք:
3. Կանխատեսել մարդու վարքը, նրա հոգեկան վիճակներն ու ներհոգեկան գործընթացները:
4. Վերահսկել և փոխել մարդու հոգեկան երևույթների դրսևորումները, հատկապես՝ վարքը:

Գիտական հոգեբանությունը հենց այս տրամաբանությամբ է ձևակերպում իր նպատակները, քանի որ հոգեկան երևույթի կանխատեսման և արդյունավետ վերահսկողության կամ վերա-

փոխման ու զարգացման համար անհրաժեշտ են այդ երևույթի ուսումնասիրություն, նկարագրություն, նրա լրիվ ըմբռնում ու բացատրություն: Առօրյա կյանքում ևս մարդիկ այս նպատակն են դնում, երբ փորձում են հասկանալ իրենք իրենց, այլ մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունները, բախումներն ու հոգեբանական այլ երևույթներ:

Ի տարբերություն ոչ մասնագետի՝ հոգեբանը, օգտագործելով գիտական մեթոդներ, հետևողական ուսումնասիրություններ է կատարում և հավաստի փաստերի հիման վրա հանգում երևույթին աղեկվատ եզրակացությունների: Նա փորձում է կատարելագործել ուսուցման և դաստիարակության գործը, մեծացնել աշխատանքի արտադրողականությունը, նվազեցնել հանցագործությունների թիվը, օգտակար փոփոխություններ մտցնել մարդկանց վարքում և հասարակական կյանքում:

Հոգեբանության նշված նպատակներն օգտակար են ոչ միայն առանձին անհատների, այլև ողջ հասարակությանը:

### ✓ **ՀՈԳԵԿԱՆԻ ԻԴԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՐՆՈՒՄՆԵՐԸ**

Վաղնջական ժամանակներից գոյություն ունեն հոգեկանի ըմբռնման տրամագծորեն երկու տարբեր ուղղություններ՝ իդեալիստական և մատերիալիստական:

Ըստ իդեալիստների հոգեկանն առաջնային, մատերիայից անկախ գոյություն ունեցող **գոյի** դրսևորումն է, և նրա ուսումնասիրությանը չի կարելի մոտենալ այնպես, ինչպես նյութականի ուսումնասիրությանը: Նրանք գտնում են, որ հոգեկան երևույթներում պատճառական բացատրություններ փնտրելը ճիշտ չէ, որովհետև իր բնույթով հոգեկանը խիստ տարբեր է բնության մյուս երևույթներից:

Իդեալիստները համոզված են, որ հոգեկանը սուբյեկտիվ կյանքի դրսևորում է և մատչելի չէ գիտական պատճառահետևանքային բացատրության. այն բացահայտվել կարող է միայն **ներհայեցողության** միջոցով:

**Մատերիալիստներն**, ընդհակառակը, առաջնային են համարում նյութը, մատերիան, իսկ հոգեկանը՝ երկրորդային, նյութական գործընթացների ֆունկցիա: Ըստ նրանց՝ հոգեկանն առաջ է գալիս մատերիայի զարգացման որոշակի մակարդակում, երկրի վրա կենդանի օրգանիզմների առաջ գալու հետ միասին և այն **օբյեկտիվ** աշխարհի **սուբյեկտիվ** արտացոլումն է:

Ժամանակակից մատերիալիստական հոգեբանությունը գտնում է, որ մարդու հոգեկանին բնորոշ է նաև ներհոգեկան գործընթացների և ակտիվության մեխանիզմների առկայությունը (դրդապատճառներ, որոնողական ակտիվություն, ապագայի կանխատեսում, գործողությունների նախնական պլանի մշակում և այլն):

Բնագիտական փաստերն ու ուսումնասիրությունները հաստատում և հիմնավորում են հոգեկանի մատերիալիստական ըմբռնումներն այն մասին, որ, ուղեղի ակտիվությունից անկախ, հոգեկան երևույթների գոյությունն անհնար է: Սակայն ենթագիտակցության, երազների, կլինիկական մալիվան և մերձհոգեկան երևույթների ուսումնասիրությունը մատերիալիզմի դիրքերից համոզիչ բացատրություն չի ստանում:

### ✓ **ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հոգեբանության հիմնական խնդիրները հոգեկան գործունեության օրինաչափությունների ուսումնասիրությունն են՝ նրանց զարգացման գործընթացում:

Հոգեբանական օրենքների ուսումնասիրությունը նպատակ ունի պարզելու հոգեկան երևույթների կախվածությունը կյանքի պայմաններից և մարդու գործունեությունից: Բայց մարդու ամեն մի գործունեություն անխուսափելիորեն կախված է ոչ միայն կյանքի օբյեկտիվ պայմաններից, այլև այդ գործունեության սուբյեկտիվ փոխհարաբերություններից, կատարվող աշխատանքի նկատմամբ նրա վերաբերմունքից, գիտելիքներից, կարողություններից, հմտություններից, առհասարակ, անձնական կենսափորձից:

Հոգեկան երևույթների և մարդու կյանքի ու գործունեության օրի-

նաչափ կապերը պարզելու համար հոգեբանությունը բացահայտում է նաև այդ կապերի բնախոսական հիմքերը:

Իր առջև դրված խնդիրները լուծելիս (հոգեբանությունը դիմում է հարակից գիտություններին, առաջին հերթին փիլիսոփայությանը և բարձրակարգ նյարդային գործունեության բնախոսությանը: Փիլիսոփայության ընդհանուր օրենքներն ու օրինաչափությունները մեթոդաբանական հիմք են ծառայում հոգեբանության համար, իսկ հոգեբանության և բարձրակարգ նյարդային գործունեության բնախոսության կապը որոշվում է առաջին հերթին նրանով, որ երկուսն էլ հետազոտում են միևնույն օրգանը՝ ուղեղը: Սակայն նրանք այդ օրգանի գործունեությունն ուսումնասիրում են տարբեր տեսանկյուններից: Բարձրակարգ նյարդային գործունեության բնախոսությունը հետազոտում է ուղեղի ռեֆլեկտոր գործունեության օրենքները) չանդրադառնալով սուբյեկտիվ երևույթների (զգայություններ, մտապատկերներ, զգացմունքներ և այլն) վերլուծությանը: Մինչդեռ հոգեբանությունը հետազոտում է հենց այդ սուբյեկտիվ երևույթների ձևավորման, զարգացման ու դրսևորման օրինաչափությունները:

Հոգեբանությունը սերտորեն կապված է մարդաբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի, ազգագրության, տրամաբանության և այլ գիտությունների հետ ու գնալով մեծանում է նրա գործնական նշանակությունը: Հոգեբանությունն անմիջականորեն ծառայում է անձի ձևավորման, նրա ուսուցման և դաստիարակության գործին: Ուսումնասիրելով հոգեկան երևույթների օրենքները հոգեբանությունը բացահայտում է մարդու հոգեկան գործունեության, անձի հոգեկան հատկությունների ձևավորման ուղիներն ու եղանակները: Դրանով իսկ այն գործնական օգնություն է ցույց տալիս ձևավորվող մարդու կրթության ու դաստիարակության գործին:

Հոգեբանությունն օգնում է մարդուն ինքնադաստիարակության գործընթացում սեփական թերությունների վերացման և իր մեջ անձնային դրական հատկանիշներ զարգացնելու համար:

Հոգեբանությունը մեծ նշանակություն ունի գործունեության այլ բնագավառներում: Նրա օրինաչափությունների իմացումը կարևոր

դեր է կատարում տարբեր ասպարեզներում աշխատանքի կազմակերպման, մոր տեխնիկայի և աշխատանքի առաջավոր մեթոդների յուրացման գործում, մասնագիտական կողմնորոշման մեջ և այլն: Արվեստի տարբեր բնագավառներում (երաժշտություն, կերպարվեստ և այլ), ինչպես նաև գեղարվեստական գրականության մեջ մեծ է գեղարվեստական ստեղծագործության հոգեբանական հետազոտությունների դերը:

Հոգեբանական հետազոտություններն օգտագործվում են նաև բժշկական պրակտիկայում: առանձնապես խոսքը վերաբերում է մարդու հոգեկան գործունեության խանգարումների և դրա վերականգնման պայմանների ուսումնասիրությանը:

Հոգեբանական գիտությունը, բացի ընդհանուր հոգեբանությունից (որն ուսումնասիրում է հոգեկան երևույթների ընդհանուր օրինաչափությունները), ունի մի շարք ճյուղեր, որոնք ելնում են տարբեր բնագավառներից և ունեն իրենց որոշակի խնդիրները:

**Մանկան հոգեբանություն**, որն ուսումնասիրում է մանկան հոգեկան զարգացման տարիքային առանձնահատկությունները:

**Մանկավարժական հոգեբանություն**ն ուսումնասիրում է ուսուցման և դաստիարակության գործընթացում սովորողների կողմից գիտելիքների յուրացման, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման, մշակման, ինչպես նաև անձի ձևավորման օրինաչափությունները:

Հոգեբանության հատուկ բնագավառներ են խուլ ու համր, կույր և մտավոր հետամնաց երեխաների հոգեբանությունն ուսումնասիրող ճյուղերը՝ **սուրդոհոգեբանությունը, տիֆլոհոգեբանությունը, օլիգոֆրենոհոգեբանությունը:**

**Աշխատանքի հոգեբանություն**ն ուսումնասիրում է մարդու աշխատանքային գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Աշխատանքի հոգեբանության հետ սերտորեն կապված է ինժեներական հոգեբանությունը: **Ինժեներական կամ ճարտարագիտական հոգեբանություն**ն ուսումնասիրում է գլխավորապես կառավարման ավտոմատացված համակարգում օպերատորի գործունեությունը, ինչպես նաև մարդու և մեքենայի



միջև գործառույթների բաշխման, համաձայնեցման հիմնախնդիրները:

Ներկայումս նույնպիսի ինքնուրույն դերով են հանդես գալիս նաև **ավիացիոն հոգեբանությունը**, որն ուսումնասիրում է օդաչուների գործունեության հոգեբանական առանձնահատկությունները և **տիեզերական հոգեբանությունը**, որը հետազոտում է տիեզերական թռիչքների պայմաններում մարդու գործունեության հոգեբանական առանձնահատկությունները:

Հոգեբանության ճյուղերը բազմաթիվ են, որոնցից են **բժշկական, արվեստի, կրոնի, սպորտի, ռազմական, դատական, սոցիալական, ազգային, տարիքային, համեմատական հոգեբանությունները**:

## **ԹԵՄԱ 2. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1. Հոգեբանության սկզբունքները
2. Հոգեբանության մեթոդները

### **✓ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ**

Ժամանակակից հոգեբանական գիտությունը, ի մի բերելով գոյություն ունեցող գիտական ուսումնասիրությունները, տարբերակում է հոգեբանության **հետևյալ հիմնական սկզբունքները**.

1. Հոգեկանի դետերմինավորվածության (պատճառահետևանքային պայմանավորվածություն) սկզբունք:
2. Հոգեկան երևույթների ուսումնասիրության ժառանգական գործոնի հաշվառման սկզբունք:

3. Գիտակցության և գործունեության միասնության սկզբունք:

4. Կենսաբանական և սոցիալական գործոնների ներգործության հաշվառմամբ հոգեկանի ուսումնասիրության սկզբունք:

Ժամանակակից գիտական հոգեբանությունը ելնում է հոգեկանի կենսաբանախոսական միասնության սկզբունքից: Հոգեկանը, պահպանելով իր որակային առանձնահատկությունները, ունի նյութական, նեյրոֆիզիոլոգիական, կենսաբանախոսական հիմք:

Աշխարհի արտացոլումը մարդու հոգեկանում դուրս է գալիս ուղեղի կառուցվածքի երևույթների սահմանից՝ պայմանավորվելով արտաքին փոխներգործություններով, որոնք հատուկ են տվյալ մարդուն: Հոգեկան գործունեությունն ուղեղի պասսիվ արդյունք չէ, այլ մարդու և աշխարհի ակտիվ փոխհարաբերության արտահայտություն<sup>1</sup>:

Կենսաբանական էակից հասարակական-պատմական բնույթի գործունեության անցնելով սկզբունքային փոփոխության է ենթարկվում մարդու հոգեկանը՝ ձեռք բերելով գիտակցության բնորոշ

1. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, «Հոգեբան», 1997թ.

գծեր, ինչը պայմանավորված է մարդկության հասարակական-պատմական փորձի յուրացմամբ: Մարդու հոգեկան ինքնակարգավորման հզոր միջոց է դառնում մարդկության ձևավորած հոդաբաշխ, նշանային համակարգը՝ խոսքը:

Մարդու գիտակցությունը, նրա հոգեկանը դառնում է ոչ թե կենսաբանական, այլ հասարակական-պատմական, սոցիալականորեն դետերմինավորված երևույթ<sup>2</sup>:

### ✓ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հոգեբանությունը, ինչպես ցանկացած այլ գիտություն, կարող է հաջողությամբ զարգանալ միայն այն դեպքում, եթե ունի փաստերի ձեռքբերման, վերլուծման ու ստուգման բավականաչափ հուսալի մեթոդներ:

Հոգեկանը ճիշտ կարելի է բացատրել միայն մարդու գործունեության օբյեկտիվ հետազոտության միջոցով: Օբյեկտիվ ուսումնասիրության հիման վրա, հոգեկան գործընթացների այս կամ այն կողմի հետազոտության խնդիրներին ու նպատակներին համապատասխան, օգտագործվում են մի շարք մեթոդներ:

Հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդներն են դիտումն ու գիտափորձը:

**Դիտման մեթոդի** էությունն այն է, որ հետազոտողը պարբերաբար, պլանաչափորեն հետևում, դիտում է մարդու գործողությունները, որոնք կարող են տեղեկություն տալ այս կամ այն հոգեկան երևույթի մասին:

Սովորաբար դիտումը կատարվում է հետազոտվողի կյանքի բնական պայմաններում առանց նրա գործունեության ընթացքի վրա ազդելու կամ միջամտելու (սրանով նա նմանվում է բնական գիտափորձին):

Դիտումը թույլ է տալիս ուսումնասիրել մարդու բնավորության,

2. Լեոնտև Ա. Ա., «Հոգեկանի զարգացման պրոբլեմները», Երևան, «Լույս» հրատ., 1968թ.

հետաքրքրությունների, ընդունակությունների ձևավորումը և դրանց փոփոխությունները: ՝

Դիտման մեթոդի դրական կողմն այն է, որ ուսումնասիրության նյութը վերցվում է կյանքից: Թերությունն այն է, որ դիտումը միշտ չէ, որ հնարավորություն է տալիս օրինաչափ փաստերից անջատել պատահական երևույթները; իսկ հաճախ էլ դիտման միջոցով ստացված փաստերը մեկնաբանվում են սուբյեկտիվորեն:

**Հոգեբանական գիտափորձը** հետազոտողին հնարավորություն է տալիս ոչ թե պասսիվ դիտել, այլ ակտիվորեն միջամտել և, գիտափորձի խնդիրներին համապատասխան, արհեստականորեն առաջ բերել պահանջվող հոգեկան երևույթ: Փորձարարը միևնույն փորձը բազմաթիվ անգամ կրկնելով՝ կարողանում է բացահայտել հոգեկան երևույթի պատճառահետևանքային կապերը և հետևել նրա ընթացքին:

Հոգեբանության մեջ ընդունված է գիտափորձի (էքսպերիմենտ) երկու տեսակ՝ լաբորատոր և բնական: Լաբորատոր գիտափորձը հնարավորություն է տալիս անհամեմատ ավելի ստույգ հաշվառել ուսումնասիրվող ազդեցությունները (գրգռիչների ուժը, տևողությունը, հաջորդականությունը և այլն) և մարդու պատասխան հակազդումները: Օրինակ՝ զգայության կամ ըմբռնման ուսումնասիրության ժամանակ ստույգ հաշվի են առնվում գրգռիչների ուժը, հաջորդականությունն ու տևողությունը, ինչպես նաև տարբեր զգայարանների պատասխան ռեակցիան: Հիշողության ուսումնասիրության ժամանակ հաշվի են առնվում մտապահվող նյութի քանակն ու որակը, մտապահման եղանակները և այլն:

Լաբորատոր գիտափորձի համար ուսումնասիրության նոր, մեծ հնարավորություններ են ստեղծվել՝ պայմանավորված օրգանիզմի բիոհոսանքների, ինչպես և ուղեղի էլեկտրական հոսանքների հետ կապված բնախոսական ռեակցիաները բացահայտող նորագույն սարքավորումների օգտագործմամբ: Առանձնապես մեծ նշանակություն ունեցավ էլեկտրաուղեղագրիչի օգտագործումը հոգեբանական գիտափորձում:

Բնական գիտափորձը կատարվում է սովորական, փորձարկվո-

դի գործունեության բնական պայմաններում, երբ փորձարարը բնականին մոտ պայմաններ է ստեղծում: Եվ ինչպես լաբորատոր, այնպես էլ բնական գիտափորձի ժամանակ պայմանները փոխելու կամ բազմաթիվ անգամ կրկնելու միջոցով փորձարկողը հասնում է օբյեկտիվ արդյունքի: Չնայած բնական գիտափորձն իր մեջ միավորում է դիտման և լաբորատոր գիտափորձի առավելությունները, այնուամենայնիվ, նրա տվյալներն ավելի թերի են, քան լաբորատոր գիտափորձի, ուստի այն սովորաբար լրացվում է լաբորատոր գիտափորձի տվյալներով:

Հոգեկան գործունեության բնական դրսևորման պայմաններ կարող են ծառայել պարապմունքը կամ խաղը: Փորձարարը դիտում է փորձի ընթացքում հոգեկան գործունեության դրսևորումները և մանրամասն գրանցում դրանք: Սակայն բնական գիտափորձը հաջողություն կունենա լուրջ այն դեպքում, եթե փորձարկվողը չիմանա, որ իրեն ուսումնասիրում են: Միայն այս դեպքում հոգեկան գործընթացները կարող են բնական դրսևորումներ ունենալ:

Հոգեբանական հետազոտության ավանդական մեթոդներից է գրույցը, որը զուգակցվում է բնական կամ լաբորատոր գիտափորձի հետ և լրացնում գիտափորձի տվյալները: Հոգեբանական գրույցը մարդկանց առօրյա գրույցներից տարբերվում է հետազոտության նպատակի հստակ գիտակցմամբ և պլանի առկայությամբ:

Հարցաթերթիկը (անկետա) իրենից ներկայացնում է գրավոր հարցերի խումբ, որը ներկայացվում է ուսումնասիրվող մարդկանց որոշակի հոգեբանական խնդիրներ պարզաբանելու համար:

Հոգեբանության մեջ օգտվում են կենսագրական մեթոդից: Կենսագրական նյութերի, բնութագրերի, օրագրերի, նամակների ու հուշագրությունների միջոցով բացահայտվում են մարդու հոգեկանի այս կամ այն յուրահատկությունները:

Ժամանակակից հոգեբանությունը, բացի հետազոտական, զուտ գիտական պրոբլեմներից, կոչված է լուծելու նաև կյանքի տարբեր բնագավառներում առաջ եկող բազմաթիվ գործնական խնդիրներ: Օրինակ՝ անհրաժեշտ է լինում պարզել, թե այս կամ այն մասնագի-

տությանը հաջողությանը աշխատելու համար մարդիկ (հավանական թեկնածուները) ունե՞ն, արդյոք, անհրաժեշտ գիտելիքներ, ընդունակություններ, հետաքրքրություններ, խառնվածքի և բնավորության գծեր:

Նման դեպքերում պետք է գործադրվեն այնպիսի մեթոդներ, որոնց օգնությամբ հնարավոր է կարճ ժամանակահատվածում պարզել անձի մեջ այս կամ այն ընդունակության, հմտության, անձնային գծերի առկայությունը, նրանց անհատական առանձնահատկությունները, ինքնագիտակցության զարգացման մակարդակը, դիրքորոշումները, վարքի բնորոշ ձևերը:

Շատ կարևոր են նաև փորձարկվողների ապագա հաջողությունների մակարդակը կանխատեսելու հնարավորությունները: Հենց այդպիսի մեթոդներն են հոգեբանական թեստերը («թեստ» անգլերեն բառ է, որ նշանակում է կարճատև փորձարկում, ստուգում), որոնցից մի քանիսը ներկայացված են ձեռնարկում:

Անձի ուսումնասիրման համար օգտագործվում է նաև մեթոդների մի այլ խումբ, որոնք կոչվում են պրոյեկտիվ մեթոդներ: Այդպես են կոչվում, որովհետև դրանց հիմքում ընկած է հոգեբանական պրոյեկցիայի երևույթը: Այդ մեթոդները և թեստերը կառուցվում են այնպես, որ ուսումնասիրվող անձինք, ենթագիտակցորեն օգտագործելով պրոյեկցիայի մեխանիզմը, դրսևորեն անձի այնպիսի գծեր, որոնք այլ մեթոդներով չեն կարող բացահայտվել: Հիմնական պրոյեկտիվ մեթոդներն են՝ Ռորշախի թեստը և թեմատիկ ավերցեպցիայի թեստը (ԹԱԹ):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում սոցիոմետրական մեթոդը, որը նախատեսված է հատկապես ներխմբային փոխհարաբերություններն ուսումնասիրելու համար:

Պետք է նկատի ունենալ, որ հոգեբանական շատ հետազոտություններ համալիրային են և իրականացվում են վերոհիշյալ և այլ մեթոդների զուգակցմամբ:

ԳԵՂՅ

### ԹԵՄԱ 3. ՀՈԳԵԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՑՈՒՄ

1. Հոգեկան, մարդու հոգեկանը
2. Հոգեկան պատկերներ, գիտակցություն
3. Հոգեկանի գիտական մեկնաբանությունը

#### ✓ ՀՈԳԵԿԱՆ, ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԿԱՆԸ

Հոգեբանությունն առարկայի և նրա խնդիրների մասին պատկերացում կազմելու համար պետք է պարզել, թե ինչ է հոգեկանը (պսիխիկա):

Հոգեբանները գտնում են, որ մարդու, ինչպես նաև կենդանիների հոգեկանն իրենից ներկայացնում է արտացոլում և ապրում:

[Մարդը, ապրելով հասարակական միջավայրում, ստանում է տեղեկություններ, ինֆորմացիա, որոնք նրա հոգեկանում ձևավորվում են իբրև **հոգեկան պատկերներ**, որոնք իրենցից ներկայացնում են աշխարհի առարկաների ու իրադարձությունների, ինչպես նաև սեփական անձի արտացոլումներ:]

[Այդ արտացոլումներն իրագործվում են առաջին հերթին պարզագույն իմացական գործընթացի՝ զգայարանների օգնությամբ, իսկ այնուհետև այդ ինֆորմացիան մշակվում է բարձրագույն գործընթացների՝ մտածողության և երևակայության ոլորտում] Հետևաբար, ուսումնասիրության առարկա են դառնում ոչ միայն հոգեկան արտացոլման արդյունքները, այլև այն գործընթացները, որոնք օգնությամբ այդ արդյունքները (մտապատկերներ ու մտքեր) ձեռք են բերվում:

[Հոգեկան պատկերները երկուսն են.

1. **սկզբնական** (զգայական և ըմբռնողական) պատկերներ,
2. **երկրորդային** (երկրորդ մակարդակի). դրանք հիշողության, մտածողության և երևակայության պատկերներն են:]

Հոգեկան պատկերները կրում են առարկաների ու երևույթների տարածության մեջ լոկալիզացիայի (տեղայնացում) ինֆորմա-

ցիան: Այդ պատկերների մեջ արտահայտվում են արտացոլվող օբյեկտի էական հատկությունները՝ ձևը, գույնը, տարածական մեծությունը և այլն:

Հոգեկան պատկերը չի կարող առաջանալ միանգամից իբրև լուսանկարչական արտացոլում. այն ձևավորվում է հոգեկան ակտիվ կառուցողական գործընթացով:

Այդ գործընթացում մեծ դերակատարություն ունեն շարժողական, կենսամեխանիկական մեխանիզմները: Շարժումն ստեղծում է պատկերի կմախքը, իսկ պատկերն այնուհետև ապահովում է շարժումը:

Մարդն արտացոլում է ոչ միայն շրջապատող աշխարհը, այլև ինքն իրեն, որը գիտակցությամբ օժտված մարդու բնորոշ առանձնահատկությունն է:

[Ինքնարտացոլումը հանգեցնում է **ինքնագիտակցության** ձևավորմանը, որպիսին, ըստ գիտական ուսումնասիրությունների, կենդանիները չեն կարող ունենալ:]

[Կարևորն այն է, ~~սակայն~~, որ մարդը ոչ թե պարզապես արտացոլում է շրջապատի աշխարհը, այլև որոշակի **վերաբերմունք** է ցուցաբերում այդ ընկալածի նկատմամբ:]

Այդ վերաբերմունքը նրա հոգեկանում դրսևորվում է ոչ միայն իմացական, այլև հուզական, զգացմունքային ձևերով:

Արտացոլելով աշխարհն ու սեփական անձը՝ դրսևորում ենք որոշակի վերաբերմունք և ապրում զգացմունքներ և հույզեր: Երբ հոգեկանը բնորոշում ենք իբրև **արտացոլում և ապրում**, նշանակում է՝ **ընդգրկում** ենք հոգեկան երևույթների այն հսկայական բազմազանությունը, որոնք կազմում են մարդու հոգեկան ակտիվության դրսևորումները:

[Այսպիսով, հոգեբանության ուսումնասիրության **օբյեկտը** մարդն է, իսկ **առարկան**՝ մարդու հոգեկան կյանքը:] հոգեկան ակտիվության ձևերը, դրանց օրինաչափություններն ու մեխանիզմները:

**Գիտակցությունը** աշխարհի և սեփական անձի՝ գիտելիքների ձևով արտացոլման մարդու ընդունակությունն է, որը հատուկ չէ կենդանական աշխարհի այլ տեսակների:

Մարդու հոգեկանը ձևավորվում է իբրև հատուկ ձև՝ գիտակցություն, սակայն գիտակցությունը չի կարող ամբողջապես ներառել ողջ հոգեկանը: Գիտակցության հետ մեկտեղ մարդն օժտված է նաև կենսաբանախոսական ձևավորման հոգեկան կառուցվածքով (մարդու ժառանգական անգիտակցական հոգեկան գործընթացներ), ինչպես նաև կյանքի ընթացքում ձեռք բերված ավտոմատացված հզոր հնարավորություններով (ենթագիտակցության ուղրտ):

**Հոգեկանի մեկնաբանությունը:** Հոգեկանը ծագել է մատերիալի զարգացման որոշակի փուլում իբրև կենդանի օրգանիզմների արտացոլող-հարմարվող վաղրի արտահայտություն) Կենդանական աշխարհի զարգացման ընթացքում զարգացել է նաև նրանց հոգեկանը:

Հոգեկան զարգացումն ունի սեմսորային (տրոպիզմների), բնագղային վարքի, բանականության ու մարդկային գիտակցության մակարդակներ:

**Մարդու գիտակցությունը** հոգեկանի բարձրագույն ձևն է, որը ձևավորվում է հասարակական փոխհարաբերություններում՝ աշխատանքային գործունեության շնորհիվ:

Հոգեկանն ըմբռնվում է որպես արտացոլում եւ ապրում: Նրան բնորոշ են ներքին շարժիչ ուժերը, ներհոգեկան գործընթացները, որոնք թույլ են տալիս մարդուն կառավարել ու կարգավորել սեփական վարքը:

Մարդու հոգեկանը ձևավորվում է իր ակտիվ գործունեության մեջ, որն արտահայտվում է գործունեության ինտերիորիզացիայով և էքստերիորիզացիայով:

Հոգեկանը պայմանավորված է ուղեղի գործունեությամբ:  
Հոգեկան երևույթներն ունեն որոշակի կառուցվածք:

1. Հոգեկան գործընթացներ
2. Հոգեկան վիճակներ
3. Հոգեկան հատկություններ

Հոգեկան բոլոր երևույթները կապված են իրար և դրսևորվում են որպես մի ամբողջություն, իբրև յուրաքանչյուր մարդու հատուկ հոգեկան երևույթների մի առանձնահատուկ անսամբլ: Սակայն, սկսած դեռևս հին մտածողներից, ընդունված է կատարել հոգեկան երևույթների ավանդական բաժանում, ըստ որի այն դասակարգվում է 3 խմբի՝ հոգեկան գործընթացներ, հոգեկան վիճակներ և հոգեկան հատկություններ:

**1) Հոգեկան գործընթացներ**, որոնք արտահայտում են սուբյեկտի և արտացոլվող օբյեկտի միջև ակտիվ փոխներգործություն, որն ուղղված է օբյեկտի իմացությանն ու նրա հետ փոխհարաբերվելուն:

- Հոգեկան գործընթացները երեքն են.
  - ա) իմացական գործընթացներ՝ զգայություն, ըմբռնում, հիշողություն, մտածողություն և երևակայություն
  - բ) կամային գործընթացներ
  - գ) հուզական գործընթացներ:

Մարդու հոգեկան գործունեությունը իմացական, հուզականային գործընթացների ամբողջություն է, որն ապահովում է աշխարհի իմացությունը, անձի արտացոլող-կարգավորող գործունեությունը: Իմացական գործընթացները հինգն են՝ զգայություն, ըմբռնում, հիշողություն, մտածողություն, երևակայություն:

**2) Հոգեկան վիճակներ**, որոնք անձի հոգեկան գործունեության ընթացքի փոփոխվող տիպն են և ունեն ժամանակավոր առանձնահատկություն: Դրանք տարբերվում են հոգեկան գործունեության բովանդակությամբ և այդ բովանդակության նկատմամբ մարդու վերաբերմունքով:

- Հոգեկան վիճակները բաժանվում են.
  - ա) մոտիվային, որոնք պայմանավորված են պահանջմունքներ

րով. դրանք են՝ դիրքորոշումները, ձգտումները, հետաքրքրությունները, մղումները, կրթերը

բ) գիտակցության կազմակերպվածության վիճակ (ուշադրության ապահովում, աշխատունակություն և այլն)

գ) հուզական վիճակներ՝ հուզական տոն, տրամադրություն, սթրես, աֆեկտ, ֆրուստրացիա

դ) կամային վիճակներ՝ նախաձեռնողականություն, նպատակալացություն, վճռականություն, հաստատականություն, ինքնուրույնություն և այլն:

Առանձնաձևում են նաև սահմանային հոգեվիճակներ՝ հոգեզարություն, բնավորության ծայրահեղ ընդգծվածություն, ներդոներ, հոգեկան թերզարգացվածություն:

**3. Հոգեկան հատկություններ**, որոնք հատուկ են տվյալ մարդու հոգեկանին և նրա ինացական գործընթացներին:

Դրանք առաջ են եկել օնտոգենետիկական զարգացման, հոգեկան գործընթացների ու վիճակների կրկնությունների և ամրապնդումների հետևանքով, որոնք կարող են լինել ինացական ուղորտի, կամքի, բնավորության, խառնվածքի, ընդունակությունների առանձնահատկություններ:

Մարդու հոգեկան հատկություններն են.

ա) խառնվածք

բ) բնավորություն

գ) ընդունակություններ:

Հոգեկան երևույթներից յուրաքանչյուրը, որպես դինամիկ երևույթ, կարող է լինել և՛ գործընթաց, և՛ հոգեվիճակ, և՛ հատկության կամ անձի կայուն հատկությունների դրսևորում տվյալ իրադրության մեջ:

Անձն իրականացնում է ոչ թե առանձին հոգեկան երևույթներ, այլ ակտիվության կամ գործունեության բարդ ձևեր, որոնք ներառում են և հոգեկան գործընթացներ, և՛ հոգեկան վիճակներ, և՛ պահանջում են հոգեկան հատկությունների դրսևորումներ:

## ԹԵՄԱ 5. ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Արտացոլում
2. Գրգռականությունն իբրև արտացոլում
3. Վարքի զգայական մակարդակը
4. Բնագրային վարք

### ✓ ԱՐՏԱՑՈՒՄ

[Իր զարգացման ստորին աստիճաններում նյութը գոյություն ունի առանց հոգեկանի: Բոլոր անօրգանական նյութերն ու բույսերը զուրկ են հոգեկանից:] Նյութի զարգացման որոշակի աստիճանի վրա է առաջանում հոգեկանը: Այն երևան է գալիս կենդանիների մեջ և իր զարգացման բարձրագույն աստիճանին է հասնում մարդու մեջ:

Ի տարբերություն անօրգանականի օրգանական կենդանի նյութն իր զարգացման թեկուզև ամենաստորին աստիճաններում ունի **գրգռականության** հատկություն: Այդ օրգանիզմի պատասխան ռեակցիան է միջավայրի այն ներգործություններին, որոնք օրգանիզմի գոյության համար կարևոր նշանակություն ունեն:

Իրենց կենսունակությունն ապահովելու համար բոլոր կենդանի օրգանիզմները փոխհարաբերվում են աշխարհի հետ՝ սնունդ են հայթայթում, զգայում արտաքին միջավայրը, հարմարվողական վարք դրսևորում:

Հոգեկանի արտացոլող-կարգավորող գործունեությունը հասկանալու համար պետք է իմանալ, որ **արտացոլումը** մատերիայի համընդհանուր հատկությունն է:

Անկենդան բնությունը ևս ունի արտացոլման հատկություն, որը համարվում է մեխանիկական, ֆիզիկական արտացոլման երևույթ: Ժայռն էլ քայքայվում է անձրևի ու արևի ներգործությունից, սակայն դա կենդանի արտացոլում չէ:

Կենդանի օրգանիզմի արտացոլումը ենթադրում է միջավայրի հետ այնպիսի կապ, որի ընթացքում տեղի է ունենում նյութափոխանակություն. կենդանին արտաքին աշխարհից ասիմիլացնում, յուրացնում, սնվում է որոշակի նյութերով և արտազատում, դիսիմիլացնում է արտաթորանքը:

✓ [Հոգեկանով օժտված կենդանու հայտնվելը կապված է արտացոլման հատուկ երևույթի հետ, որն անվանում ենք **գրգռականություն:**]

[**Գրգռականությունը** հատուկ է ամեն մի կենդանի նյութի] Այն գոյություն ունի կենդանական և բուսական աշխարհում: Արտաքին գրգռիչն պատասխանելու ամենատարրական երևույթների հանդիպում ենք բույսերի, ինչպես և զարգացման ստորին աստիճանի վրա գտնվող կենդանիների մեջ: Օրինակ՝ հայտնի է բույսերի ձգտումը դեպի լույսը, արևը: Մեզ ծանոթ բույսերի մեջ այդ առումով բնորոշ է արևածաղիկը, որն օրվա ընթացքում պտտվում է արևի շարժմանը համապատասխան: Արտաքին գրգռիչն պատասխանում է նաև միաբջիջ կենդանին. նա շարժվում է դեպի գրգռը կամ հեռանում նրանից:

✓ **Վարքի զգայական մակարդակ:** Զարգացման ընթացքում գրգռականության հիման վրա առաջանում է մի նոր հատկություն՝ զգայությունը, այսինքն՝ զգայելու, օրգանիզմի վրա ներգործող առարկաների հատկություններն արտացոլելու ունակությունը<sup>3</sup>]:

Զգայությունը հոգեկանի զարգացման տարրական ձևն է: Այն առաջացել է կենդանիների զարգացման դեռևս այն աստիճանում, երբ նյարդային համակարգի միայն սաղմերն են եղել: Նյարդային համակարգի և հատկապես զգայարանների զարգացմամբ բարդանում է արտացոլման գործունեությունը: Կենդանիներն ի վիճակի են դառնում զգալու շրջապատի իրերի ու երևույթների ներգործությունը, ճանաչելու անցյալում տեսած առարկաները, վերակրկնելու անցյալում կատարած գործողությունները, ինչը թույլ է տալիս կենդանիներին՝ ավելի լավ հարմարվելու միջավայրին:

3. Սեչենով Ի.Ս., «Գլխուղեղի ռեֆլեքսները», Երևան, 1965թ.

Կենդանիների հոգեկանը նրանց նյարդային համակարգի գործունեության հատկությունն է: Այն զարգանում է կենդանիների գոյության պայմանների զարգացման հետ միասին: Օրինակ, հեռավորության վրա սննդի հոտն զգալու անհրաժեշտությունն արտակարգ մեծ չափերով զարգացրել է շան հոտառությունը: Ծառից ծառ, ճյուղից ճյուղ ցատկելու անհրաժեշտությունը զարգացրել է կապիկների ճիշտ աչքաչափը և այլն:

✓ **Բնազդային վարք:** Կենդանիների վարքում կարևորագույն դեր են կատարում բնազդները՝ անպայման ռեֆլեքսները, որոնք գոյանում են կենդանական տվյալ տեսակի բազում սերունդների կյանքի ընթացքում և կրում են ժառանգական բնույթ: Այդպիսին են, օրինակ, սարդի ոստայն գործելը, բջջի կառուցումը, խլուրդի՝ գետնափոր անցուղիների պատրաստումը, թռչունների բույն պատրաստելը և այլն: Անպայման ռեֆլեքսներն անհամեմատ ավելի հաստատուն բնույթ ունեն և հատուկ են կենդանիների տվյալ տեսակին:

Միջավայրի և պայմանների տևական փոփոխությունների հետևանքով փոփոխվում են նաև անպայման ռեֆլեքսները, բայց փոփոխության այդ գործընթացը տեղի է ունենում խիստ դանդաղ, մի շարք սերունդների կյանքի ընթացքում: Անպայման ռեֆլեքսների հիման վրա առաջանում են այս կամ այն պայմանական ռեֆլեքսները, որոնց շնորհիվ կենդանիները, միջավայրի փոփոխությանը համապատասխան, ձևափոխում են իրենց վարքը: Պայմանական ռեֆլեքսների առաջացման օրինակ է վարժեցումը, այսինքն՝ մարդու կողմից կենդանիներին նպատակադրված սովորեցնելը: Այսպես սովորեցնում են որսորդական շներին, կրկեսային զանազան կենդանիների, փոստային աղավիհներին և այլն:

Բարձրակարգ կենդանիների էվոլյուցիոն զարգացման գործընթացում տեղի է ունենում գլխուղեղի մեծ կիսագնդերի ինտենսիվ զարգացում, որի հետևանքով մեծանում են նոր ժամանակավոր կապերի, հետևապես և՛ պայմանական ռեֆլեքսների զարգացման հնարավորությունները:

Պայմանական ռեֆլեքսներ մշակելիս տեղի է ունենում կենդանիների գլխուղեղի բարդ՝ վերլուծական համադրական գործունեու-

թյուն, հստակորեն առանձնանում են տարբեր գրգռիչները, ստեղծվում են կապեր դրանց և պատասխան ռեակցիաների միջև:

Կենդանիներն ունեն հոգեկան գործընթացների տարրական արտահայտություն: Ցանկացած կենդանու վարքի առանձնահատկությունների ըմբռնման համար կարևոր նշանակություն ունի նրա կյանքի առաջին շրջանի փորձը, ծնվելուց անմիջապես հետո և կյանքի առաջին օրերին, ամիսներին ու տարիներին միջավայրի ներգործություններին ենթարկվելը:

Այն հանգամանքը, թե ինչ վճռական նշանակություն կարող են ունենալ կենդանու վրա միջավայրի առանձին ազդեցությունները, պարզ է դառնում իմպրինտինգի կամ նախնական տպավորման երևույթն ուսումնասիրելիս:

Որպեսզի կենդանական նոր տեսակի ներկայացուցիչները կարողանան հաղորդակցվել և սերունդ թողնել, պետք է ճանաչեն ու զանազանեն միմյանց նույն տարածքում ապրող այլ կենդանիներից: Ընկալման ու վարքի այդպիսի ընտրականությունը հնարավոր է, եթե կենդանական յուրաքանչյուր տեսակ ըստ գույնի, հոտի կամ երգի ու արձակվող ձայների յուրահատկությունների տարբերվի մյուսներից: Եվ, իսկապես, երզող թռչունների բոլոր տեսակների երգերն իրարից տարբերվում են: Իմպրինտինգի դրսևորումներն առկա են և մարդու կյանքում: Հետազոտությունները ցույց են տվել, որ նորածնության և մանկության փուլերում գտնվող երեխան առավել զգայուն է մարդկային տեսքի, ձայնի ու խոսքի նկատմամբ: Երեխան առավել մեծ զգայություն հանդես է բերում մոր տեսքի, նրա դեմքի նկատմամբ: Այս փաստերից ելնելով՝ կարելի է ասել, որ երեխայի անգիտակցական ժառանգական ուղրտում ևս կան ընդհանրացված պատկերներ, որոնցում արտացոլվում են «բանական մարդ» (*Homo sapiens*) տեսակի որոշ ընդհանուր և էական առանձնահատկություններ:

## ԹԵՄԱ 6. ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. Մարդու և կենդանու էական տարբերությունները
2. Գիտակցության բնորոշ առանձնահատկությունները

### ✓ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆՈՒ ԷԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[Կենդանիների հոգեկանի զարգացումը հոգեկանի բարձրագույն աստիճանի՝ գիտակցության առաջացման նախադրյալն է, իսկ գիտակցությունը հատուկ է միայն մարդուն:] Այն առաջացել է նրա հասարակական-աշխատանքային գործունեության հետևանքով: [Գիտակցությունն առաջացել է այն ժամանակ, երբ մարդու կենդանի նախնին դարձել է հասարակական էակ:]

Կասկածից վեր է, որ իսկայական տարբերություն գոյություն ունի մարդու և բարձրակարգ կենդանու հոգեկանի միջև: Ոչ մի համեմատություն չի կարող լինել կենդանիների «լեզվի» և մարդու լեզվի միջև: [Կենդանին իր նմաններին կարող է ազդանշան տալ այն երևույթների մասին, որոնք սահմանափակված են անմիջականորեն տրված իրադրությամբ: Մինչդեռ մարդը լեզվի միջոցով այլ մարդկանց կարող է տեղեկություններ տալ ներկայի և ապագայի մասին, նրանց հաղորդել հասարակական փորձ:]

Մարդկության պատմության ընթացքում լեզվի շնորհիվ տեղի է ունեցել արտացոլելու հնարավորությունների վերակառուցում, ըստ այդմ էլ՝ ուղեղում աշխարհի արտացոլումն ամենից ավելի ճշմարիտն է: Յուրաքանչյուր մարդկային անհատ լեզվի շնորհիվ օգտվում է հասարակության բազմադարյա զարգացման ընթացքում կուտակված փորձից, գիտելիքներ ստանում այնպիսի երևույթների մասին, որոնց հետ անձնապես երբեք գործ չի ունեցել: Բացի այդ, [լեզուն մարդուն հնարավորություն է տալիս գաղափար կազմելու զգայական տպավորությունների բովանդակության մասին: Կենդանիների և մարդկանց հաղորդակցման տարբերությունը կանխորոշում է նաև նրանց մտածողության տարբերությունը:] Դա բացատրվում է նրանով, որ ամեն մի առանձին հոգեկան գործա-



ույթ զարգանում է այլ գործառույթների հետ համագործակցության մեջ:

[Բազում փորձերի միջոցով բացահայտված է, որ բարձրագույն կենդանիներին հատուկ է միայն գործնական (ըստ Պավլովի՝ ծեռքային) մտածողությունը. կապիկը կարող է լուծել այս կամ այն իրադրային խնդիր և նույնիսկ «գործիք» օգտագործել: **Ստածողության վերացարկվածություն** կապիկների մոտ չի նկատել և ոչ մի հետազոտող: Կենդանին կարող է գործել միայն զգայականորեն ընկալվող իրադրության մեջ, չի կարող դուրս գալ նրա սահմաններից, վերացարկվել նրանից: Կենդանին անմիջականորեն ընկալվող իրադրության ստրուկն է:

[Մարդու վարքը բնորոշվում է տվյալ կոնկրետ իրադրությունից վերանալու և այդ իրադրության հետ կապված հնարավոր հետևանքները **կանխատեսելու ընդունակությամբ**: Այսպես, վտանգ կանխազգալով՝ ծովայիններն անմիջապես սկսում են փակել ամենափոքր ճեղքն անգամ, իսկ օդաչուն, երբ շատ քիչ վառելիք է մնացել, սկսում է փնտրել ամենամոտ օդանավակայանը: Մարդիկ ոչ մի չափով տվյալ իրադրության ստրուկները չեն, նրանք ընդունակ են կանխատեսելու ապագան: Այսպիսով, կենդանիների կոնկրետ գործնական մտածողությունը նրանց ենթարկում է տվյալ իրադրությունից ստացած անմիջական տպավորությանը, մինչդեռ մարդու վերացականորեն մտածելու ընդունակությունն ազատում է նրան տվյալ իրադրությունից ունեցած անմիջական կախվածությունից: Մարդն ընդունակ է արտացոլելու ոչ միայն միջավայրի անմիջական ազդեցությունը, այլև սպասելիքները՝ գործելու իմացական անհրաժեշտությանը համապատասխան, այսինքն՝ գիտակցորեն: Դա մարդու հոգեկանի առաջին եական տարբերությունն է կենդանու հոգեկանից:]

[Մարդու կենդանուց ունեցած մյուս տարբերությունը **գործիքներ ստեղծելու, գործադրելու և պահպանելու ընդունակությունն է**: Կենդանին գործիք է պատրաստում կոնկրետ, ակնառու գործուն իրադրության մեջ: Կոնկրետ իրադրությունից դուրս կենդանին երբեք գործիքը չի առանձնացնում որպես այդպիսին, այն չի

պահպանում հետագայի համար: Հենց որ գործիքն իր դերը տվյալ իրադրության մեջ խաղում-վերջացնում է, անմիջապես էլ կենդանու համար դադարում է որպես գործիք գոյություն ունենալուց:

[Այսպես, եթե կապիկը փայտե ձողն օգտագործում է որպես պտուղն իրեն մոտեցնելու գործիք, ապա որոշ ժամանակ անց նա կարող է կրծոտել այն կամ հանգիստ նայել, թե ինչպես է այդ անում մեկ ուրիշ կապիկ: Այսինքն՝ առարկան նրանց համար որոշակի նշանակություն է ստանում կոնկրետ իրադրության մեջ: Բացի այդ, կենդանիների գործիքային գործունեությունը երբեք կոլեկտիվ բնույթ չի ստանում. լավագույն դեպքում կապիկները կարող են դիտել իրենց ցեղակցի գործունեությունը, բայց երբեք չեն գործի համատեղ, միմյանց օգնելով:

[Ի տարբերություն կենդանիների՝ մարդը գործիք է պատրաստում նախապես մտածված պլանին համապատասխան, օգտագործում ըստ նշանակության և պահպանում: Մարդն ապրում է հարաբերականորեն կայուն իրերի աշխարհում: Մարդը գործիքից օգտվում է մյուս մարդկանց հետ միասին, այլ մարդկանցից փոխ է առնում գործիքներ օգտագործելու փորձ և այն հաղորդում ուրիշներին:

Մարդու հոգեկան գործունեության առանձնահատուկ գիծը հասարակական փորձի փոխանակումն է: Ե՛վ կենդանիները, և՛ մարդիկ իրենց տրամադրության տակ ունեն սերունդների կուտակած զգալի փորձ, որն արտահայտվում է գրգռիչների որոշակի տեսակների նկատմամբ բնազդային գործողությունների ձևով: Ե՛վ առաջինները, և՛ երկրորդները կյանքում հանդիպած իրադրություններում որոշակի անհատական փորձ են ձեռք բերում: Բայց միայն մարդն է յուրացնում հասարակական-պատմական փորձը:

Հասարակական փորձն առանձին մարդու վարքում գերակշռող դեր է խաղում: Մարդու հոգեկանը ամենամեծ չափով զարգանում է իրեն հաղորդված հասարակական փորձից: Ծնվելու պահից երեխան սկսում է տիրապետել գործիքների օգտագործման և մարդկանց հետ շփվելու եղանակներին: Մարդու հոգեկան ֆունկցիաները որակական փոփոխություններ են կրում առանձին անհատի կողմից մարդկության մշակութային զարգացման միջոցներին տիրա-

պետելու շնորհիվ: Մարդու մեջ զարգանում են բարձրագույն և բուն մարդկային գործառույթներ (կամաժին հիշողություն, կամաժին ուշադրություն, վերացական մտածողություն և այլն):

Ինչպես զգացմունքների, այնպես էլ վերացական մտածողության զարգացումը նպաստում է իրականության ավելի ճիշտ արտացոլմանը: Այդ պատճառով էլ կենդանիների և մարդկանց միջև եղած խիստ էական տարբերություններից մեկը նրանց **զգացմունքների տարբերությունն է**: Հասկանալի է, որ ո՛չ մարդը և ո՛չ էլ բարձրակարգ կենդանին իրենց շուրջը կատարվածի նկատմամբ անտարբեր չեն մնում: Իրականության առարկաներն ու երևույթները կենդանիների և մարդկանց մեջ կարող են իրենց նկատմամբ որոշակի վերաբերմունք՝ դրական կամ բացասական հույզեր առաջացնել: Բայց միայն մարդն է ընդունակ ապրելու ուրիշի ցավը և ուրախությունը, միայն մարդը կարող է գեղագիտական հաճույք ստանալ բնության պատկերները դիտելիս՝ կամ մտավոր զգացմունքներ ունենալ կենսականորեն կարևոր որևէ փաստ գիտակցելիս:

Մարդու և կենդանիների հոգեկանի կարևորագույն տարբերությունները պայմանավորված են զարգացման պայմաններով: Եթե կենդանական աշխարհի զարգացման ընթացքում հոգեկանի զարգացումն ընթացել է կենսաբանական էվոլյուցիայի օրենքներին համապատասխան, ապա բուն մարդկային հոգեկանի՝ գիտակցության զարգացումը ենթարկվում է հասարակական-պատմական զարգացման օրենքներին: Առանց մարդկության փորձի յուրացման, առանց մարդկային փոխշփումների չեն կարող լինել բարձրակարգ զգացմունքներ, չեն զարգանա կամաժին ուշադրությունն ու հիշողությունը, վերացական մտածողությունը, չի ձևավորվի անձնավորությունն ընդհանրապես:

Այդ մասին են վկայում կենդանիների միջավայրում երեխաների «դաստիարակվելու» դեպքերը: Բոլոր «մաուզի-երեխաները» դրսևորում էին պարզունակ կենդանական ռեակցիաներ, նրանց մեջ հնարավոր չէր նկատել այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով մարդը տարբերվում է կենդանուց: Մինչդեռ կապիկի ծագը պատահականության բերումով մե՞նակ, հոտից հետ մնալով, իրեն

դրսևորում է որպես կապիկ: Այնինչ մարդը միայն այն ժամանակ է դառնում մարդ, երբ նրա զարգացումը տեղի է ունենում մարդկանց միջավայրում:

Մարդկային հոգեկանը ձևավորվել է մատերիայի էվոլյուցիոն զարգացման ողջ ընթացքում: Հոգեկանի զարգացման վերլուծությունը թույլ է տալիս խոսել գիտակցության ծագման նախադրյալների մասին:

Մարդու նախնիներն, անկասկած, ընդունակ էին առարկայական-գործնական մտածողության, կարողանում էին մեծ թվով գուգորդություններ կազմել: Նախամարդը, ունենալով ձեռք հիշեցնող վերջավորություն, կարողանում էր ստեղծել պարզ գործիքներ և դրանք օգտագործել կոնկրետ իրադրության մեջ:

Սակայն գիտակցությունն անմիջականորեն չի կարող բխեցվել կենդանիների էվոլյուցիայից, քանի որ մարդը հասարակական հարաբերությունների արդյունք է: Հասարակական հարաբերությունների կենսաբանական նախադրյալը հոտն էր: Մարդու նախնիներն ապրում էին հոտերով, որը բոլոր անհատներին թույլ էր տալիս լավագույն ձևով պաշտպանվել թշնամիներից և փոխօգնություն ցույց տալ միմյանց: Կապիկի մարդացման և հոտի՝ հասարակության վերածվելու հիմնական գործոնն աշխատանքային գործունեությունն էր, այսինքն՝ այնպիսի գործունեությունը, որն իրականացվում է մարդկանց կողմից համատեղ գործիքներ պատրաստելու և դրանք օգտագործելու ընթացքում:

Ակզբնավորվող **աշխատանքային գործունեությունն** ազդեց հասարակական հարաբերությունների, հասարակության զարգացման վրա, իսկ զարգացող հասարակական հարաբերությունները նպաստեցին աշխատանքային գործունեության կատարելագործմանը:)

Մարդու նախնիների զարգացման գործում կատարված այդ տեղաշարժը տեղի ունեցավ կյանքի պայմանների փոփոխման հետևանքով: Միջավայրի փոփոխությունը մեծ դժվարություններ ծնեց պահանջմունքների բավարարման գործում: Նվազեցին սննդի հեշտ ձեռքբերման հնարավորությունները, վատացավ կլիման:

Մարդու նախնիները կամ պետք է ոչնչանային, կամ որակապես փոխելին իրենց վարքածնը: Անհրաժեշտության բերումով նրանք պետք է դիմելին աշխատանքային համատեղ գործողությունների կատարմանը: Ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, «հավանորեն, հարյուրհազարավոր տարիներ են անցել, որոնք երկրի պատմության մեջ ունեցել են ոչ մեծ նշանակություն, քան վայրկյանը մարդու կյանքում, մինչև որ ծառերը մագլցող կապիկների հոտից առաջացել է մարդկային հասարակությունը»<sup>4</sup>:

Հոտի ներսում մարդու նախնիների բնագոյային փոխհարաբերություններն աստիճանաբար փոխարինվեցին «արտադրական» գործունեության հիման վրա կատարվող հարաբերություններով: Խմբի անդամների միջև եղած հարաբերությունների փոփոխությունը, համատեղ գործունեությունը, գործունեության արդյունքների փոխանակությունը նպաստեցին հոտի վերածմանը հասարակության: Այսպիսով, մարդու նախնիների մարդացման պայմանը աշխատանքի ծագումը և մարդկային հասարակության ձևավորումն էր:

Աշխատանքի գործընթացում զարգացավ նաև մարդու գիտակցությունը՝ արտացոլման բարձրագույն ձևը, որի համար բնորոշ է առարկայական իրականության օբյեկտիվ ու կայուն կողմերի առանձնացումը և դրա հիման վրա շրջապատող միջավայրի վերափոխումը:

**Գործիքների պատրաստումը, օգտագործումն ու հետագայի համար նրանց պահպանումը** հասցնում են միջավայրի անմիջական ազդեցությունից ունեցած անկախության մեծացման: Հնագույն մարդկանց գործիքները սերնդեսերունդ ավելի ու ավելի են բարդանում սկսած հաջող ընտրած սուր ծայրերով քարերից մինչև խմբովին պատրաստած գործիքները: Այդպիսի գործիքներն օգտագործում են որոշակի գործողություններ կատարելու՝ կտրելու, ջարդելու կամ ծակելու համար: Հենց այս պայմաններում է առաջանում կենդանու միջավայրից մարդու միջավայրի ունեցած որակական

տարբերությունը: Ինչպես արդեն ասել ենք, կենդանին ապրում է պատահական իրերի աշխարհում, մինչդեռ մարդն իր համար ստեղծում է հարաբերականորեն մշտական առարկաների աշխարհ: Մարդկանց ստեղծած գործիքները նախորդ սերունդների գործողությունների և գործունեության նյութական կրողներն են: Գործիքների միջոցով մեկ սերունդն իր փորձը մյուսին է փոխանցում գործողությունների և գործունեության ձևով:

Աշխատանքային գործունեության մեջ մարդու ուշադրությունն ուղղված է ստեղծվող գործիքին և, հետևաբար, սեփական գործունեությունը մնում է ողջ հասարակության գործունեության մեջ, որն ուղղվում է հասարակական պահանջմունքների բավարարմանը: Ստեղծված պայմաններում սեփական գործունեության նկատմամբ մարդու քննադատական վերաբերմունքի անհրաժեշտություն է առաջանում: Մարդու գործունեությունը դառնում է գիտակցական: Վաղ փուլերում, մարդկանց հասարակական պրակտիկայի ցածր մակարդակին համապատասխան, նրանց մտածողությունն էլ ուներ սահմանափակ բնույթ: Որքան ավելի բարձր է աշխատանքային գործիքների պատրաստման մակարդակը, համապատասխանաբար այնքան ավելի բարձր է նաև արտացոլման մակարդակը:

Արտադրության բարձր մակարդակի դեպքում գործիքների պատրաստման ամբողջական գործընթացը տրոհվում է մի շարք օղակների, որոնցից յուրաքանչյուրը կարող է կատարվել հասարակության տարբեր անդամների կողմից. դա գործողություն կատարողներից ավելի ու ավելի է հեռացնում վերջնական նպատակը սննդի ձեռքբերման գիտակցումը: Այդ օրինաչափությունը գիտակցել կարող է միայն վերացական մտածողությամբ օժտված մարդը: Նշանակում է գործիքների արտադրության բարձր մակարդակը, որը զարգանում է աշխատանքի հասարակական բաժանման դեպքում, գիտակցական գործունեության ձևավորման կարևորագույն պայմանն է:

Ազդելով բնության վրա և փոխելով այն՝ մարդը միաժամանակ փոխում է նաև սեփական բնությունը: «Աշխատանքը,- ասում է Մարքսը,- նախ և առաջ, մարդու և բնության միջև կատարվող

4. Էնգելս Ֆ., 2 լրց. հրատ., Երևան, 1960թ.

գործընթացն է, մի գործընթաց, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև: Բնության նյութի դիմաց նա ինքն էլ կանգնած է իբրև բնության ուժ: Իր մարմնին պատկանող բնական ուժերը՝ բազուկներն ու ոտքերը, գլուխն ու մատները, նա շարժման մեջ է դնում, որպեսզի բնական նյութը յուրացնի իր սեփական կյանքի համար պիտանի որոշ ձևով: Այդ շարժման միջոցով ներգործելով իրենից դուրս գտնվող բնության վրա և այն փոփոխելով՝ նա միևնույն ժամանակ փոփոխում է իր սեփական բնույթը: Նա զարգացնում է իր բնության մեջ նիրհող կարողությունները և այդ ուժերի խաղը ենթարկում սեփական իշխանությանը»<sup>5</sup>:

Աշխատանքի ազդեցության տակ անրապնդվեցին **ձեռքի նոր ֆունկցիաները**. ձեռքն սկսեց կատարել ճարպիկ շարժումներ, աստիճանաբար տեղի ունեցած անատոմիական կատարելագործման հետ կապված, փոխվեց ուսի և նախաբազկի փոխհարաբերությունը, մեծացավ բոլոր հողակապերի, պահանձնապես ձեռքի դաստակի հողակապերի շարժունակությունը: Սակայն ձեռքը զարգացավ ոչ միայն որպես բռնելու միջոց՝ գործիք, այլև որպես օբյեկտիվ իրականության իմացության օրգան: Աշխատանքային գործունեությունը հանգեցրեց այն բանին, որ ակտիվորեն շարժվող ձեռքն աստիճանաբար վերածվեց շոշափելիքի ակտիվ օրգանի: Շոշափելիքն աշխարհի իմացության մարդկային հատկություն է: «Ձեռքը շոշափելիքի նուրբ օրգան է,- գրել է Սեչենովը,- և այդ օրգանը նստած է դաստակի՝ որպես մի այնպիսի «ձողի» վրա, որը կարող է ոչ միայն կարճանալ, երկարել և տեղաշարժվել տարբեր ուղղություններով, այլև որոշակիորեն զգալ ամեն մի այդպիսի տեղաշարժ»<sup>6</sup>:

Ձեռքը շոշափելիքի օրգան է ոչ միայն այն պատճառով, որ ձեռքի ափը և մատների ծայրերն ավելի զգայուն են հպման և ճնշման նկատմամբ, այլև այն պատճառով, որ, լինելով աշխատանքի ընթացքում ձևավորված և առարկաների վրա ազդելու համար հար-

5. Մարքս Կ., Էնգելս Ֆ., Ընտիր երկեր, 3 հատորով, հ. 1, Ե., 1972թ.

6. Сеченов И.М., "Рефлексы головного мозга", М., 1952г.

մարված օրգան, այն ընդունակ է ակտիվ շոշափման: Այդ պատճառով էլ ձեռքը մեզ արժեքավոր տեղեկություններ է տալիս նյութական աշխարհի առարկաների էական հատկությունների մասին:

Ձեռքի զարգացումն ընթացել է մարդու ողջ օրգանիզմի զարգացմանը զուգահեռ: Նրա՝ որպես աշխատանքի օրգանի մասնագիտացումը նպաստել է նաև նախամարդու ուղղահայաց դիրքով քայլելու կարողության զարգացմանը: Աշխատող ձեռքերի գործողությունները մշտապես վերահսկվում են տեսողությամբ: Աշխարհի իմացության և աշխատանքային գործունեության ընթացքում տեսողության և շոշափելիքի օրգանների միջև ստեղծվում են բազում կապեր, որոնց շնորհիվ փոխվում է գրգռչի ազդեցության արտացոլման արդյունքը՝ մարդու կողմից այն գիտակցվելով ավելի խորը և համարժեք (ադեկվատ):

Ձեռքի աշխատանքն առանձնապես մեծ ազդեցություն է գործել ուղեղի զարգացման վրա: Ձեռքի՝ որպես զարգացող և մասնագիտացված օրգանի համար գլխուղեղում պետք է ձևավորվեր ներկայացուցչություն: Դրա հետևանքով ոչ միայն մեծացավ ուղեղի զանգվածը, այլև բարդացավ նրա կառուցվածքը: Ուղեղի զարգացող սենսորային (զգայական) և շարժողական բաժիններն իրենց հերթին ազդեցին իմացական գործունեության հետագա զարգացման վրա, որը նպաստեց էլ ավելի ճիշտ արտացոլմանը:

Աշխատանքային գործունեության զարգացումը հանգեցրեց սննդի, բնակարանի և մարդու այլ պահանջումների անհամեմատ ավելի հաջող բավարարմանը: Սակայն մարդկանց հասարակական հարաբերությունները որակապես փոխեցին կենսաբանական պահանջումները և ծնեցին նոր, զուտ մարդկային պահանջումներ: Աշխատանքի առարկաների զարգացումը ծնեց աշխատանքի առարկաների պահանջումը: Այդ կերպ աշխատանքը պայման հանդիսացավ մարդկային հասարակության, մարդկային պահանջումների ձևավորման, ինչպես նաև ոչ միայն աշխարհն արտացոլող, այլև այն վերափոխող գիտակցության զարգացման համար: Այդ բոլոր երևույթները մարդու էվոլյուցիայի ընթացքում հանգեցրին մարդկանց միջև հաղորդակցման ձևերի փոփոխման: Սերունդ-

ների փորձի փոխանակման, ցեղակիցներին աշխատանքային գործողություններ սովորեցնելու, նրանց միջև առանձին գործողությունները բաժանելու անհրաժեշտությունը ծնեց միմյանց հետ հաղորդակցվելու պահանջմունք: Բնագղների լեզուն ոչ մի կերպ չէր կարող բավարարել այդ պահանջմունքը: Աշխատանքին զուգընթաց, աշխատանքի ընթացքում մարդկային լեզվի միջոցով զարգացան նաև հաղորդակցման բարձրագույն ձևերը: Գիտակցության և իրականության արտացոլման իրեն հատուկ ձևերի զարգացման հետ միասին մարդը, որպես անձնավորություն, նույնպես որակապես փոխվեց: 2

### ՎԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտակցությունը հոգեկանի զարգացման բարձրագույն մակարդակն է, հոգեկանի բարձրագույն՝ ինտեգրող ձևը: Ինչպիսի՞ն են գիտակցության կառուցվածքը և նրա կարևորագույն առանձնահատկությունները:

1. Գիտակցության ամենաբնորոշ գիծն արտահայտված է հենց իր անվան մեջ: Գիտակցություն և գիտելիքներ, այսինքն՝ գիտակցությունը ներառում է աշխարհի մասին մարդու ունեցած գիտելիքների ամբողջությունը: Ուրեմն՝ գիտակցության կառուցվածքի մեջ մտնում են այն բոլոր իմացական գործընթացները, որոնց միջոցով մարդը ձեռք է բերում մարդկության կուտակած հասարակական-պատմական փորձը:

2. Գիտակցության երկրորդ բնորոշ գիծը գիտակցության մեջ սուբյեկտ և օբյեկտ գանազանելու ունակությունն է: Կենդանի էակներից միայն մարդն է ընդունակ ինքնիմացության, թե ինչն է պատկանում իրեն՝ մարդու ես-ին և ինչը՝ ոչ ես-ին: Սա այն ուղին է, որ մարդն անցնում է մանկության տարիներին, և որն իրագործվում է նրա ինքնագիտակցության ձևավորման գործընթացում:

3. Գիտակցության բնորոշ գիծ է նաև նպատակադրված գործունեության ասպահովումը: Գիտակցության գործառույթ է գործու-

նեության նպատակի ձևավորումը, դրդապատճառների պայքարը, կամային որոշումների ընդունումը և նպատակին հասնելու ճանապարհի խոչընդոտների վերացումը: Այս ուղղվածության ու համաձայնեցվածության ամեն մի խախտում դիտվում է որպես գիտակցության խախտում:

4. Մարդու գիտակցությունը ներառում է նաև որոշակի հարաբերություններ, զգացմունքներ, մարդկային հարաբերությունների հուզական զնահատումներ: Որոշ հոգեկան հիվանդությունների դեպքում նկատվում է հուզական հարաբերությունների խախտում. հիվանդն ատում է մորը, հարազատներին, որոնց մինչ այդ ջերմորեն սիրում էր:

Գիտակցության նշված բոլոր առանձնահատուկ գծերի ձևավորման ու դրսևորման պարտադիր պայմանը երկրորդ ազդարարային համակարգն է՝ լեզուն: Այն հատուկ համակարգ է, որում ամրակայված են մարդկության կուտակած հասարակական փորձն ու հասարակական գիտակցությունը:

Կենդանիները գիտակցություն չունեն, քանի որ գիտակցությունը հասարակական կյանքի արդյունք է և հատուկ է միայն մարդուն:

## ՈՒՅՄԱ 7. ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

1. Գիտակցություն
2. Ենթագիտակցություն, հոգեվերլուծություն
3. Անգիտակցական
4. Ինքնագիտակցություն

### ✓ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մարդու հոգեկանը տիրույթ է, որն ունի իր մակարդակները:  
Դրանք են. գիտակցություն, ենթագիտակցություն, անգիտակցու-  
թյուն: Ինքնագիտակցությունը հոգեկանի տիրույթում ունի բարդ  
տեղորոշում:

Գիտակցությունը հոգեկան այն մակարդակն է, որի առկայու-  
թյան դեպքում մարդը հաշիվ է տալիս իրեն, և առկա են հոգեկան  
երևույթներ ու ներհայեցողություն:

Մարդը ոչ միայն կատարում է որոշակի գործողություններ, այլև  
հասկանում, որ դրանք իր կատարած գործողություններն են: Հոգին  
ընդունակ է շրջվելու դեպի ինքը և ծայրագույն հավաստիությամբ  
հասկանալու սեփական գործունեությունն ու արդյունքները:

Գիտակցական վիճակում գտնվելու համար մարդը պետք է ար-  
թուն լինի:

Գիտակցությունն անփոփոխ չէ: Այն կարող է չքանալ, երբ,  
ասենք, մարդը քնած է կամ ուշակորույս:

Արթուն վիճակում մարդու գիտակցությունը շատ բարդ է: Լինել  
գիտակցական վիճակում նշանակում է տեսնել, լսել, շոշափել, ըն-  
կալել, խոսել, պլանավորել գործողությունները, պատասխանել  
խոսակցին և այլն: Ավելի, մենք կարող ենք խոսել ու նաև մտածել,  
թե հետո ինչ ենք անելու, ասելու: Նշանակում է գիտակցական ապ-  
րումները կարող են ընթանալ երկու կամ ավելի «հոսքերով», և որ  
գոյություն ունեն գիտակցության տարբեր «շերտեր» կամ ենթամա-  
կարդակներ:

Գիտակցական գործընթացում մեծ տեղ են գրավում կանխատե-  
սումներն ու հետագա գործողությունների պլանավորումը, ինչպես  
նաև ժամանակի և տարածության մեջ տեղորոշվելը:

Շրջապատը և իրեն գիտակցելու, ներհայեցողություն կատարե-  
լու ընդունակությունը մարդու հոգեկանի բարձրագույն հատկու-  
թյունն է, որն առաջ է եկել երկարատև զարգացման շնորհիվ, աշ-  
խատանքային, ուսումնական, սոցիալական շփման գործընթացնե-  
րի ազդեցության տակ:

### ✓ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ենթագիտակցության գոյության մասին գիտեին նաև հին աշ-  
խարհի մտածողները, սակայն հոգեբանական գիտության մեջ  
առաջինն այդ մասին հստակորեն խոսել է գերմանացի մտածող Վ.  
Լայբնիցը, որն ընթռնել է, որ մարդու ընկալումներն ունեն մակար-  
դակներ՝ ապերցեպցիա (գիտակցական ընկալում) և պերցեպցիա  
(ենթագիտակցական ընկալում): Նա առաջինը հանգեց այն գաղա-  
փարին, որ գիտակցության և ենթագիտակցության միջև կան փոխ-  
հարաբերություններ:

Յոգերի փիլիսոփայության համաձայն մարդու հիշողության  
խորքերում տպավորություններ են կուտակված անցյալի իրադար-  
ձությունների մասին, որոնք կարծես թաքնված են գիտակցությու-  
նից և հայտնի են դառնում այն դեպքում, երբ կապող օղակ հանդի-  
սանալով դուրս են բերվում գիտակցության ոլորտից:

Ենթագիտակցությունը, փաստորեն, տևական հիշողություն է,  
որը պահպանում է այն ամենը, ինչը երբևիցե ընկալվել ու ապրվել  
է՝ մեր կողմից և կարող է վերարտադրվել հատուկ պայմաններում:

Գիտափորձերով ապացուցված է, որ հոգեկան երևույթները, մտ-  
քերը, ցանկությունները, մտադրություններն ու դիրքորոշումները  
կարող են երկար ժամանակ գոյություն ունենալ մեր հոգեկանում,  
ուղղություն տալ մեր գործողություններին, բայց չգիտակցվել:

Հոգեբաններից մեկը մեր գիտակցական կյանքը համեմատում է  
օվկիանոսում լողացող սառցալեռան (այսբերգ) դրսում գտնվող

մասի հետ, որն այդ լեռան չնչին հատվածն է լուկ, մինչդեռ խորասուզված հսկայական զանգվածը ենթագիտակցությունն է: Մեր գիտելիքների մի մասը ենթագիտակցության ոլորտում է և գիտակցվում է միայն հաջորդաբար. ամհնար է բոլորը միանգամից գիտակցելը:

Ջառանգելիս՝ հիվանդը հաճախ խոսում է մոռացված իրադարձությունների մասին, կամ խեղդվող մարդը, մի քանի վայրկյանի ընթացքում, վերհիշում է իր ամբողջ անցյալը՝ ենթագիտակցորեն ի մի բերելով կյանքի դեպքերը:

Ենթագիտակցության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ստացված տպավորությունների մեծ մասը չի անհետանում մեր հոգեկանից, այլ մնում է հիշողության խորքում:

Հոգեվերլուծության տեսությունը պատկանում է Ջ. Ֆրոյդին, սակայն մինչ այդ գիտությանն արդեն հայտնի էին գերմանացի փիլիսոփա Ֆ. Նիցշեի պատկերացումներն անձի հոգեկանի վերաբերյալ: Ըստ Ջ. Ֆրոյդի՝ անձը ճկուն համակարգ է, որը կազմված է երեք ենթահամակարգերից՝ Այն (Իդ), Ես (Էգո) և Գեր-Ես (Սուպեր-Էգո):

Բնածինն ու ամենապարզը Այն-ն է՝ Իդ-ը, որից և դուրս են գալիս մյուս երկու կառույցները: Իդ-ը հոգեկան եռանդի (լիբիդո) աղբյուրն է: Այդ եռանդն ընդունում է անգիտակցական բնազդների ձև, որոնք և դառնում են անձի ակտիվության աղբյուրներ: Բոլոր բնազդները Ֆրոյդը բաժանում է երկու խմբի. ա) կյանքի կամ վերապրելու բնազդներ (քաղցի, ծարավի, հատկապես սեռական), բ) ավերիչ կամ դեստրուկտիվ, որոնք դրսևորվում են ագրեսիվ գործողությունների ձևով:

Առաջին խումբն անվանում են լիբիդո, երկրորդը՝ դեստրուկտ: Այն-ի մեջ մտնող բնազդները «կույր են», տարրական և անհետաձգելի բավարարում են պահանջում, որից էլ մարդն ստանում է հաճույք: Ահա ինչու Ֆրոյդը գտնում է, որ մարդու վարքը ենթարկվում է հաճույքի սկզբունքին:

Սակայն բնազդային պահանջումները բավարարելիս չի կարելի հաշվի չառնել շրջապատի պայմանները: Այս հատկությունը, ցավոք, Այն-ը չունի:

Անձի զարգացման ընթացքում առաջանում է Ես-ը, որի խնդիրն է դառնում հաշվի առնել շրջապատող իրադրությունները և նպաստել անձի պահանջումներին բավարարմանը:

Ես-ը ղեկավարվում է իրականության սկզբունքով և ձևավորում համապատասխան վարք: Ես-ի մեջ մտնում են անձի իմացական գործընթացները, որոնց օգնությամբ այն արտացոլում է շրջապատող իրականությունը:

Անձի հետագա զարգացման ընթացքում աստիճանաբար ձևավորվում է հոգեբանական երրորդ համակարգը՝ Գեր-Ես-ը, քանի որ մարդը գործում է հասարակության մեջ, որտեղ կան վարքի զանազան նորմեր ու կանոններ, սկզբունքներ ու արժեքներ, և առաջանում է վարքի և նույնիսկ մտածելակերպի ներքին վերահսկողության անհրաժեշտություն:

Գեր-Ես-ը անձի խիղճն է: Այն փոխարինում է արտաքին սոցիալական վերահսկողությանը, որը հաճախ իրագործում են ծնողները, ուսուցիչները, հեղինակավոր անձինք: Եթե մարդու Գեր-Ես-ը հասել է ձևավորման բարձր աստիճանի, ապա անձի ինքնակարգավորմը դառնում է ինքնաբերաբար, նույնիսկ առանց գիտակցության մասնակցության:

Ըստ Ֆրոյդի՝ եթե բնագրային հակումներն իրենց բավարարման ճանապարհին հանդիպում են արգելքների, եռանդը լիբիդոն, կրում է զանազան փոփոխություններ և տեղափոխվում այլ առարկաների վրա:

Օրինակ՝ եթե անձի ագրեսիան անմիջական բավարարություն չի ստանում, ապա այն կարող է ձևափոխվել իբրև բնավորության որոշակի գիծ՝ քննադատող, խիստ վարք դրսևորող և այլն:

Այսպիսով, Ֆրոյդը սկիզբ դրեց հոգեվերլուծության տեսությանը՝ առաջ քաշելով անմիջական բավարարություն չստացած լիբիդոյի ձևափոխությունների (սուբլիմացիա) մասին տեսակետը: Նա տեսություն մշակեց ֆրոստրացիայի և պաշտպանական մեխանիզմների մասին՝ ցույց տալով, որ Այն-ը, Ես-ը և Գեր-Ես-ը կազմող հոգեկան գործընթացների միջև հաճախ առաջանում են կոնֆլիկտներ, որոնք էլ հանգեցնում են անձի տագնապալից վիճակների ու դրանց

հետ կապված պաշտպանական մեխանիզմների առաջացման:

Ելնելով Զ. Ֆրոյդի ուսմունքից ստեղծվել են մի շարք հոգեվերլուծական տեսություններ Կ. Գ. Յունգի, Ա. Ադլերի, Դ. Յորնի, Զ. Սալիվենի, Է. Ֆրոմի և այլոց ուսմունքների ծեղով:

## ✓ ԱՆԳԻՏԱԿՑԱԿԱՆ

**Անգիտակցական** սովորաբար անվանում են չգիտակցվող հոգեկան գործընթացների, դրդապատճառների և այլ երևույթների ամբողջությունն ընդհանրապես առանց դրանք տարբերակելու ըստ այնպիսի կարևոր չափանիշների, ինչպիսին դրանց ծագումն է: Մինչդեռ այդպիսի մոտեցումը, որը կոչվում է գենետիկական, թույլ է տալիս հասկանալու, որ ժառանգական և օնտոգենետիկ ծագում ունեցող հոգեկան հատկությունները, անգամ չգիտակցված լինելու դեպքում, անձի վարքում և ներհոգեկանում նույն նշանակությունը չունեն:

Օնտոգենետիկ ստացված ընկալումները նպատակահարմար է անվանել ենթագիտակցություն, մինչդեռ բնածին և ժառանգական գծերի խումբը, որը մարդն իր ծննդով աշխարհ է բերում, կանվանենք ժառանգական անգիտակցական ոլորտ: Եթե անգիտակցական ոլորտի բովանդակություններն ենք համարում խառնվածքի առանձնահատկությունները, բնագոյները, զգայական ու իմացական արտացոլման ընդունակությունները, ապա ուսումնասիրությունները, պարզում են, որ ժառանգական անգիտակցական ավելի բարդ է ու բովանդակալից:

Երեխայի անգիտակցական ժառանգական ոլորտում ևս կան ընդհանրացված պատկերներ, որոնցում արտացոլված են բանական մարդու որոշ էական առանձնահատկություններ:

Կյանքի ընթացքում կենդանիների ու մարդկանց մեջ առաջացել է կանխատեսման ժառանգական մեխանիզմ, ընդհանրացված պատկեր, որին նորածին կենդանին հանդիպում է ծնվելուց անմիջապես հետո: Սովորաբար այդ օբյեկտը մայրն է, որի ընկալումը և առմիշտ տպավորվելն ուղեկցվում է կարճատև «ծգնաժամային»

փուլով: Այս երևույթը կոչվում է իմպրինտինգ<sup>7</sup>:

Մարդու հոգեկան ակտիվության տարբեր ձևերն ու դրսևորումները հասկանալու համար կարևոր է, թե երեխան հոգեֆիզիոլոգիական ինչ հատկություններով է ծնվում, որի հիման վրա ձևավորվում են նրա հոգեկան ակտիվության մակարդակները, մասնավորապես՝ անգիտակցականը:

## ✓ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Ինքնագիտակցությունը** սեփական ես-ի, մարմնի, գործողությունների, ավարտների ու ծառերի գիտակցումն է:

Մարդը, արտացոլելով արտաքին աշխարհը, աստիճանաբար գիտելիքներ է կուտակում նաև իր մարմնային ու հոգեկան առանձնահատկությունների մասին՝ փորձելով որոշ գծեր զարգացնել, իսկ որոշները՝ հակառակը, վերացնել: Այս ամենը միավորվում է մի համակարգի մեջ, որն անվանում ենք ինքնագիտակցություն կամ ես-կոնցեպցիա:

Սեփական անձն ընկալելիս մարդն արտացոլում է իր ես-կոնցեպցիայի մի մասը միայն, անհամեմատ ավելի մեծ մասը մնում է ենթագիտակցական մակարդակում: Արթուն վիճակում մարդը գիտակցում է իր մարմնի սխեման, վարքը, արտաքինը, որը և նրա իրադրական ես-պատկերն է: Այն հսկայական դեր է կատարում սեփական վարքի կարգավորման գործում, քանի որ ունենալ ես-պատկեր՝ նշանակում է ուրիշի աչքով նայել իրեն:

Ամբողջական ես-կոնցեպցիայի մեջ կարելի է առանձնացնել մի շարք ենթահամակարգեր կամ ցանկալի ես-եր, օրինակ՝ իդեալական ես-ը, իրական, դինամիկ, վերագրվող ես-ը և այլն:

Եթե մարդու հոգեկան տիրույթում առանձնացնում ենք անգիտակցական, ենթագիտակցական, գիտակցության ու ինքնագիտակցության մակարդակներ, չի նշանակում, թե դրանք իրարից խիստ սահմանազատված են:

7. Понугасва А.Г. Импринтинг. , Л., 1973.



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԽՈՍՔ ԵՎ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ**

**ԹԵՄԱ 8. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1. Հասկացողություն ուշադրության մասին
2. Ուշադրության բնախոսական հիմքը
3. Ուշադրության տեսակները
4. Ուշադրության բնորոշ առանձնահատկությունները

**✓ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Անձի հոգեկան գործունեությունը տվյալ պահին և տվյալ պայմաններում արտահայտում է նրա ուղղվածությունը, այսինքն՝ պահանջմունքների այն ամբողջությունը, որը դրսևորվում է տվյալ պահին գերակշռող դրդապատճառներում:

**Ուշադրությունը հոգեկան գործունեության ուղղվածությունը և նրա կենտրոնացվածությունն է այն օբյեկտի վրա, որն անձի համար ունի որոշակի (կայուն կամ իրադրական) նշանակություն:**

**Ուղղվածություն** ասելով պետք է հասկանալ հոգեկան գործունեության ընտրական բնույթը, նրա օբյեկտի կամաժին կամ ոչ կամաժին ընտրությունը: Օրինակ, երբ դպրոցականը լսում է այն, ինչ նրան պատմում է ուսուցիչը, ուրեմն նա գիտակցորեն է ընտրում լսելու այդ գործունեությունը. նրա ուշադրությունը ենթարկված է գիտակցորեն դրված այդ նպատակին: Հենց այն, որ նա տարված է ուսումնական նյութի բովանդակությամբ, և կողմնակի ոչինչ նրան չի շեղում, իր արտահայտությունն է գտնում նրա հոգեկան գործունեության ուղղվածության մեջ: Հոգեկան գործունեության ուղղվածություն ասելով հասկանում ենք ոչ միայն այդ գործունեության ընտրություն, այլև ընտրության պահպանում: Յուրաքանչյուր ման-

Հոգեկան բոլոր մակարդակներն էլ գործում են իբրև միասնական համակարգի տարրեր կողմեր:

**Հոգեկան առանձնահատուկ վիճակները** ներդրումների և պսիխոզների դրսևորումներն են, որոնք մեծ մասամբ ախտաբանական կամ սահմանային բնույթ ունեն:

Հոգեկան գործունեության լուրջ խանգարում է զառանցանքը, որը որոշ դեպքերում իրականության սխալ դատողությունների ու ընկալումների մեկնաբանություն է:

Մարդու ներքին հիվանդագին երևույթ են հալյուցիցիաները (զգայապատրանք), երբ մարդը տեսնում է առարկաներ և երևույթներ, որոնք իրականում տվյալ իրադարձության մեջ չկան:

Գոյություն ունեն դելիրիում գիտակցության մթազնման, զմայլվածության, ստեղծագործական ոգեշնչման և այլ հոգեկան առանձնահատուկ վիճակներ:

կավարժ գիտի, որ սովորողների ուշադրությունը գրավելն այնքան էլ դժվար չէ, բայց պահպանել այն պահանջվող որոշակի ժամանակի ընթացքում հաճախ հեշտ չի լինում, որի համար պետք է մանկավարժական հատուկ հնարներ կիրառել: Այդ պատճառով էլ հոգեկան գործունեության ուղղվածություն ասելով հասկանում ենք ոչ միայն նրա ընտրական բնույթը, այլև քիչ թե շատ երկար ժամանակով գիտակցության դաշտում այն պահպանելը:

Հոգեկան գործունեության ուղղվածության հետ մեկտեղ ուշադրությունը ենթադրում է նաև **կենտրոնացվածություն**: Հոգեկան գործունեության կենտրոնացվածությունը նրա վերացվածությունն է կողմնակի ամեն ինչից, տվյալ գործունեությանը չվերաբերող ամեն մի այլ հոգեկան գործունեությունից: Կենտրոնացվածությունը տվյալ գործունեությանը տրված լինելն է, նրանում այս կամ այն չափով խորացված լինելը: Կարելի է թերթել որևէ նկարագրող գիրք, արագորեն նայել այն: Տվյալ դեպքում կենտրոնացվածությունը քիչ թե շատ նշանակալից չէ: Բայց կարելի է կարդալ դժվար մի գիրք աշխատելով հասկանալ նրանում առկա յուրաքանչյուր կարևոր միտք, ամեն ինչ մանրամասնորեն պարզել կամ քննել նրան կցված գծագրի բոլոր դետալներն ու փոխկապակցությունները: Այս դեպքում կենտրոնացվածությունը շատ մեծ կարող է լինել: Կամ, տմաշին շարադրություն գրելիս, մտքերի մեջ խորասուզված աշակերտը չի լսում կողմնակի խոսակցությունները, չի նկատում, որ օրը մթնել է, և լույսը վառելու ժամանակն է:

### ✓ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուշադրությունը կապված է ուղեղի որոշակի նյարդային կենտրոնների գրգռվածության և մյուսների արգելակման հետ: Այդ էլ ապահովում է սուբյեկտի համար նշանակալից գրգռիչների առանձնացումը, այսինքն՝ հոգեկան գործունեության ուղղվածությունը: Այդպիսի ուղղվածության պարզագույն դեպք է կողմնորոշման ռեֆլեքսը: Յուրաքանչյուր նոր հայտնվող գրգռիչ, եթե այն ունի բավարար ինտենսիվություն, առաջ է բերում համապատասխան գրգռվա-

ծություն, որն արտահայտվում է, ինչպես Ի. Պ. Պավլովն է անվանել, իբրև «Ի՞նչ է սա» ռեֆլեքս: Հենց այդ էլ ուշադրության պարզագույն դեպքերի բնախոսական հիմքն է:

Կողմնորոշման գործունեությունը կարող է լինել բավական բարդ, այն չի սահմանափակվում միայն նորի նկատմամբ կողմնորոշման ոչ պայմանական ռեֆլեքսով: Ուշադրությունը կարող է կապված լինել զուգորդաբար առաջացող մտապատկերների, այնպիսի օբյեկտների ընկալման հետ, որոնք նոր չեն, բայց սուբյեկտի համար անսպասելիորեն հատուկ նշանակություն են ստանում:

Ուշադրության բնախոսական հիմքը հասկանալու համար էական նշանակություն ունի նյարդային գործընթացների ինդուկցիայի օրենքը, որը հայտնագործել է Ի. Պ. Պավլովը: Այդ օրենքի համաձայն՝ գլխուղեղի կեղևի բաժիններից մեկում առաջացած գրգռման գործընթացները նրա մյուս բաժիններում առաջ են բերում արգելակում: Եվ ընդհակառակը կեղևի մի մասի արգելակումը հանգեցնում է մյուս մասերում գրգռվածության ուժեղացմանը: Ժամանակի յուրաքանչյուր պահի կեղևում կա ուժեղ գրգռվածության որևէ օջախ, որը բնութագրվում է գրգռման համար ամենամաքստավոր պայմաններով<sup>8</sup>:

Ուշադրության բնախոսական հիմքերի պարզաբանման համար մեծ նշանակություն ունի նաև Ա. Ա. Ուլստոմսկու առաջադրած դոմինանտի սկզբունքը, որի համաձայն ուղեղում միշտ կա գրգռման դոմինանտային, գերիշխող օջախ, որը կարծես դեպի իրեն է ձգում տվյալ պահին ուղեղ եկող բոլոր գրգռիչները, ինչի շնորհիվ էլ ավելի մեծ չափով է գերիշխող դառնում նրանց նկատմամբ<sup>9</sup>: Այդպիսի օջախի առաջացման հիմքը ոչ միայն տվյալ գրգռիչի ուժն է (երբեմն այն կարող է նաև էական դեր խաղալ), այլև նյարդային համակարգվածության ներքին վիճակը, որ պայմանավորված է նախորդ գրգռիչներով և ուղեղում արդեն ամրակցված նյարդային հարթված ուղիների ու կապերի առկայությամբ: Նյարդային համակարգի աշխատանքի բնույթը բացահայտվում է գրգռման գերիշխող օջախի դո-

8. Павлов И.П. Полн. собр. соч., т. I, М., 1951.

9. Ухтомский А.А. Доминанта. М., 1966.

մինճանտի առկայությամբ. հոգեբանական տեսակետից դա արտահայտվում է որոշ գրգռիչների նկատմամբ ցուցաբերվող ուշադրությանը և տվյալ պահին ներգործող այլ գրգռիչների անտեսմամբ:

Լարված ուշադրությունը սովորաբար կապված է նրան բնորոշ արտաքին դրսևորումների՝ առարկան ավելի լավ ըմբռնելու նպատակ հետապնդող ջանքերի (զննելու, ականջ դնելու), ավելորդ շարժումներից ազատման, շնչառության դադարեցմանը յուրահատուկ դիմախաղի հետ:

## ✓ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեկան գործունեության ուղղվածությունը և կենտրոնացվածությունը կարող է կրել ոչ կամային բնույթ, երբ մենք մեր առջև գիտակցորեն ուշադիր լինելու խնդիր չենք դնում: Այդպիսի դեպքերում գործունեությունն ինքն է տիրապետում մարդուն իր գրավչության, հետաքրքրության կամ անսպասելիության շնորհիվ: Մարդն ակամայից հանձնվում է իր վրա ազդող առարկաներին, երևույթներին և կատարվող գործողություններին: Օրինակ՝ ռադիոյով լսելով մեզ ծանոթ և հաճելի երաժշտություն՝ մենք ակամայից շեղվում ենք մտավոր աշխատանքից և ականջ դնում երգը:

Սակայն ուշադրության ուղղվածությունը և կենտրոնացվածությունը կարող է նաև **կամածին** բնույթ կրել, երբ մենք մեր առջև նպատակ ենք դնում ուշադիր լինել կատարվող աշխատանքի նկատմամբ: Դպրոցականը, օրինակ, սկսում է պատրաստել դասը գիտակցաբար, կամածին ջանք գործադրելով, իր առջև դնելով հենց այդ խնդիրը: Այդպիսի դեպքում նրա ուշադրության ուղղվածությունը և կենտրոնացվածությունը կամածին բնույթ են կրում:

Որո՞նք են ոչ կամածին ուշադրության առաջացման պատճառները: Ինչո՞ւ երբեմն ուշադրությունը կենտրոնանում է մեկ, այլ դեպքում՝ ուրիշ առարկաների վրա: Դա կախված է սերտորեն միմյանց հետ կապված մի շարք պատճառներից, որոնք կարելի է բաժանել մի քանի կարգի:

Պատճառների առաջին կարգը վերաբերում է արտաքին գրգռի-

չի բնույթին: Այստեղ ամենից առաջ պետք է նկատի ունենալ գրգռիչի **ուժը** կամ **ինտենսիվությունը**: Ենթադրենք աշակերտները գրավոր աշխատանք են կատարում, տիրում է հարաբերական լռություն, և նրանք տարված են իրենց աշխատանքով: Հանկարծ անսպասելիորեն դրսից լավում է բարձր աղմուկ, որն, անկասկած, ակամայից գրավում է նրանց ուշադրությունը:

Այստեղ կարևոր դեր է խաղում ոչ այնքան գրգռիչի բացարձակ, որքան՝ հարաբերական ուժը: Հատուկ նշանակություն ունի գրգռիչների միջև եղած հակադրությունը (կոնտրաստ): Էական է գրգռիչի **տևողությունը**, ինչպես նաև **առարկայի տարածական մեծությունը**: Այն օբյեկտը, որը, շրջապատող առարկաների հետ համեմատած, ավելի մեծ է, ավելի շուտ է գրավում մեր ուշադրությունը: Երկարատև գրգռիչը հեշտությամբ է նկատվում, երբ այն տրվում է կարճատև գրգռիչների հետ միասին:

Կարևոր նշանակություն ունի գրգռիչի **ընդհատունությունը**: Պարբերաբար բռնկվող և հանգչող լույսն ավելի շուտ կգրավի մեր ուշադրությունը, քան անընդհատ մեզ վրա ազդողը:

**Գրգռման դադարեցումը** նույնպես, ըստ հակադրության, կարող է գրավել մեր ուշադրությունը: Եթե աշակերտը միապաղաղ աղմուկի տակ է, կարող է դա չնկատել, սակայն աղմուկի դադարեցումը կգրավի նրա ուշադրությունը:

Գրգռման արտաքին բնույթից կախված՝ ուշադրությունը կարող ենք համարել «ստիպողական»: Մանկավարժական պրակտիկայում պետք է հաշվի առնել ուշադրությունը շեղող այդ կարգի պատճառները: Օրինակ, ուսուցիչը երբեմն կարող է բարձր խոսել ուշադրություն գրավելու համար, իսկ երբեմն էլ հակառակը՝ նույն նպատակով նա կարող է ավելի ցածրաձայն խոսել:

**Ոչ կամածին ուշադրություն առաջ բերող պատճառների երկրորդ կարգը վերաբերում է արտաքին գրգռիչների համապատասխանությանը մարդու ներքին վիճակին** (առաջին հերթին՝ նրա պահանջմունքներին): Երբ մենք քաղցած ենք, սնունդ հիշեցնող բոլոր գրգռիչները՝ ուտելու մասին խոսակցությունները, հաճելի հոտն ակամայից գրավում են մեր ուշադրությունը: Իսկ կուշտ մարդը, որը

տվյալ պահին գրադված է այլ գործով, կարող է բոլորովին չնկատել դրանք:

Ուշադրության գրավման և պահպանման հաջորդ կարգին են վերաբերում **զգացմունքները**: Հայտնի է, որ զգացմունք առաջացնող ամեն մի գրգռիչ ուշադրություն է գրավում: Պատճառների այդ կարգին է պատկանում հետաքրքրության ամենաառաջին և պարզագույն հատկանիշը՝ **գրավչությունն ու հետաքրքրաշարժությունը**: Երբ ուսուցչի պատմածն աշակերտների մեջ բազմազան զգացմունքներ է առաջացնում, նրանց ուշադրությունը չի թուլանում: Այդպիսի ուշադրությունը մենք անվանում ենք **հուզական**: Մանկավարժական պրակտիկայում պետք է օգտվել ուշադրության այդ տեսակից, բայց պայմանով, որ արտաքին հետաքրքրաշարժությունը չհակասի այն նյութի ներքին բովանդակությանը, որը պետք է յուրացվի:

Ուշադրություն առաջ բերող ներքին պայմաններից է նաև **կենսափորձի ազդեցությունը**, մասնավորապես մեր ունեցած գիտելիքների և պատկերացումների, ինչպես նաև հմտությունների ու սովորությունների ազդեցությունը: Լավ հայտնի է, թե դպրոցականի համար որքան դժվար է գրքի վրա աշխատել սկսելը: Բայց հետո նա ավելի ու ավելի է ներգրավվում աշխատանքի մեջ, ուշադրությունն արդեն չի շեղվում, և ուշադիր լինելու համար ճիգերի կարիք չի զգացվում: Բավական է միայն հայտնվել սովորական իրադրության մեջ, նստել գրասեղանի առջև և բացել գիրքը: Դպրոցական պայմաններում ուսումնական գործընթացի ընդհանուր կազմակերպվածությունը, դասարանում կարգուկանոնի ապահովումն զգալի չափով նպաստում է սովորողների ուշադրության պահպանմանը: Ենթադրելի է սարքավորված աշխատանքային տեղը, պարասպունքների ճշգրիտ կարգը, աշխատանքում մաքրության և ճշտապահության պահպանումը մեծ նշանակություն ունեն դպրոցականի ուշադրության կազմակերպման հարցում: Ուշադրության գրավման համար զգալի դեր է խաղում որոշակի տպավորությունների սպասումը:

Երբ դպրոցականը գոնե որոշ չափով գիտի, թե ինչ են իրեն մատուցելու, ուրեմն նա առաջարկվող նյութն ընկալում է ավելի մեծ

ուշադրությամբ: Սպասումը հաճախ թույլ է տալիս ընկալել նույնիսկ այն, ինչ մենք այլ հանգամանքներում բոլորովին չէինք նկատի:

Բացառիկ չափով մեծ է անձի ընդհանուր ուղղվածության և, մասնավորապես, նրա հետաքրքրությունների ազդեցությունն ուշադրության վրա: Այն, ինչ անմիջականորեն հետաքրքրում է մեզ, ակամայից գրավում է մեր ուշադրությունը, որը լավ հայտնի է յուրաքանչյուրիս անձնական փորձից:

Հետաքրքրությունը սերտորեն կապված է մեր կենսափորձի, ունեցած գիտելիքների ու պատկերացումների հետ: Որևէ առարկայի վատ իմացությունն անհնար է դարձնում հասկացումը և նրանով հետաքրքրվելը: Մյուս կողմից՝ լավ ծանոթ երևույթը նույնպես իր նկատմամբ հետաքրքրություն չի առաջացնում: Հետաքրքիր է այն, ինչ նոր է, այն, ինչը թեև կապված է հնի հետ, բայց արդեն հայտնի առարկայի նոր կողմեր է քացահայտում: Այդ պատճառով էլ նոր գիտելիքներ մատուցելիս չափազանց կարևոր է խիստ հետևողականությունը: Քանի դեռ ուսուցիչը չի համոզվել, որ աշակերտները հասկացել են իրեն, պատմածի հիմնական իմաստը կարող են կապել իրենց գիտելիքների հետ, չպետք է շտապել անցնելու նոր նյութին: Օգտակար է նաև երբեմն անցածին վերադառնալը և այն կրկնելը, հանրագումարի բերելը: Հետևողականությունը, համակարգվածությունը զուգակցելով գրավիչ, հետաքրքրաշարժ շարադրանքի հետ՝ կապահովվի մշտական հետաքրքրություն և լարված ուշադրություն:

Կամածին ուշադրությունը ոչ կամածին ուշադրությունից տարբերվում է նրանով, որ այն օբյեկտի վրա է ուղղվում ընդունված որոշումների և մեր կողմից դրված գիտակցական նպատակների ազդեցության տակ: Եթե ոչ կամածին ուշադրության դեպքում բուն աշխատանքն է գրավում մեզ, ապա կամածին ուշադրության դեպքում ինքներս ենք մեր առջև գիտակցորեն նպատակ դնում լինել ուշադիր, գիտակցորեն ուշադրությունն ուղղել տվյալ աշխատանքի վրա, հաղթահարել դժվարությունները և կամային ճիգերի միջոցով հասնել կենտրոնացվածության: Հենց նպատակադրումն ու կամային ճիգերն էլ բնութագրում են կամածին ուշադրությունը («կամա-

ծին» բառը կապված է «կամք» բառի հետ):

Կամաժին ուշադրությունը մեր կամքի դրսևորումն է: Որևէ գործունեությամբ զբաղվելու որոշում կայացնելով՝ մենք ձգտում ենք իրագործել այն՝ գիտակցորեն ուշադրություն դարձնելով նույնիսկ այն բանի վրա, ինչը տվյալ պահին մեզ չի հետաքրքրում (որը, սակայն, անհրաժեշտ ենք համարում):

Յետևաբար, կամաժին ուշադրությունը որակապես տարբերվում է ոչ կամաժին ուշադրությունից, չնայած այն սերտորեն կապված է մեր զգացմունքների, նախկին փորձի և հետաքրքրությունների հետ: Բայց այդ ամենը կամաժին ուշադրության վրա ազդում է ոչ թե անմիջականորեն, այլ անուղղակի ձևով՝ միջնորդվելով գիտակցորեն դրված նպատակներով:

Ինչպես ոչ կամաժին ուշադրությունը, կամաժին ուշադրությունը ևս սերտորեն կապված է մարդու հետաքրքրությունների հետ: Բայց եթե ոչ կամաժին ուշադրության դեպքում հետաքրքրություններն անմիջական են, ապա կամաժին ուշադրության դեպքում նրանք հիմնականում միջնորդված բնույթ են կրում: Ինքը՝ գործունեությունը, անմիջականորեն կարող է մեզ չհետաքրքրել, բայց քանի որ նրա իրագործումն անհրաժեշտ է խնդիրը լուծելու համար, ապա, այդ նպատակով պայմանավորված, այն դառնում է հետաքրքիր:

Բացի կամաժին ուշադրությունից, պետք է նշել ուշադրության ևս մի տեսակ, որը կամաժինի նման նպատակասլաց բնույթ է կրում, բայց մշտական կամային ճիգեր չի պահանջում: Պատկերացրեք մի դպրոցական, որը թվաբանական դժվար խնդիր է լուծում: Սկզբում խնդիրը նրան կարող է բոլորովին չհետաքրքրել: Նա սկսում է լուծել խնդիրը, որն սկզբում ոչ մի կերպ չի լուծվում, և դպրոցականն անընդհատ շեղվում է՝ մեկ դուրս է նայում պատուհանից, մեկ՝ ականջ դնում միջանցքից լսվող աղմուկին, երբեմն էլ՝ գրիչն աննպատակ շարժում թղթի վրայով: Անընդհատ ճիգերի միջոցով նա ստիպված է վերադառնալ խնդրի լուծմանը: Բայց ահա լուծումն սկսված է, լուծման ճիշտ ճանապարհն ավելի ու ավելի հստակորեն է երևում, խնդիրն աստիճանաբար ավելի հասկանալի է դառնում: Այն թեև դժվար է, բայց լուծել կարելի է, և դպրոցականն ավելի ու

ավելի է տարվում նրանով, այն ավելի ու ավելի է գրավում իրեն: Խնդիրը նրա համար դառնում է հետաքրքիր, և աշակերտը դադարում է շեղվել: Ուշադրությունը կամաժինից դառնում է **հետկամաժին**:

Յետկամաժին ուշադրությունը չի կարելի նույնացնել ոչ կամաժին ուշադրության հետ, քանի որ այն կապված է գիտակցական նպատակների հետ և պահպանվում է գիտակցված հետաքրքրություններով: Մյուս կողմից՝ այն նման չէ նաև կամաժին ուշադրությանը, քանի որ չկան կամ համարյա բացակայում են կամային ճիգերը: Ուշադրության այդ հատուկ տեսակը, ուրեմն, որակապես տարբեր է ինչպես ոչ կամաժին, այնպես էլ կամաժին ուշադրությունից:


Ակնհայտ է այն նշանակությունը, որ ուշադրության այդ հատուկ տեսակն ունի մեր գիտակցական կյանքի ու մանկավարժական պրակտիկայի համար: Կամային լարման միջոցով ուշադրության մշտական պահպանումը խիստ հոգնեցուցիչ է: Այդ պատճառով էլ լավ մանկավարժը պիտի գրավի աշակերտներին, նրանց մեջ հետաքրքրություն առաջացնի ուսումնական նյութի նկատմամբ և արթնացնի հետկամաժին ուշադրություն:

### ✓ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուշադրությունը բազմակողմանի հոգեկան գործընթաց է, որն ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին պետք է առանձնացնել նրա համեմատական կայունությունը: Սահմանափակված է, արդյոք, մեր ուշադրությունը որոշակի ժամանակահատվածով: Կարող ենք, արդյոք, խոսել ժամանակի մեջ անփոփոխ հաճախականությամբ հանդես եկող «ուշադրության ալիքի» մասին:


Որոշ հետազոտողներ փորձել են ուշադրության գործընթացը սահմանափակել զուտ կենսաբանական ռիթմերով՝ նկատի ունենալով **ուշադրության տատանումները**: Այդ տատանումներն ուսումնասիրվել են հիմնականում հազիվ նկատելի գրգռիչների հիման վրա (Ն.Ն. Լավտ և ուրիշներ): Պարզվում է, որ եթե ականջ դնենք

շատ թույլ, հազիվ լսելի ծայրի (օրինակ՝ ժամացույցի տկտկոցին), կնկատենք, որ այն մեկ լսվում է, մեկ չի լսվում, չնայած մեր ուշադրությունը լարված է նրա նկատմամբ: Միևնույն արդյունքն է ստացվում նաև լուսավորվածության երկու իրար շատ մոտ նրբերանգներ տարբերելիս: Հաշվել են նաև նման տատանումների տարբերությունները: Պարզվել է, որ դրանց տևողությունը մեծ չէ՝ 1,5-ից մինչև 2,5 վայրկյան և քիչ թե շատ կայուն բնույթ ունի: Հենց այդ հանգամանքն էլ դիտվում էր որպես այն փաստի ցուցանիշ, որ ուշադրության տարածման հիմքը կենսաբանական գործընթացների ռիթմն է: Սակայն, իրոք, ինչի՞ց են ծագում այդ տատանումները: Այս հիմնահարցի հատուկ հետազոտությունները ցույց են տվել, որ նման տատանումներում միայն ուշադրությունը չէ, որ նշանակություն ունի. գրգռիչը դադարում է նկատվելուց նույնիսկ ուշադրության պահպանման դեպքում: Հետևաբար, մենք այստեղ գործ ունենք ոչ թե ուշադրության տատանումների, այլ զգայարանների պարբերական հոգնածության հետ<sup>10</sup>:



Նկ. 1. Փորձեր ստուգել, թե ինչ ժամանակահատվածում եք կարողանում հերթականությամբ գտնել 1-90 թվերը

Մեր ուշադրությունը չափազանց դինամիկ է, շարժուն: Անգամ այն ժամանակ, երբ մենք ամբողջովին խորասուզված ենք որևէ գործի մեջ, ուշադրությունն ամբողջ ընթացքում «շարժվում», փոփոխվում է, մեկ օբյեկտից անցնում մյուսին՝ թեկուզ մեր կողմից կատարվող գործունեության սահմաններում:



Նկ. 1. Ուշադրության տատանումները երկակի պատկերների ընթռնման ժամանակ

Ուշադրության շարժունությունը, դինամիկ բնույթը լավ է լուսաբանվում, այսպես կոչված, երկակի պատկերների միջոցով: Եթե նայելու լինենք հատած բուրգին (նկ. 1), ապա այն կարող է թվալ գազաթով դեպի մեզ ուղղված, կարծես դեպի առաջ դուրս մղված, բայց կարող է թվալ նաև գազաթով մեզանից հեռացող, դեպի խորքը գնացող: Եթե այդ երկու պատկերներն ընկալվում են բավարար պարզորոշությամբ, ապա բուրգի կենտրոնին անշարժ հայացքով նայելիս մեզ չի հաջողվում տեսականորեն պահել պատկերներից միայն մեկը. բուրգը մեկ թվում է գազաթով դեպի մեզ ուղղված, մեկ հակառակը: Այդ հերթափոխությունը կատարվում է ժամանակի շատ կարճ հատվածների ընթացքում:

Ուշադրության առանձնահատկություն է կայունությունը:

Անշարժ և անփոփոխ օբյեկտի վրա ուշադրությունը տեսականորեն կենտրոնացնելու հնարավորություն չունենալով՝ մենք կարող

10. Платонов К.К., "Занимательная психология". М., 1964г.

ենք, սակայն, երկար ժամանակի ընթացքում պահպանել մեր ուշադրությունն այնպիսի գործունեության իրականացման համար, որը կապված է այն օբյեկտի շարժունության փոփոխման հետ, որի հետ տվյալ դեպքում մենք գործ ունենք: Այսպես է, օրինակ, գնդակ խաղալիս. երբ խաղի օբյեկտն անընդհատ տեղաշարժվում է, փոփոխվում է նաև խաղի իրադրությունը: Կարո՞ղ ենք ասել, որ այստեղ մեր ուշադրությունը կայուն չէ: Իհարկե՞ ոչ: Քանի որ գործունեությունը շարունակվում է, մենք խոսում ենք կայուն ուշադրության մասին, չնայած մեր գործողությունների օբյեկտը փոփոխվում է: Օրինակ խնդիր լուծելիս դպրոցականն անցնում է խնդրի մի պայմանից մյուսին, որոշ թվերից և հաշվումներից՝ ուրիշներին: Նրա ուշադրության օբյեկտն անընդհատ փոփոխվում է, բայց գործունեությունը մնում է նույնը՝ խնդրի լուծումը: Այդ պատճառով էլ նման դեպքերում մենք խոսում ենք կայուն ուշադրության մասին այն առումով, որ ուշադրությունը պահպանվում է միննույն գործունեության սահմաններում:

Այսպիսով, թեև ուշադրությունը չի կարող երկար գանձված մնալ մեկ առարկայի վրա, բայց այն տևականորեն կարող է կենտրոնացվել միևնույն գործունեության վրա: Դրա ապացույց կարող են հանդիսանալ այն փորձերը, որոնցում փորձարկվողները պետք է նշեն իրենց աչքի առաջ արագորեն անցնող շրջանակները: Այդ գործունեությունն անընդհատ ուշադրություն է պահանջում, այն չի ավտոմատացվում, թեև բավական պարզ է: Օրինակ, փորձարկվողների առջև քաշվում է փոքրիկ անցք ունեցող վարագույր: Անցքի ետևից անցնում է ժապավենը, որի վրա շրջանակներ են նկարված: Ժապավենը որոշակի արագությամբ մեկ լիսեռից մյուսի վրա է փաթաթվում այնպես, որ փորձարկվողի առջևից մեկ վայրկյանում անցնում են երեք շրջանակներ: Փորձարկվողը մատիտով պիտի գիծ քաշի շրջանակներից յուրաքանչյուրի վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ այդպիսի դեպքում փորձարկվողը 5-10 և նույնիսկ 20 րոպե կարող է անսխալ աշխատել: Այսպիսով, րոպեում երեք օպերացիա պահանջող խիստ լարված աշխատանքը, որը թույլ չի տալիս շեղվել նույնիսկ մեկ երրորդական վայրկյանով, կարող է անընդմեջ շա-

րունակվել ոչ թե 3-4 վայրկյան, այլ 20 րոպե, այսինքն՝ 1200 վայրկյան: Ուշադրության կայունությունն այստեղ ակնհայտորեն պահպանվում է կամային ճիգերով, աշխատանքը հնարավորին չափով լավ կատարելու ձգտմամբ: Փորձարարական հետազոտությունների և ոչ շատ դժվար մտավոր աշխատանքի դեպքում դպրոցականի ուշադրությունը կարող է ավելի երկարատև լինել:

Ուսումնասիրվել է 3-րդ, 4-րդ և 5-րդ դասարանների աշակերտների ուշադրության կայունությունը: Առաջարկվել է արտագրել որևէ տեքստ: Յուրաքանչյուր կես րոպեի մեկ փորձարկողն ազդանշան էր տալիս, և դպրոցականները պայմանավորված նշանը պետք է դնեին այն տառի վրա, որն այդ պահին գրում էին: Այդ կերպ հնարավոր էր դառնում հաշվել կես րոպեի ընթացքում յուրաքանչյուր աշակերտի գրած տառերի քանակը: Պարզվեց, որ 40 րոպեի ընթացքում ուշադրության քիչ թե շատ նշանակալից ոչ մի տատանում չի նկատվել: Յետևաբար, 10-13 տարեկան դպրոցականները կարող են անընդմեջ աշխատել ամբողջ դասի ընթացքում: Ուստի, այդ տարիքում չի կարելի այդքան երկարատև միօրինակ աշխատանք հանձնարարել: Որքան ավելի փոքր է երեխայի տարիքը, և դժվար է աշխատանքը, այնքան ավելի հաճախակի պետք է աշխատանքի մեկ տեսակից անցնել մյուսին կամ կարճատև ընդմիջումներ անել: Այնուամենայնիվ, վերոհիշյալ փորձերի արդյունքները բավարար հստակությամբ ցույց են տալիս, որ ուշադրության կայունությունը կախված է ոչ թե կարճատև կենսաբանական ռիթմերից, այլ կամքի լարումներից, որոնք պայմանավորված են աշխատանքի նշանակությամբ և նրա նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությամբ:

**Ուշադրության բաշխումը** հոգեկան գործունեության այնպիսի կազմակերպումն է, որի դեպքում միաժամանակ արվում են երկու կամ ավելի գործողություններ: Իրականում հնարավոր է, արդյոք, բաշխել ուշադրությունը: Անցյալ դարի վերջին կատարված մի քանի հետազոտություններ ցույց տվեցին, որ երկու տարբեր աշխատանքներ (օրինակ՝ բանաստեղծության անգիր արտասանելը և թղթի վրա ոչ մեծ թվեր գումարելը) միաժամանակ հնարավոր են ու լրիվ իրագործելի: Այդ գործընթացներից յուրաքանչյուրի վրա

առանձին ծախսվում է նույնքան ժամանակ, որքան երկուսի վրա միաժամանակ:

Որոշ մասնագիտությունների համար (օրինակ օդաչուների, վարորդների, մանկավարժների և ուրիշների աշխատանքում) ուշադրությունը բաշխելու կարողությունը մեծ նշանակություն ունի: Ուսուցիչը դասի ժամանակ նյութը շարադրելիս պետք է հետևի իր մտքի ընթացքին, լսի ինքն իրեն և միաժամանակ դիտի աշակերտներին որոշելու, թե որքանով են նրանք ուշադիր:

**Ուշադրության** էական կողմերից է նրա **փոխանցումը**, այսինքն մեկ գործողությունից մյուսին արագորեն անցնելու կարողությունը: Ուշադրության փոխանցմանը հաճախ ստիպված ենք լինում դիմել, երբ ընկալում ենք երկու միաժամանակյա գործող տարասեռ գրգռիչներ, որոնք ժամանակի տվյալ պահին ընկալել չի հաջողվում:

Ուշադրության գիտակցական փոխանցումը չի կարելի շփոթել շեղման հետ: Ուշադրության հեշտությամբ շեղվելը վկայում է նրա անկայուն լինելու մասին: Ուշադրությունը առանձնապես ուժեղ են շեղում անսպասելի, ընդհատում, ինչպես նաև հույզերի հետ կապված գրգռիչները: Տեսական, միասեռ, թեկուզ և բավական ուժեղ գրգռիչները միայն սկզբում են շեղում ուշադրությունը, իսկ հետո հաջողվում է աստիճանաբար հարմարվել դրանց: Փորձնական ճանապարհով ուշադրության շեղումն ուսումնասիրում են աշխատանքին խանգարող լրացուցիչ գրգռիչներ ավելացնելով և հաշվի առնելով, թե ինչպես են դրանք ազդում աշխատանքի վրա:

**Ուշադրության** բացասական կողմերից է **ցրվածությունը**: Ցրվածություն ասելով երբեմն հասկանում ենք աշխատանքի մեջ խորասուզված լինելը, որի հետևանքով մարդը շրջապատում ոչինչ չի նկատում: Հասկանալի է, որ այդպիսի խորասուզումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ կարող ենք ամբողջապես նվիրվել մեկ գործունեության: Բայց իրականում անհրաժեշտ է լինում, որևէ գործով զբաղված լինելով, այնուամենայնիվ, հետևել շրջապատող իրադրության փոփոխություններին, կարողանալ բաշխել ուշադրությունը:

Ցրվածության վատթարագույն տեսակն առկա է այն դեպքում,

երբ մարդը ոչ մի բանի վրա ի վիճակի չէ երկար կենտրոնանալ, երբ նա անընդհատ մեկ օբյեկտից կամ երևույթից անցնում է մյուսին ոչ մի բանի վրա չկենտրոնացնելով ուշադրությունը: Հասուն մարդկանց շրջանում այդպիսի ցրվածություն նկատվում է հոգնած ժամանակ: Երեխաները հաճախ են հայտնվում նման վիճակում, և այդպիսի ցրվածության դեմ պետք է պայքարել հատկապես նրանց կամային որակների դաստիարակման միջոցով:

Ցրվածությունից բացի նկատվում են նաև ուշադրության այլ խախտումներ: Դրանց թվին են պատկանում գիտակցության ծավալի հիվանդագին նեղացումը, ուշադրության ծավալի սահմանափակումը, նրա գործունեության ոլորտի փոքրացումը: Դրա հետ հաճախ կապված է լինում նաև ուշադրության բաշխման և ունակության թուլությունը: Այդ կարգի հիվանդագին երևույթները նկատվում են ուղեղի որոշ օրգանական հիվանդությունների դեպքում: Հիվանդը գտնվում է միայն իրեն առավելապես մոտ տպավորությունների և վերհուշերի ոլորտում, ուստի նրա ուշադրության շարժընթացը և դաշտը սահմանափակվում են միայն իրադրական նշանակություն ունեցող օբյեկտներով: Այլ հիվանդությունների դեպքում, ընդհակառակը, նկատվում են ուշադրության թեթևակի շեղումներ, նրա չափից ավելի շարժունություն, մեկ օբյեկտից կամ գործունեության մեկ տեսակից մյուսին կատարվող անընդհատ անցումներ: Ի դեպ, առանձին դեպքերում մեկ օբյեկտից մյուսին նման անընդմեջ անցումներն անհնար են դարձնում այս կամ այն աշխատանքի կատարումը: Որոշ հոգեկան հիվանդությունների դեպքում դիտվում է ուշադրության ալարկոտություն, շարժունության նվազում կամ, ընդհանրապես, անշարժություն, նրա միակողմանի բևեռացումը միայն ինչ-որ մի բանի վրա: Նման հոգեկան երևույթների շեղումների բուժմամբ զբաղվում է ախտաբանական հոգեբանությունը:



## ԹԵՄԱ 9. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զգայությունը և նրա բնախոսական հիմքը
2. Զգայությունների տեսակները
3. Զգայությունների օրինաչափությունները
4. Զգայությունների շեմքերը և զգայունակություն

### ✓ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Զգայությունը պարզագույն հոգեկան իմացական գործընթաց է առարկաների ու երևույթների առանձին հատկությունների, ինչպես նաև օրգանիզմի ներքին վիճակների մասին, երբ գրգռիչներն անմիջապես ներգործում են համապատասխան ռեցեպտորի վրա:

Զգայությունը հոգեկան երևույթներից պարզագույնն է, որն ստանում, ընտրում, կուտակում և ուղեղին է հաղորդում ինֆորմացիա: Նրանք այն յուրօրինակ «կանալներն են», որոնցով արտաքին աշխարհը թափանցում է մարդկային գիտակցության մեջ: Այն մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեցող առարկաների առանձին հատկությունների արտացոլումն է:

#### Զգայությունների բնախոսական հիմքը


**Անալիզատոր:** Զգայությունն առաջանում է որպես նյարդային համակարգի ռեակցիա այս կամ այն գրգռիչի նկատմամբ և ունի ռեֆլեկտորային բնույթ:

Այս կամ այն զգայության առաջացման համար առաջին հերթին անհրաժեշտ է գրգռիչի և անալիզատորի (զգայության բնախոսական մեխանիզմ) լիակատար գործունեություն: Յուրաքանչյուր զգայություն ունի իր անալիզատորը, որը բաղկացած է երեք մասից.

- ծայրամասային բաժին (ռեցեպտոր),
- կենտրոնաձիգ (աֆերենտային) և կենտրոնախույս (էֆերենտալին) նյարդեր,
- անալիզատորի կեղևային բաժին:

Զգայության գործընթացը հնարավոր է դառնում անալիզատորի որպես մի ամբողջության, աշխատանքի շնորհիվ:

Այսպես, ռեցեպտորի վրա գրգռիչի ազդեցության դեպքում առաջանում է գրգռ, որն այնուհետև, որպես արտաքին էներգիա, վերածվում է նյարդային պրոցեսի: Ռեցեպտորից այդ գրգռը կենտրոնաձիգ նյարդով հասնում է անալիզատորի կենտրոնական հատվածին, որտեղ և տեղի է ունենում նյարդային ինպուլսի մշակում: Պատասխանը կենտրոնախույս նյարդի միջոցով ուղարկվում է էֆեկտորին (ընդունող օրգան), այսինքն՝ օրգանիզմը պատասխանում է գրգռին: Ըստ այդմ էլ մենք զգում ենք լույս, ծայն, համ, հոտ և այլն:



Նկ.1. Տեսողական անալիզատորի սխեման

Ռեցեպտորի և ուղեղի միջև գոյություն ունի ուղիղ և հետադարձ կապ: Այն ընդունված է անվանել ռեֆլեկտորային աղեղ իր հաջորդող ուղիներով, կեղևային բաժնով և էֆեկտորով:

Այսպես, անալիզատորի լիարժեք գործունեության շնորհիվ առաջանում է այս կամ այն զգայությունը, որն էլ ապահովում է շրջապատող աշխարհի առարկաների առանձին հատկությունների ճիշտ արտացոլումը:

Ըստ արտացոլման բնույթի և ռեցեպտորի գտնվելու տեղի՝ զգայություններն ընդունված է բաժանել երեք խմբի.

**1. Արտաքին զգայություններ** (էքստերոցեպտիվ), որոնք արտացոլում են առարկաների և երևույթների առանձին հատկանիշները, և որոնց ռեցեպտորները գտնվում են մարմնի արտաքին մակերեսին:

**2. Ներքին զգայություններ** (ինտերոցեպտիվ), որոնց ռեցեպտորները գտնվում են մարմնի ներքին օրգաններում ու հյուսվածքներում և արտացոլում են ներքին օրգանների և նրանց վիճակի հետ կապված հատկություններ (քաղց, ծարավ, ներքին օրգանների ցավ և այլն):

**3. Մկանահոդային զգայություններ** (պրոպրիոցեպտիվ), որոնց ռեցեպտորները գտնվում են մկաններում, ջլերում, հոդակապերում, ներքին ականջում և տեղեկություն են տալիս մեր մարմնի հավասարակշռության, շարժման ու դիրքի մասին:

Զգայությունները լինում են նաև՝

**ա) կոնտակտային, բ) դիստանտային:**

Կոնտակտային համարվում են այն զգայությունները, որոնց առաջացման համար անհրաժեշտ է ռեցեպտորի հպումը (կոնտակտ) գրգռիչի հետ: Դրանք են՝ շոշափելիքի և ճաշակելիքի զգայությունները:

Դիստանտային զգայությունների ռեցեպտորները հակազդում են հեռվում գտնվող օբյեկտների ազդեցություններին: Դրանք են՝ տեսողության, լսողության և հոտառության զգայություններ:

Դեռևս հին հույներն են տարբերակել հինգ զգայարաններ և նրանց համապատասխան՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառության ու ճաշակելիքի զգայությունները: Մինչդեռ ժամանակակից գիտությունը բնութագրում է ավելի քան երկու տասնյակ անալիզատորական համակարգեր:

Զգայություններն առաջանում են համապատասխան գրգռիչների ներգործությամբ: Օրինակ՝ տեսողական զգայություն առաջացնող գրգռիչը 380-770 միլիմիկրոն երկարության էլեկտրամագնիսական ճառագայթներն են, լսողական զգայության գրգռիչը 16-20.000 հերց հաճախականության ձայնային ալիքները և այլն:

Զգայություններն ունեն առանձնահատկություններ և օրինաչափություններ: Դրանք են՝ որակ, ինտենսիվություն, տևողություն, տեղայնացում (լոկալիզացիա):

**Որակը** տվյալ զգայության այն հիմնական առանձնահատկությունն է, որով նա տարբերվում է զգայությունների մյուս տեսակներից: Օրինակ՝ լսողական զգայությունները տարբերվում են ըստ բարձրության, ձայներանգի, ուժի, իսկ տեսողական զգայությունները՝ ըստ հագեցվածության, գունային երանգի և այլն:

Ինտենսիվությունը զգայությունը բնորոշում է քանակական տեսանկյունից, այն որոշվում է ազդող գրգռիչի ուժով ու ռեցեպտորի ֆունկցիոնալ վիճակով: Ինչքան ուժեղ է (ինտենսիվ է) գրգռիչը, այնքան ուժեղ է զգայությունը:

**Տևողությունը** զգայության ժամանակային բնութագիրն է: Զգայարանի վրա գրգռիչի ազդեցության դեպքում զգայություն առաջանում է ոչ թե միանգամից, այլ որոշ ժամանակ անց, որը կոչվում է զգայության թաքուն (լատենտային) շրջան:

Ցավի զգայության թաքուն շրջանը կազմում է 370 միլիվայրկյան, ճաշակելիքի զգայության համար այն ավելի երկար է և կազմում է 50 վայրկյան:

Այսպես, ինչպես զգայություն չի առաջանում գրգռիչի ազդելու հետ միաժամանակ, այնպես էլ այն չի չքանում գրգռիչի ազդեցության դադարեցման պահին: Գրգռիչի հետքը մնում է, այսպես կոչված, հաջորդական պատկերի ձևով, որը հստակորեն երևում է լսողական և տեսողական զգայությունների դեպքում: Հաջորդական պատկերը կարճատև հիշողությանը վերաբերվող երևույթ է:



Նկ.1. Ն. Ի. Լորպաչևսկու դիմանկարը

Եթե 30-40 վայրկյան ուշադիր դիտենք նկարը (Նկ.1), իսկ հետո հայացքն ուղղենք միագույն ներկված առաստաղին, ապա կարելի է տեսնել ռուս նշանավոր մաթեմատիկոս Ն.Ի. Լորպաչևսկու դիմանկարը, որը հենց հաջորդական պատկերի փաստ է:

**Տարածական լոկալիզացիան** գրգռիչի տեղի որոշումն է տարածության մեջ: Ցանկացած զգայություն բովանդակում է գրգռիչի տարածական-վերլուծական առանձնահատկությունը: Գույնը և լույսը մենք վերագրում ենք որոշակի մակերևույթի: Չայնային զգայությունների հիման վրա որոշում ենք տարածության մեջ գրգռիչի դիրքը, տեղափոխությունը, տեղը: Տարածական տեղորոշման շնորհիվ մենք տեղեկություն ենք ստանում, թե ինչ տեղ է գրավում գրգռիչը տարածության մեջ: Առանց գրգռիչի տեղը որոշելու, մարդը կկորցնի իր կողմնորոշման գործունեությունը:

Զգայությունների հատկություններից բացի (որակ, ինտենսիվություն, տևողություն, տարածական վերլուծություն կամ լոկալիզացիա), գոյություն ունեն նաև օրինաչափություններ, որոնցից են զգայության շեմերը և զգայունակությունը, ադապտացիան, զգայությունների փոխազդեցությունը, սենսիբիլիզացիան և սինեսթեզիան:

## ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԱՆՆԵՐ




Գ.Ա. Էդիլյան  
1885-1942



Մ.Ա. Մազմանյան  
1910-1977



Բ.Գ. Անանև  
1907-1972



Ե.Ա. Միլերյան  
1913-1983

ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ



Շ. Ս. Սիֆոնյան  
1912-1974



Ա.Ա. Լալայան  
1925-1985



Ա.Ջ. Արղումանյան




Ա.Ա. Նալչաջյան

\* Չի պահպանվել Հ.Ա. Թուրունջյանի (1918-1987) լուսանկարը

ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ



Լ.Ս. Վիգոտսկի



Ա.Ն. Լեոնոսկ



Ս.Լ.Ռուբինշտեյն




Բ.Ս. Տեպլով

ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ



Ա.Ա. Զախարով

1912-1974



Ն.Տ. Դերժիկյան

1925-1989




Ա.Ա. Սախնիզյան




Ա.Ա. Արտյունյան

ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ



Ա.Ռ. Լուրիկյան

1901-1987



Մ. Գ. Յարյան

1907-1980



Ի.Ս. Կոնյան




Ա.Ա. Պետրոսյան

1928-1987


ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ




Վիլիեյն Վուսդոյ  
1832-1920



Ուիլյան Ջեյնս  
1842-1910




Ջիգնունդ Ֆրոյդ  
1856-1939



Ռոջերս Սպերրի

ԱՆՎԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՆԵՐ



Կ.Գ. Յունգ



Ժան Պիատե  
1896-1980



Կարլ Ռոջերս




Հանս Սելիե

## ԱՆՎԱՆԻ ՖԻԶԻՈԼՈԳՆԵՐ




Ի.Մ.Ստեփանով  
1829-1905



Ի.Պ.Պավլով  
1849-1936



Ա.Ա.Ուխտոմսկի  
1875-1942



Լ.Ա.Օրբելի  
1882-1958

## ԶԳԱՅՈՒԹՅԱՆ ՇԵՄԵՐԸ ԵՎ ԶԳԱՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Դժվար չէ նկատել, որոչ բոլոր գրգռիչների դեպքում է, որ առաջանում է զգայություն: Մեկ-երկու գրամ շաքարի քաղցրությունը մեկ բաժակ թեյի մեջ մենք չենք զգում: Փոքր աղվամազի հպումն ափի մեջ շոշափելիքի զգայություն չի առաջացնում: Որպեսզի զգայություն առաջանա, գրգռիչը պետք է որոշակի ուժ ունենա:

Հ գրգռիչի այն ամենափոքր ուժը, որը հազիվ նկատելի զգայություն է առաջ բերում, կոչվում է **զգայունակության ստորին բացարձակ շեմք**:

Թույլ գրգռիչները, որոնք զգայություն չեն առաջացնում, կոչվում են ենթաշեմքային: Զգայության ներքին շեմքը որոշում է տվյալ անալիզատորի զգայունակության մակարդակը:

Բացարձակ զգայունակության և շեմքի մեծության միջև կա հակադարձ կախվածություն: Վայսինքն՝ որքան ցածր է շեմքի մեծությունը, այնքան բարձր է անալիզատորի զգայունակությունը: Այդ հարաբերություններն արտահայտվում են հետևյալ բանաձևով՝

$$E = \frac{1}{p}, >$$

որտեղ E-ն զգայունակությունն է, իսկ p-ն գրգռիչի շեմքային մեծությունը:

Գոյություն ունեն նաև զգայությունների վերին բացարձակ շեմք և տարբերակման շեմք: Գրգռիչի այն ամենամեծ ուժը, որի դեպքում առաջանում է ազդող գրգռիչին համապատասխան զգայություն, կոչվում է **զգայունակության վերին բացարձակ շեմք**: Գրգռիչների ուժի հետագա մեծացումն առաջացնում է ոչ թե զգայություն, այլ ցավ:

Օրինակ՝ 20.000 հերց հաճախականությունից բարձր ծայնային ալիքն առաջացնում է ոչ թե լսողական զգայություն, այլ՝ ցավ:

Զգայություն առաջացնող գրգռիչը կարող է ուժեղանալ կամ թուլանալ, սակայն ուժի փոփոխությունը կարող է նկատվել միայն գրգռիչի որոշակի քանակի ավելացման կամ նվազեցման դեպքում:

Օրինակ, եթե մեկ բաժակ ջրի մեջ լուծենք 6 գրամ շաքար, որոշ քաղցրություն կզգանք, իսկ եթե ավելացնենք ևս մեկ գրամ, քաղցրության որակի մեջ որևէ փոփոխություն չենք նկատի: Ավելացնենք ևս 3-4 գրամ, այս դեպքում արդեն կզգանք քաղցրության ավելացում: Այստեղից հետևում է.

Հերկու գրգռիչների միջև այն ամենափոքր տարբերությունը, որն առաջացնում է զգայությունների հազիվ նկատելի տարբերություն, կոչվում է **տարբերակման շեմք**: >

Եթե ձեռքում բռնել եք 100 գ բեռ, ապա կշռի ավելացման զգայություն կարող ենք ունենալ, եթե նրան ավելացնենք ևս 3.4գ, իսկ եթե այն կազմում է 1000 գ, պետք է ավելացնել 33.3գ, ուրեմն՝ որքան մեծ է նախնական մեծությունը, այնքան ավելի մեծ պետք է լինի նրա աճը:

ՀԱՊԱՎԱՏԱԳԻԱ: Զգայարանների զգայունակությունը փոփոխվում է գրգռիչի ներգործության շնորհիվ: Եթե փոխվում է գրգռիչի ներգործության ուժը, բնականաբար, փոխվում է նաև զգայարանի զգայունակությունը: >

Տարբերում են ադապտացիայի (հարմարման) 3 տեսակ.

1. Ադապտացիա՝ որպես գրգռիչի տևական ազդեցության պրոցեսում զգայության լրիվ վերացում: > Օրինակ՝ մաշկի վրա դրված թեթև բեռը շուտով դադարում է զգայություն առաջացնել: Մատին թույլ հպված մատանին կորցնելուց հետո միայն կարող ենք նկատել նրա բացակայությունը, քանի որ վերացել էր նրա կողմից առաջացած զգայությունը: Կամ՝ տհաճ հոտում որոշ ժամանակ մնալուց հետո չքանում է հոտառական զգայությունը: Բոլորս ենք զգացել դեղատուն մտնելու պահին դեղերի յուրահատուկ հոտերի մեծ ակտիվությունը: Մինչդեռ դեղատան աշխատողը հարմարվում է (ադապտացվում է) այդ հոտին: Նրա հոտառական ռեցեպտորը՝ քթի լորձաթաղանթը, հարմարվում է հոտին, ու որոշ ժամանակ անց վերանում է հոտառական զգայությունը տվյալ գրգռիչի նկատմամբ:

2. Ադապտացիա, որն արտահայտվում է ուժեղ գրգռիչի ազդեցության բթացումով: >

Ձեռքը շատ սառը ջրի մեջ երկար պահելիս սառնության զգայու-

թյան ինտենսիվությունը (ուժը) փոքրանում է: Կամ խավար սենյակից պայծառ լուսավորված սենյակ մտնելիս սկզբում կարծես կուրանում ենք:

< Ադապտացիայի այս երկու տեսակները բացասական են: >

Հ 3. Ադապտացիա, երբ թույլ գրգռիչի ազդեցության տակ մեծացում է զգայարանի զգայունակությունը: >

Օրինակ, մթության տևական ազդեցության հետևանքով ավելացում է աչքի զգայունակությունը:

< Ադապտացիայի այս տեսակը դրական է: >

Որոշ անալիզատորներ արագ են ադապտացվում, օրինակ՝ շոշափելիքը, իսկ, ասենք, տեսողականը դանդաղ է ադապտացվում:

**Զգայությունների փոխներգործությունը:** Զգայությունների ինտենսիվությունը կախված է ոչ միայն գրգռիչի ուժից և ռեցեպտորի ադապտացիայի աստիճանից, այլև տվյալ պահին մնացած զգայությունների վրա ազդող գրգռիչներից:

< Այլ զգայարանների գրգռման ազդեցության տակ անալիզատորի զգայունակության փոփոխությունը կոչվում է **զգայությունների փոխներգործություն**: >

Ընդհանուր առմամբ, մեր բոլոր անալիզատորներն էլ մեծ կամ փոքր չափով միմյանց վրա ներգործելու ընդունակություն ունեն:

Օրինակ՝ խավարում փոխվում է մարդու լսողական զգայունակությունը, այն ավելի ակտիվանում է:

Այստեղ օրինաչափությունն այն է, որ թույլ գրգռիչները մեծացնում, իսկ ուժեղները թուլացնում են մյուս զգայարանների զգայունակությունը: Փոխներգործության երևույթը մեկ անգամ ևս հաստատում է անալիզատորների միջև եղած կեղևային կապերի առկայությունը:

< **Սենսիբիլիզացիա:** Զգայությունների փոխներգործությունը հանդես է գալիս իբրև սենսիբիլիզացիայի երևույթ, որը սենսիբիլիզատորների փոխներգործության և մարզումների շնորհիվ զգայունակության ուժեղացումն է: >

Օրինակ՝ լույսի ներգործությամբ լսողական օրգանի զգայունակությունն ուժեղանում է, և ծայրը լսվում է ավելի բարձր:



Անալիզատորի զգայունակության փոփոխություն կարող է առաջ գալ նաև պայմանական ռեֆլեքսների ձևով՝ երկրորդ ազդարարային համակարգի՝ խոսքի ազդեցության տակ (առաջին ազդարարային համակարգ են համարվում զգայությունները):

Կարելի է հատուկ ընտրված օժանդակ գրգռիչների շնորհիվ մեծացնել անալիզատորի զգայունակությունը:

Փորձարկվողի լեզվին հաղորդվող թույլ էլեկտրական գրգռիչի զգայությունը փոխվում է, եթե նրան ասում ենք «թու է, ինչպես լիմոնը» բառերը:

**Սինեսթեզիա:** Անալիզատորներից մեկի գրգռման ազդեցության տակ մյուս անալիզատորների համար բնորոշ զգայության առաջացումը կոչվում է սինեսթեզիա:


Սինեսթեզիայի առավել հաճախ հանդիպող արտահայտություններից է գունային լսողությունը, երբ ձայնային գրգռիչներն առաջացնում են տեսողական պատկերներ: Հայտնի է, որ որոշ երգահաններ ունեցել են գունավոր լսողության ընդունակություն (Ռիմսկի-Կորսակով, Սկրյաբին և ուրիշներ)<sup>11</sup>:

Սինեսթեզիայի երևույթի վրա է հիմնված «գունային երաժշտության» սարքերի ստեղծումը, երբ այս կամ այն նոտան ներկայացվում է որպես առանձին գույն:

Որոշ հոտեր ևս կարող են առաջ բերել «գունավորվածություն»: Ավելի հազվադեպ են հանդիպում տեսողական գրգռիչների ազդեցության տակ լսողական զգայությունների առաջացման դեպքերը:

Սինեսթեզիայով ոչ բոլոր մարդիկ են օժտված. այնուամենայնիվ, այն բավականին տարածված է: Ուսումնասիրությունները պարզել են, որ մարդկանց մոտ 12 տոկոսն է օժտված սինեսթեզիայի երևույթով և խորը ուսումնասիրվելու դեպքում կարող են բացահայտվել հոգեկանի նոր կողմեր:

## ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ



11. Сабанеев Л.А., "Воспоминание о Скрябине", М., 1925г.

1. Ընկալման հիմնական առանձնահատկությունները
2. Ընկալման դասակարգումը

✓ **ԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ընկալումը առարկաների ու երևույթների մասերի ու հատկությունների ամբողջական արտացոլումն է զգայարանների վրա՝ նրանց ունեցած անմիջական ներգործության ժամանակ:

Շրջապատող աշխարհի մասին սկզբնական գիտելիքներ մենք ստանում ենք ոչ միայն զգայությունների, այլև ընկալումների միջոցով: Ի տարբերություն զգայության, որում արտացոլվում են գրգռիչի առանձին հատկանիշները, ընկալումն արտացոլում է առարկան ամբողջությամբ, նրա հատկանիշների միագումարությունը: Առանց զգայությունների ընկալումն անհնար է, սակայն ընկալումը ոչ թե առանձին զգայությունների մեխանիկական գումար է, այլ զգայական իմացության որակական նոր աստիճան՝ իրեն հատուկ առանձնահատկություններով:

Ընկալման հիմնական **առանձնահատկություններն են՝ առարկայականությունը, ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, հաստատունությունը և իմաստավորվածությունը:**

Ընկալման **առարկայականությունը** դրսևորվում է, այսպես կոչված, օբյեկտիվացիայի երևույթում, այսինքն՝ արտաքին աշխարհից ստացված տեղեկություններն այդ նույն աշխարհին վերագրելու գործողությունում: Առանց այսպիսի վերագրման մարդն իր գործունեության ընթացքում չի կարող ճանաչել իր շրջապատի առարկաներն ու երևույթները: Ընկալման դիտողական պատկերը պատկանում է որոշակի առարկայի, և նրա ամենաբնորոշ հատկանիշն ընկալված առարկաների կամ երևույթների անվանակոչումն է: Ընկալելիս տեղի է ունենում ոչ միայն առարկայի կոնկրետ ընկալում, այլև այդ առարկայի վերագրում որոշակի դասի:



Նկ. 1. Ձիմվորը և շունը




Նկ. 2. Դպրոցական

Նայելով այս նկարներին՝ մենք այն կարող ենք չընկալել, սակայն տալով անվանում՝ «Ձիմվորը և շունը», «Դպրոցական» կիսատ այս նկարները անմիջապես դառնում են ընկալելի: Հենց խոսքի օգնությամբ է, որ կարողանում ենք ընկալել ու ճանաչել առարկաները:

**Ընկալման ամբողջականությունը:** Ի տարբերություն զգայությունների, որոնք արտացոլում են առարկայի առանձին հատկանիշներ, ընկալումն առարկայի ամբողջական արտացոլումն է:



Նկ. 3.



Նկ.4.

Այս պատկերները դիտարկելիս ընկալում ենք ոչ թե չհատվող գծեր, շտրիխներ կամ կետեր, այլ քառակուսի, շրջանագիծ, եռանկյունի: Ձեռք բերած փորձի, գիտելիքների հիման վրա մարդն ընկալման գործընթացում առանձին տարրերը միավորում է ամբողջական պատկերի մեջ (Նկ.3, 4):

**Ընկալման կառուցվածքայնությունը** (ստրուկտուրայնություն): Ընկալման ամբողջականության հետ կապված է նրա կառուցվածքայնությունը: Ընկալումն անհամապատասխան է մեր ակնթաղթային զգայություններին և նրանց պարզ գույնարը չէ: Մենք ընկալում ենք զգայություններից վերացարկված մի կառուցվածք, որը ձևավորվում է ժամանակի ընթացքում: Երբ մարդը որևէ մեղեդի է լսում, ավելի վաղ լսված նոտաները շարունակում են հնչել նրա ականջում, և սովորաբար լսողը մեղեդին ընկալում է հանկարծակի՝ ունկնդրման որևէ պահի: Այսինքն՝ մենք չենք սպասում վերջին նոտայի հնչելուն, որպեսզի հասկանանք տվյալ մեղեդին ամբողջովին:

**Ընկալման հաստատունությունը:** Մեր շրջապատի առարկաները հաճախակի փոխում են իրենց տեսքը, ձևը, գույնը և այլն, սակայն, շնորհիվ ընկալման հաստատունության, այդ փոփոխություն-

ներն ընկալվում են ըստ ձևի, մեծության, գույնի և այլ հատկանիշների, որպես հարաբերականորեն հաստատուն օբյեկտներ: Գրատախտակի գույնն ընկալվում է սև, կավճինը՝ սպիտակ, անկախ լույսի պայծառության աստիճանից, կամ ինքնաթիռից ներքև նայելիս առարկաները մեզ երևում են շատ փոքր, մինչդեռ դրանք ընկալում ենք իրենց իրական չափերով և այլն:

**Ընկալման իմաստավորվածությունը:** Մեր ընկալումները կապված են մտածողության և առարկաների էության հասկացման հետ: Ըստ այդմ էլ, ընկալման իմաստավորվածությունն իրենից ներկայացնում է արտացոլվող առարկայի ֆունկցիոնալ հատկանիշների գիտակցում: Առարկան գիտակցորեն ընկալել նշանակում է մտովի անվանել այն և որոշել, թե ընկալվող առարկան որ դասին կամ խմբին է պատկանում:

Փորձենք ընկալել այս պատկերները (Նկ. 1, 2):



Նկ. 1.



Նկ. 2.

**Ապերցեպցիան** ընկալման կախվածությունն է մայրու կենսափորձից, նրա հոգեկան կյանքի բովանդակությունից, անձին բնորոշ առանձնահատկություններից: Օրինակ, մարմարին նայելիս նրա մակերեսն ընկալում ենք իբրև պինդ ու սառը: Իսկ չէ՞ որ ոչ պնդությունը և ոչ էլ սառնությունը տեսնել չի կարելի, դրանք կարելի է զգալ միայն շոշափելով: Սակայն նախկինում ստանալով մարմարի հատկությունների մասին զգայական տեղեկություններ ձեռք ենք բերել կենսափորձ, որով էլ պայմանավորված, մենք հեռվից նայում

և զգում ենք մարմարի հատկությունները: Այսն ձևով վերարկուի մորթե օձիքին նայելիս ընկալում ենք նրա փափկությունը, ջերմությունը, չնայած տվյալ պահին ձեռք չենք տալիս: Ահա այս երևույթը հոգեբանության մեջ անվանում ենք ապերցեպցիա:

Որքան ավելի հարուստ է մարդու փորձը, որքան ավելի շատ գիտելիքներ ունի նա, այնքան ավելի դյուրին է ընթանում առարկաների ու երևույթների ընկալումը:

## ԸՆԿԱԼՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ


Ընկալումն էլ զգայության նման ռեֆլեկտորային գործընթաց է: Զգայությունների հետ համեմատած ընկալումն ուղեղի վերլուծական-համադրական գործունեության ավելի բարձր ձևն է. երբ տեղի է ունենում համալիր գրգռիչների վերլուծություն և համադրություն: Կախված այն բանից, թե ընկալման ժամանակ որ անալիզատորն է գերիշխող դեր խաղում. տարբերում ենք տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառական և ճաշակելիքի ընկալումներ: Ընկալման տարբեր տեսակները մաքուր տեսքով հազվադեպ են պատահում: Ասենք դասի ժամանակ տեքստի ընկալումը ներառում է աշակերտի տեսողական, լսողական և շարժողական ընկալումները:

Ընկալման մեկ այլ դասակարգման համար հիմք ենք ընդունում մատերիայի գոյության ձևերը տարածություն, ժամանակ, շարժում: Ըստ այդմ էլ առանձնացվում են տարածության, ժամանակի և շարժման ընկալումները:


**Տարածության ընկալումն** իրենից ներկայացնում է առարկաների ձևի (քառակուսի, եռանկյունի, խորանարդ, գլանաձև, մեծ, փոքր), փոխադարձ դասավորվածության, նրանց հեռավորության, խորության ընկալում: Տարածական ընկալման հիմքում ընկած է մի շարք անալիզատորների համալիր գործունեությունը: Օրինակ, առարկայի ձևն ընկալելու համար մեծ դեր են կատարում տեսողական, շոշափելիքի և շարժողական անալիզատորները:

Առարկաների մեծության, խորության, հեռավորության ընկալու-

մը հիմնականում իրագործվում է բինոկուլյար տեսողությամբ (երկու աչքով տեսնելը): Հաճախ առարկաները ճիշտ չենք ընկալում տեսողական պատրանքների (իլյուզիա) պատճառով: Այսինքն, ընկալումները երբեմն մեզ ճիշտ տեղեկություն չեն տալիս իրականության մասին<sup>12</sup>: Հայտնի են առարկաների ու երևույթների սխալ ընկալման շատ դեպքեր: Գոյություն ունեն պատրանքների մի շարք տեսակներ: Դրանցից հակադրության իլյուզիան: Նկատվել է որ փոքր առարկաների շրջապատում գտնվող առարկան ավելի խոշոր է երևում (նկ. 1):



Նկ. 1.




Նկ. 2.


Մուգ ֆոնի վրա առարկան երևում է ավելի պայծառ, քան նույն առարկան լուսավոր ֆոնի վրա (նկ. 2): Գանապարհային երթևեկության ընթացքում նկատվել են, որ սև ներկված մեքենաներն ավելի մեղ են երևում քան նույն մակնիշի մեքենան, որը ներկված է սպիտակ:

**Պատկերների աղճատման պատրանք:** Նման պատրանք տեղի է ունենում այն դեպքում, երբ այլ ուղղություն ունեցող գծերի ներգործությամբ տեղի է ունենում գծերի թվացող փոփոխություն և պատկերների ձևերի աղճատում:


12. Хрестоматия по ощущению и восприятию. М., Изд-во МГУ, 1975.



Նկ. 1. Ստուգեք, արդյո՞ք թեք են գրված տառերը:




Նկ. 2. Արդյո՞ք զուգահեռ չեն AB և CD ուղիղները:




Նկ. 1.

Հավանաբար, առաջին հայացքից դժվար է որոշել, թե զուգահեռ են, արդյոք, նկ. 1-ի և նկ. 2-ի գծերը, որոնք հատվում են հովհարատիպ, համակենտրոն ճառագայթներով և զուգահեռությունը դարձնում ուռուցիկ:




Նկ. 2.



Նկ. 3.

Փորձենք որոշել նկ. 3-ում երկու հատվածներից որն է ավելի երկար, չնայած պարզորոշ երևում է, որ ներքևի հատվածն ավելի երկար է, քան վերևի, ինչպես նաև առանց հատուկ ստուգման դժվար է որոշել, թե AB կամ AC հատվածն է հատում երկու զուգահեռ ուղիղները (նկ. 2.):



Նկ. 1. Աղճատվածության իլյուզիա

Դրանք տեսողական կամ, այսպես ասած, երկրաչափական պատրանքներ են<sup>13</sup>:

Կան նաև տեսողական այնպիսի պատրանքներ, որոնց մեջ դրսևորվում է մեր ըմբռնումների երկակիությունը (էջ 82, 83):

«**Ժամանակի ընկալումը** իրական երևույթների օբյեկտիվ տևողության, արագության, հաջորդականության արտացոլումն է: Մենք ընկալում ենք ներկա ժամանակը, անցյալ ժամանակն արդեն դարձել է հիշողություն, իսկ ապագա ժամանակի մասին մենք խորհում ենք կամ երևակայում:»

Ժամանակի ընկալման համար մենք հատուկ օրգան չունենք. այն իրագործվում է շրջապատի իրերի ու երևույթների ռիթմիկ փոփոխությունների տևողության ընկալման հետևանքով: Դա նշանակում է, որ ժամանակի ընկալմանը մասնակցում են շատ զգայարաններ, մեծ դեր են կատարում հատկապես շարժողական ու լսողական անալիզատորները: Սովորաբար հետաքրքիր ու հաճելի ժամանակն ավելի կարճ է ընկալվում, քան անգործության կամ ծանծառույթի պայմաններում անցկացված ժամանակը:

«**Շարժման ընկալումը** կապված է ժամանակի ընկալման հետ, քանի որ առարկաների շարժումը կատարվում է ժամանակի մեջ: Շարժման ընկալումը տարածության մեջ օբյեկտների դիրքի փոփոխության արտացոլումն է: Տեսադաշտի ծայրամասում օբյեկտ հայտնաբերելիս տեղի է ունենում աչքերի ռեֆլեկտորային շարժում, որի հետևանքով պատկերը տեղափոխվում է տեսադաշտի կենտրոն:

«Շարժման ընկալման գործընթացում մեծ դեր են կատարում հատկապես տեսողական և շարժողական անալիզատորները: Տարածության մեջ օբյեկտների տեղաշարժման մասին տեղեկություն կարող ենք ստանալ երկու եղանակով՝ տեղաշարժվող օբյեկտն անմիջապես ընկալելով կամ օբյեկտի շարժման մասին մտահանգում կատարելով:»

Օրինակ, փողոցում մենք տեսնում ու ընկալում ենք բազմաբնույթ օբյեկտների (մեքենաների, մարդկանց, կենդանիների և այլն) տեղաշարժերը: Դա շարժման ընկալման առաջին եղանակն է:


Երկրորդ եղանակի դեպքում շարժման մասին կարող ենք կատարել տրամաբանական եզրակացություն: Օրինակ՝ ժամացույցի սլաքների շարժման մասին մտահանգում կատարելը. ժամացույցի մեծ սլաքը քիչ առաջ եղել է 9 թվի վրա, այժմ 10-ի վրա է, ուրեմն եզրակացնում ենք՝ այն շարժվել է:

Հմարավոր են դեպքեր, երբ մարդը շարժում է վերագրում շրջապատի անշարժ առարկաներին ու իրերին: Օրինակ, երբ մարդը նստած է անշարժ գնացքում և լուսամուտից նայում է կողքից անցնող գնացքին, նրան թվում է, թե շարժվում է իր գնացքը:

Մարդու մեջ շրջապատի աշխարհի առարկաների շարժման պատրանք կարող է առաջանալ նաև, երբ նա շատ հոգնած կամ հարբած վիճակում է:

13. Грегори Р. Разумный глаз, М., "Мир", 1972.


Դերասանը մեկնել է տարբեր քաղաքներ՝ համերգի: Ո՞ր քաղաքում է նա ունեցել իր առաջին ու վերջին հանդիպումները:



*Delhi  
Delhi*


Նկ. 1.

Գտնել վերևի և ներքևի շարքերի երկակի նկարների տարբերությունները:



Նկ. 2.

Փորձեք հաշվել աղյուսների քանակը:




Նկ. 3.

Ո՞ր գիծն է ավելի երկար՝ AB, թե՞ CD (նկ. 4), AB, թե՞ AC (նկ. 5):



Նկ. 4.




Նկ. 5.

Գտեք նկարում պատկերված դեմքերը:




Նկ. 6.

Գտեք երկակի նկարների բովանդակությունը (Նկ. 7, Նկ. 8):



Նկ. 7.




Նկ. 8.

Գտեք այս առյուծը վարժեցնողին (Նկ. 9):



Նկ. 9.

Գտեք նկարում թույլ տրված սխալը (Նկ. 10):



Նկ. 10.



## ԹԵՍԱ 11. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր հասկացողություն հիշողության մասին
2. Հիշողության բնախոսական հիմքերը
3. Հիշողության տեսակները
4. Հիշողության գործընթացները
5. Հիշողության անհատական առանձնահատկությունները

### ✓ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Մարդու կողմից հո կենսափորձի մտապահումը և հետագա վերարտադրությունը կոչվում է հիշողություն:**

Հիշողության գործընթացներն են **մտապահումը, պահպանումը, վերարտադրությունը և մոռացումը**: Նյութի մտապահումը կապված է մարդու կենսագործունեության ընթացքում անհատական փորձի կուտակման հետ: Հետագա գործունեության ընթացքում արդեն մտապահածի օգտագործումը վերարտադրություն է պահանջում: Հիշողության մեջ նյութի պահպանումը կախված է նաև անձի գործունեության մեջ նրա ունեցած մասնակցությունից, քանի որ յուրաքանչյուր տվյալ պահի մարդու վարքը որոշվում է նրա ողջ կենսափորձով: Սակայն յուրացրած ամեն ինչ չէ, որ հնարավոր է մտապահել, պահպանել և վերարտադրել. երկրորդական որոշ նյութեր չեն օգտագործվում, ուստի և՛ մոռացվում են:

Հիշողությունը, այսպիսով, հոգեկան կարևորագույն գործընթացների ամբողջությունն է: Հսկայական է հիշողության դերը մարդկային գործունեության բոլոր բնագավառներում: Ոչ մի կենսական գործունեություն հիշողության գործընթացներից դուրս հնարավոր չէ, քանի որ ցանկացած, նույնիսկ ամենատարրական հոգեկան գործողության ընթացք անպայմանորեն նրա յուրաքանչյուր տարրի պահպանում և հաջորդների հետ «զուգորդում» է ենթադրում:

Էինելով բոլոր հոգեկան գործընթացների կարևորագույն բնութագիրը՝ հիշողությունն ապահովում է մարդկային անձնավորության միասնականությունն ու ամբողջությունը (հին իմաստություն է՝ խլիր մարդուց հիշողությունը, և նա կղաղարի անձնավորություն լինելուց):

### ✓ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հիշողության հիմքում ընկած են զուգորդումները: Ձուգորդումների տեսությունը հետևյալ իմաստն ունի. եթե որոշակի հոգեկան կազմավորումներ գիտակցության մեջ հանդես են գալիս միաժամանակ կամ հաջորդաբար, ապա նրանց միջև առաջանում են զուգորդական կապեր: Ըստ այդմ էլ՝ գիտակցության մեջ այդ զուգորդված տարրերից որևէ մեկի կրկին դրսևորվելն անհրաժեշտաբար առաջ է բերում նաև մնացած մյուս տարրերի մտապատկերները (հոգեբանության մեջ անցյալի պատկերները կոչվում են մտապատկերներ):

Դեռևս Արիստոտելն է տարբերակել մտապատկերների «շղթայակցման» երեք տեսակ, որոնք էլ հիշողության զուգորդական տեսության կողմնակիցները դրեցին զուգորդումների երեք տիպերի հիմքում՝ նկատի ունենալով «միաժամանակյա տպավորությունների» առաջացման արտաքին պայմանները.

ա) առընթերության զուգորդություն

բ) նմանության զուգորդություն

գ) հակադրության զուգորդություն:

Անվանումներից էլ կարելի է կռահել, որ առընթերության զուգորդությունն, ըստ ժամանակի կամ տարածության, կապակցում են երկու օբյեկտներ. նմանության զուգորդությունը կապակցում է երկու այնպիսի օբյեկտներ, որոնք ունեն արտաքին նման հատկանիշներ, հակադրության զուգորդությունը կապակցում է երկու այնպիսի օբյեկտներ, որոնք ունեն հակադիր հատկանիշներ:

Գոյություն ունեն մակ բարդ գուգորդություններ՝ ըստ իմաստի, որոնք արտացոլում են իրականության մեջ առկա կապերը՝ մասի ու ամբողջի, տեսակի ու սեռի, պատճառի ու հետևանքի և այլն: Ակադեմիկոս Ի.Պ. Պավլովն իրավացիորեն գտնում էր, որ ըստ իմաստի նմանօրինակ գուգորդությունները կազմում են մեր գիտելիքների հիմքը:

Հիշողության բնախոսական մեխանիզմների մասին գոյություն ունեն մի շարք տեսություններ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես կենսաքիմիական, ըստ որի՝ մտապահումն ընթանում է երկաստիճան էլեկտրաքիմիական գործընթացների հիման վրա:

Առաջին աստիճանում առարկան ընկալելիս առաջ է գալիս ներդրոնային մոդել, որով անցնող էլեկտրական իմպուլսները թողնում են ժամանակավոր հետքեր, որը տևում է մի քանի վայրկյանից մինչև մի քանի րոպե և համապատասխանում է կարճատև մտապահման:

Իսկ երբ ներդրոնային մոդելներով իմպուլսների անցումը երկար է տևում, սկսվում է մտապահման երկրորդ աստիճանը, որոնց հետքերը համապատասխանում են տևական հիշողությանը:

Ժամանակակից կենսաքիմիկոսները զարգացրին մակ այն վարկածն, ըստ որի՝ հիշողության համար վճռական նշանակություն ունեն օրգանիզմում գոյություն ունեցող ռիբոնուկլեիդային թթվի (ՌՆԹ) և դեօքսիռիբոնուկլեիդային թթվի (ԴՆԹ) մոլեկուլները, որոնցից ԴՆԹ-ն ժառանգական, իսկ ՌՆԹ-ն անհատական հիշողության հիմքն են:

### ✓ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հիշողությունն ակտիվորեն մասնակցում է մարդու բազմաբովանդակ գործունեության բոլոր դրսևորումներին: Հիշողության տեսակավորումն ամենից առաջ պետք է պայմանավորված լինի այն գործունեության առանձնահատկություններով, որոնցով իրականացվում են մտապահման և վերարտադրման պրոցեսները: Դա ծշ-

մարիտ է մակ այն դեպքերի համար, երբ հիշողության այս կամ այն տեսակը (օրինակ, տեսողական կամ լսողական) հանդես է գալիս որպես մարդու հոգեկան կերտվածքի առանձնահատկություն:

Հիշողության տարբեր տեսակների առանձնացման համար հիմք է ծառայում նրա բնութագրերի կախվածությունն այն գործունեության առանձնահատկություններից, որի ընթացքում իրականացվում են մտապահման և վերարտադրության գործընթացները: Ընդ որում՝ հիշողության տարբեր տեսակներ առանձնացվում են երեք հիմնական չափանիշների համաձայն.

1. Ըստ գործունեության մեջ գերակշռող հոգեկան ակտիվության բնույթի՝ հիշողությունը լինում է շարժողական, հուզական, պատկերավոր և բառատրամաբանական:

2. Ըստ գործունեության նպատակների բնույթի՝ հիշողությունը լինում է կամաժին և ոչ կամաժին:

3. Ըստ նյութի ամրապնդման և պահպանման տևողության (կապված գործունեության մեջ նրա դերի ու տեղի հետ)՝ հիշողությունը լինում է կարճատև, տևական և օպերատիվ:

**Շարժողական հիշողությունը** տարբեր շարժումների և նրանց իմաստակարգերի մտապահումը, պահպանումը և վերարտադրությունն է: Հիշողության այդ տեսակը հիմք է ծառայում գործնական և աշխատանքային տարբեր հմտությունների, ինչպես մակ քայլելու, գրելու և այլ կենսական գործողությունների ձևավորման համար: Առանց շարժողական հիշողության մենք ստիպված կլինենք ամեն անգամ նորից սովորել անհրաժեշտ գործողությունների կատարումը: Շարժողական հիշողության ամենատվոգրական ցուցանիշներից են սպորտի տարբեր ձևերում կամ աշխատանքում ցուցաբերած ճարպկությունը, «ուսկի ձեռքեր» ունենալը և այլն:

**Հուզական հիշողությունը** զգացմունքները հիշելու կարողությունն է: Ինչպես կտեսնենք ձեռնարկի «Զգացմունքներ» գլխում, հույզերն ազդանշան են տալիս այն մասին, թե ինչպես են բավարարվում մեր պահանջմունքներն ու ցանկությունները, ինչպես են ընթանում շճապատող աշխարհի հետ մեր ունեցած հարաբերու-

թյունները: Այդ պատճառով էլ հուզական հիշողությունը խիստ կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր մարդու գործունեության համար:

Որոշ խմաստով հուզական հիշողությունը կարող է հիշողության մյուս տեսակներից ավելի ուժեղ լինել: Յուրաքանչյուր մարդ իր փորձից գիտի, թե ինչպես վաղուց անցած և հիմնավորապես մոռացված իրադարձություններից, գրքերից, կինոնկարներից երբեմն մնում են միայն «տպավորությունը», զգացմունքը: Սակայն այդպիսի զգացմունքները ևս առարկայազուրկ չեն: Այդ պատճառով էլ գուգորդությունների շղթայում կարող են հանդես գալ որպես կարևոր բաղադրամասեր (կոմպոնենտներ):

**Պատկերավոր հիշողությունը** բնության և կյանքի պատկերները, ինչպես նաև ծայները, հոտերը, համն առարկայորեն հիշելու կարողությունն է: Այն լինում է տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառական, ճաշակելիքի: Եթե տեսողական և լսողական հիշողությունը սովորաբար լավ է զարգացած և առաջատար դեր է խաղում բոլոր նորմալ զարգացած մարդկանց կյանքում, ապա շոշափելիքի, հոտառական և ճաշակելիքի հիշողությունը որոշ իմաստով կարելի է անվանել հիշողության «մասնագիտական» տեսակներ: Ինչպես և համապատասխան զգայությունները, նրանք առանձնապես լավ են զարգանում գործունեության հատուկ պայմանների ազդեցության տակ: Օրինակ, դեզուստատորների մեջ զարգացած է ճաշակելիքի զգայությունը: Հիշողության այդ տեսակները զարմանալիորեն բարձր զարգացման կարող են հասնել այնպիսի պայմաններում, երբ նրանք փոխհատուցում են հիշողության բացակայող տեսակները (ինչպես կույրերի, խուլների մեջ և այլն):

Պատկերավոր հիշողությունը լավ է զարգացած տարբեր բնագավառների աշխատողների, հատկապես արվեստի, գեղարվեստական մասնագիտությունների տեր մարդկանց մեջ:

Երբեմն հանդիպում են մարդիկ, ովքեր ունեն, այսպես կոչված, էյդետիկ հիշողություն (հունարեն «էյդոս»-պատկեր բառից): Հիշողության էյդետիկան կամ ակնառու պատկերներն արտաքին գրգ-

ռիչների կողմից զգայարանները գրգռելու լրացուցիչ հետևանք են: Նրանք մտապատկերների մման են, սակայն ունեն այնպիսի հստակ մանրամասներ, որոնք չունեն սովորական մտապատկերները:

**Բառային-տրամաբանական** հիշողության բովանդակությունը մեր մտքերն են: Մտքերն առանց լեզվի գոյություն չունեն: Այդ պատճառով էլ մտքերի հիշողությունը ոչ թե պարզապես տրամաբանական է, այլ բառային-տրամաբանական:

Քանի որ մտքերը կարող են մարմնավորվել լեզվական տարբեր ձևերում, ուստի դրանց վերարտադրությունն էլ կարող է լինել նյութի հիմնական մտքի հաղորդումը կամ էլ նրանց բառացի ձևակերպումը: Եթե վերջին դեպքում նյութն ընդհանրապես իմաստային մշակման չի ենթարկվում, ապա նրա բառացի սովորելը ոչ թե տրամաբանական, այլ մեխանիկական մտապահում է:

Բառային-տրամաբանական հիշողության գործընթացում գլխավոր դերը պատկանում է երկրորդ ազդարարային համակարգին (խոսք): Ի տարբերություն հիշողության շարժողական, հուզական և պատկերավոր տեսակների՝ բառային-տրամաբանական հիշողությունը զուտ մարդկային հիշողություն է, որը հիշողության մյուս տեսակների համեմատ կատարում է առաջատար դեր: Նրանք ունեն մեծ կարևորություն հատկապես ուսուցման գործընթացում, քանզի հնարավոր չէ գիտելիքների յուրացում առանց բառային-տրամաբանական հիշողության:


Ըստ գործունեության նպատակների՝ հիշողությունը ևս լինում է **կամածին և ոչ կամածին**:

Այլպիսի մտապահումը և վերարտադրությունը, երբ ինչ-որ բան մտապահելու և մտաբերելու համար հատուկ նպատակ չի դրվում, կոչվում է ոչ կամածին հիշողություն, իսկ այն դեպքում, երբ մենք հատուկ նպատակ ենք դնում կոչվում է կամածին հիշողություն: Այս դեպքում մտապահման և վերարտադրման գործընթացները հանդես են գալիս որպես հատուկ մենսիկական (հունարեն «մեն-մե» հիշողություն) գործողություններ:

Ոչ կամաժին և կամաժին հիշողությունը զարգացման երկու հաջորդական աստիճաններ են: Յուրաքանչյուր ոք իր փորձից գիտի, թե մեր կյանքում ինչ կարևոր տեղ է գրավում ոչ կամաժին հիշողությունը, որի միջոցով ձեռք ենք բերում որոշակի գիտելիքներ ու կենսափորձ: Սակայն մարդու գործունեության ընթացքում հիշողությունը կառավարելու անհրաժեշտություն է ծագում, որը հնարավոր չէ առանց կամաժին ջանքերի: Ուստի, մարդու կյանքում կարևոր դեր է կատարում կամաժին հիշողությունը, որը հնարավորություն է տալիս կանխամտածված ձևով յուրացնել, մտապահել ու վերարտադրել այն, ինչ անհրաժեշտ է:

Հիշողությունը լինում է նաև **կարճատև** ու **երկարատև**: Նյութը հիշողության մեջ ամրապնդելու համար պետք է համապատասխան ձևով վերամշակվի, որի համար պահանջվում է որոշակի ժամանակ: Պահանջվող այդ ժամանակամիջոցն անվանում են հետքերի կոնսոլիդացիա՝ ամրապնդում: Մարդը կարծես իրի կամ երևույթի ընկալման գործընթացն ավարտելուց հետո՝ նրանց բացակայությամբ դեռևս շարունակում է դրանք տեսնել կամ լսել: Այդ գործընթացները չնայած անկայուն են, բայց կարևոր նշանակություն ունեն գիտելիքների ու փորձի ձեռքբերման համար: Հոգեբանության մեջ դա կոչվում է կարճատև հիշողություն: Այն առաջանում է առարկայի, երևույթի ընդամենը մեկ անգամ, երբեմն շատ կարճատև ընկալման հետևանքով, որը պահպանվում է շատ կարճ ժամանակ և վերարտադրվում անմիջապես:

Եթե երկարատև հիշողության դեպքում սուբյեկտը հնարավորություն ունի իրը կամ երևույթն ընթացիկում հետո կրկնությունների ու վարժությունների միջոցով ամրապնդել և երկար ժամանակ պահպանել, ապա կարճատև հիշողությունն այդ հնարավորությունը չունի:



Նկ. 1. Մարդու հիշողության երեք մակարդակները

## ՄՏԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ԶՈՒԳՈՐԴԻՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիշողության գործընթացների հիմնական հոգեբանական «նյութը» մտապատկերներն են:

Մտապատկերներն զգայական արտացոլման արդյունք են, այն «հետքը», որը մնում է հիշողության մեջ, երբ համապատասխան առարկան դադարում է ներգործելուց: Այլ կերպ ասած, մտապատկերը գիտակցության մեջ մնում է ներգործած առարկայի, երևույթի, իրադրության բացակայության պայմաններում: Օրինակ՝ մենք ծանոթանում ենք որևէ մարդու հետ, դիտում նրա արտաքինը, այնուհետև որոշ ժամանակ անց վերհիշում նրան. այդ մարդու պատկերը մնում է մեր գիտակցության մեջ, թեև մարդն ինքը բացակայում է:

**Մտապատկերը** հոգեկան պատկերի այն տեսակն է, որը գիտակցության մեջ առաջ է գալիս համապատասխան առարկայի, երևույթի, իրադրության բացակայության պայմաններում:

Օրինակ՝ մեզ խնդրում են պատմել ճանապարհորդությունից ստացած տպավորությունները: Սկսում ենք վերհիշել և կարծես կրկին տեսնում ենք այն ամենը, ինչի մասին փորձում ենք պատմել:

Ահա գիտակցության մեջ հանդես եկող այս պատկերները հիշողության մտապատկերներ են, որոնք այլ մարդկանց տեսանելի ու հասուն չեն, դրանք միայն մերհայեցողություն են, որը, բնականաբար, սուբյեկտիվ է:

Մարդը կարող է հորինել այնպիսի պատկերներ, որոնք իրականում նրա հոգեկանում չեն եղել:

Հոգեբաններին հայտնի են հոգեկան պատկերների տարբեր տեսակներ, որոնցից հիշատակման արժանի են **հիշողության մտապատկերները**, որոնք նախկին ընկալումների անփոփոխ կամ վերակառուցված վերարտադրություններն են: Հիշողության միևնույն մտապատկերը մի դեպքում կարող է վերարտադրվել շատ աղուտ, մի այլ դեպքում՝ շատ պայծառ էյդետիկ պատկերներով: Կյանքի ընթացքում մարդը կուտակում է հսկայական քանակությամբ մտապատկերներ, որոնք վճռական են դառնում նրա մտածողության և երևակայության գործընթացներում:

**Երևակայության մտապատկերներ**, որոնք կազմված են հիշողության մտապատկերներից, բայց՝ նոր զուգորդություններով: Մարդու գիտակցական հոգեկան գործունեության «հոսքը» կարող է կազմված լինել և՛ հիշողության, և՛ երևակայության մտապատկերներից:

**Երազային մտապատկերներն** առաջ են գալիս քնած մարդու հոգեկանում, հատկապես՝ քնի պարադոքսալ փուլում: Երազ տեսնողին իր մտապատկերների հոսքն իրականություն է թվում, որ, իբր, տեսածը տեղի է ունենում իրենից դուրս, ինչ-որ տարածության մեջ: Մինչդեռ երազային պատկերների հոսքը ներհոգեկան է, տեղորոշված երազ տեսնողի հոգեկանում:

**Հալյուցիանացիաներ**, երբ մարդն արթուն է, և նրա հայացքի առջև հայտնվում է պատկեր, որն ունի ներքին բնույթ ու տեղորոշում, սակայն մարդուն թվում է, թե դա իրական առարկայի անմիջական ընկալման արդյունք է:

**Պատրանքներ՝** հոգեկան այնպիսի պատկերներ, որոնք իրականության ճիշտ արտացոլումներ չեն: Օրինակ, գիշերը հեռվում հազիվ նշմարվող ծառը կարող է մարդ թվալ:

**Հաջորդական պատկերներն** այն մտապատկերներն են, որոնք առաջ են գալիս, երբ որևէ առարկայի նայելուց հետո հայացքը տեղափոխում ենք սպիտակ էկրանին կամ պատին: Դրական հաջորդական պատկերների դեպքում ընկալման պատկերի հիմնական հատկանիշները պահպանվում են: Բացասական դեպքում ընկալվող առարկայի պատկերն ստանում է լրացուցիչ գույներ:

**Ես-պատկերը** սեփական մարմնի սխեման է, ինչպես նաև իր անձի որոշ կողմերի մասին պատկերացումները, որոնք հատուկ են յուրաքանչյուր մարդու և որոնք կյանքի ընթացքում կարող են փոփոխվել:

**Զուգորդությունները:** Օբյեկտիվ աշխարհում գոյություն ունեցող առարկաներն ու երևույթները գտնվում են կապերի ու զուգորդությունների մեջ, որոնց մտապատկերները ևս մեր հիշողության մեջ պահպանվում են նույն զուգորդություններով: Զուգորդությունների տեսությունն առաջին անգամ առաջ է քաշել հույն փիլիսոփա Արիստոտելը: Զուգորդությունները լինում են.

- ըստ տարածական և ժամանակային առընթերության
- ըստ հակադրության
- պատճառահետևանքային և ընդհանրացված:

**Ըստ առընթերության** զուգորդություններ ստեղծվում են այն դեպքերում, երբ տարածության մեջ իրար մոտ տեղակայված օբյեկտի մտապատկերները զուգորդվում են նաև մեր հոգեկանում, որի շնորհիվ հիշելով մեկին՝ ինքնաբերաբար հիշում ենք նաև նրա կողքի եղածին:

Հետաքրքիր օրինակ է բերում փիլիսոփա Ջ. Վուդրոն: Նա ուսանողներին անսպասելի ասում է. «Ես երեկ գլանակով և լայնեզր գլխարկով կես ծուկ տեսա»: Հետո նա խնդրում է ուսանողներին նկարագրել, թե այդ բառերի ազդեցության տակ ինչ պատկերացրին: Փորձարկվողների 80 տոկոսը նկարագրեց նույն մտապատկերը՝ գլանակը՝ կետի բերանում, գլխարկը՝ գլխին: Այդպիսի զուգորդության առաջացման պատճառն այն է, որ հիշողության մեջ ամուր զուգորդական կապեր կան բերանի ու գլանակի, գլխի ու գլխարկի միջև: Մինչդեռ փիլիսոփայի արտասանած նախադասության մեջ

բացակայում են այդպիսի զուգորդությունները: Դրանք փորձարկվողների հիշողության մեջ պահված զուգորդություններն են, որոնք վերարտադրվել են նրա խոսքի ազդեցությամբ:

Առարկաների տարածական առընթերությունն անբաժանելի է **ժամանակային առընթերությունից**, քանի որ այն, ինչ առընթեր է տարածական տեսակետից, այդպիսին է նաև ժամանակային տեսանկյունից:

Հաճախ վկային կամ հանցագործին հարցաքննում են դեպքի վայրում, որտեղ իրադրության պատկերը նպաստում է զուգորդական շղթայի մյուս օղակների վերարտադրությամբ:

**Ըստ նմանության զուգորդություններն** առաջանում են օբյեկտիվ աշխարհում նման հատկություններ ունեցող առարկաների ու երևույթների մտապատկերներն ստեղծելիս: Ըստ նմանության՝ զուգորդություններ առաջ են գալիս այն դեպքում, երբ որևէ առարկայի կամ իրադարձության մասին մտքերը մեր գիտակցության մեջ մտքեր են ծնում ուրիշ առարկաների վերաբերյալ:

Օրինակ, ծանոթները հանդիպելիս հաճախ պատմում են նման դեպքերի մասին՝ խոսքը հերթականությամբ միմյանց փոխանցելով:

Ըստ նմանության զուգորդություններն էական դեր են կատարում մտածական գործընթացներում և հիշողության ավելի արդյունավետ մեխանիզմներ են դառնում, երբ ընկալվող օբյեկտի նմանությունների հետ նշվում են նաև տարբերությունները:

**Զուգորդություն ըստ հակադրության** ստեղծվում է այն առարկաների մտապատկերների միջև, որոնք ունեն հակադիր հատկանիշներ: Ակամայից մեր մտապատկերում զուգորդվում են չարն ու բարին, մեծն ու փոքրը, սևն ու սպիտակը, զեղեցիկն ու տգեղը:

Եթե բարձրահասակ և կարճահասակ մարդկանց ընկալում ենք միասին, ապա նրանց մտապատկերներն այդ կապի մեջ հեշտությամբ մտապահվում և վերարտադրվում են:

Հոգեբանական գիտափորձերով ապացուցվել է, որ զուգորդություն ստեղծելուց առաջ կատարվում է զուգորդման ենթակա առարկաների դասերի տարբերակում, որն իրագործվում է հասկացությունների օգնությամբ, այսինքն՝ զուգորդությունների գործընթացը կար-

գավորվում է մտածողության օգնությամբ: Ահա ինչու նոր զուգորդությունների ստացման հոգեկան գործողությունները հաճախ ենթադրական և ինդուկտիվ բնույթ ունեն:

**Պատճառահետևանքային զուգորդություն:** Աշխարհում ամեն մի երևույթ հանդիսանում է այլ երևույթների հետևանք և ինքն էլ կարողանում է դառնալ ուրիշ երևույթների ժազման պատճառ:

Պատճառահետևանքային կապերի հոգեկան արտացոլման հետևանքով մարդու հիշողության մեջ կուտակվում են համապատասխան մտապատկերների պատճառահետևանքային զուգորդություններ:

Սովորաբար, երբ ընկալվում է պատճառ համարվող առարկան, զուգորդվում է նաև նրա հետևանք համարվող առարկայի մտապատկերը:

Պատճառահետևանքային զուգորդություններ հիմնականում առաջանում են երևույթները բացատրելու ընթացքում:

### ✓ **ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ**

Հիշողության գործընթացներն առանձնացնելիս ելնում ենք գործունեության մեջ ունեցած նրանց դերից, ֆունկցիայից: Սովորաբար տարբերում են հիշողության հետևյալ գործընթացները՝ մտապահում, պահպանում, վերարտադրում և մոռացում:

**Մտապահումը և վերարտադրումը** սերտորեն կապված են մարդու անձնական հատկությունների, հետաքրքրությունների, հակումների և, առաջին հերթին, գործունեության հետ: Մտապահվում է այն ամենը, ինչը նպաստում է մարդու գործունեությանը, համապատասխանում նրա հետաքրքրություններին, իսկ մոռացվում այն ամենը, ինչը անհատի համար նշանակություն չունի, ինչի նկատմամբ նա անտարբեր է: Մտապահմանը նպաստում են մարդու ընդհանուր զարգացածությունը, գիտելիքների և կենսափորձի հարստությունը: Մտապահումը և վերարտադրումը թեև դիտվում են որպես առանձին գործընթացներ, սակայն սերտորեն փոխկապակցված են և կազմում են միասնություն: Բավական է նշել, որ վերար-

տաղրվող նյութի լիարժեքությունը կախված է մտապահման առանձնահատկություններից, նրա կատարյալ լինելուց: Իսկ վերարտադրությունն անցյալի ընկալումների, մտքերի, զգացմունքների ու գործողությունների վերականգնումն է գիտակցության մեջ: Վերարտադրության բնախոսական հիմքը գլխուղեղի կեղևում անցյալում զոյացած կապերի արթնացումն է: Վերարտադրությունը տեղի է ունենում ճանաչման կամ վերհիշման ձևով, այն կարող է լինել կամաժին և ոչ կամաժին:

**Մտապահում:** Հիշողության գործընթացն սկսվում է մտապահումից: Մենք մշտապես ինչ-որ բան ընկալում ենք և մտապահում: Մտապահումն արդյունք է գլխուղեղի կեղևում առաջացող, այսպես կոչված, «հետքերի» կամ տպավորությունների (դրանք առաջանում են ներգործող առարկաների, շարժումների, մտքերի, հույզերի ընկալման հետևանքով): Մտապահման գործընթացում կապեր են հաստատվում մտապահվող նյութի և մարդու կենսավործի, գիտելիքների, ինչպես նաև մտապահվող նյութի բաղադրիչ մասերի կամ տարրերի միջև:

Մտապահման բնախոսական մեխանիզմները գլխուղեղի կեղևում առաջացող նոր ժամանակավոր նյարդային կապերն են:

Տարբեր մարդկանց մտապահումը տարբերվում է արագությամբ, արդյունավետությամբ, ստուգությամբ և հաստատունությամբ:

Մտապահումը հիշողության գործընթաց է, որի շնորհիվ տեղի է ունենում նոր նյութի ամրապնդում՝ այն նախկինում ձեռք բերած փորձի ու գիտելիքների հետ կապելու միջոցով: Մտապահումն ընտրողական բնույթ ունի. հիշողության մեջ չի պահպանվում այն ամենը, ինչ ներգործում է մեր զգայարանների վրա: Փորձերը ցույց են տվել, որ ամեն մի մտապահում անհատի գործողությունների հետևանք է. մտապահվում է այն առարկան կամ երևույթը, որով մարդ գործառնում է: Սակայն տարբեր մարդկանց համար մտապահման միևնույն արտաքին պայմանների ազդեցությունն էլ տարբեր է, քանի որ մտապահումը սերտորեն կապված է մարդու անհատականության, նրա գործունեության դրդապատճառների, նպատակների ու գործելակերպի հետ:

Ինչպես հիշողությունն ամբողջությամբ վերցրած, այնպես էլ նրա հիմնական գործընթացը՝ մտապահումը, լինում է **կարճատև և երկարատև:**

Կարճատև հիշողության օրինաչափությունների ուսումնասիրումը ներկայումս ունի տեսական և գործնական մեծ նշանակություն և, առաջին հերթին, ինժեներական հոգեբանական հիմնահարցերի լուծման հետ է կապված: Մտապահումը, այդ թվում՝ կարճատև մտապահումը հիմնականում թելադրված է առարկայի հետ մարդու հարաբերության, նրա գործունեության բնույթով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իմացական և մեմորիական տարբեր խնդիրներ տարբեր ազդեցություն ունեն կարճատև մտապահման արդյունավետության վրա: Օրինակ, պարզվել է, որ կարճատև մտապահման պայմաններում ավելի արդյունավետ են այն խնդիրները, որոնց լուծումը պահանջում է գործողության ավտոմատացված ձևեր<sup>14</sup>:

Մտապահումը լինում է նաև կամաժին և ոչ կամաժին: Ոչ կամաժին մտապահումը տեղի է ունենում անկախ մարդու գիտակցված նպատակադրումից, առանց նրա կողմից նյութի հատուկ ընտրություն կատարելու: Ոչ կամաժին ձևով մտապահվում է մեծ մասամբ այն, ինչը մեր կամքից անկախ ընկալվում է: Լինում են դեպքեր, երբ անկամա մտապահվում է կամաժին կերպով ընկալվածը: Օրինակ, տվյալ պահին մենք լսում ենք մեր ընկերոջ պատմածը կամ կարդում որևէ գիրք՝ բոլորովին էլ նպատակ չդնելով մտապահելու լսածը կամ կարդացածը: Սակայն նման դեպքերում չի բացառվում նաև լսածի կամ կարդացածի ոչ կամաժին մտապահումը:

Ոչ կամաժին մտապահումն օրինաչափ գործընթաց է և պայմանավորված է մեր գործունեության առանձնահատկություններով: Ոչ կամաժին մտապահման արդյունավետության համար շատ կարևոր է, թե մտապահվող նյութն ինչ դեր է կատարում մարդու գործունեության մեջ: Եթե այդ նյութն էական նշանակություն ունի, ապա լավ է մտապահվում: Այլ կերպ լինել չի կարող, քանզի գործունեության

14. Лурия А.Р., "Маленькая книжка о большой памяти". М., 1968г.

հիմնական նպատակը բովանդակությունը, ավելի ակտիվ կողմնորոշում է ստեղծում, որի հետևանքով էլ մտապահումը դառնում է ավելի հաստատուն: Ի տարբերություն ոչ կամաժին մտապահման կամաժին մտապահումն ավելի տևական և հաստատուն է:

Կամաժին մտապահումը տեղի է ունենում նախապես դրված նպատակին համապատասխան: Մարդը նպատակադրվում է մտապահել տվյալ նյութը և ջանքեր է գործադրում դրա համար, դիմում է մի շարք միջոցների, կենտրոնացնում ուշադրությունը, աշխատում պարզել մտապահվող նյութի իմաստը, նշանակությունը, կապեր ստեղծում իր կենսափորձի հետ: Կամաժին մտապահման դեպքում մարդը դրսևորում է մտավոր մեծ ակտիվություն: Սխտեմատիկ կամաժին մտապահումը նյութի յուրօրինակ սերտում է: Դպրոցական և ամեն մի այլ ուսումնական աշխատանք հիմնված է սխտեմատիկ կամաժին մտապահման վրա: Ուստի աշակերտների մեջ պիտի զարգացնել հատկապես կամաժին մտապահումը:

Կամաժին մտապահման բնախոսական հիմքը նույնպես այն կապերն են, որոնք առաջանում են գլխուղեղում առաջին և երկրորդ ազդարարային համակարգի փոխներգործությամբ:

**Վերարտադրությունը** հիշողության այն գործընթացն է, որի դեպքում առարկայանում, արթնանում են մտքերի, զգացմունքների, երևույթների, շարժումների և անցյալի ընկալումները: Վերարտադրման բնախոսական հիմքը գլխուղեղի կեղևում անցյալում առաջացած ժամանակավոր կապերի արթնացումն է, առարկայացումը: Միշտ չէ, որ նախկինում յուրացրած նյութի վերհիշումը դյուրին է ընթանում. երբեմն այն վերհիշվում է վայրկենաբար, ավտոմատ կերպով, երբեմն էլ նյութը վերհիշելու համար ծիգ ու ջանքեր են պահանջվում:

Վերարտադրության տեսակների մեջ նշվում են ճանաչումը, վերհիշումը կամ բուն վերարտադրությունը, որը կարող է լինել ոչ կամաժին և կամաժին:

Եիշտ է, ճանաչումը նախկինում ընկալածի վերարտադրումն է, սակայն այս դեպքում կարծես նորից ենք ընկալում: Ուստի ճանաչման ժամանակ կրկնակի ընկալման հետևանքով վերականգնվում

են անցյալում տեսածի պատկերները, ունեցած զգացմունքներն ու մտքերը: Ճանաչումը կարող է լինել ոչ լրիվ (անորոշ) և լրիվ (որոշակի):

Ոչ լրիվ ճանաչման դեպքում մեր գիտակցության մեջ վերականգնվում են նախկինում ընկալվածի որոշ կողմերը միայն: Նրանք աղոտ տեղեկություն են տալիս այն մտքերի, զգացմունքների մասին, որոնք կապված են եղել տվյալ առարկայի, երևույթի ընկալման հետ: Ոչ լրիվ ճանաչման ժամանակ մենք գիտակցում ենք, որ առարկան կամ երևույթը մեզ համար նոր է: Սակայն հաճախ օբյեկտի մտապատկերի վերարտադրումը կախված է լինում այն իրադրությունից ու միջավայրից, որն ընկալվել է նախկինում: Այսպես, օրինակ, հանդիպելով մարդուն, ճանաչում ենք, բայց չենք կարողանում հիշել, թե երբ, որտեղ, ինչ պայմաններում ենք տեսել նրան: Ոչ լրիվ ճանաչումը ծանոթ լինելու զգացումն է:

Հաճախ այս կամ այն մարդուն, առարկան, երևույթը ճանաչելու համար մենք ջանքեր ենք գործադրում վերհիշելու նախկին ընկալման մանրամասները, միջավայրը, իրադրությունը: Այս դեպքում ճանաչումը վերափոխվում է կամաժին վերարտադրության, դառնում լրիվ: Լրիվ ճանաչման դեպքում մեր գիտակցության մեջ վերականգնվում է օբյեկտի մտապատկերը, այն իրադրությունն ու պայմանները, որոնք ընկալվել են նախկինում: Ճանաչման մեջ մեծ դեր է կատարում ընկալված օբյեկտի անունը: Գիտակցության մեջ վերականգնելով՝ անունը՝ արթնացվում են այն մտապատկերները, որոնք նպաստում են տվյալ օբյեկտի լրիվ ճանաչմանը:

Վերարտադրության բուն գործընթացը, ի տարբերություն ճանաչման, տեղի է ունենում առանց վերարտադրվելիք օբյեկտի կրկնակի ընկալման: Վերարտադրության գործընթացը, սերտորեն կապված լինելով մարդու տվյալ պահի գործողության հետ, կարող է ոչ կամաժին բնույթ կրել. այն կարող է առաջանալ գործողության ընթացքում, պատահականորեն որևէ օբյեկտի ընկալումից:

Ոչ կամաժին վերարտադրումն ավելի նպատակաուղղված է լինում այն դեպքում, երբ առաջանում է ոչ թե պատահաբար, այլ որոշակի գործունեության պահանջով: Դա նշանակում է, որ ոչ կա-



նածին վերարտադրությունը, ինչպես և ոչ կամածին մտապահումը ենթակա են վերահսկողության:

Կամածին վերարտադրությունը, այսպես ասած, նպատակային գործունեություն է. մարդն իր առջև նպատակ է դնում տվյալ նյութը վերարտադրելու<sup>15</sup>:

Ինքնին հասկանալի է, որ կամածին վերարտադրությունը կամային ջանքեր է պահանջում: Երբեմն անհրաժեշտ նյութը ցանկացած պահի չենք կարողանում վերարտադրել: Նման դեպքերում մտովի «գործումներ» ենք կատարում, գտնում վերարտադրմանը նպաստող կապեր: Այսպիսի վերարտադրումը կոչվում է **մտաբերում**, որի արդյունավետությունը կախված է նրանից, թե մարդը որքան ստույգ գիտի վերարտադրվելիք նյութի բովանդակությունը: Այստեղ կարևոր են հատկապես անհատի գիտելիքների պաշարը և այդ գիտելիքներն օգտագործելու կարողությունը: Քաղտնիք չէ, որ լավ մտապահումը լավ վերարտադրման գրավականն է:

Ինչպես մտաբերումն, այնպես էլ մտապահումն ընտրողական բնույթ ունի: Մտաբերումն անցյալի տպավորությունների հասարակ վերարտադրումը չէ. նախկինում յուրացրած գիտելիքները վերարտադրման ժամանակ լրացվում են նոր գիտելիքներով, նորովի կարգավորվում ու ավելի խորը գիտակցվում:

### **Պահպանում և մոռացում**

Վերարտադրումն իր բոլոր ձևերով հնարավոր է դառնում նրանով, որ ամրապնդված նյութը պահպանվում է մեր հիշողության մեջ: «Պահպանում» ասելով պետք է հասկանալ նախկինում ծագած տպավորությունների, մտքերի, հույզերի, շարժումների վերակրկնվելու կամ «վերակենդանանալու» նախատրամադրվածությունը: «Պահպանման» հատկությունը բնախոսական առումով բացատրվում է բարձրագույն նյարդային համակարգի ճկունությամբ: Գլխուղեղի կեղևում մշակված նոր կապերն, ինչպես գտնում է Ի.Պ. Պավլովը, շատ երկար են պահպանվում:

Պահպանման լիարժեքությունը որոշվում է նրանով, թե մտա-

15. Зейгарник Б.В. Хрестоматия по общей психологии. Психология памяти. М., 1979.

պահված նյութի որ մասն է վերարտադրվում: Դրանից ելնելով էլ որոշում են, թե մտապահված նյութի որ մասն է վերարտադրվում և որ մասն է մոռացվել:

Մոռացման գործընթացը կարող է տարբեր ընդգրկում ունենալ, քանի որ համապատասխան մոռացված պատկերների և մտքերի ժամանակին ու անհրաժեշտ արթնացումն ավել կամ պակաս չափով դժվարանում, իսկ երբեմն էլ անհնար է դառնում: Որքան ավելի քիչ դեպքերում է համապատասխան նյութն օգտագործվում մարդու կողմից, որքան դա ավելի քիչ նշանակալից է դառնում հրատապ կենսական նպատակների համար, այնքան ավելի խորն է լինում մոռացումը: Ընդ որում, որևէ նյութ մտաբերելու անհնարինությունը դեռևս չի նշանակում, թե այն անվերադարձ կորսված է կամ տվյալ անձնավորության կենսափորձում իսպառ վերացվել է: Մոռացվում է նյութի կոնկրետ այս կամ այն «փաստական» կողմը, մինչդեռ նրա էական, կայուն նշանակություն ունեցող բովանդակությունը մնում է համապատասխան գիտելիքների ու վարքի ձևերի մեջ և վերարտադրվում դրանց հետ միաձուլված: Ինչպես ասացուցված է Ի. Պավլովի գիտափորձով, մարած ռեֆլեքսները կենդանու մեջ վերականգնելու համար ավելի քիչ թվով կրկնություններ են պահանջվում, քան նրանց սկզբնական առաջացման համար: Բացի այդ, մարած ռեֆլեքսները որոշակի պայմաններում կարող են ազատվել արգելակումից: Դրանով են բացատրվում այն փաստերի անսպասելի վերարտադրման դեպքերը, որոնք մեզ բոլորովին մոռացված են թվում: Նկարագրվում է, որ մարդը մահվան պահին զառանցել է գերմաներեն, որը սովորել էր շատ տարիներ առաջ, գերության մեջ, և, երկար ժամանակ չօգտագործելով, թվում էր, թե այն ամբողջապես մոռացվել է:

Սկզբունքորեն մոռացումը նպատակահարմար երևույթ է: Չէ՞ որ այն, ինչ մտնելով անձի գործունեության մեջ, նրա համար նշանակալից է դառնում, այլևս չի մոռացվում: Գործունեության մեջ մտնելու հնարներից մեկը պահպանման ենթակա նյութի սխտեմատիկ կրկնությունն է:

Մոռացումը կախված է ժամանակից: Այդ հանգամանքն առաջին

անգամ գիտափորձով հաստատել է գերմանացի նշանավոր հոգեբան Էրիմգհաուզը: Նա ցույց է տվել, որ մոռացումն առանձնապես արագ է կատարվում սովորելուց անմիջապես հետո, իսկ այնուհետև դանդաղում է: Այդ օրինաչափությունը Էրիմգհաուզը գտավ առանձին անկապ վանկերի մոռացումն ուսումնասիրելու ընթացքում: Դրանից հետո կատարված մեծաթիվ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մոռացման տեմպը կախված է նյութի բովանդակությունից, նրա գիտակցումից, երբ մոռացումն ավելի դանդաղ է ընթանում: Իմաստալից նյութի մոռացումը ևս սկզբում արագ է տեղի ունենում, իսկ հետո աստիճանաբար դանդաղում է:

Ուսուցման գործընթացում այդ օրինաչափությունը հաշվի առնելը կարևոր է մոռացումը կանխելու համար: Ինչպես ասել է Կ.Գ. Ուշինսկին, հիշողության էությունը հասկացող դաստիարակն անընդհատ կրկնությունների է դիմում ոչ թե ավերվածը վերականգնելու, այլ շենքն ամրացնելու և նրա վրա նոր հարկ բարձրացնելու համար: Մոռացումը ևս մտապահման և վերարտադրության մեծ ընտրական բնույթ ունի: Մեծ նշանակություն ունեցող և իր բովանդակությամբ մարդու պահանջմունքների, հետաքրքրությունների և գործունեության նպատակի հետ կապված նյութն ավելի դանդաղ է մոռացվում: Շատ բաներ, որոնք մարդու համար կենսական մեծ նշանակություն ունեն, չեն մոռացվում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մոռացումը կախված է մտապահվող նյութի ծավալից ու նյութի յուրացումից: Որոշ ժամանակ անց հիշողության մեջ պահպանված նյութի տոկոսը հակադարձ համեմատական է նրա ծավալին: Սակայն մոռացումը չի հանգում միայն ընկալված նյութի ծավալի քանակական նվազմանը: Պահպանման և վերարտադրության գործընթացում հիշողության մեջ ամրապնդված նյութը որոշակի որակական փոփոխությունների է ենթարկվում: Դրա հետ կապված նյութի բովանդակության տարբեր մասեր նույն կերպ չեն մոռացվում: Օրինակ՝ ամենից լավ պահվում են նյութի հիմնական դրույթները, պակաս լրիվությամբ առանձին իմաստային միավորներ, իսկ ամենից քիչ մտապահվում է տեքստային բովանդակությունը: Ըստ այդմ էլ՝ հիշողու-

թյան մեջ պահվող նյութն ավելի ընդհանրացված բնույթ է ստանում:

Այսպիսով, գիտելիքների մոռացումը կանխելու հիմնական միջոցը հետագա գործունեության մեջ նրանց օգտագործումն է, նրանց գործնական կիրառությունը, որի շնորհիվ ոչ միայն պահպանվում են անցյալում ձեռք բերված գիտելիքները, այլև նրանց յուրացումն ավելի կայուն է դառնում:

### ✓ **ՖԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՆԱՏԱԿԱՆ ՍՈՒՆՁՆԱՐԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարդկանց հիշողության անհատական տարբերությունները դրսևորվում են ինչպես նրա գործընթացի (ասենք, թե տարբեր մարդկանց մոտ ինչպես են իրագործվում մտապահումն ու վերարտադրությունը), այնպես էլ բովանդակության առանձնահատկություններում, այսինքն՝ թե ինչ է մտապահվում: Երկկողմանի այդ փոփոխություններով էլ բնութագրվում են յուրաքանչյուր առանձին մարդու հիշողության յուրահատկությունները:

Հիշողության գործընթացներում անհատական տարբերություններն արտահայտվում են մտապահման արագության, ճշտության, ամրության և վերարտադրելու պատրաստականության մեջ: Մտապահման արագությունը որոշվում է այն կրկնությունների թվով, որոնք այս կամ այն մարդուն անհրաժեշտ են նյութի որոշակի ծավալ մտապահելու համար: Ամրությունը որոշվում է սովորած նյութի պահպանման և նրա մոռացման արագության հարաբերակցությամբ: Հիշողության պատրաստականությունն արտահայտվում է նրանում, թե անհրաժեշտ պահին մարդ որքան դյուրին ու արագությամբ է կարողանում մտաբերել այն, ինչ իրեն անհրաժեշտ է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ տարբերությունները կապված են նաև բարձրագույն նյարդային գործունեության տիպերի առանձնահատկությունների՝ գրգռման և արգելակման պրոցեսների ուժի և շարժունության հետ:

Բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները և դրանց հետ կապված հիշողության գործընթացների

անհատական տարբերությունները կյանքի պայմանների և դաստիարակության ազդեցության տակ փոփոխվում են: Ըստ այդմ էլ հիշողության վերոհիշյալ առանձնահատկությունները որոշվում են նրա դաստիարակության պայմաններով և առաջին հերթին կախված են այն բանից, թե յուրաքանչյուր մարդու մեջ ինչ չափով են ձևավորված մտապահման արդյունավետ եղանակները: Գրանք կապված են աշխատանքում կարգապահ լինելու սովորության, իր պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, դրանք համառորեն ի կատար ածելու և այլ հանգամանքների հետ: Էլ չենք ասում այն մասին, որ հիշողության պատրաստակամությունը կախված է նաև գիտելիքների ձեռքբերման և ամրապնդման սխտեմատիկությունից:

Հիշողության անհատական տարբերությունները կախված են նաև նրանից, թե ինչ բնույթի նյութ է մտապահվում: Ոմանց մեջ ավելի հաջող է մտապահվում պատկերավոր նյութը, ուրիշների մոտ՝ բառային նյութը, երրորդների մեջ որոշակի նյութ ավելի լավ մտապահելու բացահայտ նշաններ չեն դրսևորվում: Ըստ այդմ էլ հոգեբանության մեջ տարբերում են հիշողության ակնառու-պատկերավոր, բառային-վերացական և միջանկյալ տիպերը, որոնք կախված են նաև բարձրագույն նյարդային գործունեության մեջ առաջին և երկրորդ ազդարարային համակարգերի փոխհարաբերություններից:

Մարդկանց կյանքի, մասնագիտական գործունեության պահանջները պայմանավորվում են նրանց հիշողության այս կամ այն տիպի ավել կամ պակաս չափով արտահայտված առանձնահատկություններով: Հիշողության ակնառու-պատկերավոր տիպն ավելի հաճախ նկատելի է նկարիչների, բառային-վերացական տիպը՝ տեսաբան գիտնականների շրջանում և այլն:

Հիշողության ակնառու-պատկերավոր տիպը բնութագրվում է նաև նրանով, թե մարդու կողմից տարբեր տպավորություններ մտապահելիս որ անալիզատորն է գերիշխող դեր կատարում: Ըստ այդմ էլ տարբերում են հիշողության շարժողական, տեսողական և լսողական տիպեր: Բայց մաքուր ձևով այդ տիպերը հազվադեպ են

պատահում, ամենից հաճախ հանդիպում են խառը՝ տեսողական-շարժողական, տեսողական-լսողական, լսողական-շարժողական տիպերը:

Ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների հիշողության անհատական տարբերությունները, նրանց մեջ հավասարապես զարգացնի հիշողության և տեսողական, և լսողական, և շարժողական տեսակները:

## ԹԵՄԱ 12. ԼԵՁՈՒ ԵՎ ԽՈՍՔ

1. Լեզվի բնույթն ու ֆունկցիաները
2. Խոսքային հաղորդակցման ձևեր
3. Խոսքի բնախոսական հիմքը
4. Ոչ խոսքային հաղորդակցում

### ✓ ԼԵՁՎԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Մարդուն կենդանական աշխարհից առանձնացնող ամենաբնորոշ յուրահատկությունը խոսելու՝ հաղորդակցվելու ընդունակությունն է:

**Լեզուն մարդկանց հաղորդակցման միջոց է, որը կազմված է նշաններից՝ հնչյուններից, հնչույթներից, բառերից, բառակապակցություններից և նախադասություններից:**

Լեզուն և խոսքը սոցիալական բնույթ ունեն և հասարակության, մարդկանց կյանքում կատարում են մի շարք ֆունկցիաներ:

Լեզուն ամենից առաջ ունի շփման, **հաղորդակցման ֆունկցիա:** Նրա օգնությամբ մարդիկ հաղորդում են մտքեր, գիտելիքներ և հասնում փոխըմբռնման:

Լեզուն իրականության **արտացոլման** միջոց է, որի համար էլ բառերի մեծ մասը սովորական չէ, այլ նշան-արտացոլումներ, որոնք դառնում են մտավոր, տեսական գործունեության միջոցներ:

Լեզուն նաև մտքերի **ձևավորման** ու **արտահայտման գործիք** է: Անհնար է պատկերացնել որևէ մտածական գործունեություն առանց լեզվի մասնակցության:

Ավելի հստակ է գիտակցվում խոսքի ակտիվ մասնակցությամբ կատարվող մտածողությունը, քան պասսիվ: Լեզուն և մտածողությունը միասնական են, սերտորեն կապված, սակայն նույնական չեն:

Լեզուն ինքը միտք կամ մտածական գործընթաց չէ, այլ նրա նյութական կողմը: Հնչյունները, բառերը՝ գրավոր թե բանավոր, ունեն նյութական արտահայտություն: Որ լեզուն ու մտածողությունը նույ-

նակամ չեն, երևում է այն բանից, որ նախադասության և մտքի կառուցվածքները ոչ միայն նույնական չեն, այլև հաճախ չեն համապատասխանում իրար: Օրինակ՝ միմյանց հետ շփվելիս երբեմն մարդիկ ասում են մի բան, հասկանում՝ հակառակը:

Լեզուն հանդես է գալիս իր անենափոփոխական ֆունկցիայով, որը հասարակական-պատմական փորձը պահպանելու, ուսուցման միջոցով հաղորդելու և յուրացնելու միջոց է:

Հաջող գործունեություն կատարելու համար անհրաժեշտ է ունենալ հարուստ գիտելիքներ, որոնք մարդը փոխ է առնում ինչպես նախորդ սերունդների կուտակած փորձից, այնպես էլ իր ժամանակակիցներից, ինչին մեծապես նպաստում է հենց լեզվի հաղորդակցման ֆունկցիան: Ահա թե ինչու ով լավ չի տիրապետում որևէ լեզվի (առավել և՛ մայրենի լեզվին), չի կարող հարուստ գիտելիքներ ու զարգացած մտածողություն ունենալ<sup>16</sup>:

### ✓ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՉԵՎԵՐԸ

Խոսքը լեզուն է՝ գործողության մեջ, այն լեզվի միջոցով հաղորդակցում է այլ մարդկանց, խմբերի կամ հասարակության հետ:

Ընդունված է տարբերակել խոսքի հետևյալ տեսակները՝ **բանավոր խոսք**, որն իր հերթին լինում է մենախոսություն և երկխոսություն, **գրավոր խոսք** և **ներքին խոսք**:

**Մենախոսությունը** (մոնոլոգ) մարդու ծավալուն խոսքն է: Այդպիսի խոսք է զեկուցումը, դասախոսությունը, բեմական մենախոսությունը, ուսուցչի բացատրությունը, որոնք ակտիվ, կամածին և նախապես պլանավորված բնույթ ունեն:

Օտտոգենեզում խոսքի այս տեսակն ավելի ուշ է զարգացել, քան երկխոսությունը, որին մարդը դիմել է խոսքն ավելի համոզիչ ու ներգործող դարձնելու համար:

Կան մարդիկ, որոնք երկխոսության ընթացքում դրսևորում են խորը գիտելիքներ և խոսքային ունակություններ, սակայն նույն

16. Леонтьев А.А. Психология общения. Тарту, 1974.

դիրմերի մասին դժվարանում են հանդես գալ մենախոսությամբ:

**Երկխոսությունը** (դիալոգ) բանավոր խոսքի ամենատարածված տեսակն է, որի ընթացքում խոսակիցները քննարկում են ինչ-որ խնդիրներ: Այն հիմնականում ունի իրադրային բնույթ, և այլ անձանց ներկայությունն իր կնիքն է դնում նրա ընթացքի վրա: Եթե խոսակիցները խուսափում են այլ մարդկանց ներկայությամբ բաց խոսել, նրանց խոսքում հանդես են գալիս սիմվոլիկ նշանակությամբ բառեր, մեծանում են ժեստերն ու շարժումները: Երկխոսությունը ձեռք է բերում իրադրականության, ենթատեքստայնության, խոսքային ոչ մեծ առատությամբ հագեցած յուրահատկություններ, որոնք հաճախ ոչ կամածին և ռեակտիվ են:

Երկխոսության ընթացքում խոսակիցները հաճախ կրկնում են միմյանց, և դա հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ իրար: Կարևոր է նաև այդ ընթացքում խոսակիցների ունեցած հուզական վիճակները՝ գայրույթը, հրճվանքը, զարմանքը, վախը և այլն:

**Գրավոր խոսքն** առաջացել է բանավոր խոսքից շատ ավելի ուշ, որի անհրաժեշտությունն առաջացել է երկու կարևոր հանգամանքներից ելնելով՝

ա) պահպանել ձեռք բերած գիտելիքները,

բ) ապահովել այն մարդկանց հաղորդակցումը, ովքեր տարածության և ժամանակի մեջ բաժանված են իրարից:

Գրավոր խոսքը դարձել է քաղաքակրթության պահպանման ու զարգացման հիմնական միջոց: Այն հնարավորություն է տալիս մարդկանց՝ շարադրել իրենց աշխատանքի արդյունքները, ստեղծել տեքստեր ապագա սերունդների համար:

Ձարգացած մշակույթ ունեցող ժողովուրդների գրավոր խոսքն անցել է երկու հիմնական աստիճան՝ պատկերագրեր կամ գաղափարագրեր և գրանշաններ՝ տառեր, կետադրական նշաններ և այլն:

**Ներքին խոսքը** անձայն, մարդու հոգեկանում ընթացող գործընթաց է, որն օգտագործվում է, երբ մարդը մտածում է հուզող հարցերի շուրջ:

Ուրեմն, երբ մենք լուռ ենք, այնուամենայնիվ, խոսում ենք, քանի որ մեր ներհոգեկան գործընթացներն առանց խոսքի ընթանալ չեն կարող:

Արտաքին խոսքի օգնությամբ մենք գիտակցում ենք մեր նպատակներն ու այն ուղիները, որոնց օգնությամբ կարող ենք իրագործել այն, իսկ ներքին խոսքը մեր մտքերն ու գործողությունները կանխատեսելու, պլանավորելու միջոց է:

Ներքին խոսքի ուսումնասիրությունը շատ դժվար է, սակայն հոգեբաններին հաջողվել է բացահայտել նրա որոշ առանձնահատկություններ:

Ներքին խոսքը սովորաբար դրվագային (ֆրագմենտային) է, քանի որ սեփական մտքերի մեծ մասն ինքնընտրիքյան հասկանալի է, և շարադրելու կարիք չկա: Հաճախ բավական է ներքին խոսքի մեկ բառ-հասկացություն՝ որևէ ընդարձակ միտք հասկանալու համար, մինչդեռ նույն միտքն արտաքին խոսքում ստիպված պետք է ավելի ծավալուն դարձնել: Ուրեմն՝ ներքին խոսքը համառոտ խոսք է, որը հանդիսանում է արտաքին խոսքի մախապատրաստման փուլ:

Ներքին խոսքը նաև անձի սեփական վարքն ու հոգեվիճակները կարգավորելու միջոց է, որն անվանում ենք ինքնահաղորդակցում: Տեղի է ունենում անձի ներքին երկատում, որում գործում են իրար դեմ կանգնած երկու ես-պատկերներ՝ ստանալով ներքին երկխոսության ձև:


Հոգեբանության և լեզվաբանության մեջ առանձնացվում են արտաքին խոսքի մի շարք այլ տեսակներ ևս. ներածական խոսք, խոստովանություն, երդում, հարցաքննություն, զրույց, մասնագիտական խոսակցություն, հայիոյախառն զրույց կամ վեճ և այլն:

## ✓ ԽՈՍՔԻ ԲՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրությունները պարզել են, որ, իրոք, ուղեղում կան խոսքի հետ կապված մասնագիտացված կենտրոններ:

Ֆրանսիացի գիտնական Պ. Բրոկան պարզել է, որ ուղեղի որոշակի բաժնի վնասումը հանգեցնում է աֆազիայի՝ խոսքային խան-

գարման: Այդ բաժինը գլխուղեղի ճակատային բաժնի հետին մասում է և ստացել է «Բրոկայի կենտրոն» անվանումը:



Նկ. 1. Մարդու գլխուղեղի ծախս կիսագնդերի կենտրոնները, որոնք կապված են խոսքի հետ:

1-գրելու կենտրոն, 2-կարդալու կենտրոն, 3-Բրոկայի կենտրոն, 4-առարկաների արտասանության կենտրոն, 5-Վերնիկեի կենտրոն

Անցած հարյուրամյակի ընթացքում բազում ուսումնասիրություններով հաստատվել է Պ. Բրոկայի հայտնագործության իրավացիությունը, իսկ գերմանացի հետազոտող Կ. Վերնիկեն նկարագրել է աֆազիայի մեկ այլ տեսակ, որը պայմանավորված էր քունքային մասում տեղորոշված մի բաժնի ախտահարմամբ, և այդ կենտրոնն էլ ստացավ Վերնիկեի անունը:

Եվ Բրոկայի, և Վերնիկեի կենտրոնների ախտահարումը հանգեցնում է աֆազիայի, սակայն նրանք իրենց բնույթով տարբեր են:

**Բրոկայի աֆազիայի** դեպքում մարդը դժվարանում է խոսել, առաջ են գալիս արտասանության սխալներ, և դանդաղում է խոս-

քը, դժվարանում է ստեղծել քերականական բարդ կառուցվածքներ, լուրջ դժվարություններ են առաջանում բայերը խոնարհելիս ու կապող բառերն օգտագործելիս:

**Վերնիկեի աֆազիայի** դեպքում խոսքը քերականորեն նորմալ է, բայց ունի իմաստային խանգարումներ. նրանցում հանդիպում ենք անիմաստ բառերի ու վանկերի, իսկ երբեմն էլ՝ անիմաստ նախադասությունների:

Այդ տվյալների հիման վրա Վերնիկեն նկարագրել է ուղեղում խոսքի ծրագրավորման մոդելը, ըստ որի՝ խոսքի հիմնական կառուցվածքն առաջ է գալիս Վերնիկեի կենտրոնում, այնուհետև այն ուղեղանման նյարդային խրճի միջոցով հաղորդվում է Բրոկայի կենտրոնին, որտեղ և առաջ է գալիս ծայնային արտաբերման մանրամասն ծրագիր: Վերջինս հաղորդվում է շարժողական կեղևի հարևան դիմային բաժնին, որի ակտիվացման շնորհիվ գործի են դրվում լեզուն, շրթունքները, կոկորդը, որոնք էլ ապահովում են արտաքին բանավոր խոսքը:

Խոսքի ֆիզիոլոգիական մեխանիզմն ուսումնասիրել է նաև ռուս հայտնի ֆիզիոլոգ Ի. Պավլովը, որը գիտություն բերեց **առաջին և երկրորդ ազդարարային համակարգ** հասկացությունները:

Պավլովը տարբերակեց առաջին ազդարարային համակարգը, որն առարկաների զգայական պատկերներն են և երկրորդ ազդարարային համակարգը, որի մեջ մտնում են լեզվի հիմնական միավորները՝ բառերը, որոնք և կոչվեցին ազդարարների ազդարարներ:

Յոգեկան գործունեության ընթացքում առաջին և երկրորդ ազդարարային համակարգերը գտնվում են միասնության մեջ: Խոսքային մտածողությունն այնքան բարդ գործ է, որ կարող է իրականացվել միայն ողջ ուղեղի ակտիվ աշխատանքի շնորհիվ:

### ԹԵՄԱ 13. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Մտածողության ընդհանուր բնութագիրը
2. Մտածողության գործընթացները
3. Մտածողության տեսակները

#### ✓ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տրամաբանական մտածողությունը բարձր ճանաչողական գործընթաց է, որը հատուկ է միայն մարդուն: Մեր ուղեղը մտածողության գործընթացում արտացոլում է օբյեկտիվ իրականության, իրերի և երևույթների հատկություններն ու փոխկապակցությունները: Մտածողությունը հնարավորություն է տալիս հասկանալ շրջապատող նյութական աշխարհի և մեր սեփական հոգեկան կյանքի օրինաչափությունները: Մտածողությունը մեզ հնարավորություն է տալիս նաև կանխատեսել իրադարձությունների ընթացքը և մեր գործողությունների ապագա արդյունքները:

Հոգեկան այս բարդ գործընթացը, ի տարբերություն զգայությունների ու ընկալումների, ունի ընդհանրացված բնույթ և իրականացվում է հասկացությունների միջոցով:

**Մտածողությունն առարկաների ու երևույթների ընդհանուր հատկությունների, նրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերի ու հարաբերությունների իմացության գործընթացն է:**

Մտածողության գործընթացն սկսվում է մարդու մեջ ծագած այն պահանջումներից (ցանկություններ, ձգտումներ), որոնց նպատակն է պատասխանել կյանքի կողմից առաջադրված այս կամ այն հարցին, լուծել այս կամ այն խնդիրը, դուրս գալ այս կամ այն դժվար իրադրությունից: Մտածել առարկայագուրկ, մտածել «առիասարակ»՝ անհնար է: Մեր մտածողությունը միշտ կապված է իրականության այս կամ այն օբյեկտի, այս կամ այն խնդրի լուծման հետ:

Մտածողությունն սկսվում է այնտեղ, որտեղ զգայական իմացությունը անբավարար է՝ ճանաչելու իրականությունը:

Մարդու մտածողական գործունեության համար էական է ոչ միայն զգայական իմացությունը, այլև լեզվի, խոսքի հետ ունեցած անքակտելի կապը: Դրանում դրսևորվում է մարդկանց և կենդանիների հոգեկանի միջև եղած սկզբունքային տարբերություններից մեկը: Կենդանիները զուրկ են վերացարկված և միջնորդված իմացությունից, քանզի նրանք զուրկ են երկրորդ ազդարարային համակարգից՝ խոսքից:

Միայն լեզվի միջոցով է հնարավոր դառնում արտացոլվող օբյեկտից տվյալ հավաքելը, վերացարկելու և համապատասխան բաների ու հասկացությունների միջոցով այն ճանաչելը: Խոսքի մեջ, պատկերավոր ասած, միտքն այնպիսի նյութական թաղանթ է ստանում, որ հասկանալի է դառնում և ուրիշ մարդկանց, և հենց մեզ համար:

Մարդկային մտածողությունն ինչպիսի ձևերով էլ իրագործվելիս լինի, անհնար է առանց խոսքի: Յուրաքանչյուր միտք՝ ծագում և զարգանում է խոսքի միջոցով:

Մտածողությունն իբրև հոգեկան բարձրագույն գործընթաց՝ դարձել է նաև ձևական տրամաբանության ուսումնասիրության օբյեկտ: Ըստ այդմ էլ տարբերակվում են մտածողության տրամաբանական երկու հիմնական ձևերը՝ դատողություն և մտահանգում:

Դատողություններում հաստատվում կամ ժխտվում են իրերի ու երևույթների միջև եղած կապերը, ինչպես նաև մարդու վերաբերմունքը դեպի այս կամ այն երևույթ:

Օրինակ՝ Մածունը սպիտակ է: Երևանը գեղեցիկ քաղաք է: Ձուկը ցամաքային կենդանի չէ:

Մտահանգումները եղած տվյալների, նախադրյալների հիման վրա էքստարվող եզրակացություններն են:

Մտահանգումներն ընդունված է բաժանել երկու խմբի՝ ինդուկտիվ և դեդուկտիվ:

Օրինակ՝ երկաթը ջերմահաղորդիչ է:

Անագը, պղինձը, այլումինը... ջերմահաղորդիչներ են:

Ուրեմն՝ Բոլոր մետաղները ջերմահաղորդիչներ են:

Սա ինդուկտիվ մտահանգում է, քանի որ եզակի, մասնակի դրույթներից կատարվում է ընդհանուր եզրակացություն:

Գեղուկցիան՝ հակառակը՝ ընդհանուր դրույթից դեպի մասնակի, եզակի եզրակացությունը գնացող մտահանգումն է.

Օրինակ՝ Բոլոր մետաղները ջերմահաղորդիչ են:

Երկաթը մետաղ է:

Ուրեմն՝ Երկաթը ջերմահաղորդիչ է:

Մտահանգումների այսպիսի կառուցվածքը կոչվում է սիլլոգիզմ: Սիլլոգիզմը մտածողության տրամաբանական ամենաբնորոշ ձևն է: Ֆիզիկամաթեմատիկական առարկաների մեջ ընդունված շատ ապացույցներ արվում են սիլլոգիզմների ձևով: Ասենք, մտածողության վերոհիշյալ տրամաբանական ձևերն անհրաժեշտ են մտածական գործունեության բոլոր ոլորտներում: Մտածողության վերը նշված ձևերը դատողությունն ու մտահանգումը, մտածական գործունեության այն օրինաչափություններն են, որոնք ուսումնասիրվում են ձևական տրամաբանության կողմից:

Տրամաբանության ուսումնասիրության այդ օրինաչափությունները թեև շատ կարևոր են, բայց չեն սպառում մտածողության գործընթացի բոլոր կողմերը: Ձևական տրամաբանությունն ուսումնասիրում է արդեն պատրաստի մտքեր, հասկացություններ, դատողություններ և այլն: Այն չի ուսումնասիրում այն հարցերը, թե ինչպես են առաջանում այդ մտքերը, ինչ պայմաններում, ինչպես է ընթանում տվյալ կոնկրետ մտքի զարգացումը, որոնք են մտածողական գործառույթները և այլն: Ահա այդ հիմնահարցերն ուսումնասիրում է հոգեբանությունը: Հոգեբանությունը, ի տարբերություն տրամաբանության, ուսումնասիրում է մտածողության ամբողջական գործընթացը, այս կամ այն մտքի ծագման ու զարգացման պայմաններն ու պատճառները:

Այսպիսով, տրամաբանությունն առարկայի ուսումնասիրության օբյեկտը ճանաչողական այն կատեգորիաներն են, որոնք, որպես արդյունք, առաջանում են մտածողության գործընթացում, իսկ հոգեբանությունն ուսումնասիրում է մտածական գործընթացի առա-

ջացման ու զարգացման օրինաչափությունները: Դժվար չէ նկատել, որ սերտորեն փոխկապակցված են տրամաբանությունը և մտածողության հոգեբանությունը:

## ✓ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Մտածողությունն ակտիվ գործընթաց է, որը տեղի է ունենում գործառույթների միջոցով: Մտածական հիմնական գործընթացներն են **համեմատությունը, վերլուծությունը, համադրությունը, վերացարկումը և ընդհանրացումը:**

**Համեմատության** միջոցով մենք բացահայտում ենք առարկաների նմանություններն ու տարբերությունները: Համեմատելիս ամեն անգամ ելնում ենք առարկաների կամ երևույթների ունեցած այս կամ այն հատկանիշներից, առանձնահատկություններից: Օրինակ՝ համեմատում ենք ըստ գույնի, ձևի, շարժման արագության, գործածության, մեծության, ամրության և այլ հատկանիշների:

Համեմատությունը կարելի է կատարել նման առարկաները մեկը մյուսի վրա դնելով, առարկան կամ տարածությունը չափելով, ծանրությունը կշռելով և այլն: Մենք մշտապես համեմատում ենք այն ամենը, ինչ ուզում ենք ծանաչել: Կարելի է ասել՝ արտաքին աշխարհի հետ ծանոթանալու սկզբնական շրջանում առարկաներն ու երևույթները ծանաչվում են համեմատության միջոցով: Համեմատության շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում ճիշտ կողմնորոշվելու շրջապատում: Համեմատության գործընթացը միաժամանակ ներառում է վերլուծություն և համադրություն:

**Վերլուծությունը** մտածողության այն գործընթացն է, որը հնարավորություն է տալիս արտացոլվող առարկան մտովի բաժանել բաղադրիչ մասերի կամ առանձնացնել նրա հատկանիշները, կապերը և ծանաչել դրանք: Վերլուծության ժամանակ բացահայտվում ու ծանաչվում են ամբողջի և նրա մասերի բազմապիսի կապեր ու փոխհարաբերություններ:

**Համադրությունը** վերլուծության հակառակ գործընթացն է, երբ առարկայի կամ երևույթի առանձին բաղադրիչներ կամ հատկու-



թյուններ մտովի միավորվում են մեկ ամբողջության մեջ ու ճանաչվում: Այսինքն վերլուծությունն ու համադրությունը փոխադարձ կապված են, ինչպես ասում են՝ չկա վերլուծություն առանց համադրության և՛ հակառակը:

**Ընդհանրացումը** առարկաների և երևույթների միջև ընդհանուր, էական կողմերի, կապերի, հարաբերությունների մտովի միավորումն ու արտացոլումն է: Ընդհանրացման ընթացքում մտովի առանձնացվում են առարկաների ու երևույթների ընդհանուր կողմերն ու հատկանիշները և ներկայացվում մեկ ամբողջության մեջ՝ վերանալով մանրամասներից կամ մասնակի հատկանիշներից: Այսինքն ընդհանրացումը սերտորեն կապված է վերացարկման հետ:

Համեմատությունը, վերլուծությունը, համադրությունը, ընդհանրացումը և վերացարկումը կարևոր դեր են կատարում հատկապես մարդու մտավոր գործունեության ընթացքում, առանձնապես՝ կենսական և գիտական խնդիրներ լուծելիս:

**Մտածողությունը և խնդիրների լուծումը:** Մտածական գործընթացն անտիվ է և նպատակաուղղված: Մարդ մտածել սկսում է այն ժամանակ, երբ նրա առաջ ծագում է նպատակի իրականացման անհրաժեշտություն, նոր խնդիրների լուծում, գործունեության նոր իրադրություններ, ծագում են դժվարություններ: Գանաչողական կամ պրակտիկ յուրաքանչյուր նոր խնդրի լուծում պահանջում է մտածել: Մտածելու անհրաժեշտությունը ծագում է այնպիսի իրադրության պայմաններում, երբ նորանոր նպատակներ են առաջանում: Այսինքն՝ մտածողությունն առաջանում է, այսպես կոչված, պրոբլեմային իրադրության մեջ:

Մտածողությունն ուղղված է նորի որոնմանը, բացահայտմանը, հայտնագործմանը: Անցյալում լուծված խնդիրները մտածել չեն պահանջում: Այսինքն, իրականության մեջ ոչ բոլոր իրադրություններն են պրոբլեմային, ուստի և՛ ոչ բոլոր իրադրություններն են մտածողության տեղիք տալիս: Ինչպես նշեցինք, մտածական գործունեության անհրաժեշտությունը ծագում է հատկապես պրոբլեմային իրադրություններում, երբ նոր խնդիրներ են առաջանում: Խնդրի առաջացումը նպատակի իրականացման սկիզբն է, նախնա-

կան աստիճանը, քանի որ խնդրի մեջ որոշ տվյալներ հայտնի են դառնում հիմնահարցի նորանոր կողմերի, նոր պայմանների ու պահանջների պատասխանը որոնելիս:

Խնդրի լուծումը մտածողության գործընթացի դրսևորման ցայտուն օրինակ է. խնդրի լուծմամբ բացահայտվում է անհայտը, գտնվում որոնելին, և վերջ է տրվում անորոշությանը, տարակուսանքին ու անվստահությանը<sup>17</sup>:

Խնդրի առաջադրումն ու հստակ ձևակերպումը ևս ներառվում են մտածողության գործընթացի մեջ. միշտ չէ, որ կարելի է հեշտությամբ խնդիր առաջարկել և ձևակերպել: Խնդրի ծագումը նշանակում է, որ հաջողվել է թեկուզ մոտավոր սահմանազատել հայտնին և որոշելին: Այդ սահմանազատումը դրսևորվում է հենց խնդիրը խոսքով ձևակերպելու մեջ: Խնդրի նախնական ձևակերպումը միայն մոտավորապես է սահմանում որոնելին, իսկ խնդրի լուծման ընթացքում որոնելիի բնութագիրն ավելի ու ավելի է հստակ դառնում: Խնդրի վերջնական լուծումն էլ նշանակում է, որ մտածողության միջոցով որոնելին ի հայտ է բերված, և գտնված է խնդրի պատասխանը:

## ✓ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեբանության մեջ ընդունված է տարբերակել մտածողության երեք տեսակ՝ **ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր և վերացական**: Պատմական զարգացման սկզբնական շրջանում մարդիկ իրենց առջև դրված խնդիրները լուծում էին պրակտիկ գործողություններով:

Սկզբում մեր նախնիները սովորեցին քայլերով չափել հողամասերը, և միայն ավելի ուշ, այդ պրակտիկ գործունեության ընթացքում կատարված գիտելիքների հիման վրա աստիճանաբար ծագեց և զարգացավ երկրաչափությունը որպես հատուկ տեսական գիտություն: Պրակտիկ ու տեսական գործունեություններն անխզելիորեն կապված են միմյանց:

<sup>17</sup> Тихомиров О.К., "Психология мышления". М., 1984г.

Երեխայի հոգեկան զարգացման գործընթացում նույնպես առաջատար դեր է կատարում պրակտիկ գործունեությունը, որի ընթացքում էլ զարգանում է նրա մտածողությունը: Վաղ նախադպրոցական տարիքում (մինչև երեք տարեկանը ներառյալ) երեխայի մտածողությունը հիմնականում **ակնառու-գործնական** է: Հետագայում 4-7 տարեկանում, երեխաների մտածողությունը դառնում է **ակնառու-պատկերավոր**, չնայած պրակտիկ գործողությունների հետ մտածողության կապը չի վերանում: Իհարկե, միշտ չէ, որ երեխան պարտադիր կարգով պիտի ձեռքբերով շոշափի իրեն հետաքրքրող առարկան: Շատ դեպքերում առարկաների հետ գործնական ձեռնածություններ չեն կատարում, այլ գործառում են նրանց պատկերներով: Այլ կերպ ասած՝ նախադպրոցականները մտածում են ակնառու պատկերներով, այլ ոչ թե հասկացություններով: Դա հաստատվում է նաև շվեյցարացի նշանավոր հոգեբան Դ. Պիաժեի գիտափորձերում:

Վեց-յոթ տարեկան երեխաներին ցույց են տրվել երկու բոլորովին միանման ու հավասար ծավալի խմորի գնդիկներ: Երեխաներն ուշադրությամբ զննելուց հետո ասել են, որ դրանք հավասար են: Այա հենց երեխաների աչքի առջև այդ գնդիկներից մեկը տափակեցվել, վեր է ածվել բլիթի: Փորձարկվողներն այնուհետև գտնում էին, որ բլիթում խմորի քանակությունը մեծացել է:

Բանն այն է, որ երեխաների ակնառու-պատկերավոր մտածողությունը դեռևս ամփոփակնորեն ենթարկվում է նրանց կոնկրետառարկայական ընկալմանը: Բլիթի մասին մտածելով՝ նրանք մայում և անմիջապես տեսնում են, որ սեղանի վրա այն ավելի մեծ տարածություն է զրավում, քան գնդիկը: Այսինքն՝ ակնառու պատկերների միջոցով մտածելիս նրանց թվում է, թե բլիթում ավելի շատ խմոր կա, քան գնդիկում<sup>18</sup>:

Ուսուցման ընթացքում գործնական և ակնառու-պատկերավոր մտածողության հիման վրա աստիճանաբար զարգանում է դպրոցականների **վերացական մտածողությունը**: Նրանց մտածողու-

թյան գործընթացում հանդես են գալիս ոչ միայն գործնական, առարկայական ու ակնառու պատկերները, այլև, հատկապես, վերացական հասկացություններն ու դատողությունները:

Դպրոցականների մտավոր զարգացման համար հսկայական նշանակություն ունի տարբեր գիտությունների հիմունքների յուրացման ընթացքում վերացական հասկացությունների ձեռքբերումը: Չի կարելի հակադրել, սակայն, զգայական և տրամաբանական ճանաչողությունը<sup>19</sup>:

Մենք արդեն գիտենք, որ նույնիսկ ամենավերացական մտածողությունը, դուրս գալով զգայական իմացության շրջանակներից, այնուամենայնիվ, երբեք չի կտրվում զգայություններից, ընկալումներից և մտապատկերներից: Ակնառու զգայական փորձի հետ մտածողության այդ անխզելի կապն էլ ավելի մեծ նշանակություն ունի դպրոցականների մեջ վերացական հասկացությունների ձևավորման համար:

Դպրոցականների մեջ հասկացությունների ձևավորման գործընթացում զննականությունը երկակի դեր է խաղում. մի կողմից այն հեշտացնում է այդ գործընթացը, մյուս կողմից՝ կարող է դժվարությունների տեղիք տալ: Օրինակ՝ դասին չափից ավելի դիտողական-զննական պարազաները կարող են աշակերտների ուշադրությունը շեղել հիմնական իմացական խնդրից:

Դպրոցականների մեջ համապատասխան հասկացությունների յուրացման ընթացքում վերացական մտածողության զարգացումը բոլորովին էլ չի նշանակում, թե նրանց ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողությունը հետին պլան է մղվում: Ընդհակառակը, մտածական գործունեության այդ երեք տեսակները փոխկապակցված են, չնայած դրանց զարգացումը կապված է նաև մարդկանց մասնագիտությունների, նրանց անհատական տարբերությունների հետ: Օրինակ՝ տեխնիկների, ինժեներների և կոնստրուկտորների մեջ առանձնապես զարգացած է ակնառու-գործնա-

18. Пиаже Ж. Роль действия в формировании мышления. "Вопросы психологии", 1965, N 6.

19. Лурья А.Р., "Речь и мышление". Изд-во МГУ, 1975г.

կան մտածողությունը, գրողների մեջ՝ ակնառու-պատկերավոր մտածողությունը և այլն:

Մտածողության անհատական առանձնահատկություններից են նաև իմացական գործունեության մի շարք այլ որակներ՝ **ինքնուրույնությունը, ճկունությունը** և այլն:

**Մտածողության ինքնուրույնությունն** առաջին հերթին դրսևորվում է նոր հիմնահարցը տեսնելու, ձևակերպելու, իսկ այնուհետև՝ սեփական ուժերով այն լուծելու ունակությամբ: Մտածողության ստեղծագործական բնույթը հենց այդպիսի ինքնուրույնության մեջ է ամենից ավելի հստակորեն արտահայտվում:

**Մտածողության ճկունությունը** խնդիրների լուծման սկզբում ընդունված ուղին (այլանը) ժամանակին փոխելու կարողությունն է, եթե այդ ուղին չի բավարարում հիմնահարցի այն պայմաններին, որոնք աստիճանաբար առանձնացվում են նրա լուծման ընթացքում և որոնք սկզբից հաշվի չեն առնվել:

Ստորի արագությունն առանձնապես պետք է այն դեպքերում, երբ մարդուց պահանջվում է շատ կարճ ժամանակում (օրինակ՝ մարտադաշտում, վթարի ժամանակ և այլն) որոշումներ կայացնել: Բայց մտքի այդ որակը պետք է նաև դպրոցականներին: Այսպես, օրինակ, որոշ աշակերտներ, նույնիսկ բարձր դասարաններում, նոր խնդիր լուծելու նպատակով գրատախտակին մոտենալով, ողջ դասարանի առջև շփոթվում են: Այդ բացասական հույզերը կարծես արգելակում են նրանց մտածողությունը: Միտքն սկսում է շատ դանդաղ և հաճախ ապարդյուն աշխատել, թեև հանգիստ իրադրության մեջ (տանը կամ նստարանին նստած) նույն աշակերտները արագ ու լավ են լուծում միևնույն և նույնիսկ ավելի դժվար խնդիրները:

Արգելակող հույզերի և զգացմունքների ազդեցության տակ մտքի այդ կտրուկ «դանդաղումը» հաճախ դիտվում է նաև քննությունների ժամանակ: Որոշ դպրոցականների մեջ էլ քննական եռուզեռը և հուզումները ոչ թե դանդաղեցնում, այլ՝ հակառակը՝ խթանում, արագացնում են մտածողությունը: Դրա շնորհիվ նրանք կարող են ավելի բարձր արդյունքների հասնել, քան սովորական, հանգիստ

իրադրության մեջ: Դպրոցականների անհատական այդ առանձնահատկություններն անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես նրանց մտավոր կարողությունները ճիշտ գնահատելու համար<sup>20</sup>:

Մտածողության թվարկված և այլ որակներ սերտորեն կապված են նրա հիմնական որակի կամ հատկանիշի հետ: Անկախ նրա անհատական առանձնահատկություններից, մտածական կարևորագույն հատկանիշն էականը բացահայտելու, ինքնուրույնաբար մտրանոր ընդհանրացումների հասնելու կարողությունն է: Երբ մարդը մտածում է՝ չի սահմանափակվում այս կամ այն առանձին փաստը կամ երևույթը մատնացույց անելով, եթե անգամ երևույթը տպավորիչ է, հետաքրքրական, նոր և անսպասելի: Մտածողությունն անհրաժեշտաբար առաջ է գնում, խորանում է տվյալ երևույթի էության մեջ և բացահայտում բոլոր քիչ թե շատ նույնանման երևույթների զարգացման ընդհանուր օրենքը, որքան էլ նրանք արտաքնապես տարբերվեն միմյանցից:

Ոչ միայն բարձր, այլև ցածր դասարանների աշակերտներն ընդունակ են իրենց համար մատչելի նյութի հիման վրա երևույթներում և առանձին փաստերում առանձնացնելու էականը և դրա շնորհիվ կատարելու նոր ընդհանրացումներ: Դ.Բ. Էլկոնինի, Վ.Վ. Դավիդովի, Լ.Վ. Ջանկովի և ուրիշների կողմից կատարված բազմամյա հոգեբանական-մանկավարժական գիտափորձերը համոզիչ կերպով ապացուցում են, որ նույնիսկ կրտսեր դպրոցականներն ի վիճակի են յուրացնել (ընդ որում ընդհանրացված ձևերով) շատ ավելի բարդ նյութ, քան կարծում էին մինչև վերջին ժամանակներս (օրինակ՝ ոչ միայն թվաբանական, այլև հանրահաշվական):

Կասկածից վեր է, որ դպրոցականների մտածողությունը դեռևս բավարար չափով չօգտագործված պաշարներ և հնարավորություններ ունի: Հոգեբանության և մանկավարժության ամենափիմանական խնդիրներից մեկն այդ ներուժը մինչև վերջ բացահայտելն ու դրանց հիման վրա ուսուցումն էլ ավելի արդյունավետ ու ստեղծագործական դարձնելն է:

20. Брушлинский А. В., "Психология мышления и проблемное обучение". М., "Знание". 1983г.

## ԹԵՄԱ 14. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Երևակայության ընդհանուր բնութագիրը
2. Երևակայության տեսակները
3. Երևակայության գործընթացները
4. Երևակայությունը և մարդու օրգանական գործընթացները

### ✓ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Երևակայությունը մարդկային ստեղծագործական գործունեության անհրաժեշտ տարր է, որն արտահայտվում է որպես աշխատանքի վերջնական և միջանկյալ արդյունքների պատկերների ստեղծում, խթանում դրանց առարկայական մարմնավորումը, ինչպես նաև ապահովում մարդու վարքի ծրագրի ստեղծումը բոլոր այն դեպքերում, երբ պրոբլեմային իրադրությանը բնորոշ է մեծ անորոշությունը:**

Մտածողության նման երևակայությունն էլ իմացական բարդ գործընթաց է: Երևակայությունը զուտ մարդկային իմացական հոգեկան գործընթաց է. այն հատուկ չէ կենդանիներին: Նախքան որևէ աշխատանք նախաձեռնելը մարդը մտովի պատկերացնում է նրա արդյունքը: Երևակայության ընթացքում նա ծրագրում, պատկերացնում է աշխատանքի միջանկյալ արդյունքները: Օրինակ վարպետը, որը նախաձեռնել է սեղան պատրաստել, իր երևակայությամբ արդեն տեսնում է պատրաստի սեղանը, ինչպես նաև պատկերացնում այն միջանկյալ գործողությունները, որոնք հերթականությամբ պետք է կատարի սեղանը պատրաստելու համար:

Երևակայությունը, համարվելով մարդու աշխատանքային գործունեության անհրաժեշտ պայման, միաժամանակ հանդես է գալիս որպես այդ գործունեության հետևանք: Մարդը աշխատանքի ընթացքում ծրագրում, կանխատեսում է այն պատկերները, որոնք հետագայում դառնում են գործունեության արդյունք:

Նախամարդու ստեղծած առաջին տարրական գործիքներից մինչև ժամանակակից ամենաբարդ սարքավորումները մարդու

երևակայության արդյունք են: Առանց երևակայության չէր ստեղծվի ոչ մի ինքնաթիռ ու արբանյակ, ճարտարապետական ոչ մի հուշարձան ու կոթող, արվեստի երկ ու աշխատանքային գործիք:

Երևակայությունն իրականության ստեղծագործական արտացոլման ձև է, որի միջոցով մարդն իր ունեցած մտապատկերները վերափոխում և ստեղծում է նոր պատկերներ, սակայն դրանք չի կարելի նույնացնել: Եվ երևակայությունը, և՛ մտածողությունը ծագում են այն դեպքում, երբ կա հիմնախնդիր, դժվարություն, երբ պահանջվում է նոր խնդրի լուծում: Այս երկու հոգեկան գործընթացներն էլ պատճառակցված են (դետերմինավորված) մարդու պահանջումներով: Սակայն նրանք ունեն նաև տարբերություններ: Երևակայության գործընթացներն ընթանում են պատկերների ձևով, իսկ մտածողության գործընթացները հասկացություններով<sup>21</sup>:

Մարդու գործունեության մեջ միշտ էլ հանդես են գալիս պրոբլեմային իրադրություններ, որոնց լուծումը կարող է տեղի ունենալ մտապատկերներով (այսինքն տեղի ունենալ երևակայության գործընթաց), ինչպես նաև կարող է լինել կամ կանխատեսվել հասկացություններով (այս դեպքում արդեն գործ ունենք մտածողության գործընթացի հետ): Եվ քանի որ մտապատկերների և հասկացությունների համակարգերը կապված են, ուրեմն երևակայությունը և մտածողությունը միասնական են:

Երևակայության հիմքը մտապատկերների վերլուծությունն ու համադրությունն է, որի ամենատարրական ձևը ազլուտիմացիան (կցականություն) է, երբ տարբեր առարկաների կամ կենդանիների հատկությունները մեխանիկորեն միացվում են և երևակայությամբ ստեղծում մի նոր առարկա կամ կենդանի:

Ուսումնասիրությունները պարզել են, որ երազները, որպես ենթագիտակցական երևակայության ձևեր, հարուստ են անսովոր գույն-գորդություններով՝ ազլուտիմացիաներով, որոնք հաճախ հանդես են գալիս ժողովրդական ասքերում, հեքիաթներում, գեղարվեստա-

21. Նալչաջյան Ա.Ա., «Ինտուիցիան գիտական ստեղծագործության պրոցեսում», Ե., 1976թ.

կան ստեղծագործություններում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկայի բնագավառում:



Նկ. 1.

Նկ. 1-ում տեսնում եք 7-գլխանի թռչող դև: Այդպիսի պատկերներ են ջրահարսի երևակայական պատկերը (կնոջ գլխով և ձկան պոչով), հավի տոտիկների վրա կանգնած տնակը, թևավոր ծին (պեգաս) և այլն: Այդպիսի անսովոր համադրությամբ է ստեղծված տանկ-երկկենցաղը (ամֆիբիա), ուր միացված են տանկի և նավի

հատկությունները, ակորդեոնը, որի մեջ համադրված են դաշնամուրը, բայանը և այլն:


Մտապատկերների վերամշակման ու նորի ստեղծման ընթացքում հաճախ տեղի է ունենում չափազանցում (հիպերբոլա), որն արտահայտվում է առարկաների ու նրանց հատկությունների մեծացմամբ կամ փոքրացմամբ: Օրինակ՝ Տորբ Անգելի, Սասունցի Դավթի, Իլյա Մուրոմեցի և այլ հսկաների չափազանցված կերպարների ստեղծումը:

Երևակայական վերամշակման ստեղծման հնարներ են նաև շեշտադրումը, սրումը, այսինքն՝ որոշ հատկությունների ընդգծումը: Այս հնարի օգնությամբ է, որ ստեղծվում են ընկերական շարժեր և կծու ծաղրանկարներ (նկ. 1):



Նկ. 1.

Չայտնի դերասանուհի Սոֆի Լորենի լուսանկարը և ընկերական շարժը, որտեղ դերասանուհու առավել բնորոշ գծերը ներկայացված են ընդգծված և չափազանցված, որը և երևակայության յուրահատուկ հնար է:



Նկ. 1.

Նկարչի ստեղծած այս դիմանկարը (նկ. 1) ընկերական շարժ է, որում արտաքին տեսքի մի քանի գծեր առավել բնորոշ են և ներկայացված են ընդգծված, չափազանցված ձևով:

### ՎԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեբանները գտնում են, որ գոյություն ունի երևակայության երկու տեսակ՝ **պասսիվ** և **ակտիվ**:

Որոշ դեպքերում երևակայությունը կարող է հանդես գալ որպես ակտիվ գործունեությանը փոխարինող ներքին հոգեկան երևույթ: Նման դեպքում մարդը ժամանակավորապես «վերանում է» դեպի ֆանտաստիկայի աշխարհը, որպեսզի այնտեղ պատասպարվի իրեն անլուծելի թվացող հարցերից:

Երևակայության նման ձևը կոչվում է **պասսիվ** երևակայություն, քանզի մարդն ինքն իրեն առաջադրում է այնպիսի «հաճելի» նպատակներ, որոնք իրագործելի չեն:

Պասսիվ երևակայությունը կարող է դրսևորվել կանխամտած-

ված և ոչ կանխամտածված ձևով: Կանխամտածված պասսիվ երևակայությունն այն է, երբ մարդը երևակայական պատկերներ է ստեղծում նպատակադրված ձևով, սակայն դրանք կապված չեն կյանքում մարմնավորելու կամային ծիգերի հետ: Երևակայության այս ձևն անվանում են անուրջներ:

Անուրջներ կարող են ունենալ դեռահասները, երիտասարդները, նույնիսկ հասուն մարդիկ, սակայն երբ մարդու երևակայության գործընթացում գերիշխում են անուրջները, դա վկայում է տվյալ մարդու պասսիվության, ծուլության, անծի կամային որակների թերզարգացածության մասին:

Ոչ կանխամտածված պասսիվ երևակայությունն այն է, երբ մտապատկերներ են առաջանում գիտակցության գործունեության թուլացման, մարդու ժամանակավոր անգործության, ինչպես ասում են, կես-քուն, կես-արթուն վիճակում, գիտակցության հիվանդագին խախտումների դեպքում:

**Ակտիվ** երևակայությունն իր հերթին լինում է **վերստեղծող** և **ստեղծագործական**: **Վերստեղծող երևակայության** դեպքում գիտակցում ենք, որ գոյություն ունի երևակայության օբյեկտ: Վերստեղծվող պատկերներն առաջանում են ընթերցած գրքերի, լսած պատմությունների կամ իրական փաստերի հիման վրա: Երևակայության այս տեսակի միջոցով հնարավոր է դառնում ստեղծել այնպիսի պատկերներ, որոնք ընդհանրապես իրականության մեջ գոյություն ունեն, սակայն բացակայում են մեր կենսափորձում:

Օրինակ՝ նայելով Ամերիկայի քարտեզին, մտովի կարող ենք ստեղծել տվյալ աշխարհագրական վայրի պատկերը, եթե մենք այնտեղ դեռևս չենք եղել. իսկ եթե եղած լինեինք, ապա այդ մտապատկերները կհամարվեին ոչ թե երևակայության, այլ հիշողության արգասիք:

Վերստեղծող երևակայության շնորհիվ է, որ ստեղծում ենք գրական երկերի հերոսների, նրանց ապրած ժամանակաշրջանի, կենցաղի, բարքերի մտապատկերներ: Օրինակ՝ կարդում ենք Հովի. Թոմանյանի «Գիքորը» պատմվածքը, և այնքան վառ են մեր երևակայության շնորհիվ ստեղծված մտապատկերները, որ նկարել

կարողանալու դեպքում հեշտությամբ կարող ենք դարձնել կտավ՝ արվեստի գործ:

Այսպիսով, երևակայության այն տեսակը, որն իր հիմքում ունի նկարագրվածին համապատասխան պատկերների ստեղծում, կոչվում է վերստեղծող:

Գեղարվեստական գրականությունը ընթերցելիս, տարբեր առարկաների նյութ ներկայացնելիս, աշխարհագրական քարտեզներ և պատմական փաստեր ուսումնասիրելիս մշտապես անհրաժեշտ է երևակայության շնորհիվ վերստեղծել այն, ինչը նկարագրված է:

Հաճախ մենք սիրում ենք բաց թողնել կամ թուցիկ կարդալ գրքերում բնության, շենքերի, բնապատկերների, դիմանկարների բառային-գեղարվեստական նկարագրություններ, որոնք, անկասկած, աղքատացնում են երևակայական մտապատկերների բովանդակությունը, չեն նպաստում հատկապես ստեղծագործական երևակայության զարգացմանը:

**Ստեղծագործական երևակայություն:** Ի տարբերություն վերստեղծողի՝ ստեղծագործական երևակայության գործընթացում ստեղծվում են նոր պատկերներ: Մարդն ստեղծում է ինչ-որ նոր բան, որը, իր պես ստեղծագործական գործունեության նախնական արդյունք, արտահայտվում է որպես ծրագիր, մեքենայի գծագիր, ճարտարապետական կոթողի նախագիծ և այլն: Ստեղծագործական է գրողի երևակայությունը, որը նոր կերպարներ է ստեղծում, գյուտարարինը՝ երբ ստեղծում է նոր մեքենայի գծագիր, մոդել, մեքենա և այլն:

Ստեղծագործական երևակայության ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ ստեղծվում են այնպիսի պատկերներ ու օբյեկտներ, որոնք իրականում գոյություն չունեն:

Ստեղծագործական երևակայության արտահայտության ձևերից է երազանքը, որը ցանկալի պատկերի ստեղծումն է: Երազանքը միշտ ուղղված է դեպի ցանկալի ապագան: Օրինակ՝ դուք երազում եք դառնալ բժիշկ, ինժեներ, ճարտարապետ, մենեջեր և այլն:

Միշտ չէ, որ մարդու երազանքն անմիջապես կատարվում է. երբեմն այն կամ այն պատճառով կարող է հետաձգվել: Մարդու ձեռ-

քով պատրաստված յուրաքանչյուր առարկա հանդիսանում է իրականացված երազանք: Ի դեպ, իրագործված երազանքը ծնում է նոր պահանջմունք, իսկ նոր պահանջմունքը՝ նոր երազանք և այսպես շարունակ:

Օրինակ՝ չորս դար առաջ ապակին անիրագործելի երազանք էր: Պատուհաններին քաշում էին եզան կաշի: Հաջողվեց ապակու գյուտը, որով լույսը թափանցեց սենյակ: Այնուհետև ծնվեց նոր պահանջմունք՝ այնպես անել, որ ապակին բաց թողնի արևի ուլտրամանուշակագույն ճառագայթները, որոնք այնքան անհրաժեշտ են հատկապես երեխաների ոսկորների աճի համար: Իրագործվեց նաև այդ երազանքը և այսպես շարունակ:

### ✓ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՆԵՐԸ

Դեռևս միջին դարերում հայտնի էր հետևյալ ապշեցուցիչ փաստը: Երբ որոշ մարդիկ մտորում էին Քրիստոսի խաչելության ժամանակ կրած տառապանքների մասին՝ նրանց ձեռքերի ակերին և ոտքերի ներբաններին հայտնվում էին «խաչելության» նշաններ, արյունագեղումներ: Այս յուրահատուկ փաստը վկայում է, որ երևակայությունը կարգավորիչ որոշ ազդեցություն է ունենում մեր օրգանիզմի գործունեության վրա:


Օրինակ, երբ Ֆլորենցիոսը իր հանրահայտ վեպում նկարագրում էր տիկին Բովարիի թունավորման տեսարանը, բերանում մկնդեղի համ էր զգում: Մոսկվայի հոգեբանության ինստիտուտում ուսումնասիրվում էր ոմն Սաշա, որը բավական է ինչ-որ բան պատկերացներ կամ, ինչպես ինքն էր սիրում ասել՝ «տեսներ», և մարդիկ ակամատես էին լինում նրա օրգանիզմի տարօրինակ փոփոխություններին: Նա կարողանում էր երկու աստիճանով բարձրացնել ձախ ձեռքի և նույնքանով իջեցնել աջ ձեռքի ջերմությունը պատկերացնե-

լով, որ ձախ ձեռքում պահում է տաքացած առարկա, իսկ աջում՝ սառույցի կտոր:

Հայտնի են, այսպես կոչված, իդեոմոտորային (գաղափարա-շարժողական) շարժումներ, որոնք առաջանում են այն ժամանակ, երբ մարդը պատկերացնում է դրանք: Օրինակ, կատարեք այս փորձը. ուղիղ առաջ պարզած ձեռքերում բռնեք ճոճամակ՝ թել, որի ծայրին կախված է փոքր բեռ և աշխատեք պատկերացնել, որ բեռն սկսում է համակենտրոն շրջաններ գծել: Կնկատեք, որ որոշ ժամանակ անց այն կսկսի պտտվել: Վերոհիշյալ և բազմաթիվ այլ օրինակներ ցույց են տալիս, որ երևակայությունն զգալի ազդեցություն է գործում օրգանիզմի շատ համակարգերի աշխատանքի վրա:


### ՏՐԱՍԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ո՞րն է այս մկրատի պատկերում թույլ տրված սխալը:




Նկ. 1.

2. Այգում աճել են 16 մրգատու ծառեր: Բաժանեք 8 հավասար մասերի այնպես, որ յուրաքանչյուր բաժին հողամասում լինեն 2 մրգատու ծառեր (Նկ. 2):



Նկ. 2.

3. Լուցկու 8 ձողիկից ստացվել են 1 քառակուսի և 2 եռանկյուն: Վերադասավորեք 4 ձողիկ և ստացեք 2 քառակուսի և 4 եռանկյուն (Նկ. 3):



Նկ. 3.

4. Որոշեք թվերի տեղադրման օրինաչափությունը և լրացրեք բացակայող թիվը:

|    |    |    |    |
|----|----|----|----|
| 7  | 9  | 5  | 11 |
| 4  | 15 | 12 | 7  |
| 13 | 8  | 11 |    |



5. Հանդիպեցին մանկության երկու ընկերներ: Նրանց միջև տեղի ունեցավ հետևյալ երկխոսությունը.

- Քանի՞ տարի ես քեզ չեմ տեսել ու ոչինչ չեմ լսել քո մասին:
  - Ես արդեն արջիկ ունեմ:
  - Ի՞նչ է նրա անունը:
  - Ինչպես նրա մոր անունը:
  - Քանի՞ տարեկան է այժմ Անահիտը:
- Ձրուցակիցն ինչպե՞ս իմացավ արջկա անունը:

6. Երկուսով մոտեցան գետին: Ամայի ավին մի նավակ կար, որը միայն մի մարդ կարող էր տեղավորել:

Երկուսն էլ այդ նավակով կարողացան անցնել գետը և շարունակել ճանապարհը:

Ինչպե՞ս դա նրանց հաջողվեց:

## ԱՆՁԻ ՀՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐ

### ԹԵՄԱ 15. ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

1. Հասկացողություն զգացմունքների մասին
2. Զգացմունքների ապրման ձևերը
3. Բարձրակարգ զգացմունքներ
4. Սթրես, ֆրուստրացիա և հոգեբանական ինքնապաշտպանություն

### ✓ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զգացմունքները մարդու շրջապատի առարկաների ու երևույթների նկատմամբ ունեցած կենսական հարաբերությունների արտացոլումն են:

Արտաքին աշխարհի արտացոլումը ներառում է անձի՝ որպես գործող և իմացող սուբյեկտի հարաբերություններն այն օբյեկտների ու երևույթների նկատմամբ, որոնք կարող են բավարարել կամ չբավարարել նրա պահանջմունքները: Գլխուղեղի կողմից աշխարհի արտացոլման այդպիսի յուրահատուկ ձևը կազմում է անձի զգացմունքային կամ հուզական ոլորտը:

Զգացմունքը մարդու այն ապրումն է, որը նա ունենում է արտացոլվող այս կամ այն օբյեկտի նկատմամբ՝ կապված իր պահանջմունքների բավարարման հետ: Պահանջմունքների ծագմանն ու բավարարմանն ուղղված փորձերի ընթացքում (ինչպես և կապված դրանց հաջող կամ անհաջող ավարտի հետ) մարդու մեջ առաջանում են արտացոլվող օբյեկտների նկատմամբ որոշակի վերաբեր-

մունքի ապրումներ: Դրանք մեր հույզերն ու զգացմունքներն են: Չի կարելի շփոթել կամ նույնացնել «զգայություն» և «զգացմունք», «հույզ» և «զգացմունք» հասկացությունները:

Օրինակ՝ «Ես խորովածի հոտ եմ զգում», «Երեխան ուշացավ», «Ես որոշ անհանգստություն եմ զգում»: Այս նախադասություններում չնայած երկու դեպքում էլ գործածված է «զգում»-ը, բայց առաջին դեպքում հոտը զգայություն է, իսկ երկրորդ դեպքում՝ «որոշ անհանգստություն»՝ զգացմունք:

«Չզացմունք» հասկացությունը պետք է օգտագործել այն դեպքում, երբ խոսվում է ուղեղում կենդանի էակների և այն օբյեկտների նկատմամբ նրանց ունեցած հարաբերությունների մասին, որոնք բավարարում են մարդու պահանջմունքները կամ խանգարում դրանց բավարարմանը: Բարձրակարգ զգացմունքները հատուկ են միայն մարդկանց:

«Յույզ» անվանում ենք հոգեկան գործընթացի ապրման կոնկրետ ձևը, որի դեպքում նրանց հատկանիշներն առանձնապես պարզորոշ կերպով են հանդես գալիս: «Յույզերը» հատուկ են և՛ մարդկանց, և՛ բարձրակարգ կենդանիներին<sup>22</sup>:

«Չզացմունք» տերմինն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ սուբյեկտն արտացոլում է իր անձի և հասարակության միջև առաջացած նշանակալից հարաբերությունները, իսկ «հույզերը» դիտվում են որպես միայն կենսագործունեության համար ազդող գրգռիչների օգտակարության կամ վնասակարության ցուցիչներ, որոնք կապված են նաև վարքի, ըստ ծագման բնազդային ձևերի և անպայման ռեֆլեքսների հետ:

Չզացմունքներն ունեն ազդանշանային և կարգավորող ֆունկցիաներ:

Չզացմունքները, որպես մարդկային հոգեկանի յուրահատուկ ոլորտ, անձի գործունեության կողմ՝ բազմաթիվ ձևերով ապրվում

են գործող և աշխարհն իր ուղեղում արտացոլող մարդու կողմից:

Չզացմունքներն ազդանշանների համակարգություն են այն մասին, թե մարդու համար աշխարհում տեղի ունեցածից ինչն է նշանակալից: Անհաշիվ թվով գրգռիչներից, որոնք տվյալ դեպքում ներգործում են զգայարանների վրա, մի քանիսն առանձնացվում և ծուլվում են միմյանց, կարծես ցեմենտվում են առաջացող զգացմունքներով, տպավորություն գործում ու պահպանվում՝ որպես հիշողության զգայական այս կամ այն երանգով ներկված պատկերներ: Բնախոսական տեսակետից դա բացատրվում է նրանով, որ որոշակի գրգռիչներ կենդանի օրգանիզմի համար բարեկեցության կամ անբարեկեցության ազդանշաններ են դառնում, իսկ զգայությունների ապրումը հանդես է գալիս որպես պայմանական ռեֆլեքսների համակարգերի ամրապնդում, ռեֆլեքսներ, որոնցից կազմվում է մարդու անձնական փորձը: Չզացմունքի այդ ազդանշանային ֆունկցիան հոգեբանության մեջ կոչվում է զգացմունքների իմպրեսիվ կողմ (լատիներեն՝ impressio-տպավորություն բառից):

Երկրորդ՝ զգացմունքները դառնում են մարդկային գործունեության կամ առանձին գործողությունների տևական կամ կարճատև գործող դրդապատճառներ՝ ծնելով հակումներ, ծգտումներ դեպի մտապատկերվող կամ մտածվող նպատակը:

Ի. Պ. Պավլովը տարբեր զգացմունքների և հուզական ապրումների դրական կամ բացասական բնույթը բացատրում էր շրջապատող միջավայրին կենդանի օրգանիզմի հարմարման ժամանակ դիմամիկական ստերեոտիպերի առաջացմամբ կամ քայքայմամբ: Դիմամիկական ստերեոտիպ ասելով նկատի են առնվում նյարդային պայմանառեֆլեկտորային կայուն համակարգությունները, որոնք ձևավորվում են որոշակի կարգով տրվող արտաքին ազդակների կրկնման հետևանքով: Դիմամիկական ստերեոտիպի «փշրվելը» տարբեր դժվարությունների և արգելքների հետ բախվելու հետևանքով առաջ է բերում բացասական հուզական վիճակներ:

22. Симонов П.В. Что такое эмоция. М., 1964.

Ձգացմունքները և նրանց ապրման բազմազան ձևերը կատարում են ոչ միայն ազդանշանային, այլև կարգավորող դեր: Հույզերն արտահայտվում են շարժումներում և օրգանիզմի բազմաթիվ փոփոխություններում: Այդ փոփոխությունները միաժամանակ ապրվող զգացմունքների ցուցանիշներն են: Հարմարվողական բնույթի ոչ կամածին և գիտակցական շարժումների կատարումը, ձայնի փոփոխությունները, դիմախաղը (միմիկա), ձեռնածությունը (ժեստագործառնություն), օրգանիզմում ընթացող գործընթացների վերակառուցումը հոգեբանության մեջ կոչվում է հուզական վիճակների արտահայտչական (էքսպրեսիվ) կողմ:

Մարդու հուզական ոլորտի բնախոսական մեխանիզմները, որոնք փորձով հայտնաբերվում են հետազոտողների կողմից, առաջին հայացքից քիչ են տարբերվում այն մեխանիզմներից, որոնք ունեն բարձրակարգ կենդանիները: Սակայն որքան դիտարկում ենք զգացմունքների բովանդակությունն ու տարբերությունները, այնքան նշանակալից է դառնում, որ շատ գիտնականներ (ընդունելով հանդերձ կենդանիների մեջ հուզական հակազդումների առկայությունը) անթույլատրելի են համարում խոսել կենդանիների մեջ բարձրակարգ զգացմունքների առկայության մասին: Որակապես տարբեր են նաև մարդկանց հույզերը:


Մարդկային հույզերը վերափոխվում են գոյության սոցիալական պայմանների հետևանքով և, բացառությամբ որոշ հիվանդագին դեպքերի, դրսևորվում են հասարակայնորեն պայմանավորված «մարդկայնացված ձևով»: Օրինակ՝ քաղցի զգացումը մարդու կողմից հուզականորեն ապրվում և արտահայտվում է որակապես այլ ձևով, քան կենդանիների շրջանում: Կամ սեռական զգացումը (կապված բազմացման բնազդի հետ) անցել է մարդացման երկար ու դժվարին պատմական ուղի և այլն: Նույնը կարելի է ասել նաև զգացմունքների ապրման ձևերի մասին:

## ✓ ՁԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՊՐՄԱՆ ՉԵՎԵՐԸ

Ձգացմունքների գունեղությունն ու բազմազանությունը մարդուն դարձնում են ավելի հետաքրքիր: Մենք արձագանքում ենք իրականության ամենատարբեր երևույթների, ուրախանում կամ տխրում ենք, հպարտանում կամ հիասթափվում, որը և ապահովում է ավելի խորը հասկանալու շրջապատում կատարվածը:

Ձգացմունքները կազմում են անձի ապրումային ընդարձակ մի ոլորտ, որի հարստության ու բազմազանության մասին որոշակի նպատկետացում են տալիս դրանց դրսևորման մի շարք ձևեր՝ **հուզական տոն, հույզեր, աֆեկտներ, սթրեսներ, տրամադրություններ** և այլն:

Ձգացմունքը հաճախ դրսևորվում է որպես սուսկ հույզ (էնոցիա), որպես ապրումային գործընթացի յուրօրինակ որակական երանգավորում: Ձգացմունքն այդ դեպքում գիտակցվում է ոչ թե ներքնապես, այլ պայմանավորված է ներգործող առարկաների, երևույթների կամ գործողությունների համար բնորոշ հատկանիշով: Այդ հատկանիշն առաջացնում է իմացական և պրակտիկ գործողություններ կատարող անձնավորության մեջ արտացոլվող օբյեկտների նկատմամբ որոշակի հուզական տոն, վերաբերմունք, ապրում: Միշտ չէ, որ մարդը նկատում է, որ խոսքը վերաբերում է ոչ այնքան առարկաների օբյեկտիվ հատկանիշներին, որքան իր անձնական, սուբյեկտիվ վերաբերմունքին դեպի այդ առարկաները: Օրինակ՝ ասում ենք «հաճելի զրուցակից», «ծիճաղելի պատմություն», «տիպիկ հոտ», «ձանձրալի գիրք», «սիրած զբաղմունք», «ուրախ զբոսանք», «վրդովեցուցիչ արարք», «հանգստացուցիչ հաղորդում», «լարված աշխատանք» և այլն:



Նկ. 1. Մարդկային հույզերի արտահայտություն

Նման հուզական երանգավորումը՝ **հուզական տոնը**, հատուկ է բոլոր մարդկանց: Օրինակ՝ ցավը, մի շարք չափազանց ուժեղ գրգիռներ, զգայական տհաճ երանգով որոշակի հոտեր զգվելի են յուրաքանչյուր նորմալ մարդու համար: Ավելին՝ իրենց հուզական տոններով ըմբռնումներն ու մտապատկերները նույնպես հանդիսանում են մախկին հուզական գործընթացների հետքեր, նախորդ փորձի արձագանք (նրանք մարդկանց մեծամասնության մեջ շատ բանե-

րով նման են, որը և ստեղծում է դրանց բնածին լինելու տպավորություն): Շատ հաճախ հուզական տոնը ցուցանիչ է հանդիսանում այն բանի, թե բավարարում կամ չի բավարարում առարկան կամ իրադրությունը մարդու պահանջմունքը, հաջող, թե անհաջող է ընթանում նրա գործունեությունը (տվյալ կոնկրետ դեպքում)<sup>23</sup>:

Որոշ մարդկանց մեջ խիստ արտահայտված հուզական տոնն ընդունում է յուրահատուկ իդրոսիմկրագիայի՝ հիվանդագին զգվանքի դրսևորում այն մի քանի գրգռիչների նկատմամբ, որոնք այլ մարդկանց համար գրեթե անտարբեր են: Հանդիպում են անհատներ, որոնք չեն կարողանում տանել, օրինակ, պանրի հոտը, ապակին դանակով քերելուց առաջացած ձայնը, դեղծի, թավիչի հետ շփումը և այլն:

Տեսողական, լսողական, հոտառական շարժողական զգայությունների հուզական տոնի ուսումնասիրությունը գործնական մեծ նշանակություն ունի: Ասենք՝ շենքի, դազգահների, փոխադրամիջոցների գույները կարող են նկատելիորեն ազդել աշխատանքի արտադրողականության և աշխատավորների ընդհանուր ինքնազգացողության վրա՝ կախված հաճելի կամ տհաճ հուզական երանգներից: Քիմիական պարարտանյութերի տհաճ հոտը խիստ իջեցնում է կարտոֆիլի և բանջարեղենի մշակությամբ զբաղվող մարդու աշխատունակությունը: Գործարանի աղմուկը ոչ միայն ըստ ուժգնության, այլև սուր հնչյունների յուրահատուկ հուզական տոնի պատճառով խանգարում է աշխատանքին և մեծացնում խոտանի տոկոսը, մինչդեռ հաճելի երաժշտությունը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և այլն:

**Հույզերն** (այդ տերմինի ներքին աստիճան) իրենցից ներկայացնում են զգացմունքի ապրման սովորական և բնորոշ ձև: Հույզը որևէ զգացմունքի անմիջական ապրումն է: Հույզ է կոչվում ոչ միայն հենց երաժշտության նկատմամբ ունեցած սերը, այլև հաճույքի, հիացմունքի վիճակը, որն ապրում, զգում է նա, ով լսում է վարպետորեն կատարվող լավ երաժշտություն: Այդ նույն զգացմունքն ապր-

23. Гамезо М.В. Атлас по психологии. М., 1986.

վում է վրդովմունքի, բացասական հույզի ձևով, երբ երաժշտական ստեղծագործությունը լսում ենք վատ կատարմամբ:

Վախը կամ սարսափը, որպես մի զգացում, այսինքն՝ որոշակի օբյեկտների, նրանց զուգորդությունների նկատմամբ ձևավորված յուրահատուկ վերաբերմունք, կարող է ապրվել իրարից տարբերվող հուզական գործընթացներում: Երբեմն մարդը փախչում է սարսափելիից, երբեմն էլ անզգայանում և քարանում է:

Հույզերն իրենց գործունեությամբ **ստենիկական** են (հունարեն՝ sthenos-ուժ բառից): Հույզերը դառնում են արարմունքի, խոսքային արտահայտությունների դրդիչներ, մեծացնում են մկանների և օրգանիզմի ուժերի լարումը: Ինչպես ասում են, ուրախությունից մարդը պատրաստ է «լեռներ շուռ տալ»: Կարեկցելով ընկերոջը՝ նա օգնության միջոցներ է փնտրում: Գործուն հույզի դեպքում մարդն ակտիվ է, շարժուն: Որոշ դեպքերում հույզերը բնորոշվում են պասիվությամբ կամ հայեցակախությամբ, զգացմունքները թուլացնում են մարդուն (**ստենիկական հույզեր**): Երբեմն ուժեղ զգացում ունենալով մարդը պարփակվում է իր մեջ և դառնում ինքնամփոփ:

Կատարվող գործողությունների դրդապատճառներ լինելով՝ հույզերը կարող են նպաստել գործունեության կազմակերպմանը, իսկ այլ դեպքերում կազմալուծել այն: Այսպես կոչված, հուզական բթության վիճակում մարդու գործունեությունը կորցնում է իր նպատակաուղղվածությունը, նրա մտածողությունը և երևակայությունը անհրաժեշտ ազդակներ չեն ստանում:

**Աֆեկտներ:** Աֆեկտներ կոչվում են հուզական այն գործընթացները, որոնք արագորեն տիրապետում են մարդուն, ընթանում բուռն կերպով և քնորոշվում գիտակցության նշանակալից փոփոխությամբ, գործողությունների վրա կամային հսկողության խախտմամբ (երբեմն՝ ինքնատիրապետման կորստով), ինչպես նաև օրգանիզմի ողջ կենսագործունեության փոփոխմամբ: Աֆեկտները կարճատև են, փոթորկալից: Աֆեկտային կամ բուռն հուզական հոգեվիճակներն ունեն հաճախ իրար անսպասելի հերթափոխող փուլեր:

Կատաղությամբ, սարսափով, շփոթվածությամբ, անզուսպ ծիծաղի նուպայով, հուսահատությամբ բռնված մարդը միատեսակ չի

արտացոլում աշխարհը. նա տարբեր ձևով է արտահայտում իր ապրումները, տարբեր չափով է տիրապետում իրեն և կարգավորում իր շարժումները: Դա բացատրվում է նրանով, որ գլխուղեղի որոշակի կենտրոնների խիստ զրգռումը, իսկ դրա հետ մեկտեղ ուրիշ կենտրոնների արգելակումն աֆեկտի դեպքում անցնում են սահմանները և երբեմն առաջացնում բարձրագույն նյարդային գործունեության աշխատանքի կազմալուծում: Կենսունակության կտրուկ բարձրացման ստենիկական վիճակները մասնակիորեն, իսկ երբեմն և ամբողջությամբ, փոխարինվում են աստենիկ վիճակներով՝ ուժասպառությամբ, եռանդի սպառմամբ և այլն: Այսպես, օրինակ, ցասումը (որն արտահայտվում է եռանդուն շարժումներով, աչքերի փայլով, դեմքի շառագունությամբ) փոխարինվում է կատաղությամբ, որն ուղեկցվում է շարժումների կազմալուծմամբ, հայացքի մթագնումով, դեմքի գունատությամբ, կամ ժայրահեղ հուսահատության վիճակում ողջ օրգանիզմի բուռն ռեակցիան երբեմն փոխարինվում է ուշաթափությամբ կամ քարացածությամբ (ստուպոր)<sup>24</sup>:

Իհարկե, աֆեկտի վիճակի սկզբում մարդը չի կարող չմտածել իր զգացմունքի օբյեկտի մասին, ակամայից շեղվելով կողմնակի ամեն ինչից՝ նույնիսկ գործնականորեն կարևորից: Սակայն հետագայում մարմնական փոփոխությունները և արտահայտիչ շարժումները դառնում են ավելի ու ավելի անվերահսկելի, շարժումներն ուժեղ լարվածության հետևանքով խախտվում են: Դա կենսաբանորեն բացատրվում է նրանով, որ արգելակումն ավելի ուժեղ է ընդգրկում կիսագնդերի կեղևը, իսկ ենթակեղևային հանգույցներում և միջանկյալ ուղեղում զրգռվածությունն ուժեղանում է, և մարդը ենթարկվում է սարսափի, գայլույթի, վրդովմունքի ու աֆեկտի դրսևորման այլ ձևերի: Սակայն որոշ զգացմունքներ կարող են ընթանալ հենց աֆեկտի ձևով: Օրինակ՝ աֆեկտիվ հիացման դեպքեր կարելի է դիտել թատրոնի հանդիսատեսների կամ ցնծություն ապրող բազմության վարվելակերպում (ասենք՝ ֆուտբոլային խաղ դիտելիս): Գեղարվեստական գրականության մեջ բազմիցս «խելա-

գար» սիրո աֆեկտիվ ապրումներ են նկարագրվել, կամ երկարամյա համառ հետապնդումներից հետո գիտական հայտնագործությունները երբեմն ուղեկցվում են հաղթանակի և ուրախության բուռն պոռթկումներով և այլն:

Ձսպել իրեն աֆեկտի առաջին փուլում, չկորցնել ինքնատիրապետումը՝ ի վիճակի է յուրաքանչյուրը, և ոչ միայն հասուն մարդը, այլև երեխան: Սակայն հաջորդ փուլերում մարդը հաճախ կորցնում է կամային վերահսկողությունը, չգիտակցված շարժումներ և անխոհեմ գործողություններ է կատարում: Նույնիսկ քիչ թե շատ ամուր նյարդային համակարգ ունեցող մարդկանց մեջ աֆեկտի այդ փուլերը կապում են անպատասխանատու արարքների, սանձարձակության և հարբեցողության հետ: Այսպիսի մարդը ոչ այնքան ընկնում է ծանր աֆեկտիվ վիճակի մեջ, որքան հագուրդ է տալիս իր ցանկություններին, ուստի և, նա պետք է պատասխանատվություն կրի կատարած արարքների համար:

Աֆեկտիվ բռնկումից հետո երբեմն վրա է հասնում հանգստացում կամ հոգնածություն, և զգացվում է լուրջ ջարդվածություն, ուժասպառություն, երբեմն էլ՝ քնկոտություն (այսպես կոչված՝ աֆեկտիվ շոկ):

Վերջին քառորդ դարի ընթացքում ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում հուզական այնպիսի վիճակների ուսումնասիրությունը, որոնք առաջացնում են խիստ լարվածություն կամ սթրես: **Սթրեսները** վտանգի, տարբեր ֆիզիկական և մտավոր գերբեռնվածության, արագ և պատասխանատու որոշումներ ընդունելու անհրաժեշտության և մնամորինակ այլ դեպքերում կատարվող հուզական լարված գործողություններ են:

Հուզական լարված վիճակների կամ սթրեսային վիճակի առաջացման և ընթացքի հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը շատ կարևոր է մի շարք մասնագետների (դատավոր, օդաչու, տիեզերագնաց, վարորդ և այլն), այդ թվում և՛ մանկավարժների համար:

Սթրեսը բնախոսական հիմնավորում է ստացել Ու. Քենոնի՝ հոմեոստազի (օրգանիզմի գործունեության ներքին պայմանների հաս-

տատունություն) և Յ. Սելեյի ընդհանուր աղապտացիոն (հարմարվողական) սինդրոմի վերաբերյալ ուսումնասիրություններում<sup>25</sup>:

Օրինակ՝ աղապտացիոն սինդրոմն իրենից ներկայացնում է օրգանիզմի իր բնույթով յուրօրինակ պաշտպանական այնպիսի մի ռեակցիա, որն իր պահեստային (ամենից առաջ՝ էնդոկրինային) ուժերը մոբիլիզացնում է ի պատասխան ուժգին և խեղդղ (գերուժեղ) արտաքին ազդեցությունների լինի դա ֆիզիկական կամ նյարդային-հոգեկան հուզական գերբեռնվածություն: Սթրեսային վիճակների առկայության մասին են վկայում սրտանոթային, շնչառական համակարգերի, մաշկի էլեկտրահաղորդականության և վեգետատիվ այլ ցուցանիշների փոփոխությունները: Սթրեսների ժամանակ նկատվում են նաև բարձրագույն կենտրոնական նյարդային համակարգության կենսաէլեկտրական որոշակի փոփոխություններ, արյան մեջ կենսաքիմիական տեղաշարժերի առաջացում և այլն: Սակայն այս բոլոր փոփոխությունները ոչ սպեցիֆիկ բնույթի են, այսինքն՝ միայն նրանց հիման վրա չի կարելի դատել լարված հույզի բովանդակության մասին, քանի որ, զարկերակի հաճախացումը կարող է առաջանալ և՛ սարսափից, և՛ ուրախությունից: Շատ ուժեղ սթրեսի ժամանակ առկա են ոչ միայն նշված երևույթները, այլև մարդու վարքի կտրուկ փոփոխություններ: Առաջանում է գրգռվածության ընդհանուր վիճակ. վարքը դառնում է այս կամ այն չափով անվերահսկելի, մարդը կատարում է անկազմակերպ շարժումներ, ժեստեր, արտասանում անկապ բառեր և այլն: Սթրեսի հետագա ուժեղացումը կարող է անձին հասցնել պասիվության կամ անզորության:

Ոչ շատ ուժեղ և ոչ երկարատև սթրեսի ընթացքում օրգանիզմի բնախոսական փոփոխություններն արտաքինապես կարող են հանդես չգալ, կամ իրադրությունը կարող է լինել այնպիսին, երբ դրանք նկատելը դժվար է լինում: Այդպիսի դեպքերում սթրեսի մասին դատում են վարքի ավելի նուրբ և առանձնահատուկ փոփոխությունների հիման վրա: Դրանց թվին, առաջին հերթին, դասվում են այն

25. Յ. Սելեյե. «Սթրես առանց դիսթրեսի», «Չայաստան» իրատ., Երևան, 1983թ.

Ֆունկցիաների իրագործման դժվարությունները, որոնք պահանջում են գիտակցական վերահսկողություն և կապված են մտածողության ուղղվածության հետ: Այս դեպքում դժվարանում է նաև ուշադրության բաշխումը և փոխանցումը: Սակայն հմտությունները, վարքի սերտած ու ավտոմատացված ձևերը ոչ միայն չեն արգելակվում, այլև կարող են մարդու կամքից անկախ իրենցով փոխարինել գիտակցության կողմից ղեկավարվող գործողությունները: Այսպես, երեխայի հանկարծակի հիվանդանալու հետևանքով հուզված մայրը չի կարողանում հեռաձայնել բժշկին, քանի որ մի քանի անգամ սխալմամբ հավաքում է սեփական հեռախոսի համարը: Սթրեսի ժամանակ, բացի գիտակից գործունեության որոշ կողմերի արգելակումից, հնարավոր են հիշողության սխալներ անսպասելի գրգռիչների նկատմամբ, ոչ ադեկվատ հակազդումներ, ուշադրության և ըմբռնման ծավալի նեղացում, ապրած ժամանակի պատրանք և այլն: Բայց սթրեսային հուզական որոշ վիճակներ կարող են առաջացնել ուժերի հորդում, գործունեության ակտիվացում, մտքի հատուկ պայծառացում և հստակություն, ստենիկական հույզեր և այլն:

Միայն արտաքին ազդեցության ուժի և տևողության հիման վրա դեռևս չի կարելի դատել, թե որքանով սթրեսային կլինի մարդու ռեակցիան: Մեծ դեր են խաղում այստեղ նրա անձնային առանձնահատկությունները, անցյալի փորձը (ապերցեպցիա), վարժվածությունն ու մարզվածությունը: Օրինակ, տվյալ իրադրության մեջ թույլ նյարդային համակարգի տեր մարդու վարքը կարող է լինել սթրեսային բնույթի, իսկ ավելի ուժեղ նյարդային համակարգ ունեցողը կարող է լարվածության նշաններ չունենալ: Դաստիարակչական առումով կարևոր է մատնանշել, որ խոր ինքնագիտակցությունն ու գաղափարայնությունը, պարտքի և պատասխանատվության զգացմունքները հանդիսանում են կարևոր գործոններ, որոնք սթրեսի պայմաններում կանխում են մարդու վարքի կազմալուծումը:

**Տրամադրություն:** Տրամադրությունը ևս իրենից ներկայացնում է ընդհանուր հուզական հոգեվիճակ, որն զգալի ժամանակահատվածում երանգավորում է առանձին հուզական գործընթացները և

մարդու վարքը: Որոշ դեպքերում հիացմունքի, հաջողության, հումորի, ուրախության, սիրո զգացմունքները դառնում են սովորողի հոգեկան վիճակի ընդհանուր ֆոն և բարենպաստ հող ստեղծում նրա գործունեության համար: Մինչդեռ ծանծրայի, ատելության, երկչոտության և այլ զգացմունքներ կարող են զցել նույն սովորողի տրամադրությունը և չնպաստել գործունեությանը: Կամ աշակերտը, գտնվելով բարկացած, մտահոգված, տխուր տրամադրության մեջ, ընկերոջ կատակին կամ ուսուցչի դիտողությանն արծազանքում է ոչ այնպես, ինչպես կարծազանքեր զվարթ և ուրախ տրամադրության դեպքում: Ահա ինչու մանկավարժական հոգեբանությունը գտնում է, որ ուրախ տրամադրության ստեղծումը հանդիսանում է ուսումնադաստիարակչական արդյունավետ աշխատանքի կարևոր պայման:

Տրամադրությունը կարող է ունենալ միանգամայն տարբեր անդրյուններ: Մարդու տրամադրության առաջացման հիմնական անդրյունը համարվում է այն դիրքը, որ նա գրավում է հասարակության մեջ, ընտանիքում, կոլեկտիվում, դպրոցում և այլուր: Ներկա դեպքում աշակերտի տրամադրությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է ընթանում ուսումը դպրոցում, ինչպես են դրսևորվում հարաբերությունները ուսուցիչների և դասընկերների հետ, ինչ է կատարվում ընտանիքում, ինչպես են հաղթահարվում ծագած դժվարություններն ու հակասությունները, որքանով են բավարարվում նրա պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումները: Այդ ամենով գոհ լինելը կամ դժգոհությունը հենց պայմանավորում է աշակերտի տրամադրությունը: Աշակերտի վատ տրամադրությունն այն բանի ցուցանիշն է, որ նրա կյանքում ամեն ինչ բարեհաջող չէ: Այդ դեպքում պահանջվում է մտածված և տակտով ազդել աշակերտի վրա, բացահայտել և հնարավորության սահմաններում վերացնել նման տրամադրության օբյեկտիվ պատճառները: Իր սաների մեջ առույգ, կենսուրախ տրամադրություն ստեղծելը ուսուցչի, դաստիարակի կարևոր խնդիրն է:

Նորմալ մարդու հուզական գործընթացների տարբեր ձևերն առաջանում և ապրվում են փոխկապակցված, անձի միանգամայն բարդ, հուզական կայուն վիճակների կազմում՝ կախված գիտակցական գործողությունների կատարման օբյեկտիվ պայմաններից, դրանց բովանդակությունից և ուղղվածությունից: Այդ յուրօրինակ ընդհանրացված զգացմունքները, որոնք կոնկրետանում են բազմապատիկ անգամ ապրվող հույզերի, աֆեկտների, տրամադրությունների մեջ, կոչվում են **բարձրակարգ զգացմունքներ**: Բարձրակարգ զգացմունքներն ամփոփում են ավելի պարզ, տարրական զգացմունքներ, բայց չեն հանգեցվում դրանց մեխանիկական գունարին, այլ ունեն հարուստ բովանդակություն և որակական առանձնահատկություններ:

Պահանջմունքների արտացոլմանը համապատասխան՝ բարձրակարգ զգացմունքներ ապրելիս տեղի է ունենում անձի ֆունկցիաների կարգավորում: Բարձրակարգ զգացմունքների յուրաքանչյուր տարատեսակի հատուկ են պատմականորեն ձևավորված գնահատականներ այն մասին, թե «ինչն է լավ, ինչը վատ» այն հասարակության մեջ, որին պատկանում է այդ զգացմունքներն ապրող անձնավորությունը: Ասել է թե՛ բարձրակարգ զգացմունքներն, այսպես ասած, սոցիալականացված են, ուստի և՛ հատուկ են միայն մարդուն:

Թվարկենք բարձրակարգ զգացմունքների կարևորագույն տեսակները՝ ելնելով այն բանից, թե մարդկային գործունեության ինչպիսի բնագավառ կամ տարատեսակ է ընկած նրանց հիմքում: Ըստ այդմ էլ հոգեբանության մեջ բաժանում են բարձրակարգ զգացմունքների չորս տեսակ՝ **պրաքսիկ** զգացմունքներ (հունարեն praxis-գործ, արարք բառից), **մտավոր** (ինտելեկտուալ) զգացմունքներ, **բարոյական** և **գեղագիտական** զգացմունքներ:

**Պրաքսիկ զգացմունքներ**: Մարդկային արակտիկայի նպատակահարմար, գիտակցական գործունեության ցանկացած բնագա-

վառ իր նկատմամբ անձի մեջ որոշակի վերաբերմունք է առաջացնում, որ դրսևորվում է պրաքսիկ զգացմունքներում: Դա, առաջին հերթին, դիտվում է աշխատանքային գործունեության մեջ, որի ընթացքում մարդը ոչ միայն գիտակցում, այլև ընդունում կամ մերժում է դրանց նպատակները, գնահատում դրանք իրականացնելու տարբեր ուղիները, հավանություն է տալիս կամ դատապարտում ներգործության հնարներն ու միջոցները, ապրում կասկածանքի, հաջողության կամ անհաջողության զգացմունքներ: Գործունեության այլ տեսակներ, որոնք զարգանում են մարդու պատմական ձևավորման գործընթացում, հիմնականում կառուցված են մարդու կողմից ռեալ իրականության ակտիվ փոփոխման, արտադրողական գործունեության նույն «մոդելով» և բնորոշվում են զգացմունքներով:

Աշխատանքը մարդու գոյության հիմքն է, և բարձրակարգ զգացմունքների շարքում կարևոր տեղ է զբաղում դրական հուզական վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ, նրա ապրումը որպես ստեղծագործություն, որպես «դժվարին», բայց հաճելի գործ, որպես կենսախինդ և մարտական տրամադրության աղբյուր, որպես հաղթանակի զգացում, երբ աշխատանքը հաջողությամբ ավարտված է:

**Բարոյական զգացմունք**: Բարոյական զգացմունքներից ամենացայտունը հայրենասիրությունն է: Այդ զգացմունքը դրսևորվում է ամենից առաջ հայրենիքի, հարազատ ժողովրդի նկատմամբ մարդու նվիրվածության ու հավատարմության մեջ:

Բարոյական բարձրակարգ զգացմունքներից է բարեկամության զգացմունքը: Բարեկամությունը չի հանգում զուտ փոխօգնության, աջակցման, մարդկանց շահերի ընդհանրության, չնայած որ չի կարող գոյություն ունենալ առանց այդ պայմանների: Բարեկամության զգացմունքը դրսևորվում է դեպի ընկերն ունեցած կապվածության, նրան տեսնելու, նրա հետ խոսելու, իր մտքերը և զգացմունքները նրա հետ կիսելու պահանջմունքների մեջ: Բարեկամության զգացմունքը կապված է նաև դեպի ընկերն ունեցած բարձր պահանջկոտության հետ: Զենց դրանով, այլ ոչ թե սխալների փոխադարձ ներ-



մամբ է դրսևորվում փոխօգնությունը բարեկամության մեջ:

Բարեկամությանը շատ մոտ բարոյական բարձրակարգ զգացմունքներ են բոլոր տեսակի սիրո զգացմունքները:

Սերը տղամարդու և կնոջ միջև որպես զգացմունք իր բնախոսական հիմքով ունի ոչ միայն սերունդը պահպանելու անպայման ռեֆլեքսներ, այլ նաև պայմանական կապերի բարդ համակարգեր, որոնցում ամրապնդվում է միջանձնային հարաբերությունների փորձը (սովորություններ, ճաշակներ, հետաքրքրություններ, բարքեր, համոզմունքներ և այլն): Հենց այդ էլ դառնում է մարդկանց կողմից սիրո զգացմունքների ապրման տարբերությունների հիմնական պատճառը: Ի դեպ, հասարակական հարաբերություններն իրենց կնիքն են դնում մարդու բոլոր ապրումների, այդ թվում և՛ սիրո զգացմունքի վրա:

**Սերը** բնորոշվում է այն ուրախությամբ, որ պարզևս է սիրած մարդու հետ մերձավորությունն ու բարեկամությունը, կյանքի մասին հայացքների, հետաքրքրությունների, ճաշակների ընդհանրությունը, ողջ կյանքում միությունը նրա հետ: Իսկական սերը ոչ թե թուցիկ հրապուրվածություն է, այլ խորը և վսեմ զգացմունք:

Սիրո իսկական զգացմունքն առաջացնում է մարդու մտավոր և ֆիզիկական ուժերի ակտիվացում, ստեղծագործական վերելք: Մարդու իսկական սերը ոչ թե պասիվություն, սեփական ապրումների աշխարհում պարփակում է առաջ բերում, այլ արթնացնում է ակտիվություն, գործնականություն և եռանդ:

Գեղագիտական զգացմունքներից են՝ գեղեցիկի, վեհի, հերոսականի, ողբերգականի, կոմիկականի և այլ զգացմունքները, որոնք և կապված են բարոյական զգացմունքների հետ: Բարոյական զգացմունքների զարգացման համար, որպես մշտական նեցուկ, հանդես են գալիս գեղագիտական զգացմունքները: Մարդիկ կյանքի տարբեր փաստեր և արվեստի մեջ դրանց արտացոլումները գնահատում են որպես գեղեցիկ կամ այլանդակ, ողբերգական կամ կոմիկական, վսեմ կամ ստոր, վայելուչ կամ կոպիտ և այլն: Այդ զգացմունքները դրսևորվում են համապատասխան գնահատականներում, գեղագիտական ճաշակում և ապրվում են գեղարվեստական

երկերի, բնության երևույթների և մարդկանց արարքների ներգործությամբ:

**Մտավոր** կամ **ինտելեկտուալ զգացմունք**: Մտավոր զգացմունքներում իր արտահայտությունն է գտնում մարդու վերաբերմունքն ինչպես ճշմարիտ, այնպես էլ՝ սխալ, զարմանալի և կասկածելի, հասկանալի կամ անհասկանալի, տարակուսանք առաջացնող մտքերի նկատմամբ: Մտավոր զգացմունքներից է զարմանքը: Այն հանդես է գալիս որպես մարդու իմացական գործունեության աննկատելի մաս: Ինչ-որ երևույթով կամ զարմանալի բանով հուզականորեն հափշտակված մարդը ձգտում է բավարարել իր իմացական պահանջմունքները: Ձարմանքը հանդիսանում է մարդու իմացական գործունեության առաջացման խթաններից մեկը: Իմացական գործունեության ընթացքում մարդը մշտապես առաջ է քաշում կասկածներ, հերքում կամ հաստատում դրանք, փնտրում լուծման առավել ստույգ ուղիներ, մոլորվում և կրկին կանգնում ճիշտ ճանապարհի վրա: Ճշմարտության որոնումը կարող է ապրվել նաև որպես կասկածանք, որը նույնպես մտավոր զգացմունք է:

Ընտանիքի և դպրոցի առաջնահերթ խնդիրներից է երեխաների մեջ բարձրակարգ զգացմունքների դաստիարակումը: Վերջին ժամանակներս մարդու հուզական-զգացմունքային հոգեմիճակների ինքնակարգավորման համար առանձնահատուկ նշանակություն է տրվում աուտոգեն մարզումներին:

Աուտոգեն մարզմանը ծանոթանալու նպատակով բերենք աուտոգեն հանգստացնող մի համառոտ տարբերակ, որը մշակել է պսիխոթերապևտ Ա.Վ. Ալեքսեևը ելնելով դրա ներգործության մեխանիզմներից և բաղկացուցիչ մասերից.

1. մարզել ընտրված օբյեկտի վրա ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն.

2. զարգացնել ինքնաներշնչման բանաձևերի բովանդակությունն իր գիտակցության մեջ վառ պատկերացնելու կարողություն.

3. պարզել դեմքի, ձեռքերի, ոտքերի, իրանի մկանների լրիվ թուլացման կարողություն.

4. մարզել խոսքի միջոցով ուղեղի արթուն վիճակի թուլացման

պահին իր վրա ներգործելու կարողություն և այլն:

Այնուհետև հեղինակն առաջարկում է կիրառել աուտոգեն մարզման հետևյալ համառոտ տարբերակը.

1. Ես հանգստանում եմ:
2. Իմ դեմքը հանգիստ է:
3. Իմ ամբողջ մարմինը հանգիստ է:
4. Իմ ձեռքերն սկսում են թուլանալ և տաքանալ:
5. Իմ ձեռքերը լրիվ թույլ են և տաք:
6. Իմ ամբողջ մարմինը հանգիստ է և անշարժ:
7. Իմ ոտքերը լրիվ թուլացած և տաք են:
8. Իմ ամբողջ մարմինը հանգիստ և անշարժ է:
9. Իմ ամբողջ իրանը լրիվ թուլացած է և տաք:
10. Իմ շնչառությունը հանգիստ է ու թեթև:
11. Իմ սիրտը բաբախում է հանգիստ, համահավասար, դանդաղ:
12. Այն հանգստանում է:
13. Իմ ամբողջ օրգանիզմը հանգստանում է:
14. Ես հանգստանում եմ:
15. Ես հանգստացա:
16. Ես հանգստացա և ուժեր հավաքեցի:
17. Ինքնազգացումս շատ լավ է:

Ներկայումս աուտոգեն մարզման տարբերակները լայն կիրառում են ստացել գործունեության մի շարք ձևերում՝ սպորտում, բժշկության, մանկավարժության մեջ և այլ բնագավառներում: Սակայն չի կարելի հույսը դնել միայն աուտոգեն մարզման վրա, այլ ավանդական մեթոդներով ու ձևերով պետք է լրջորեն զբաղվել սովորողների բարձրակարգ զգացմունքների դաստիարակության հույժ կարևոր հիմնահարցով՝ լավ գիտակցելով, որ հնարավոր չէ համակողմանի ու ներդաշնակ զարգացած անձնավորություն առանց բարձրակարգ զգացմունքների:

## ՀՈՒԶԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՎԻՃԱԿՆԵՐ



Հանգիստ, բարի



Մտահոգ



Անվստահ



Զարմանք



Վախ



Սարսափ



Սուգ



Զգվանք



Կասկած



Հետաքրքրություն



Թախիծ



Վիշտ

## ԹԵՄԱ 16. ԿԱՍՔ

1. Կասք և բանականություն
2. Անձի կամային գծերը
3. Կամային գործողության կառուցվածքը

### ✓ ԿԱՍՔ ԵՎ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձի ակտիվությունը, որն առաջ է գալիս բնական և մշակութային, նյութական և հոգևոր պահանջմունքների շնորհիվ և ձեռք բերում նպատակասլաց բնույթ, իրագործվում է բազմազան գործողություններում, որոնց օգնությամբ տեղի է ունենում մարդու կողմից շրջապատող աշխարհի վերափոխումը:

Այդ բոլոր գործողությունները կարող են բաժանվել երկու խմբի՝ ոչ կամածին և կամածին գործողություններ:

Ոչ կամածին գործողությունները կատարվում են չգիտակցված կամ անբավարար հստակությամբ, գիտակցված դրդիչների (հակումներ, դիրքորոշումներ) առաջացման հետևանքով: Նրանք ունեն իմպուլսիվ բնույթ, զուրկ են հստակ պլանից: Ոչ կամածին գործողությունների օրինակ կարող են ծառայել շփոթվածության, զարմանքի, աֆեկտի վիճակում մարդու արարքները:

**Կամածին գործողությունները ենթադրում են նպատակի գիտակցում, այն գործողությունների նախնական պատկերացում, որոնք կարող են ապահովել տվյալ նպատակի իրագործումը:**

Կամածին գործողությունների հատուկ խումբ են կազմում այն գործողությունները, որոնք կոչվում են կամային. դրանք այն գիտակցված գործողություններն են, որոնք ուղղված են դեպի որոշակի նպատակ և կապված են նպատակին հասնելու ճանապարհին հանդիպող խոչընդոտների հաղթահարման համար պահանջվող ծիգերի հետ:

Մարդու կամային գործունեությունը միայն նրա առջև դրված գիտակցված նպատակների իրագործումը չէ: Մատիտ է պետք վերց-

րեց այն, թուղթ է պահանջվում ձեռքը մեկնեց այն վերցնելու: Այստեղ կամային ջանքեր չեն պահանջվում: Սակայն կամային գործողությունն ունի յուրահատուկ բնույթ. նրա էությունն այն է, որ մարդն իր առջև դրված և իր համար նշանակություն ունեցող նպատակներին է ենթարկում վարքի մյուս բոլոր դրոպատճառները, որոնք նրա համար պակաս նշանակալի են:

Կամքն իրենից ներկայացնում է մարդու ակտիվության հատուկ ձև: Այն մարդու կողմից իր վարքի կարգավորում, մի շարք այլ ձգտումների և հակումների արգելակում է ենթադրում: Կամքը ենթադրում է այնպիսի գործողությունների կազմակերպում, որոնք համապատասխանում են գիտակցորեն դրված նպատակներին: Մարդը կարողանում է իշխել իր վրա, վերահսկում է սեփական ոչ կամածին մղումները և, անհրաժեշտության դեպքում՝ ճնշում դրանք: Կամքի դրսևորումները, այսինքն՝ մարդու կողմից տարիներ տիրապի կամային գործողությունների սխտեմատիկ իրագործումն անձի այնպիսի ակտիվությունն է, որն անխզելիորեն կապված է նրա գիտակցության հետ: Կամային գործունեությունն անպայմանորեն ենթադրում է գործողությունների մի ամբողջ շարք, որը նախատեսում է անձի կողմից իր ջանքերի և իրագործվող հոգեկան գործընթացների բնույթի գիտակցվածության բարձր աստիճան: Այստեղ առկա են և՛ առաջացած իրավիճակի զնահատումը, և՛ ապագա գործունեության համար ուղիների ընտրությունը, և նպատակին հասնելու, որոշում ընդունելու համար անհրաժեշտ միջոցների ընտրությունը:

Մի շարք դեպքերում կամային գործունեությունը կապված է այնպիսի նպատակադրումների հետ, որոնք որոշում են մարդու կյանքի ուղին, բացահայտում նրա հասարակական դեմքը և բարոյական կերպարը<sup>26</sup>:

Մարդու կամային գործողությունները բնորոշվում են հոգեբանական բարդ բովանդակությամբ: Հայտնի է, թե ինչ լարում կարող է առաջանալ մարդու մեջ պատասխանատու կամային գործողություն կատարելու անհրաժեշտության դեպքում, և ինչ կասկածներ

26. Рубинштейн С.Л., "Основы общей психологии". М., 1946г.

ու դրդապատճառների հակամարտություն կարող է ծագել:

Յուրաքանչյուր կամային գործողություն ամենից առաջ ենթադրում է մարդու առջև դրված նպատակի առկայություն: Այլ կերպ ասած նա գիտակցում է այն, ինչին ուզում է հասնել այս կամ այն գործողության միջոցով. փոխել վիճակը, բավարարել ինչ-որ պահանջումներ և այլն: Սակայն կամային գործողությունն անպայման ենթադրում է նաև մեկ ուրիշ օղակ, որը հանդես է գալիս մերթափելի մասնատված, երբեմն էլ՝ համադրված ձևով: Խոսքը վերաբերում է գործողության դրդապատճառի առկայությանը, որը բացատրում է, թե ինչու է մարդը ձգտում տվյալ նպատակին, ինչն է նրան դրդում նախատեսվածի նվաճմանը<sup>27</sup>:

Սովորաբար մարդու առջև ծագում են տարբեր նպատակներ, որոնք այս կամ այն չափով գրավիչ են: Մարդն ստիպված է ընտրություն կատարել նրանց միջև, գնահատել նրանց ցանկալիության, իր կյանքի տվյալ պահի կամ ավելի հեռավոր փուլերի համար նշանակության տեսանկյունից և առանձնացնել այն, ինչը ներկայումս առավել կարևոր է թվում: Ցանկություն է առաջանում հասնել այդ նպատակին, օրինակ՝ փոխել մասնագիտությունը, ընդունվել բուհ, մեկնել արշավի և այլն: Սակայն կամային գործողության բնորոշ գիծը ոչ թե պարզապես նպատակի ցանկալիության գիտակցումն է (ցանկանալ կարելի է այն, ինչն անիրագործելի է թվում), այլ բուն նպատակի գիտակցումը՝ որպես սկզբունքորեն իրագործելի: Այդ կապակցությամբ ծագում է կամային գործողության էական փուլերից մեկը՝ խորհրդածումն այն մասին, թե ինչպես պետք է հասնել դրված նպատակին: Այդ խորհրդածության ընթացքում երբեմն ծանրութեթև է արվում այս կամ այն ուղու, միջոցների ընտրության նպատակահարմարությունը, որոնք նպատակին հասնելը դարձնում են ռեալ: Այդ գործընթացները, ըստ էության, իրենցից ներկայացնում են կամային գործողության մեջ մտնող մտավոր բաղադրիչներ:

Կանքի իրական առկայությունը դրսևորվում է արդեն տվյալ գործողությունը հենց տվյալ ձևով իրագործելու որոշում կայացնելիս:

27. Պետրովսկի Ա.Վ., «Ընդհանուր հոգեբանություն», Երևան, 1974թ.

Որոշման ընդունումը երբեմն կարող է կատարվել առանց դժվարությունների, երբ պարզվում է, որ հենց նման գործողությունն է միակ ճիշտը: Բայց որոշման ընդունումը մեծ մասամբ այնքան էլ հեշտ գործ չէ, քանզի տեղի է ունենում դրդապատճառների պայքար: Այդ պայքարի հետևանքով ընդունվում է որոշումը. կասկածներն ու տատանումները փարատվում են, և հարկ է լինում իրագործել ընդունած որոշումը:

Մի շարք դեպքերում որոշման ընդունումը կապված է ներքին ուժեղ լարվածության հետ, որը համարյա ընդունում է սթրեսային բնույթ, իր մեջ ուրիշ ուժեղ պահանջումներ հաղթահարելու անհրաժեշտության դեպքում: Ներքին խոչընդոտները հաղթահարելու նման անհրաժեշտությունը կապված է կամային ճիգի առկայության հետ, որի ապրումը կամային գործողության բնորոշ հատկանիշն է:

Իսկ ի՞նչն է ստիպում մարդուն ճնշելու իր մեջ որոշ խիստ ուժեղ ձգտումներ: Միայն այն բանի ըմբռնումը, որ տվյալ լուծումը համապատասխանում է բարոյական սկզբունքներին և կամ օգտակար է հասարակության համար, բավական չէ մարդուն դժվարին գործին դրդելու համար: Սակայն, երբ այդ ըմբռնումն ամրապնդվում է (օրինակ՝ պարտքի զգացումին համապատասխան վարվելու անհրաժեշտության սուր ապրումով)՝ առաջանում է կամային ճիգ, որը թույլ է տալիս ճնշելու ուրիշ շատ ձգտումներ: Պարտքի զգացումը ցույց է տալիս, որ բարոյականության պահանջներն ամրակայվել են գիտակցության մեջ, վեր են ածվել անձի սեփականության, վարքի ներքին դրդիչներ են դարձել ցանկացած իրադրության մեջ, որտեղ բախում է առաջանում եսասիրական ձգտումների ու հասարակական շահերի միջև: Պատկերավոր ասած՝ հենց այդ պարտքի զգացումն է որոշում, թե դրդապատճառների պայքարում կշեռքի որ նժարը կթեքվի:

Կամային գործողության մասին խոսելիս պիտի մատնանշել, որ ճիգ ու ջանքերի ապրում է առաջանում ոչ միայն որոշում կայացնելիս: Շատ հաճախ ապրումներն առավելագույն լարվածության են հասնում ընդունված որոշման կատարման ժամանակ: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ որոշման կատարումը հաճախ բախ-

վում է սուբյեկտիվ և օբյեկտիվ կարգի մի շարք արգելքների: Այսպես, քննությանը նախապատրաստվելու որոշման իրագործմանը կարող են մեծապես խանգարել արմատացած բացասական սովորույթները, օրվա ոչ ճիշտ ռեժիմը, կենցաղային ապրելակերպի փոփոխությունները, դժբախտությունները և այլն: Ուրեմն կամային ջանքեր են պահանջվում նաև ընդունած որոշումը կատարելու ընթացքում հաղթահարելու ծագած դժվարությունները, օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի խոչընդոտները:

Կամային գործողության հոգեբանական կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս գատելու նաև կամային գործողության մի շարք առանձնահատկություններ: Կամային գործողությունը կարգավորում է մարդու վարքը՝ համաձայն այն նպատակների, որոնք նա, որպես գիտակից անձ, դնում է իր առջև: Մարդն արգելակում է այնպիսի մղումների առաջացումը և այնպիսի գործողությունների իրագործումը, որոնք չեն համապատասխանում նրա իդեալներին, համոզմունքներին, և կամքը դրսևորում է իր կարևորագույն՝ վարքն արգելակելու, վերահսկելու և կարգավորելու գործառույթները:

Վարքագծի կարգավորումը մղումների և գործողությունների արգելակման ու զսպման հետ մեկտեղ՝ անձի ակտիվությանը տալիս է որոշակի ուղղվածություն՝ անհրաժեշտ եռանդ հաղորդելով նաև նրա գործողություններին: Կամային ուղրտը մշտապես խթանում է մարդու ակտիվությունը: Մի շարք հաջող գործողությունների իրագործումը նրա մեջ առաջացնում է վստահության զգացում: Հաջողությամբ իրագործված յուրաքանչյուր կամային գործողություն ոչ միայն ակամայից ճանապարհ է բացում ու հեշտացնում նոր կամային գործողության կատարումը, այլև խթանում է մարդուն՝ իր կամային հատկություններն էլ ավելի զարգացնելու:

### ✓ ԱՆՁԻ ԿԱՄԱՅԻՆ ԳԾԵՐԸ

{ Կամային գործունեության ընթացքում դրսևորվում և ձևավորվում են անձի համապատասխան կամային որակները կամ հատկությունները: }

{ Տարբեր մարդկանց մեջ կամային գործունեությունն ընթանում է տարբեր ձևով: Մեկը ցուցաբերում է հաստատակամություն, մյուսը՝ ոչ, մեկը խիստ ինքնուրույն է որոշում կայացնելիս, մյուսը հակառակը՝ մերժնչվող է: } Մեկը զարմացնում է իր վճռականությամբ, մյուսն աչքի է ընկնում անվճռականությամբ: Այսպիսով, մարդու կամային որակները բազմազան են, որոնք նրա կամային գործունեությունը բնորոշում են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերից:

{ Երբ կամային գործողությունների իրագործման միջոցները և իրագործման տիպական դրսևորումները մարդու վարքում որոշակիություն և կայունություն են ձեռք բերում, վեր են ածվում հենց անձին բնորոշ կամային որակների: Այդպիսի որակները բավականին շատ են: } Անդրադառնանք դրանցից ~~մասին~~ կարևորագույններին, որոնք են **ինքնուրույնություն, վճռականություն, համառություն, ինքնատիրապետում:** }

**Ինքնուրույնությունը** դրսևորվում է ինչպես կամային գործողության մոտիվացիայում, այնպես էլ ընդունված որոշման կատարման ընթացքում: Ինքնուրույնության ելությունն այն է, որ մարդը որոշում է իր արարքները՝ կողմնորոշվելով ոչ թե ուրիշների ճնշմամբ, պատահական ազդեցությամբ, այլ՝ ելնելով իր համոզմունքներից ու պատկերացումներից այն մասին, թե ինչպես պետք է վարվել համապատասխան իրավիճակներում: }

Առաջադրված խնդիրները լուծելիս՝ ինքնուրույնության առկայությունը խոսում է կամքի զարգացածության մասին: Դրա հակառակ երևույթը մերժնչվողությունն է, երբ մարդը հեշտությամբ է ենթարկվում ուրիշների ազդեցությանը, և նրա գործողությունների դրդապատճառները ծագում են ոչ թե իր սեփական, ձևավորված կարծիքներից ու համոզմունքներից, այլ կողմնակի ազդեցություններից:

**Վճռականությունն** անձի կամային այն որակն է, որն արտահայտվում է ժամանակին և առանց ավելորդ տատանումների բավականին հիմնավորված որոշումներ ընդունելու, իսկ հետո խելամտորեն դրանք կյանքում իրագործելու մարդու ընդունակության մեջ: }

Այդ կարևոր կամային հատկության հակառակ երևույթն **անվճռականությունն** է, որը կարող է դրսևորվել և՛ որոշումներ ընդունելիս, և՛ դրանք կատարելիս: Օրինակ՝ վճիռներ ընդունելիս մարդը տատանվում է, կասկածում, նրա համար դրդապատճառների պայքարը դառնում է անվերջանալի: Անվճռականությունը դրսևորվում է նաև ընդունված որոշման իրագործման ժամանակ՝ Անվճռական մարդն անընդհատ հետաձգում է ընդունած որոշման կատարումը՝ մտավախություն զգալով ձեռնարկվող քայլերի նկատմամբ: Ինչպես ասում են՝ ամենից շատ անվճռական մարդիկ են այսօրվա գործընթացում վաղվան:

**Համառությունը** համարվում է որոշումների հաջող կատարումն ապահովող խիստ կարևոր կամային հատկություն: Համառությունը ենթադրում է, որ մարդն ընդունակ է եռանդի երկարատև և չթուլացող լարվածության: Նախանշված նպատակի իրագործման դժվարությունները նրան չեն վախեցնում. մարդն անշեղորեն շարժվում է դեպի դրված նպատակը: Սակայն համառությունն արմատապես տարբերվում է կամակորությունից: Կամակորությունն այն է, երբ, չնայած խելամիտ հիմքերի առկայությանը, մարդն անընդունակ է հրաժարվելու գործողությունների մշակված պլանից, նախկինում կայացրած՝ վատ կշռադատված որոշումից: Կամակորությունն արտահայտվում է իրական հանգամանքների անտեսման, փոփոխվող իրադրությունում ճկունության բացակայության ձևով: Եվ դրանում նույնպես դրսևորվում է մարդու կամքի թուլությունը:

**Ինքնատիրապետումը** դրսևորվում է նրանում, որ մարդը կարողանում է ստիպել իրեն կատարելու հիմնավորված որոշումը և հաղթահարում է իր մեջ ծագող խանգարիչ մղումները՝ ալարկոտություն, կասկածանտություն, մտավախություն և այլն: Մարդու կամային գործողության բարձրագույն աստիճանը վառ կերպով արտահայտվում է առանձնապես ինքնատիրապետման կարողության մեջ:

Կամքն արտահայտվում է տվյալ մարդու կողմից չքաջալերվող այնպիսի զգացումների դրսևորումները սանձահարելու մեջ, ինչպիսիք են գրգռվածությունը, սարսափը, զայրույթը, կատաղու-

թյունը, իուսահատությունը և այլն<sup>28</sup>:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս են ձևավորվում մարդու համար արժեքավոր կամային հատկությունները: Ձևավորման ուղիները տարբեր են: Կամային որակի բնույթից կախված՝ պետք է խոսել նաև այդ բնույթի առաջացման տարբեր և կոնկրետ պայմանների մասին: Կամային արժեքավոր որակների ձևավորման վրա դրականորեն է ազդում մարդու անձի հետակորեն արտահայտված մի շարք հատկանիշների առկայությունը: Առաջին հերթին, դրանց թվին են պատկանում պարտքի զարգացած զգացումները, կյանքի նպատակների հստակությունը, նրանց հասնելու կրքոտ ցանկությունը: Այս ամենն անհրաժեշտ պայմաններ է տեղծում մարդու վարքի ակտիվության, ձգտումների հաստատակամության համար և հանգեցնում իրագործվող մի շարք գործողությունների, որոնք նրան հասցնում են իր նպատակին: Նպատակին հասնելու նվաճումը միշտ կապված է տարբեր տեսակի դժվարությունների հաղթահարման հետ. հաճախ մարդ ընկրկում է ծագած դժվարությունների առջև, իջեցնում է իր հավակնության աստիճանը՝ ապրելով այդ որպես անհաջողություն:

Ընագած դժվարությունների հաղթահարման համար մեծ նշանակություն ունեն ամուր համոզումները, կյանքում մարդու ունեցած խնդիրների, իսկական մարդկային արժանապատվության նկատմամբ ձևավորված հայացքները, որոնք զարգանում են դաստիարակության գործընթացում: Սակայն կամքի դաստիարակությունը չի կարելի մեկուսացնել անձի դաստիարակության ու զարգացման ընդհանուր գործընթացներից: Նման մոտեցմամբ էլ հոգեբաններն առաջադրում են կամքի դաստիարակության մի շարք պայմաններ: Վկայակոչենք Ա.Յ.Պունիի կողմից առաջադրված այդ պայմանները:

1. Կամային պատրաստությունն իրեն կառավարելու գործողության և կառավարման այդ մեխանիզմների կատարելագործման նպատակասլաց գործընթաց է: Դրա բովանդակությունն անձի կա-

մային դրսևորումների մտավոր (ինտելեկտուալ) ու բարոյական հիմքերի և «կամային տեխնիկայի» ստեղծումն է:

2. Կամքի մտավոր հիմքերի ստեղծումը մտքի լայնության, խորության, ինքնուրույնության, քննադատականության և ճկունության զարգացումն է:

3. «Կամային տեխնիկայի» կարևոր կողմերից մեկը կամային ջանքեր պահանջող պայմաններում գիտելիքներից, կարողություններից ու հմտություններից օգտվելու ընդունակության մշակումն է:

4. Կամքի մարզման գործընթացում պետք է ստեղծել կամային դրսևորման համար անհրաժեշտ պայմաններ՝ տարբեր աստիճանի դժվարություններ, դժվար իրադրությունների մոդելավորում և այլն:

5. Կամային պատրաստության կարևոր պայմաններից մեկն անհատական մոտեցումն է, որը պահանջում է տվյալ անձնավորության ուղղվածության, խառնվածքի, բնավորության, անհատական, հոգեբանական առանձնահատկությունների իմացություն և հաշվի առնում:

6. Կարևոր է կամքի ինքնադաստիարակության խնդիրը, որը պիտի իրագործել նախապես մշակված որոշակի պլանով:

Ինչպես տեսնում ենք՝ կամքի դաստիարակության այդ ընդհանուր պայմանները կարող են մարդկանց մեջ ձևավորել դրական վերաբերմունք դժվարությունների հաղթահարման նկատմամբ՝ դրանով իսկ նպաստելով կամքի կոփմանը<sup>29</sup>:

29. Путиц А.Ц., "Очерки психологии спорта", М., 1959г.

## ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԹԵՄԱ 17. ԽԱՌՆՎԱԾՔ

1. Ընդհանուր հասկացողություն խառնվածքի մասին
2. Խառնվածքի հիպոկրատյան-գալենյան տիպեր
3. Էքստրովերտներ և ինտրովերտներ
4. Մարդու խառնվածքը և մարմնի կառուցվածքը
5. Խառնվածքի ժառանգականությունը և փոփոխությունը
6. Խառնվածքի կապը հոգեկան այլ հատկությունների հետ

### ✓ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԽԱՌՆՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Խառնվածքը մարդու անհատական առանձնահատկություններից է, որն արտահայտում է նրա հոգեկան գործունեության զարգացման շարժընթացը:

Հոգեկան գործունեության արագությունը, դանդաղաշարժությունը, զգացմունքների ուժեղ կամ թույլ արտաքին արտահայտությունը, հանգիստ կամ բռնկվող դրսևորումները, մի զգացմունքից մյուսին անցնելու արագությունը և նման տիպի մի շարք այլ գործընթացներ բնութագրում են խառնվածքը, որի դրսևորումների մեծ մասը կապված է հույզերի և զգամունքների հետ: Խառնվածքն արտահայտում է նաև կամքի, ընթրման, հիշողության, երևակայության և հոգեկան մյուս գործընթացների շարժընթացը:

Խառնվածքի հիմնախնդիրը գիտնականներին զբաղեցրել է դեռևս հազարամյակներ առաջ: Մ.թ.ա. 5-րդ դարում հույն ականավոր բժիշկ Գիպոկրատեսը տվել է խառնվածքի դասնականիզացման սանգվինիկ (տաքարյուն), խոլերիկ (մաղձոտ), ֆլեգմատիկ



**(սառնարյուն) և մելանխոլիկ (մելանաղծոտ)**՝ նկատի ունենալով օրգանիզմում առկա այս կամ այն հեղուկի գերակշռությունը: Այսպես, խոլերիկի մեջ, ըստ Հիպոկրատի, գերակշռում է դեղին մաղձը, սանգվինիկի մեջ՝ աղյուները, ֆլեգմատիկի մեջ՝ լորձը, իսկ մելանխոլիկի մեջ՝ սև մաղձը:

Սինչև այսօր էլ խառնվածքի տիպերը կոչվում են հիպոկրատյան անվանումներով: Խառնվածքի բնախոսական հիմքն ուսումնասիրել է ռուս հայտնի բնախոս, ակադեմիկոս Ի.Պ. Պավլովը՝ նկատի ունենալով մարդու բարձրագույն նյարդային համակարգության գրգռման և արգելակման երեք հիմնական առանձնահատկությունները՝ ուժը, հավասարակշռվածությունը և շարժունությունը<sup>30</sup>: Ըստ այդմ էլ Ի.Պ. Պավլովը խառնվածքի տիպերը բնութագրել է հետևյալ կերպ.

**տաքարյուն-ուժեղ**, հավասարակշռված, շարժուն  
**մաղձոտ-ուժեղ**, անհավասարակշռված, շարժուն  
**սառնարյուն-ուժեղ**, հավասարակշռված, իներտ  
**մելանաղծոտ-թույլ** տիպ:

**Տաքարյուն:** Ուժեղ, հավասարակշռված, շարժուն: Ապրումների արտաքին դրսևորումները ցայտուն են, ունի լավ արտահայտված դիմախառ, նույնիսկ մարմնախաղ: Շարժումները եռանդուն են, սակայն անհրաժեշտության դեպքում դրանք կարողանում է զսպել: Ապրումները խորը և տևական չեն, սակայն հարուստ են և վառ: Նրան բնորոշ է անցումը ամբիվալենտ (տարաբևեռ) ապրումների լացի միջից կարող է ծիծաղել, և հակառակը: Լայն են հետաքրքրությունների շրջանակները, սակայն ամենից առաջ նրան հետաքրքրում է այն, ինչ առաջ է բերում վառ ապրումներ: Իրեն հետաքրքրող գործը նա կարող է կատարել մեծ եռանդով և այնքան ժամանակ, քանի դեռ չի մարել այդ հետաքրքրությունը:

Շատ սրտաբաց է, հաղորդակցվող: Հեշտությամբ և արագորեն է ծանոթանում, բարեկամանում, մտերմանում, սակայն այդ փոխհարաբերությունները երբեմն էլ լինում են անցողիկ կամ մակերեսային:

Տաքարյուն մարդկանց հատուկ է կամքի փոփոխականությունը,

անկայունությունը, փոքր իսկ խոչնդոտների դեպքում գործը կիսատ թողնելը, սակայն նոր իրադրություններում նրանք դրսևորում են ճկուն վարք:

**Մաղձոտ:** Ուժեղ, անհավասարակշռված, շարժուն: Դյուրագրգիռ ու պոռթկուն է: Ապրումների արտաքին դրսևորումները շատ վառ են: Չնայած այդ ապրումները խորն են, սակայն երբեմն չեն համապատասխանում (ադեկվատ չեն) ապրումներ առաջացնող երևույթներին: Նա ընդունակ է կրքոտությամբ նվիրվել գործին, զգալ ուժերի հորդում, հաղթահարել նպատակին հասնելու ճանապարհին հանդիպող դժվարությունները: Նրա հետաքրքրությունները կապված են զգացմունքների հետ, ուստի խոլերիկին հատուկ են բուռն հուզական պոռթկումները:

Ի. Պավլովն այսպես է բնութագրել խոլերիկ մարդկանց. «Երբ ուժեղ մարդը չունի հավասարակշռվածություն, ապա տարվելով որևէ գործով, չափից ավելի է հենվում իր միջոցների և ուժի վրա և, ի վերջո, սաստիկ հյուժվում, ուժասպառ է լինում, քան հարկավոր է: Այդպիսի մարդուն դժվար է համոզել, դժվար է ետ պահել իր որոշումներից»:

Մաղձոտն ինչպես սիրում է խորը, այնպես էլ ատում է ողջ հոգով: Նա ոգևորվում և իր ոգևորությամբ վարակում է ուրիշներին: Նրանից միաժամանակ սպասելի է ծայրահեղություններ՝ նույնիսկ աֆեկտային վիճակներ: !

**Սառնարյուն:** Խիստ տարբերվում է տաքարյունից իր արտաքին դրսևորումներով, բայց նրանց միջև կան շատ ընդհանրություններ: Երկուսն էլ ուժեղ են, հավասարակշռված, սակայն տաքարյունը շարժուն է, իսկ սառնարյունը՝ իներտ:

Ֆլեգմատիկի ապրումների արտաքին դրսևորումները ցայտուն չեն և ազատ են ծայրահեղություններից: Նյարդային համակարգության ուժեղ արգելակման առկայության դեպքում, որը հավասարակշռում է գրգռման գործընթացը, սառնարյունի համար հեշտ է զսպել իր մղումները, պահպանել կյանքի մշակած կարգը, աշխատանքում չտարվել մանրուքներով: Նրա ապրումների արտաքին դրսևորումները ցայտուն ու ծայրահեղ չեն: Շարժումները զուսպ են, դանդաղ, բայց ոչ ալարկոտ, այլ ունեն ներքին եռանդ: Պատահա-

30. Павлов И.П., Полн. собр. соч. т.3, М., 1951.

կան հանդիպումները, «չար խոսքը», զանազան ասեկոսեները նրան այնքան էլ չեն հուզում:

Սառնարյունի հետաքրքրություններն աչքի են ընկնում պատճառաբանվածությամբ, խորն են ու հաստատուն: Եվ այս հատկությունների շնորհիվ սառնարյուն մարդը կարող է երկար և լարված աշխատանք կատարել, քանի որ նա ունի քրտնաջանություն, կայուն ուշադրություն և համբերատարություն:

Այս խառնվածքի տեր մարդիկ լուրջ են, ամտեղի էներգիա չեն ծախսում և, հաշվի առնելով իրենց ուժերը, գործը հասցնում են մինչև վերջ:

Ծանոթների, բարեկամների ընտրությունը կատարվում է դժվարությամբ, առանց շտապելու, սակայն ընտրությունից հետո այդ կապը շատ հաստատուն է լինում: Պատկերավոր ասած, «Յոթը չափիր, մեկ կտրիր» ասացվածքը ֆլեգմատիկի «այցետոմսն» է:

Ֆլեգմատիկ խառնվածքի տեր մարդու թերությունը նրա իներտությունն է, քիչ շարժունությունը: Նրան սովորաբար ժամանակ է պետք աշխուժանալու, ուշադրությունը կենտրոնացնելու համար: Ըստ Ի.Պ. Պավլովի բնութագրության՝ ֆլեգմատիկի բնորոշ գծերից է անտարբերությունը: Ֆլեգմատիկի իներտությունը պայմանավորված է անբավարար ճկունությամբ, սակայն իներտությունը միաժամանակ նպաստում է, որպեսզի մարդը գործի հիմնավորված, չշտապի և դրսևորի կամքի ու բնավորության կայունություն:

**Մեղամաղձոտ** (մեղամխոլիկ): Թույլ տիպ: Ի տարբերություն խառնվածքի մախորդ տիպերի, որոնք ուժեղ են, մեղամխոլիկը թույլ տիպ է: Մեղամխոլիկներն աչքի են ընկնում ճնշվածությամբ, հուզական արտակարգ տպավորությամբ: Սովորաբար մեղամաղձոտը գլուխը կորցնում է նոր իրադրություններում: Ապրումների արտաքին դրսևորումներն արտահայտում են նրա ներքին անհանգստությունը, տագնապը: Ամեն բոպե նա սպասում է տհաճ և վատ բանի: Աշխատում է աննկատ մնալ, եթե անգամ լավ գործի հեղինակ է: Իհարկե, դա համեստություն չէ, պարզապես այդ խառնվածքին բնորոշ է աննկատ մնալու միտումը: Նրա հետաքրքրությունների ոլորտը աչքի չի ընկնում ո՛չ բազմազանությամբ և ո՛չ էլ՝ հարստությամբ:

Աճնշան իրադարձության նկատմամբ ունի հուզական հակազդեցություն: Նեղացկոտ է, անվճռական: Խուսափում է շփվել մարդկանց հետ: Ինքնամփոփ է, ներփակված, կասկածամիտ: Նոր մարդկանց հետ ծանոթանալիս շփոթվում է, կորցնում իրեն և դրսևորում անվճռականություն, սակայն հանգիստ, սովորական իրադրության մեջ կարող է լավ աշխատել, աչքի ընկնել տակտով և ընդունակությամբ:

Շատ կարևոր է, որ ուսուցիչը չավ իմանա իր սաների խառնվածքային տիպերը և ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում հաշվի առնի նրանց խառնվածքի առանձնահատկությունները: Մանկավարժական պրակտիկայում փորձեք դիմել ուսուցչին, թե այս կամ այն աշակերտը խառնվածքի որ տիպին է պատկանում մեծ մասամբ կդժվարանա պատասխանել: Սակայն փորձեք հարցնել՝ ինչպիսի՞ն է այս կամ այն աշակերտի վարքը՝ հիմնականում կստանաք սպառիչ պատասխան:

Չետաքրքիր է այն, որ նույն աշակերտի խառնվածքի դրսևորումը կարող է տարբեր բնույթ ստանալ գործունեության տարբեր բնագավառներում: Օրինակ, երեխան կարող է աշխույժ լինել խաղի ժամանակ և ալարկոտ՝ դասը պատրաստելիս: Դա արդյո՞ք մշանակում է, որ նրա մեջ դրսևորվում են խառնվածքի տարբեր տիպեր: Իհարկե՞ ոչ: Ասենք, տաքարյուն տիպն է, որը մի դեպքում (երբ գործունեությունը նրան հետաքրքրում է) աշխույժ է, իսկ մեկ այլ դեպքում (երբ գործունեությունը նրան չի հետաքրքրում) դառնում է ալարկոտ:

Բոլորովին այլ է, երբ նույն մարդը հանդես է բերում տարբեր խառնվածքների բնորոշ գծեր: Այդ արդեն խառնվածքի **խառը** տիպին հատուկ դրսևորումն է: Չետազոտությունները պարզել են, որ մաքուր խառնվածքները գրեթե հազվադեպ են, սովորաբար մարդու մեջ համակցված են տարբեր խառնվածքների դրսևորումները:

Խառնվածքային գծերի դրսևորման տիպիկ ու հետաքրքիր նկարագրություն է կատարում հոգեբան Ա. Գ. Կովալյովը: Ահա խառնվածքի վառ արտահայտված տիպերով չորս ընկերներ ուշացել են թատերական ներկայացումից:

Ինչպե՞ս են այդ իրադրության մեջ նրանք իրենց պահում:

Տաքարյունը անմիջապես հասկանում է, որ պարտեր չեն թողնի, սակայն ամֆիթատրոն կարելի է մտնել, և մինչև մյուսները զբաղեցնում են դռնապանին, ինքը ներս է մտնում:

Սառնարյունը տեսնելով, որ դահլիճ չեն թողնում, մտածում է. «Մտնեմ թատրոնի բուֆետ և սպասեմ ընդմիջմանը»:

Սելամադոտն ասում է. «Միշտ բախտս չի բերում: Հազարից մեկ թատրոն եկա, այն էլ՝ անհաջող»: Եվ մտամոլոր տուն է վերադառնում:

Սաղծուտը վեճի է բռնվում դռնապանի հետ՝ փորձելով ներս մտնել դահլիճ՝ «ապացուցելով», որ ինքը չի ուշացել, որ թատրոնի ժամացույցն առաջ է ընկել և ճիշտ չի աշխատում, որ ինքը կրկնակի տոնս է գնել և, որ իրեն պարտավոր են ներս թողնել:

### ԽԱՌՆՎԱԾՔԻ ՀԻՊՈԿՐԱՏՅԱՆ-ԳԱԼԵՆՅԱՆ ՏԻՊԵՐ

Խառնվածքի առաջին տեսության հիմնադիրը, ինչպես նշվեց վերը, Հին Հունաստանի հռչակավոր բժիշկ Հիպոկրատեսն էր, որը, փորձելով բացատրել մարդկանց միջև վարքի դիմամիկ առանձնահատկությունների տարբերությունները, այն կապեց օրգանիզմում գոյություն ունեցող հյութերի հարաբերակցության հետ, որոնց խախտումն առաջացնում է այս կամ այն հիվանդությունը: Հիպոկրատեսը օրգանիզմի այդ հյութերն ու դրանց հարաբերակցությունը չէր կապում մարդկանց հոգեկան հատկությունների հետ: Միայն դարեր անց (մ.թ.ա. 2-րդ դար) այդ կատարեց հռոմեացի բժիշկ Գալենը, և այսօր նրանց այդ բաժանումը ճիշտ է անվանել հիպոկրատեսյան-գալենյան տիպեր:

Հիպոկրատեսի ու Գալենի տեսակետները հետագա զարգացում ստացան գերմանացի փիլիսոփա Ի. Կանտի «Մարդաբանություն» աշխատության մեջ:

Խառնվածքի տիպերի հոգեբանական նկարագիրը հստակ դարձնելու համար ընդունված է առանձնացնել մարդու խառնվածքի այն հիմնական գծերը, որոնք կազմում են նրա կառուցվածքի կմախքը:

Այդ գծերն են.

**Զգայունություն** (սենզիտիվություն), որը որոշվում է ազդակի այն ամենափոքր ուժով, որին տրվում է հոգեկան հակազդում: Օրինակ, եթե մարդն ունի բարձր աստիճանի զգայունություն, մի փոքր քննադատական ակնարկից անգամ խորը վիրավորանք է ապրում:

**Ռեակտիվություն**, թե մարդն ինչպիսի ուժով ու եռանդով է պատասխանում այս կամ այն ազդեցությանը: Եթե մարդու ռեակտիվությունն ուժեղ է, ապա հաճախակի է «բռնկվում» և եռանդով լի գործողություններ կատարում ի պատասխան ուրիշների խոսքի կամ գործի, իսկ եթե ռեակտիվությունը թույլ է, ապա հաճախ նա այս կամ այն իրադարձությանը վերաբերվում է հանգիստ ու անտարբեր:

**Ակտիվություն** (գործունություն), որը մարդու այն առանձնահատկությունն է, երբ նա ինքն է ուժով ու եռանդով ներգործում շրջապատող իրականության վրա: Ակտիվ մարդուն հատուկ է այն, որ նա համառորեն հաղթահարում է արտաքին ու ներքին խոչընդոտները:

**Ակտիվության և ռեակտիվության փոխհարաբերություն**, երբ մարդը և՛ ակտիվ է, և՛ ռեակտիվ: Ոմանց վարքն ու տրամաբանությունը պայմանավորված են արտաքին ազդեցություններով, պատահական հանգամանքներով: Սրանք ռեակտիվ մարդիկ են: Բայց կան մարդիկ, որոնց վարքն ու տրամադրությունները պայմանավորված են իրենց նպատակներով ու ձգտումներով, ներքին պահանջմունքներով. սրանք արդեն ակտիվ մարդիկ են:

**Հոգեկան գործունեության ընթացքի արագությունը** (տեմպ), այս այն առավելությունն է, որի դեպքում մարդը գործում է արագ, թափով, մտածում ու խոսում է արագ, իսկ ոմանց հոգեկան գործունեությանն էլ հատուկ է դանդաղ ընթացքը:

**Վարքի և մտածելակերպի ճկունություն** կամ «փայտացածություն»․ սա նոր ձևով մտածելու և գործելու անընդունակությունն է, որը կարող է դիտվել և՛ մտածողության, և՛ վարքի, և՛ հաղորդակցման ձևերի մեջ:

**Էքստրովերտություն և ինտրովերտություն**, երբ մարդու

վարքն առավելապես որոշվում է արտաքին կամ ներքին տպավորություններով:

Խառնվածքի այս տիպերի ֆիզիոլոգիական հիմքերն ուսումնասիրել է նաև Ի. Պ. Պավլովը և եկել այն համոզման, որ խառնվածքի հիմքում ընկած են նյարդային պրոցեսների գրգռման և արգելակման 3 հիմնական առանձնահատկություններ՝

1. Գրգռման և արգելակման ուժ:
2. Գրգռման և արգելակման հավասարակշռություն:
3. Գրգռման և արգելակման շարժունություն:

Այս հատկությունների զուգորդություններից էլ ստացվում են նյարդային համակարգի տիպերը<sup>31</sup>: Նյարդային համակարգության հատկությունների այդ զուգորդությունները չորսն են.

1. **Ուժեղ, հավասարակշռված, շարժուն տիպ**, որը համապատասխանում է տաքարյուն խառնվածքին՝ սանգվինիկին:

2. **Ուժեղ, հավասարակշռված, իներտ տիպ**, որը սառնարյունն է՝ ֆլեգմատիկը:

3. **Ուժեղ, անհավասարակշռված, գրգռման պրոցեսների գերակշռությամբ**, որը համապատասխանում է մաղձոտին՝ խուլերիկ խառնվածքին:

4. **Թույլ տիպ**, այս մեղանխուլիկ խառնվածքն է, որոնց մեջ թույլ են ինչպես գրգռման, այնպես էլ արգելակման պրոցեսները:

Նյարդային համակարգի այս տիպերը Ի. Պավլովն անվանել է «զենոտիպ», որը ենթակա չէ փոփոխության միջավայրի ու դաստիարակության ազդեցությամբ:

### ✓ ԷՔՏՐՈՎԵՐՏՆԵՐ ԵՎ ԻՆՏՐՈՎԵՐՏՆԵՐ

Յոգեբան Կ.Գ. Յունզը բաժանում է մարդկային երկու հիմնական տիպեր՝ էքստրովերտներ, որոնց հետագա նկարագրությունների հանդիպում ենք արդեն անգլիացի հոգեբան Յանս Այզենկի հետազոտություններում:

**էքստրովերտներին** բնորոշ են մարդամոտությունը, աշխուժու-

31. Павлов И.П. Полн. собр. соч. т. 3. М., 1951.

թյունը, արտաքին ակտիվությունը, սիրո օբյեկտը հաճախակի փոխելու հակումը, իմպրամանվելիս էլ խորը տպավորանք, անուսումնաբուհուսահատություն չեն ապրում:

էքստրովերտները փոփոխական են, գրուցասեր, սիրում են աշխույժ երեկոներ, աղմկոտ հասարակություն, խուսափում են մենակությունից, որոնում են նոր տպավորություններ, հաճույքով վիճարանում են և պատրաստ են կատարելու հանդուգ գործողություններ:

Նրանք իմպուլսիվ են, անմիջական, չեն կառավարում իրենց հույզերն ու հակումները, հաճախ նախընտրում են չկշռադատված ռիսկը, քան սեփական գործողությունների հնարավոր հետևանքների պլանավորումը: Բռնկվող են, անփույթ և անհոգ, հուսալի չեն, «խղճի» ծևավորումն ընթանում է մեծ դժվարությամբ, և նրանց դաստիարակելը ծնողների ու մանկավարժների համար բավականին դժվար է:

Ընդհանուր առմամբ, էքստրովերտներն ուղղված են դեպի «դուրս», դեպի արտաքին աշխարհ, շփվող են, երբեմն՝ ագրեսիվ, մենզաղավ, օժտված կատակասիրությամբ: *Էքստրե կոնս!*


**Ինտրովերտներն** ունեն հակադարձ անձնային գծեր՝ ինքնամփոփ են, ներանձնացող, զգայուն, շուտ վիրավորվող, զուսպ, անթխած, սիրում են ինքնավերլուծությունը: Նրանք հակված չեն նոր ծանոթությունների, սակայն հարազատների՝ ու փոքրաթիվ ընկերների հետ ունենում են հուզականորեն հագեցած փոխհարաբերություններ:

Ինտրովերտները չեն համակրում աղմկոտ էքստրովերտներին, նրանք նրբազգաց են, խուսափում են համարձակ քայլերից, արկածախնդրությունից: Գերադասում են պլանավորել գործողությունները՝ կանխատեսելով նրանց հնարավոր հետևանքները: Այս ամենը նրանց դարձնում է անմժռական, լուրջ, մշտապես մտահոգ, սակավ գրուցասեր: Չեն սիրում անպտուղ խոսակցությունների վրա ժամանակ ծախսել, կարողանում են վերահսկել իրենց հույզերը, բռնկվող չեն, չափավոր են և մի փոքր էլ հոռետես: Յուսալի բարեկամ ու գործընկեր են, գերադասում են առաջնորդվել մարդկության կողմից մշակված բարոյական նորմերով ու սկզբունքներով:

Չզայուն ու ինքնամփոփ մարդիկ են, որի համար էլ ինտրովերտ-

ներն ավելի հակված են նյարդային խանգարումների, քան էքստրովերտները:

Օրինաչափություն չէ, սակայն, որ բոլոր էքստրովերտներն ագրեսիվ ու օրինազանցներ դառնան, իսկ ինտրովերտները՝ նկրտոտիկներ: Եթե նպատակի իրականացման ճանապարհին հանդիպող արգելքները էքստրովերտներին մղում են պատասխանակալի գործողությունների, ապա ինտրովերտները, մեկուսանալով աշխարհից, ձեռք են բերում նկրտոտիկ գծեր:



Նկ. 1. Այզենկի շրջան: խանգվածքները համառոտակի բնութագրող սխեմա

Յ. Այզենկն ուսումնասիրեց անձի կառուցվածքը՝ ինտրովերտ անձի, առանձնապես բնորոշ նյարդային տիպի օրինակով, որոնք ունենում են տրամադրության շեշտակի փոփոխություններ, եռանդի ու ակտիվության անկման ու վերելքի փուլեր: Բնորոշ նյարդային տիպը վստահ չէ իր ուժերին, անհաջողակ է և այդ ամենի պատճառով տառապում է թե՛ ինքը, թե՛ իր շրջապատը: Նրանք սովորաբար ունենում են թերաթեքության բարդույթ, ցածր ինքնագնահատական, ավելի շատ երազում են, քան գործում: Կարիք ունեն քաջալերման, այլապես հաճախ անհաջողակ լինելու գիտակցությունը նրանց դարձնում է նախանձոտ, խանդոտ ու ագրեսիվ:

Այսպիսով, մարդկային անձնավորության խանգվածքի երկու կարևոր չափանիշներն են.

- ա) ինտրովերտություն-էքստրովերտություն
- բ) նյարդային-հուզական կայունություն

Մարդու այս գծերը չափելու և քանակական ցուցանիշներով արտահայտելու փորձ է արվում Յ. Այզենկի ներկայացրած գրաֆիկական եղանակով՝ անձնային թեստով կամ հարցարանով:

Անձի կառուցվածքն ըստ Այզենկի ինտրովերտ-էքստրովերտ և նյարդային-հուզական կայունության առանցքների վրա տեղադրելով ստացված թվային տվյալները, շրջանից ներս կարելի է գտնել այն կետը, որը համապատասխանում է քննվող անձի տիպին:

**Սանգվինիկը**՝ հուզականորեն կայուն էքստրովերտ:

**Խոլերիկը**՝ նյարդային էքստրովերտ է:

**Ֆլեգմատիկը**՝ հուզականորեն կայուն ինտրովերտ:

**Մելանխոլիկը**՝ հուզականորեն անկայուն ինտրովերտ:


Այսպիսով, ներկայումս մարդկանց տիպավորման հայտնի տարբերակ է էքստրովերտների և ինտրովերտների բաժանելը, բայց կան նաև խառը տիպեր, որոնք անվանում ենք ամբիվերտներ և համապատասխանաբար անձնային բարդ հատկություններն անվանում ենք **էքստրովերտիա**, **ինտրովերտիա** և **ամբիվերտիա**: Այս տիպավորումը առաջադրել է շվեյցարացի հայտնի հոգեբան, հոգեբույժ Կ. Գ. Յունզը, որը հայտնի է որպես «վերլուծական հոգեբանության» հիմնադիր:



Նկ. 1. Տաքարյուն



Նկ. 2. Մաղձոտ



Նկ. 3. Սառնարյուն



Նկ. 4. Սելամաղձոտ

Հոգեբանները վաղուց ի վեր նկատել են, որ կապ գոյություն ունի մարմնի կառուցվածքի և հոգեկան հատկությունների խառնվածքի ու բնավորության միջև:

Հուլիոս Կեսարը, որն ինքն էլ միհար մարդ էր, զգուշանում էր միհար ու մռայլատես մարդկանցից, իսկ եթե մեկը գեր էր ու թմբիկ, ապա եզրակացնում էր, որ նա բարեհոգի է:


Մարդու մարմնի կառուցվածքի և հոգեբանական տիպի միջև կապը հետազոտել է գերմանացի հոգեբան Էռնեստ Կրեչմերը, որի տիպավորումը հետագա ուսումնասիրության նյութ դարձավ ամերիկյան հոգեբան Ուիլյամ Շելդոնի կողմից, ըստ որոնց՝ գոյություն ունեն մարմնային հետևյալ տիպերը.

### Կրեչմերյան տիպեր

Ուսումնասիրելով նորմալ և հոգեկան հիվանդություններով տառապող մարդկանց՝ Է. Կրեչմերը հանգեց այն եզրակացության, որ գոյություն ունեն ժառանգականորեն պայմանավորված երեք հիմնական մարմնային տիպեր՝ աստենիկ, աթլետիկ, պիկնիկ և դիսպլաստիկ<sup>32</sup>:


ա) **Աստենիկ** (հունարեն նշանակում է՝ թույլ) տիպը միջին կամ բարձր հասակ ունի, նեղ մարմնով, միհար, նրբակազմ, դեմքը երկարավուն, նուրբ քթով, ուսերը նեղ, ոտքերը երկար ու միհար: Մաշկը գունատ, չոր, ձեռքերը նուրբ ու չորուկ, բազուկները բարակ, կրծքավանդակը նեղ, կողոսկրերը ցայտուն, որովայնը բարակ, առանց ճարպի շերտի: Մանկության տարիներին թույլ են լինում, հետո արագորեն աճում ու հասակ են առնում, իսկ հասուն տարիքում մկանները չեն աճում, և ճարպ չի կուտակվում: Նրանց մի մասը վաղաժամ ծերանում է, իսկ կանայք կարող են լինել ոչ միայն միհար, այլև ցածրահասակ:

32. Նալչաջյան Ա.Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, «Հոգեբան», 1997թ.



Նկ. 1. Աստեղիկ


բ) **Աթլետիկ** (հունարենից նշանակում է՝ պայքար, կռիվ) տիպը ունի ուժեղ և զարգացած կմախք, մկաններ, բարձր հասակ, լայն ուսեր, մկանուտ որովայն, գեղեցիկ կրծքավանդակ, վերևից դեպի ներքև նեղացող իրան:



Նկ. 2. Աթլետիկ

Այտուցներն արտահայտված, նեղ կոնքերով, համաչափ ու գեղեցիկ կառուցվածքով: Աթլետիկ կանայք ևս նմանատիպ են, սակայն նրանց մոտ ճարպի զարգացումը նկատելի է:

գ) **Պիկնիկ** (հունարենից՝ գեր, չաղ) տիպի տղամարդիկ ունենում են ուժեղ զարգացած գլուխ, կուրծք և որովայն, ուսերն ու վերջույթները կլորավուն են, ճարպակալելու հակումով:



Նկ. 2. Պիկնիկ

Հիմնականում ունեն միջին հասակ, լիքը մարմին, լայն դեմք, կարճ ու հաստ վիզ և մեծ փոր: Նրանց մարմինը տակառածն է, մաշկը փափուկ, բայց ոչ ճկուն, ինչպես աթլետիկներինը:

դ) **Դիսպլաստիկ** (հունարենից՝ վատ ձևավորված) տիպի մարդիկ ունեն մարմնի անկանոն կառուցվածք, որոնք կարող են կամ շատ բարձրահասակ լինել, կամ տարօրինակ տեսք ունենալ:

Կան նաև խառը, սահմանային տիպեր պիկնիկ-աթլետիկ, պիկնիկ-աստեղիկ, աստեղիկ-աթլետիկ և այլն:

Ըստ Կրեյների՝ մարմնային տիպերից յուրաքանչյուրին համապատասխանում է խառնվածքի և բնավորության որոշակի, գերակշռող տիպ: Եվ նա տարբերակում է՝

ա) **Շիզոիդ անձ**: Աստեղիկ տիպին համապատասխանում է **շիզոիդ** խառնվածքը, որի ախտաբանական դրսևորումը շիզոֆրենիան է: Այս տիպի մարդկանց հատուկ է մեկուսանալու հակումը, մարդկանցից խույս տալը (աուտիզմ), հույզերի տատանումները գերուժեղ հույզերից մինչև «չորություն», համառ են, ռիզիդ, չեն փոխում իրենց հայացքները: Դժվար են ադապտացվում, կոնֆլիկտային են, վեհերոտ, նրբազգաց, նյարդային, հումորից զուրկ, տաքօ-

րիմակ, չեն սիրում մարդկանց հետ շփումը, զգայուն են և սառը: Հաղորդակցումը մակերեսային է, ունենում են տարօրինակություններ, իսկ հաճախ էլ կոպիտ են ու դաժան, սակայն նաև ամաչկոտ:

բ) **Ցիկլոիդ** (շրջամային, պտտվող), որի յուրահատկությունն այն է, որ մոլուցքային ակտիվության ու ոգեշնչվածության փուլին հաջորդում է ճնշվածության փուլը և այդպես պարբերաբար:

Ցիկլոիդներին համապատասխանում են պիկնիկ մարմնային կառուցվածքով մարդիկ, որոնք շփվող են, բարեհոգի, սիրալիր, աշխույժ ու ջերմ, հեշտությամբ կապերի մեջ մտնող:

Է. Կրեչմերը ցիկլոիդներին բաժանեց մի քանի ենթատիպերի՝ ուրախ շատախոսներ, հավասարակշռված հումորիստներ, սենտիմենտալ լռակյացներ, ինչպես նաև գործարար մարդկանց ենթախմբեր:

Ցիկլոիդները շիզոիդների հակապատկերն են, որոնց հույզերը տատանվում են ուրախության և տխրության միջև:

գ) **Իկտոսիմիա** (հունարեն՝ մածուցիկ, ծորուն) տիպը հատուկ է աթլետիկ կառուցվածք ունեցող մարդկանց, որոնք ունեն գուսպ դիմախաղ ու ժեստեր, մտածողությունը ճկուն չէ, մանրախնդիր են, դժվարությամբ են հարմարվում իրադրության փոփոխություններին:

Է. Կրեչմերի տիպավորումը մարմնային և հոգեկան գծերի միջև կապեր հաստատելու առաջին լուրջ փորձն էր:

Խառնվածքի նորագույն ուսումնասիրություններն առաջադրեցին մի շարք **գործոնային տեսություններ**, որոնցից ուշագրավ են Լ. Թերսթոունի հետազոտությունների արդյունքում առանձնացված գործոնները: Խառնվածքի մեջ մտնող այդ 7 գործոններից յուրաքանչյուրն ունի երկու հակադիր բևեռներ:

Ներկայացնենք այդ գործոնները՝ ըստ մեկ բևեռի նկատի ունենալով, որ մյուս բևեռին հատուկ գծերը հակադիր են:

1. **Ակտիվություն:** Ակտիվ մարդիկ անհամբեր են, աշխատում են մեծ արագությամբ, արագաշարժ են, շատ են քայլում և խոսում: Չեն սիրում պարապությունը:

2. **Նռանդունություն:** Սրանք աշխույժ են, զբաղվում են սպորտով, սիրում են դրսի առանձնապես ֆիզիկական լարվածությամբ ուղեկցվող աշխատանքը:

3. **Բռնկվողություն:** Բռնկվող մարդիկ անհոգ են, թեթևամիտ, արագորեն վճիռ են կայացնում, հեշտությամբ մի խնդրից մյուսին անցնում, իմպուլսիվ են, գործում են անմիջական մղումներով:

4. **Տիրապետելու հակում** (դոմինանտություն): Սրանք սիրում են ղեկավարել մարդկանց, նախածեռնող են, պատասխանատվության զգացումով: Հակված են հրապարակախոսության ու մեծ միջոցառումների: Սիրում են կառավարել, դոմինանտ ու լիդեր լինելը, սակայն միշտ չէ, որ խմբում գրավում են բարձր դիրք:

5. **Կայունություն:** Այս հատկությունն ունեցողները հավասարակշռված ու անվրդով, ամենալարված վիճակներում էլ պահպանում են հանգստություն և լիցքաթափում լարվածությունը: Պահանջվող պահին կարող են ընդհատել ու վերահսկել իրենց գործողությունը: Կայուն են, աննպաստ պայմաններում անգամ կարողանում են կենտրոնանալ և գործել:

6. **Մարդամոտություն:** Այս մարդիկ շրջապատ են սիրում, ճկուն են, ենթարկվող, հեշտությամբ են կապեր հաստատում, ստեղծում ծանոթություններ և համագործակցում մարդկանց հետ: Այս տիպի մարդկանց հետ շփվելը բավականին հաճելի է:

7. **Ռեֆլեքսիվություն:** Այս հատկությամբ օժտված մարդիկ սիրում են տեսական և ոչ գործնական աշխատանքը, ինքնադիտող ու խորհրդածող են: Հանգիստ են, նախընտրում են աշխատել մենակ: Լավ պլանավորողներ են, սակայն միշտ չէ, որ իրագործում են իրենց մտահղացումները:

Մարդու խառնվածքի նշված յոթ գծերի իմացությունը թույլ է տալիս ճիշտ հասկանալ մարդու վարքը և նույնիսկ կանխատեսել այն, չնայած խառնվածքի իմացության գործոնային այս տեսությունը ևս ունի թերություն, քանի որ այն զուտ նկարագրական բնույթի է, ոչ դինամիկ և չի բացահայտում նշված գործոնների միջև եղած կապերը:

Չնայած նշված թերություններին, այնուամենայնիվ, խառնվածքի գործոնային տեսությունը հետաքրքրական տվյալ է տալիս և ունի կիրառական նշանակություն:



ԽԱՌՆՎԱԾՔԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեկան գործունեության և վարքի գրեթե բոլոր ձևերը պայմանավորված են ժառանգականության ու միջավայրի ազդեցություններով:

Խառնվածքի յուրահատկությունն այն է, որ նրա մեջ ժառանգականության դերը շատ մեծ է, և այն հիմնականում պայմանավորված է գենոտիպով:

Մարդկանց խառնվածքի ժառանգական պայմանավորվածությունը որոշում են հիմնականում երկվորյակներին ուսումնասիրելով: Միաձու երկվորյակներն ունեն միանման գենոտիպ, իսկ երկձու երկվորյակները՝ տարբեր: Համեմատելով միաձու և երկձու երկվորյակների ներոտիզմի ու հուզական կայունության կորելյացիայի գործակիցը պարզել են, որ միաձու երկվորյակների համար այն կազմել է 0,85, իսկ երկձու երկվորյակներինը՝ 0,22: Ի դեպ, Յունգի և Այզենկի տիպավորման մեջ ներոտիզմը համարվում է խառնվածքի էական չափումներից մեկը:

Նույնանման արդյունքներ Հ. Այզենկը ստացել է նաև էքստրովերսիա-ինտրովերսիա չափման համար:

Ուրեմն, խառնվածքը պայմանավորված է ժառանգականությամբ:

Սակայն կարևորվում է նաև այն հանգամանքը, թե խառնվածքի հիմքը, ժառանգական լինելով, արդյո՞ք փոփոխական է:

Ուսումնասիրությունները պարզել են, որ մարդու խառնվածքը շատ կայուն է, և միջավայրն ու դաստիարակությունը նրա վրա գրեթե չեն ազդում: Փոփոխվում են մարդու վարքի դրդապատճառները, դիրքորոշումները, գիտելիքները, բնավորությունը, սակայն խառնվածքային գծերը կարող են քողարկվել, բայց՝ չփոփոխվել:

Խառնվածքն օնտոգենեզում հասունանում է նյարդային համակարգի զարգացմանը համընթաց, սակայն խառնվածքային տիպը չի փոխվում: Ահա ինչու երեխային դաստիարակելիս ոչ թե պետք է ձգտել փոխել նրա խառնվածքը, այլ պետք է հաշվի առնել նրա խառնվածքի առանձնահատկությունները:

ԽԱՌՆՎԱԾՔԻ ԿԱՊԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՅԼ  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

[ Խառնվածքը կապված է բնավորության, ընդունակությունների, մոտիվացիայի և հոգեկան այլ հատկությունների հետ, սակայն շատ սերտ է առանձնապես բնավորության հետ նրա կապը: ]

Արտաքին միջավայրի ազդեցությունները բեկվում են մարդու խառնվածքի միջով, և այդ ազդեցություններին տրվող պատասխանը կապված է նրա խառնվածքի հետ: Օրինակ՝ հայտնի է, որ էքստրովերտների զգայունակության աստիճանը ցածր է, մինչդեռ ինտրովերտները զգայուն են և ակտիվ լինելու համար արտաքին գրգռիչների կարիքը չունեն:

Փաստորեն էքստրովերտ և ինտրովերտ մարդիկ ձեռք են բերում հարմարվողական վարքի տարբեր ստրատեգիաներ, որոնք և մտնում են նրանց բնավորության կառուցվածքի մեջ՝ առաջացնելով վարքի տարբեր տեսակներ:

[ Բնավորության և խառնվածքի գծերի միջև ազդեցությունները փոխադարձ են: ]

[ Օրինակ, եթե անձի իդեալական ես-ի և իրական ես-ի խզումը մեծ է, ապա նա հայտնվում է լարվածության ու զրգռվածության մեջ, որը և ազդում է խառնվածքի հատկությունների դրսևորման վրա: Նման մարդիկ սահմանափակում են իրենց ակտիվությունը և դառնում պասսիվ ու անգործունյա: ]

[ Կապ գոյություն ունի անձի խառնվածքի հատկապես ռեակտիվության և հավակնությունների մակարդակների միջև:

Ռեակտիվության ցածր աստիճան ունեցող մարդկանց հավակնություններն ավելի իրատեսական են, մինչդեռ ռեակտիվության բարձր աստիճան ունեցողների մոտ դիտվում է այլ օրինաչափություն: Նրանց հավակնությունների մակարդակն իրական կատարման մակարդակից շատ բարձր կամ ընդհակառակը՝ շատ ցածր է, որոնք ոչ իրատեսական են:

Լինելով ժառանգական դինամիկ գծերի ամբողջություն՝ խառնվածքն ընկած է անձի բնավորության հիմքում և հանգեցնում է վարքի որոշակի ձևերի, ադապտացիայի որոշակի մեխանիզմների

և ստրատեգիաների ընտրության, իսկ այդ անենը, ձևավորվելով ու կայունանալով, մտնում է անձի կառուցվածք, մասնավորապես բնավորության մեջ:

Խառնվածքը կարող է նպաստել կամ խանգարել անձի այդ գծերի ձևավորմանը:

Օրինակ, էքստրովերտի համար հեշտ է շփվող, հաղորդակցվող դառնալը, մինչդեռ ինտրովերտի համար դա մեծ ջանքերի արդյունք կարող է լինել՝ քանի որ նա պետք է կարողանա մշտապես հաղթահարել իր ներքին հոգեկան դիմադրությունը:


Հասուն մարդու մեջ խառնվածքն ու բնավորությունը միահյուսված են, փոխներթափանցված, որը և դժվարացնում է նրանց տարանջատումը:

Խառնվածքի տարբեր տիպեր և տարբեր գծեր ունեցող անձինք շրջապատի մեջ իրենց նկատմամբ տարբեր վերաբերմունք ու գնահատականներ են ծնում, որի ընկալումն էլ ազդում է նրանց ես-կոնցեպցիայի, ինքնագնահատականի ձևավորման վրա: Ուրեմն, խառնվածքն իր ազդեցությունն է ունենում անձի վրա կանխորոշելով վարքի ձևերի բնույթը:

Ուսումնասիրությունները պարզել են, որ խառնվածքը հստակորեն դրսևորվում է առավելապես **պրոբլեմային իրադրություններում**, երբ անհրաժեշտ է ինքնուրույն լուծումներ գտնել, հատկապես, երբ նա գիտի, որ իրեն չեն դիտում<sup>33</sup>:

Առյ՛սն պրոբլեմային իրադրության մեջ խառնվածքի տարբեր տիպեր ունեցող մարդիկ գործում են տարբեր կերպ: Պարզվել է, որ հուզակնորեն կայուն էքստրովերտները սթրեսի պայմաններում ավելի հուսալի են աշխատում, մինչդեռ անկայուն ինտրովերտների վարքն ունի հակառակ բնութագիրը: Նրանք զգայուն և ինքնամփոփ մարդիկ են և հակված են ներոզների և նյարդային խանգարումների:

Ներկայացված է 3. Բիդստրուպի նկարների սյուժեն, թե ինչպես վարվեցին խառնվածքի տարբեր տիպեր ունեցող մարդիկ, երբ անցորդը նստեց նրանց գլխարկի վրա (էջ 183, նկ. 1):



նկ. 1.

33. Фресс П., Пиаже Ж., "Экспериментальная психология". М., "Прогресс". 1975г.

խառնվածքը սերտ կապի մեջ է նաև մտավոր ընդունակությունների հետ, ինչը նորից պայմանավորված է նրանց երկուսի ժառանգականությամբ: Եվ ընդունակությունները, և խառնվածքը չափելիս մենք փաստորեն չափում ենք գործունեության նույն սուբյեկտները նրա դինամիկան: Այդ գծերը, երբ դիտում ենք անձի մասնագիտական կարողությունների տեսանկյունից, հանդես են գալիս որպես ընդունակության գծեր, իսկ գործունեության դինամիկայի տեսանկյունից նայելիս՝ որպես խառնվածքի գծեր:

Խոսելով խառնվածքի գծերի մասին՝ փաստորեն խոսում ենք մարդու բնածին ընդունակությունների մասին: Սակայն այլ է բանականության (ինտելեկտ) և խառնվածքի կապը:

Պարզվել է, որ ինտելեկտի և խառնվածքի միջև ուղիղ կապ չկա: Տարբեր խառնվածքի տեր մարդիկ կարող են ունենալ ինտելեկտի բարձր աստիճան՝ ԲԳ (բանականության գործաչից) և հակառակը՝ նույն խառնվածքն ունեցող մարդիկ կարող են ունենալ ինտելեկտի տարբեր աստիճաններ:

Կարելի է եզրակացնել, որ խառնվածքն ու ինտելեկտը անկախ են իրարից, հավանաբար անկախ էլ ժառանգվում են և կարգավորվում գեների տարբեր խմբերի կողմից: Սակայն խառնվածքն ազդում է ինացական պրոցեսների ընթացքի, ձևի, ոճի ու դինամիկայի վրա:

Նույն մտավոր գործողությունները կատարելիս՝ մարդիկ տարբեր դինամիկ առանձնահատկություններ են դրսևորում, և դա էլ հենց խառնվածքի ազդեցությունն է ինացական գործընթացների վրա:

## ԹԵՄԱ 18. ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ է բնավորությունը
2. Բնավորության գծեր
3. Բնավորության տիպեր
4. Բնավորության ընդգծված տիպեր
5. Բնավորության ճանաչումը և կառուցվածքը
6. Բնավորության կենսաբանական հիմքերը և կապը խառնվածքի հետ

### ✓ ԻՆՉ Է ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնավորությունն անհատի օնտոգենետիկ ծնավորված առավել բնորոշ հոգեկան հատկությունների համակարգ է, որը դրսևորվում է տարբեր իրադրություններում որոշակի գործողություններ կատարելու միտումների ձևով:

Բնավորությունը հունարենից բառացի թարգմանությամբ նշանակում է դրոշմ, հետք, սակայն հոգեբանության մեջ «բնավորություն» բառն ունի ավելի նեղ և որոշակի իմաստ:

**Բնավորություն ասելով հասկանում ենք անհատական-ինքնատիպ հոգեկան հատկությունների միագումար, որոնք դրսևորվում են տվյալ անհատի համար բնորոշ գործունեության եղանակներում, հայտնվում տիպական հանգամանքներում և որոշվում են այդ հանգամանքների նկատմամբ անձի վերաբերմունքով:**

Անձի բնավորության անհատական ինքնատիպ հատկությունները նրա ունեցած հարաբերություններով որոշվում են երկու ձևով<sup>34</sup>:

Մի կողմից՝ նրանցից է կախված յուրաքանչյուր տիպական վիճակի հուզական ապրումների անհատական ինքնատիպությունը, որի մեջ դրսևորվում է բնավորության տվյալ հատկանիշը: Մյուս կողմից՝ անձի հարաբերություններից է կախված յուրաքանչյուր

34. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, «Հոգեբան», 1997թ.

տիպական իրադրության մեջ նրա գործողությունների եղանակները ու որակների անհատական ինքնատիպությունը:

Մարդկանց բնավորության գծերը բնութագրելու համար յուրաքանչյուր լեզվում ստեղծվել են հարյուրավոր ածականներ՝ այն դեպքում, երբ խառնվածքը բնութագրելու համար օգտագործվում են սահմանափակ թվով բառեր:

Բնավորության գծերը, որպես ներհոգեկան երևույթներ, անմիջական օբյեկտիվ դիտման համար մատչելի չեն: Մենք դրանց գոյության մասին դատում ենք ըստ այն բանի, թե մարդը հատկապես սոցիալական օբյեկտների (մարդկանց, խմբերի) նկատմամբ ինչ դիրքորոշումներ ունի: Սակայն բնավորությունը լայն հոգեբանական կառուցվածք է և չի կարող հանգեցվել միայն անձի դիրքորոշումներին, ինչպես Ս.Լ. Ռուբինշտեյնը, Դ.Ն. Ուզնաձեն, Ա.Գ. Ասնուլովը բնավորությունը փորձում են դիտել իբրև մարդու սևեռված ու ընդհանրացված դիրքորոշումներից կազմված կառուցվածք:

Մարդու բնավորությունը հարմարվողական քարդայթ կամ գերքարդայթ է, որը ծագել է նրա ծննդյան օրից և կազմված է նրա հարմարվողական մեխանիզմներից ու վարքի կայուն միտումներից:

Բնավորությունն իմանալով՝ կարելի է կանխատեսել, թե տվյալ մարդն ինչ վարք է դրսևորելու ապագայում:

### ✓ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐ

Բնավորության գիծ կոչվելու համար անձի որևէ հատկանիշ պետք է լինի **կայուն**, տարբեր իրադրություններում պարբերաբար կրկնվող: Այն, ինչ հազվադեպ է դիտվում, չի կարող բնորոշ համարվել և բնավորության գիծ կոչվել:

Բնավորության գծերը լինում են **դրական և բացասական**:

**Բնավորության դրական գծերը** նպաստում են մարդկանց ինտելեկտի հաստատելուն և համատեղ գործունեությանը (մարդասիրություն, աշխատասիրություն, նրբանկատություն և այլն):

**Բացասական գծերը**՝ ընդհակառակը՝ մարդուն ինքնացնում են

ուրիշներից, ստեղծում կոնֆլիկտներ, հանգեցնում տագնապալից վիճակների ու մեղակության: Անձնային գծերը բազում են: Օրինակ, անգլերենում մարդու անձնային գծերը բնութագրող 18.000 բառ կա:

Անձին բնութագրելիս հաճախ նրան անվանում են ըստ նրա կառուցվածքում (հիերարխիա) բարձր ու առաջատար դիրք գրավող գծի:

Օրինակ, ամաչկոտ են անվանում այն մարդուն, որի բնավորության բազում գծերից ամենաբնորոշը ամաչկոտությունն է, թեև նա ունի բազմաթիվ այլ գծեր:

Անձի բնավորության հիերարխիան ճկուն է: Օրինակ, եթե մարդն ամաչկոտ է, մտերիմ ընկերոջ կողքին կարող է դառնալ շփվող ու շատախոս: Կամ աշխատանքի վայրում չոր ու գործնական մարդն ընտանիքում կարող է դառնալ մեղմ ու զիջող:

Ահա ինչու մարդու բնավորության մասին եզրակացություն անելիս պետք է նրա վարքը դիտել տարբեր իրադրություններում:

Անձի բնավորության գծերն ունեն մակարդակներ: Առանձնացվում են բնավորության մակերեսային և խորքային գծեր:

Օրինակ, որևէ մեկը ամենատարբեր իրադրություններում միշտ լուրջ է, մռայլ, չի ժպտում, զրուցասեր չէ, և մենք նրան կարող ենք բնութագրել որպես «մռայլ» անձնավորություն, մինչդեռ նա կարող է իրեն այդպիսին ցույց տալ՝ իրականում կենսասեր և լավատես անձ լինելով:

Կենսասիրությունն ու լավատեսությունը տվյալ անձի համար խորքային են և դիտողին ոչ տեսանելի: Կամ որևէ պաշտոնյա ստիպված է իրեն ներկայացնել լուրջ ու խելամիտ՝ իրականում լինելով մակերեսային ու թեթևամիտ: Եվ քանի որ մարդիկ հաճախ են դերային դիմակներ հագնում նրանց խորքային գծերը միշտ չէ, որ հնարավոր է բացահայտել:

Այդ գծերի գոյությունը տրամաբանորեն դուրս է բերվում վարքի ու խոսքի որոշակի գծերի մեկնաբանության հիման վրա:

Բնավորության գծերը միավորվելով կազմում են ամբողջական հոգեբանական համակարգ, որն իր հերթին մտնում է անձի ավելի լայն կառուցվածքի մեջ՝ առաջացնելով բնավորության տիպեր:

Անձի տիպավորումը կատարելիս՝ ելնում են կենսաբանական, տեսական, հետազոտական կամ սոցիալ-մշակութային տարբեր չափանիշներից:

Հոգեբաններն առաջարկում են բնավորության մի ձարք տիպավորումներ, որոնցից առանձնացվում են էականները:

**Անձի տիպավորումը ըստ Էդ. Շպրանգերի:**

Գերմանացի փիլիսոփա, հոգեբան Էդ. Շպրանգերն անձնային տիպավորման չափանիշ է վերցրել մարդու **արժեքային կողմնորոշումները**, ըստ որի էլ նա առանձնացնում է 6 իդեալական տիպեր.

1. **Տեսաբան**, որոնց մեջ գերակշռում են իմացական հետաքրքրությունները, երևույթների պատճառահետևանքային կապերի բացահայտումը: Նրանք հիմնականում գիտությամբ զբաղվող մարդիկ են և հաճախ բարդ անձնավորություններ:

2. **Տնտեսագետ**, որոնց վարքի հիմնական դրդապատճառը շահի ձգտումն է: Ունեն ուժեղ հակվածություն դեպի գործնական կյանքը, տեսություն չեն սիրում: Միշտ մտահոգ են գոյության կռվով, խնայող են, նշանակություն չեն տալիս գեղագիտական արժեքներին:

3. **Գեղագետ**, որին ավելի շատ հրապուրում է իր անուրջների, ֆանտազիաների աշխարհը: Երազող է, ռոմանտիկ, դեմ է շահամոլությանը: Նրանք ունեն առանձնահատուկ, թափանցիկ ինտուիցիա՝ իմացության հատուկ օրգան, ինչպես անվանում է Էդ. Շպրանգերը: Ինչպես և տեսաբանը գեղագետը ևս հաճախ անօգնական է լինում կյանքի խնդիրների առջև:

4. **Սոցիալական տիպի անձ**, որի կենսական պահանջումները սեփական շահերից հրաժարվելու գնով ուրիշներին ծառայելն է, կողմնորոշվածությունը դեպի այլ մարդկանց հոգսերն ու շահը: Նա

իր կյանքի իմաստը համարում է ճշմարտության, սրբության, գեղեցկության արժեքներ կրող մարդկանց նվիրված լինելը:

5. **Քաղաքագետ**, որոնց հիմնականում հետաքրքրում են իշխանության հետ կապված հարցերը: Ձգտում է լիդերության, նպատակադրվում դառնալ առաջնորդ, պարտադրում, որ ուրիշները ևս գործեն իր նպատակներին հասնելու համար: Մրանք լինում են ակտիվ և պասսիվ: Ակտիվ քաղաքագետները ձգտում են բարձր դիրքի, փառքի և նպատակին հասնելուց հետո միայն զգում են լարվածություն:

Պասսիվ քաղաքագետները զուրկ են ինքնուրույնությունից, որոնք ակտիվների օգնության ու ղեկավարության կարիք են զգում և հաճախ ձգտում են ծառայել վերջիններին: Քաղաքագետ անձը բավականին նման է ավտորիտար տիպին:

6. **Կրոնական տիպի անձ**, որը ձգտում է հոգևոր արժեքների, մտահոգված է խորհրդապաշտական երևույթներով և այն ամենով, ինչ կապված է Աստծո հետ: Մարդը, որը կյանքի արժեքներն ընկալում է իբրև բարձրագույն էության հետ դրականորեն կապված երևույթ, խորհրդապաշտ, միստիկ մարդ է:

**Բնավորության ֆրոյդյան տիպեր**

2. Ֆրոյդը բնավորության մասին առաջին հետևողական տեսության ստեղծողներից է: Ըստ նրա՝ բնավորությունն ընկած է վարքի հիմքում, սակայն նրա հետ նույնական չէ և դրսևորվում է իբրև լիբիդոյի սուբլիմացիա:

Բնավորության և վարքի գծերը նույնը չեն: Վարքի գծերը կոնկրետ գործողություններ են, որոնք տեսանելի են շրջապատին, սակայն ֆրոյդյան հոգեվերլուծությունը չի սահմանափակվում միայն վարքի բնորոշ գծերի նկարագրությամբ, այլև փորձում է բացահայտել այն մոտիվացիան ու անձնային գծերը, որոնք ընկած են վարքի «տակ»:

Հատկապես մեծ նշանակություն է տրվում ենթագիտակցության մոտիվացիային:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարքի միևնույն բնորոշ գծի հետևում ընկած են բնավորության տարբեր գծեր:

Օրինակ մարդու խիզախությունը կարող է պայմանավորված լինել ամենատարբեր դյուրապատճառներով:

ա) մարդը կարող է խելապես, նվիրված է որևէ գաղափարի և հանուն դրա դիմում է խիզախության:

բ) անձը կարող է դիմել խիզախ գործողության պարզապես սպասվող վտանգը չկանխատեսելով, կամ չափազանց պատվասիրությունը կարող է մարդուն մղել խիզախ գործողությունների՝ ուրիշների հիացմունքին արժանանալու համար:

դ) մարդը կարող է զզվել կյանքից, ունենալ ինքնասպանության նպատակ և ձգտել ինքնապնդանալ:

Այս բոլոր դեպքերում գործողությունները կարող են արտաքինապես նույնը լինել, մինչդեռ ներքին մոտիվացիաները խիստ տարբեր են: Բնավորության գծերը դառնում են վարչի յուրահատուկ դրդապատճառներ:

Շատ Ֆրոյդի բնավորությանը ուժ է հաղորդում սեռական բնագծի հետ կապված եռանդը, և բնավորության գիծը նա ըմբռնում է որպես սեռական ցանկության սուբյեկտիվացիաներ կամ սեռական մղման դեմ ուղղված հակադարձ երակցիաներ որպես լիբիդոյի ուղղվածություն:

Բնավորությունը դիտելով որպես լիբիդոյի սուբյեկտիվացիա Ֆրոյդը առանձնացրեց է բնավորության հետևյալ տիպերը:

1. **Օրալային տիպ**, որը սենտված է հոգևսեռական զարգացման «բերանային» փուլին: Այստեղ ծայրահեղ ժլատ են, ուժեղ կախվածություն ունեն ուրիշներից կամ հակառակը՝ ծայրահեղ առատաձեռն են ու շատախոս:

2. **Անալային տիպ**, որը սենտված է զարգացման «հետույքային» փուլին: Խնայող է, հաճախ գծուծ, կամակոր և մեծ սեր ունի կարգուկանոնի նկատմամբ:

3. **Ուրետորային՝** «արգանդային» տիպին բնորոշ են պաշտվասիրությունը, մրցանցության ոգին, երբեմն նաև ընդգծված անաչլոտությունը:

4. **Ֆալլոսային՝** «ամուսական» տիպին բնորոշ են վճռակամությունը, ինքնավստահությունը և նպատակալացությունը:

5. **Գենիտալային՝** «սեռաօրգանական» տիպի բնավորությանը մարդիկ, որոնք հավասարակշռված են, և դա նրանց բնավորության առաջատար գիծն է:

**Էրիխ Ֆրոյդի տիպավորումը**

Շատ նեոֆրոյդիստ է. Ֆրոյդի մարդու բնավորության հիմքում ընկած է ոչ թե լիբիդոն, այլ աշխարհի ու մարդկանց, սեփական անձի հետ ունեցած հարաբերությունները, որոնց ընթացքում մարդը ասիմիլացնում և ձեռք է բերում այն:

Այդ հարաբերությունները կարող են լինել ասիմիլացնող և սոցիալականացնող:

Բնավորությունը, ըստ է. Ֆրոյդի, հարաբերականորեն այն կայուն ձևն է, որով մարդու եռանդն ուղղվում և օգտագործվում է յուրացման (ասիմիլացիայի) և սոցիալականացման գործընթացներում:

Մարդու եռանդի նման ուղղվածությունների հետևանքով ձեռք են բերվում տարբեր սովորություններ ու հմտություններ:

Բիհեյվիորիստների կարծիքով այդ սովորություններն ու հմտություններն են հանգեցնում բնավորության ձևավորմանը. մինչդեռ ըստ է. Ֆրոյդի բնավորության տիպն է կողմնորոշում հմտությունների ու սովորությունների ձևավորումը: Եթե մարդու վարքն ու սովորությունները ներդաշնակ են նրա բնավորությանը, ապա մարդը լեցուն է եռանդով և կարող է փոխվել միայն այն դեպքում, եթե արձատապես փոփոխվի նրա բնավորությունը:

Է. Ֆրոյդը բնավորության տիպերը բաժանում է երկու խմբի՝ ոչ արդյունավետ և արդյունավետ:

**Ոչ արդյունավետ** տիպերն իր հերթին է. Ֆրոյդը տարբերակում է ընկալող, շահագործող, կատարող, սոստորական, իսկ արդյունավետը՝ աշխատող, սիրող, դաստղ ներատիպերի:

Ոչ արդյունավետ տիպեր

**Ընկալող անձ**, սրանց սովորում են նաև յուրացնող, ռեգրեսիվ անձ, որոնք թղթը բարիքների ալքյուրը համարում են արտաքին աշխարհը և այնտեղից են սկսվել ստանալ թե նյութական ար-

ժեք և թե՛ սեր, գիտելիք ու հաճույք: Նրանք կարևորում են սիրված լինելը և ոչ թե սիրելը:

Այս մարդիկ զգայուն են, լոյալ, միշտ սովորող և ոչ ստեղծագործող, օրինապահ, բոլորի խնդրանքին «այո» ասող, անօգնական ու անվճռական, սիրում են ուտել-խմելը: Նրանց ամենաարտահայտիչ մասը բերանն է, որը կարծես միշտ սննդի է սպասում:

**Շահագործող անձը** ևս բոլոր բարիքների աղբյուրը համարում է արտաքին աշխարհը և իրեն անհրաժեշտը փորձում է ձեռք բերել ուժով ու խորամանկությամբ:

Սիրո փոխհարաբերություններում ձգտում են այն մարդկանց, ովքեր ուրիշի են պատկանում: Շահագործող մարդու համար գրավիչ չէ այն անձը, ով ուրիշին չի պատկանում: Այս մարդիկ նոր գաղափարներ չեն ստեղծում, այլ գողանում են, ինչը պայմանավորված է հաճախ ոչ թե ինտելեկտի թուլությամբ, այլ բնավորության տիպով:

Նրանց համար ավելի գրավիչ է ուրիշից խլելը կամ գողանալը, քան սեփականը ստեղծելը: Նրանք շահագործում են նրանց, ումից կարող են ինչ-որ բան վերցնել և հրաժարվում են, երբ արդեն ստացել են իրենց ցանկացածը: Թշնամանք ու շահագործում. ահա նրանց դիրքորոշումը: Մարդկանց գնահատում են իբրև շահագործման օբյեկտի, օգտակարության տեսակետից, չնայած նրանք երևում են մարդկանց իբրև լավատես ու ինքնավստահ: Իրականում նրանք նախանձ են, ցինիկ, կասկածամիտ, հակված են թերագնահատելու սեփական ունեցվածքը և գերագնահատելու ուրիշների ունեցածը:

**Կուտակող անձ**, որը տարբեր է, քան նախորդները: Սրանք դուսի աշխարհից նոր բան ստանալուն չեն վստահում: Նրանց ինքնավստահություն է հաղորդույ՛մ կուտակելը, իսկ ծախսելը՝ սպառնալիք: Ժլատ են, շուրթերը՝ սեղմված, ժեստերը՝ զուսպ ու անճկուն, շահագործողի պես ազդեսիվ չեն, այլ մանրախնդիր, պեղանտ և կարգապահության սիրահար:

Համառ են, իշխող, ամեն ինչին պատասխանում են «ոչ»-ով: Նրանց համար մահն ավելի իրական է, քան կյանքը: Վախենում են

մարդկանց հետ մտերմանալուց: «Ինձ, ձերը՝ ձեզ»՝ ահա նրանց կարգախոսը կամ «Չկա ոչ մի նոր բան արևի տակ»:

**Առևտրական անձ**, որը, է. Ֆրոյմանի բնորոշմամբ, մեր ժամանակների մարդն է, որի գործունեությունը կախված է նրանցից, ովքեր վճարում են:

Շուկայական փոխհարաբերությունները թափանցել են ամեն տեղ, ինչը մարդուց պահանջում է ճկունություն, հարմարվողականություն, զգայունություն, քանի որ ժամանակակից մարդն իրեն ապրանք և վաճառական է զգում միաժամանակ:

Ինքն իրեն արժեքավոր է համարում, եթե իրեն գնահատում են, իսկ եթե ոչ՝ տազնապ է ապրում, թերարժեքության զգացում, ինքնագնահատականը դառնում է անկայուն: Շուկայից կախվածությունը հանգեցնում է մարդու մեջ հպարտության ու արժանապատվության խարխումակ: Սեփական ես-ի զգացումը փոխարինվում է ուրիշների կարծիքներով ու գնահատականներով:

Առևտրական տիպի անձը դառնում է դատարկ՝ պատրաստ կատարելու այն դերերը, որոնք առավել օգտակար են:

Մեր պայմաններում կարևոր է դառնում այս տիպի ուսումնասիրությունը, քանի որ երկիրն անցում է կատարում շուկայական հարաբերությունների:

### **Արդյունավետ կողմնորոշումներ**

Ոչ արդյունավետ և արդյունավետ տիպերի վերլուծությանը հանդիպում ենք նաև Ձ. Ֆրոյդի հոգեվերլուծական տեսության մեջ, համաձայն որի՝ ոչ արդյունավետ բնավորությունը համապատասխանում է **մինչգենիտալային** բնավորությանը, որն, ըստ էության, ներոտիկ անձնավորությունն է, իսկ արդյունավետը **գենիտալայինն** է, որի կյանքում օրալային և անալային լիբիդոյի մակարդակները մնացել են անցյալում, և տվյալ տիպի սեռական ակտիվությունը հակառակ սեռի հետ միանալն է, որն, ըստ էության, արդյունավետ է:

Է. Ֆրոյմանը զարգացրեց այս տեսակետը և նշեց, որ արդյունավետ տիպը լիովին զարգացած մարդկային բնավորություն է, որը նոր մշակութային արժեքներ է ստեղծում, ինչպես նաև նա, ով ի վիճակի

չէ ոչինչ ստեղծել: Մարդը կարող է տեսնել, զգալ, մտածել արդյունավետ կերպով, սակայն շոշափելի արդյունքներով այն ներկայացնելու ընդունակություն չունենալ:

Արդյունավետությունը, սակայն, պետք է տարբերել ակտիվությունից: Մարդը կարող է ակտիվ լինել, բայց՝ անարդյունավետ: Օրինակ, արվեստագետը, որն ընդօրինակում է միայն գոյություն ունեցողը՝ արդյունավետ բնավորություն չունի: Արդյունավետ չեն ապրում այն բոլոր մարդիկ, ովքեր գործում են ժլատությամբ, նախանձով, խանդով ու ագահությամբ: Նրանք շատ ակտիվ են, բայց՝ անպտուղ ակտիվությամբ:

Անձն արդյունավետ բնավորություն ունի, եթե գիտակցում է իր հնարավորություններն ու ուժերը և օգտագործում դրանք:

Է. Ֆրոմմը գտնում է, որ, այնուամենայնիվ, մաքուր տիպեր չկան: Կան արդյունավետ և ոչ արդյունավետ գծերի խառնուրդներ, որի դեպքում ոչ արդյունավետ տիպի գծերը մեղմանում են, նույնիսկ ստանում դրական երանգներ:

## ✓ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՊԾՎԱԾ ՏԻՊԵՐ

Բնավորությունը մարդու հոգեկան գծերի համակարգ է, որում կան առաջատար և երկրորդական գծեր: Երբեմն անհատի բնավորության այս կամ այն գիծը չափազանց արտահայտված է, և կարծես առաջանում են բնավորության ընդգծված տիպեր:

Հոգեբան Ա. Նալչաջյանն առանձնացնում է բնավորության հետևյալ ընդգծված տիպերը.

**ա) ցուցադրական, բ) մանրախնդիր, գ) դյուրագրգիռ, ե) գերզգայուն տիպեր:**

**Ցուցադրական անձնավորությունները** ցանկանում են, որ մարդիկ մշտապես հիանան իրենցով, որ միշտ լինեն ուշադրության կենտրոնում:

Օայրահեղ սրվածության դեպքում այս գիծը հանգում է հիստերիկության:

Ցուցադրական անձինք կարողանում են արագորեն մոռանալ այն, ինչ իրենց համար տհաճ է ու անընդունելի: Առաջանում է ինքնապաշտպանական մոռացկոտություն և հիվանդագին ստախոսություն, և քանի որ հիստերիկի ստախոսությունը գիտակցված չէ ստում են առանց ամոթի դեմքին միամիտ ու ազնիվ արտահայտություն տալով:

Նրանք ունեն դերասանական օժտվածություն, ձգտում են ճանաչման, խիստ ներշնչվող են, շահանդ, սակայն, դժվարությունների հանդիպելիս, խաղում են տառապյալի դեր:

**Մանրախնդիր անձնավորություններ**, որոնք ցուցանուների հակապատկերն են: Կասկածամիտ են, տատանվող, անվճռական, մեծ նշանակություն են տալիս ակնկալվող վտանգներին:

Օրինակ, սիրում են առանց անհրաժեշտության հաճախակի լվացվել՝ արդարանալով, որ միևնույն է, կեղտի փոքրագույն մասնիկներ են մնում ձեռքերին: Կամ վախենալով, որ երեխան կարող է վնասել ինքն իրեն, սենյակից հեռացնում են թոլոր «վտանգավոր» իրերը:

Այս մարդկանց անվանում են պեղանտ, որոնք վճիռ կայացնելիս այնքան են դժվարանում, որ չեն կարողանում նորմալ աշխատել, սակայն աշխատանքի մեջ հետևողական են, մանրակրկիտ ու բարեխիղճ: Հանգիստ չունեն նույնիսկ քնելիս, մտածում են, որ երևի ինչ-որ բան կիսատ են թողել: Դուռը փակելուց հետո բազմաթիվ անգամ նորից ու նորից ստուգում են այն՝ ցնցելով փականը:

Եթե մանրախնդրությունը հանդես է գալիս որպես լոկ բնավորության ընդգծված գիծ և չի դարձել հիվանդություն՝ օգտակար է:

**Կապ ընկնող (պարանոկ) անձնավորություն**, որի հոգեկանին հատուկ է աֆեկտի հիվանդագին կայունությունը: Նրանց մեջ աֆեկտը շատ դանդաղ է թուլանում՝ առանձնապես, երբ այն կապված է անձի անհատական պահանջմունքներին, երբ մարդն անձնական վիրավորանք կամ զրկանք է կրում: Նման մարդիկ հիշաչար են, վրիժառու, ինքնավատահ, զոռոզամիտ:

Մարդը կաչուն և ուժեղ աֆեկտ, պարանոկի գծեր է ձեռք բերում, եթե նրա կյանքում հաջողություններն ու անհաջողությունները եր-



կար ժամանակ հաջորդում են իրար, կամ առաջանում են ուժեղ խանդի ազդեցությամբ, կոնֆլիկտների, դատական գործերի տևական անորոշությունից:

**Դյուրագրգիռ անձնավորություններ**, որոնց վարքը հաճախ կառավարվում է հակումների, քան մտածողության կողմից, որը կարող է հասնել հիվանդագին աստիճանի: Նրանք իմպուլսիվ են, կուպիտ, դժգոհությունը չթաքցնող:

Ֆիզիկական բարենպաստ աշխատանքը լավ են կատարում, սակայն հաճախակի են գայրանում, եթե արդյունքը զոհացուցիչ չէ: Ունեն ցածր զարգացած մտածողություն, չեն բացատրվում և դիմում են ֆիզիկական ուժի:

Հաճախ դառնում են հարբեցողներ, անզուսպ են սեռական կյանքում, հաճախ են մտնում նոր կապերի մեջ: Սրանց հիվանդագին աստիճանը էպիլեպտոիդ փսիխոպաթն է, որը գրեթե զուրկ է բարոյականությունից: Երբեմն անազնիվ արարքներ են կատարում զոհություն, բռնաբարություն, տարբեր հանցագործություններ: Հակված են թափառաշրջիկության, երբեմն փախչում են տնից՝ առանց ակնհայտ պատճառի: Դյուրագրգիռ մարդկանց, հատկապես դեռահասներին դաստիարակելը շատ դժվար է: Սուր կոնֆլիկտների ու սթրեսների ազդեցությամբ կարող են դիմել իմպուլսիվ ու վտանգավոր գործողությունների: Ունենալով թույլ կամք և թերզարգացած բարոյականություն՝ նրանց համար սովորական են դառնում գողությունն ու ավազակությունը:

**Գերզգայուն տիպ**, որոնք անհամարձակ են և ամաչկոտ, ունեն թերարժեքության բարդույթ, սակայն շատ զգայուն են, բարձր պահանջներ են ներկայացնում իրենց:

Նրանց անվանում են չկառավարվող տիպ, որոնց հիմնական գծերն են իմպուլսիվությունը, կոնֆլիկտներ ստեղծելու հակումը: Չեն սիրում, երբ իրենց առարկում են, հայտնվում են աֆեկտիվ վիճակում: Նրանք երբեմն ունեն հիվանդագին կասկածամտություն, սակայն խոսակցին վստահելու դեպքում մի կողմ են նետում դիմակը և բացահայտում իրենց գերզգայուն հոգին:

Պետք է իմանալ, որ մեկ անձի մեջ կարող են զուգորդվել բնավորության մեկից ավելի շեշտված գծեր, որոնք կարող են առաջացնել բնավորության նոր տիպեր:

## ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՀՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բնավորության բնութագրման ամենից ստույգ, հուսալի, մատչելի ու արդյունավետ ուղին մարդու գործունեության վերլուծությունն է: Միայն սա կարող է ճիշտ պատկերացում տալ բնավորության մասին: Բնավորության ճանաչման միակ ճիշտ ուղին նույնպես կապված է մարդու գործունեության ճանաչման հետ, քանզի գործունեության ընթացքում է դրսևորվում և դաստիարակվում բնավորությունը: Սակայն բնավորության ճանաչողության համար անհրաժեշտ է ժամանակ: Առաջին հայացքից կամ մեկ-երկու դրսևորումով հնարավոր չէ ճանաչել բնավորությունը: Բնավորության բացահայտման համար անհրաժեշտ է փոքրիշատե տևական ժամանակ և տվյալ անձնավորության համար կյանքի սովորական պայմաններ: Բացի այդ, միևնույն անձնավորությունը տարբեր պայմաններում կարող է դրսևորել բնավորության տարբեր տրամագծորեն հակառակ գծեր: Դրա համար էլ մարդու բնավորությունը ճանաչելու համար պետք է նրան ուսումնասիրել տարբեր պայմաններում: Պետք է կարողանալ տարբերել բնավորության իսկական գծերը պատահականից:

Բնավորության բացահայտման համար կարևոր դեր են կատարում մարդու սկզբունքները, որոնք երբեմն կարող են քողարկված լինել: Շատ հաճախ հիանալի բնավորության տեր մարդը, ասենք, համեստ մարդը չի կարողանում իրեն ցույց տալ, մինչդեռ անհամեստ անձնավորությունը ցուցադրում է իրեն: Բնավորության ճանաչման գործում ամեն մի հապճեպություն պարունակում է մեծ սխալների հավանականություն: Իզուր չէ ժողովրդական ասացվածքը. «Մարդուն ճանաչելու համար նրա հետ պետք է մի փութ աղ ուտել»:

Սովորաբար, ինչպես արդեն նշել ենք, բնավորությունը գնահա-

տում ենք «լավ» կամ «վատ» հիմք ընդունելով երբեմն աչքի ընկնող գծերի, հատկությունների համակարգը:

Բնավորության ճանաչման համար պիտի նկատի ունենալ նաև նրա բնախոսական հիմքը: Բնավորության հատկանիշների ծագման բնախոսական պայմաններից մեկը տարբեր դիմամիկ ստերեոտիպերի ձևավորումն է, իսկ մյուս պայմանը բնավորության և բարձրագույն նյարդային համակարգի ընդհանուր տիպի հետ նրա ունեցած կապն է: Ինչպես գիտենք ձեռնարկի նախորդ գլխից, նյարդային համակարգության ընդհանուր տիպը հանդիսանում է նաև խառնվածքի բնախոսական հիմքը, ուստի պետք է եզրակացնել, որ սերտ կապ կա խառնվածքի տիպերի և բնավորության գծերի միջև:

Բնավորության կառուցվածքը տարբեր հատկանիշների պատահական գումար չէ: Նրա տարբեր հատկանիշներ կապված են միմյանց հետ և կազմում են մի ամբողջական կառույց: Ուստի երբեմն իմանալով բնավորության մեկ կամ մի քանի հատկանիշներ՝ կարող ենք կանխատեսել բնավորության մյուս գծերը և:

Գիտենալով, որ մարդը մեծամիտ է և փառասեր, կարող ենք կանխատեսել նրա բնավորության բացասական այլ գծեր:

Հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել բնավորության հատկանիշների չորս համակարգեր, որոնք որոշվում են անձի տարբեր հարաբերություններով<sup>35</sup>:

1. Հատկանիշներ, որոնք արտահայտում են վերաբերմունքն այլ մարդկանց նկատմամբ՝ բարություն, մարդամոտություն, գթասրտություն, պահանջկոտություն, ընկերական վերաբերմունք, քաղաքավարություն և այլն:

2. Հատկանիշներ, որոնք արտահայտում են վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ՝ աշխատասիրություն, ծուլություն, բարեխղճություն, նախաձեռնություն, ջանասիրություն, պատասխանատվություն և այլն:

3. Հատկանիշներ, որոնք արտահայտում են վերաբերմունքն

իրերի նկատմամբ՝ անփութություն, խնամքով կամ անխնամ վերաբերմունք և այլն:

4. Հատկանիշներ, որոնք արտահայտում են վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ՝ ինքնասիրություն, պատվասիրություն, սնապաղծություն, հպարտություն, ինքնահավանություն, համեստություն, անբարտավանություն և այլն:

Հոգեբան Բ.Մ. Տեպլովն առանձնացրել է բնավորության հատկանիշների մեկ այլ համակարգ և:

5. Հատկանիշներ, որոնք արտահայտում են անձնավորության հոգեկան կերտվածքը՝ անձնագոհություն, սկզբունքայնություն, հետևողականություն, ակտիվություն, կարգապահություն և այլն:

Իրականության տարբեր կողմերի հետ մարդու հարաբերությունները սերտորեն փոխկապակցված են, հետևապես փոխադարձորեն կապված են նաև բնավորության գծերը, որոնք կազմում են որոշակի համակարգեր:

Աշխատանքի, իրերի և իր անձի նկատմամբ վերաբերմունքը շատ բանով կապված է դեպի մարդիկ ունեցած վերաբերմունքի հետ: Ուրեմն, մարդու բնավորությունը հարաբերականորեն ամբողջական է և սոցիալականացված:

Բնավորության հատկանիշներն ունեն խորություն, ակտիվության աստիճան և արտահայտվում են այս կամ այն ուժով: Ուստի տարբերվում են նաև բնավորության «թույլ» և «ուժեղ» գծեր:

Բնավորության կառուցվածքային հատկանիշ են նաև նրա կյանությունն ու փոփոխականությունը, որոնք հարմարվողական գործունեության անհրաժեշտ պայմաններ են:

## — ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ ԵՎ ԿԱՊԸ ԽԱՌՆՎԱԾՔԻ ՀԵՏ

Անհրաժեշտ է անդրադարձ կատարել բնավորության և ժառանգականության, բնավորության և խառնվածքի, ինչպես նաև մարդու բնավորության և մարմնի կառուցվածքի միջև գոյություն ունեցող կապերին:

35. Պետրովսկի Ա.Վ., «Ընդհանուր հոգեբանություն», Երևան, 1974թ.

Ինչպես արդեն նշել ենք՝ որոշ ուսումնասիրողներ, դիտարկելով միաձու երկվորյակներին, հանգել են այն եզրակացության, որ բնավորությունը ժառանգական է, քանի որ նրանք հաճախ մեծանալով տարբեր պայմաններում, այնուամենայնիվ, դրսևորում են բնավորության նման գծեր: Այլ տեսաբաններ էլ գտնում են, որ ժառանգվում են ոչ թե բնավորության, այլ խառնվածքի գծեր, և սա, իրոք, ճշմարտություն է, քանի որ հասուն մարդու մեջ խառնվածքն ու բնավորությունը կազմում են մեկ միասնական համակարգ: Նշենք, սակայն, որ անհատի խառնվածքը նրա բնավորության ձևավորման հոգեֆիզիոլոգիական, ժառանգական հիմքերից ամենահիմնականն է:

Մինևույն միջավայրում մեծացող ու դաստիարակվող երեխաները ձեռք են բերում բնավորության տարբեր գծեր, քանի որ նրանք ունենում են տարբեր խառնվածքներ:

Վաղուց ի վեր գիտնականները փորձել են կապ տեսնել նաև մարդու բնավորության և մարմնի կառուցվածքի միջև, ասենք՝ գլխի ձևի և բնավորության, իրանի կառուցվածքի և բնավորության և այլն: Մեզ հայտնի են մարմնի կառուցվածքի և խառնվածքի կապի մասին եղած ուսումնասիրությունները, սակայն փորձ է արվում նման կապ տեսնել նաև բնավորության հետ<sup>36</sup>:

Յին Յունաստանի մեծ մտածողները (Արիստոտել, Պլատոն) մարդու բնավորությունը որոշում էին ըստ դեմքի կառուցվածքի և արտահայտության՝ գտնելով, որ ամեն մարդ նման է որևէ կենդանու: Եվ բնավորության գծերը կանխորոշելու համար բավական է գտնել, թե տվյալ մարդն ինչ կենդանու է նման:

Օրինակ, եթե մարդու դեմքը նման է աղվեսի դեմքին, ապա նա խորամանկ է, ճարպիկ, եթե քիթն ունի լայն ընջացքներ, ուրեմն, նման է խոզի և ունի խոզի բնավորություն, եթե քիթը առյուծի է, ապա խիզախ է ու քաջ:

Այս տեսությունը կոչվում է ֆիզիոգնոմիկ, որը դրսևորվել է հետագա դարերի մտածողների աշխատություններում ևս: Յայտնի է

18-րդ դարի ֆիզիոգնոմիկ տեսության ներկայացուցիչ Ի.Կ.Լաֆա-տերը, որը գտնում էր, թե ուսումնասիրելով գլխի կառուցվածքը, գանգի ձևը, դեմքը և դիմախաղը՝ կարող ենք բնութագրել մարդու բնավորությունը: Լաֆատերի այս հայացքների վրա հենվելով՝ Ֆրանց Գալլը ստեղծեց բնավորության նոր տեսություն՝ ֆրենոլոգիա, ըստ որի՝ մարդու բնավորության գծերը չեն կարող կապված լինել նրա գանգի կառուցվածքի հետ:

Ավելի հավանական են մարդու դիմախաղի, դեմքի արտահայտության և բնավորության միջև ենթադրվող կապերը:

Օրինակ, եթե մարդն ունի դժգոհող բնավորություն, դյուրագրգիռ է և հաճախակի է տխրում, ապա նրա վերին շրթունքը՝ դեպի վեր ծավված է լինում, քթի կողքերը բարձրանում են, և դեմքը ցավ է արտահայտում:

Եթե վերին շուրթը բարձր է (միայն մի կողմից) և դրա հետևանքով բացվում են ատամները, ուրեմն՝ մարդը դաժան է, ունի մեծ ատելություն և ագրեսիվ է: Եթե շուրթերի անկյունները կախված են, ապա այդ մարդիկ չափազանց հպարտ են, արհամարհող, հաճախ անպատկառ և իրենց գերադասում են ուրիշներից:

Սակայն մարդու դեմքի բնորոշ արտահայտությունների և բնավորության տիպերի միջև կապերը դեռևս խորը գիտական ուսումնասիրության արդյունք չեն և կարող են խաբուսիկ լինել:

Մարդու բնավորությունը բազմաթիվ գծերի և հակումների բարդ համակարգ է, դիմամիկ կազմավորում, որը ձևավորվում է երկար տարիների ընթացքում և կարող է ենթարկվել մասնակի փոփոխությունների՝ նույնիսկ հասուն տարիքում:

36. Վուլդրիջ Դ., «Ուղեղի մեխանիզմները», Երևան, 1971թ.

## ԹԵՄԱ 19. ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդունակությունների ընդհանուր բնութագիրը
2. Ընդունակությունների կառուցվածքը
3. Ընդունակությունների չափումը
4. Տաղանդ և հանճարեղություն
5. Ընդունակությունների և տաղանդի բնական նախադրյալները
6. Ընդունակությունների ձևավորումը և փոխհատուցումը

### ✓ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ընդունակությունները մարդու այն առանձնահատկություններն են, որոնցից կախված են գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, և որոնք հնարավորություն են տալիս հաջողությամբ զբաղվել գործունեության մեկ կամ մի քանի տեսակներով ու տիրապետել դրանց:

Ընդունակությունները գիտելիքների ու հմտությունների յուրացման ներքին պայմաններն են, սակայն նրանք չեն կարող հանգեցվել այդ գիտելիքներին ու հմտություններին, այսինքն՝ ընդունակությունների արդյունքներին: Կան թեստեր, որոնք նախատեսված են ընդունակությունների չափման համար: Որևէ գործունեության բնագավառում ընդունակությունների զարգացումը հանգեցնում է կատարման վարպետության:

Ընդունակությունները կապված են մարդու ընկալումների, հիշողության, մտածողության, երևակայության, բնավորության, հուզականային առանձնահատկությունների հետ և զարգանում են գործունեության ընթացքում՝ ժառանգականորեն կամխորոշված նախադրյալների հիման վրա:

Նախադրյալները բնածին օժտվածություն են, որոնք իրական ընդունակություն են դառնում ուսուցման ու աշխատանքի շնորհիվ:

Գոյություն ունեն **իրական և պոտենցիալ** ընդունակություններ: **Իրական** անվանում են արդեն ձևավորված ընդունակությունները, որոնք մարդուն հնարավորություն են տալիս գործունեությունը կատարել արդյունավետ:

**Պոտենցիալ** են այն ընդունակությունները, որոնց նախադրյալները կան մարդու մեջ, սակայն դեռևս չեն զարգացել ու ձևավորվել: Առանձնացվում են նաև ընդհանուր ընդունակություն կամ մտավոր ընդհանուր օժտվածություն և մի շարք հատուկ ընդունակություններ:

Ընդհանուր օժտվածությունը մարդու բանականությունն է, խելքը, ընդունակություններն ընդհանրապես, ինչը հիմնականում պայմանավորված է ժառանգականությամբ:

Հատուկ ընդունակությունները վերաբերում են գործունեության որոշակի տեսակներ հաջողությամբ կատարելու ներքին հնարավորություններին: Դրանք են՝ լեզվական, մաթեմատիկական, երաժշտական, դերասանական, նկարչական, մարզական և այլն:

### ✓ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոգեբանները վաղուց ի վեր փորձում են բացահայտել ընդունակությունների կառուցվածքը, և առաջարկվել են տարբեր տեսակետներ, որոնցից կարևոր է նշել Լ. Թերստոմի և Ջ. Գիլֆորդի տեսակետները:

Ամերիկացի հոգեբան Լ. Թերստոմը տարբեր թեստերի օգնությամբ պարզել է, որ մարդու բանականությունը կազմված է յոթ առանձին գործոններից.

1. S - առարկաների տարածական հարաբերություններն ըմբռնելու և մտապատկերելու ընդունակություն:

2. P - ընկալման արագություն: Առարկաների նմանություններն ու տարբերություններն արագորեն և ճիշտ ըմբռնելու ընդունակություն:

3. N - արագ և ճիշտ հաշվումներ կատարելու ընդունակություն:

4. V - խոսքը ճիշտ և արագ ըմբռնելու ընդունակություն:

5. W - խոսքի սահունությունը, արագությունն ու ճկունությունը:

6. M - ընկալածը մտապահելու և վերարտադրելու արագությունն ու արդյունավետությունը:

7. R - տրամաբանական մտածողության ընդունակություն, հատկապես՝ ինդուկտիվ մտածողություն ունենալը:

Թերատոնի առանձնացրած այս գործոններն, իհարկե, օգտակար են մարդու ընդունակությունների մասին պատկերացում կազմելու համար, սակայն բավականաչափ խոր ու ճշգրիտ չեն, որը և ստիպեց հոգեբաններին՝ ավելի խոր ուսումնասիրությունների ենթարկել մարդու ընդունակությունների կառուցվածքը:

Լուրջ ուսումնասիրություններ կատարեց ամերիկյան մեկ այլ հոգեբան՝ Ջ. Գիլֆորդը, որը պարզեց, որ մարդու ինտելեկտը կազմված է 120 տարբեր գործոններից: Նույն ամձը, ըստ որոշ գործոնների, կարող է բարձր արդյունքներ ստանալ, ըստ այլ գործոնների՝ միջին, իսկ այլ դեպքերում էլ՝ շատ ցածր, որը ստուգվում է համապատասխան թեստերով:

Ընդունված է նաև մարդկանց տիպավորել ըստ ընդունակությունների, և առանձնացվում են հետևյալ հայտնի տիպավորումները.

**Գեղարվեստական և մտածական տիպեր:** Ռուս հայտնի ֆիզիոլոգ Ի.Պ. Պավլովը ժամանակին բնութագրել է մարդկանց երեք տիպ՝ **գեղարվեստական, մտածական և միջին**՝ դրանք կապելով առաջին և երկրորդ ազդարարային համակարգերի հետ: Ըստ նրա՝ եթե մարդու իմացական գործընթացում գերակշռում են առաջին ազդարարային համակարգի ազդակները՝ մտապատկերներն ու հույզերը, ապա նա պատկանում է **գեղարվեստական տիպին**: Եթե հոգեկան գործունեության մեջ գերակշռում է ազդարարների ազդարարը՝ խոսքը, բառերը, ապա մարդը **մտածական տիպի է: Միջին տիպի** մարդկանց մեջ երկու տեսակի ազդարարները ներկայացված են նույն չափով:

Գեղարվեստական տիպի մարդիկ տպավորվող են, ունեն պայծառ ու հուզական մտապատկերներ: Այս տիպին են պատկանում նկարիչները, քանդակագործները, երաժիշտները, դերասանները և ստեղծագործող այլ անհատներ:

Մտածական տիպի մարդիկ խնդիրները լուծում են հիմնական

նում խոսքային-տրամաբանական մտածողության օգնությամբ:

Գոյություն ունեն նաև ինտուիտիվ և տրամաբանական տիպեր:

Ինտուիտիվ անձինք ընդունակ են կատարելու կռահումներ, հեշտությամբ են «գլխի ընկնում» խնդրի լուծումը, սակայն նրանք չեն սիրում սխտեմավորել և տրամաբանորեն հիմնավորել իրենց կռահումները, որոնց հաճախ անվանում են ռոմանտիկներ:

Տրամաբանական տիպի մարդիկ իրատեսներ են, ռեալիստներ:

## — ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ

Մարդը, բացի հատուկ ընդունակություններից, ունի ընդհանուր ընդունակություններ կամ բանականություն, որը դրսևորվում է որպես խնդիրների լուծման ներքին հնարավորություն, իմացական լայն օժտվածություն, իրադրության տաղբեր կապերը տեսնելու և ընդհանրացումներ կատարելու ընդունակություն:

Գոյություն ունեն ընդունակություններն ու բանականությունը (G) չափող բազում թեստեր, որոնց օգնությամբ բացահայտվում է, թե ինչ չափով մարդն ունի բազմազան խնդիրներ լուծելու ընդունակություն<sup>37</sup>:

Քանի որ ընդունակություններն ունեն բարձր կառուցվածք, սովորաբար օգտագործվում է ոչ թե մեկ առանձին թեստ, այլ մի քանի թեստերի խումբ՝ մարտկոց:

Օրինակ, օղաչուների ընդունակություններն ավստորոշող թեստերի մարտկոցի մեջ մտնում են մեխանիկական (զգայաշարժողական կորդինացիաների), տարածական կողմնորոշման և այլ ընդունակություններ բացահայտող թեստեր:

Թեստերի օգտագործումը շատ պատասխանատու գործ է: Թեստի սխալ արդյունքները կարող են հանգեցնել անարդարության, ուստի այդ արդյունքները պետք է հուսալի չիեն: Բացի հուսալի լինելուց՝ թեստը պետք է լինի նաև արժեքավոր (վալիդ):

37. Айзенк Г., "Проверьте свои способности". М., "Мир", 1972г.

Չափել փորձարկվողի ընդունակությունները նշանակում է, մասնավորապես, պարզել, թե արդյո՞ք տվյալ մարդը կարող է հաջողությամբ զբաղվել տվյալ գործունեությամբ, որը և նպաստում է ճիշտ լուծելու մասնագիտական կողմնորոշման և ընտրության խնդիրները: Եման դեպքում պետք է քանակական չափման ենթարկել մարդկանց ընդունակությունները:

Բանականության չափման ժամանակակից թեստերն օգտագործվում են մարտկոցների ձևով, որոնց մեջ մտնում են 30, 40 կամ ավելի թվով խնդիրներ:

Գերմանացի հոգեբան Վիլյամ Շտեսնը դեռևս 1912թ. մարդու մտավոր օժտվածության աստիճանը քանակապես արտահայտելու համար մտցրել է հատուկ ցուցիչ՝ բանականության գործակից (ԲԳ), որը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$ԲԳ = \frac{\text{Մտավոր տարիք}}{\text{Իրական տարիք}} \times 100:$$

Եթե ուսումնասիրվող երեխայի իրական տարիքը 10 է, և նա լուծում է 10 տարեկանի համապատասխանող թեստ (այսինքն՝ ՄՏ-ն նույնպես 10 է), ապա՝

$$ԲԳ = \frac{10}{10} \times 100,$$

որը մտավոր օժտվածության միջին մակարդակ է:

Եթե 10 տարեկանը լուծում է 12 տարեկանին համապատասխանող թեստեր, ապա

$$ԲԳ = \frac{12}{10} \times 100 = 120,$$

որը նշանակում է նրա մտավոր օժտվածության զգալիորեն բարձր աստիճան<sup>38</sup>:

Բնակչության հիմնական զանգվածն ունի միջին ԲԳ (85-115):

Մտավոր օժտվածության շատ բարձր աստիճան է, երբ ԲԳ-ն 140 և ավելին է, որոնց հաճախ անվանում ենք հանճարեղներ, իսկ

38. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, «Հոգեբան», 1997թ.

70-ից ցածրը համարվում է մտավոր հետամնացություն: Գոյություն ունի մտավոր հետամնացության սանդղակ՝ դեբիլներ, որոնց զարգացումը հասնում է 7-10 տարեկանի մտավոր զարգացման մակարդակին և կանգ առնում: Նրանք կարողանում են կարդալ ու գրել, ինչպես նաև ձեռքի պարզ աշխատանք կատարել:

Իմբեցիլներ, որոնք մնում են 2-7 տարեկան երեխաների մտավոր զարգացման մակարդակին և կարողանում են միայն վերահսկել իրենց բնական օրգանական ֆունկցիաները, քայլում են, խոսում, կատարում մեծերի որոշ պահանջներ:

Ապուշներ (իդիոտներ), որոնք տառապում են մտավոր հետամնացության ամենախոր աստիճանով՝ չեն վերահսկում իրենց բնական ֆունկցիաները, չունեն հասարակ հարմարվողական վարք:

Ներկայումս ստեղծվել են ԲԳ-ն որոշող նոր եղանակներ, ըստ աղյուսակների ու գրաֆիկների, որոնցում ցանկացած տարիքի համար ԲԳ-ի միջին արժեքը կազմում է 100-116:

## ՏԱՂԱՆԴ ԵՎ ՀԱՆՏԱՐԵՂՈՒԹՅՈՒՆ

Տաղանդը մարդու ընդունակությունների զարգացման բարձր աստիճանն է, որը նրան թույլ է տալիս արդյունավետորեն, ստեղծագործարար ու ինքնուրույնաբար կատարել որևէ գործունեություն:

Գոյություն ունեն անընդունակ, միջին ընդունակություններով, շատ ընդունակ կամ տաղանդավոր ու հանճարեղ մարդիկ, որոնք ունեն արտակարգ օժտվածություն:

Տաղանդավոր և հատկապես հանճարեղ մարդիկ այս կամ այն բնագավառում մտցնում են շրջադարձային փոփոխություններ, ստեղծում նոր ուղղություններ: Տաղանդավոր մարդկանց անձն ունի առանձնահատկություններ ու գծեր, որոնցից պետք է առանձնացնել.

**1. Աշխարհի պրոբլեմային ըմբռնումը:** Լսենք 3-5 տարեկան երեխայի հարցերի բնույթը և կեզրակացնենք նրա օժտվածության աստիճանի մասին.

«Հայրիկ, երկրագունդն ինչո՞ւ չի ընկնում», «Ինչո՞ւ ես արագ չեմ մեծանում, որ հայրիկ դառնամ» հարցերը երբեմն կարող են անիմաստ թվալ, սակայն դրանցից յուրաքանչյուրը յուրահատուկ

ձևակերպումով տրված պրոբլեմ է: Ըստ նման հարցերի քանակի ու ինքնատիպության՝ կարելի է դատել երեխայի օժտվածության աստիճանի մասին:

Տաղանդավոր մարդու առանձնահատկությունն աշխարհի պրոբլեմային ընկալումն է, սովորական թվացող երևույթների հետևում թաքնված ուժեր ու օրինաչափություններ տեսնելը:

Հայտնի գյուտարար եղիսոնը մանկության տարիներին այնքան շատ հարցեր էր տալիս ակնհայտ թվացող երևույթների մասին, որ ծնողներն սկսեցին կասկածել երեխայի մտավոր կարողություններին: Մինչդեռ փաստ է, որ ինչքան երեխան ինքնատիպ ու շատ հարցեր է տալիս, այնքան օժտված է:

**2. Ընդունակության արագ զարգացումը:** Առկա են տաղանդի ու հանճարի շատ վաղ դրսևորումներ: Որքան մեծ է բնածին օժտվածությունը, այնքան ավելի արագ է ընթանում տաղանդի ձևավորումը:

Ականավոր գիտնականներից ու արվեստագետներից շատերը եղել են հրաշամանուկներ: Օրինակ՝ Մոցարտը հինգ տարեկանում արդեն երաժշտություն է հորինել: Եղել են նաև մեծաթիվ տաղանդավոր մարդիկ, ովքեր ստեղծագործել են ուշ տարիքում: Օրինակ, Բալզակը՝ 30 տարեկանում, Ռուսոն՝ 40, Գյուկը՝ 60:

**3. Օժտվածության բազմակողմանիությունը:** Նման մարդկանց կարծես տրվում է նախադրյալների մի փունջ, որը հատկապես դրսևորվում է հանճարեղ մարդկանց մեջ: Օրինակ՝ Լեոնարդո դա Վինչին գիտնական էր, նկարիչ, գյուտարար, քանդակագործ ու երաժիշտ:

Մեր օրերում մեկից ավելի մասնագիտությունների տիրապետելն ավելի դժվար է դարձել, թեև մարդը մեծ հաջողությամբ կարող է դրսևորել ստեղծագործական գործունեության լայն հետաքրքրություններ:

**4. Հիշողությունը և ստեղծագործական ընդունակությունները:** Ստեղծագործական ընդունակություններ ունեցող մարդու հիշողությունն առաջին հերթին պետք է լինի շատ ճկուն, քանի որ մտածողությունն ու երևակայությունը, որոնք ապահովում են խնդիրների լուծումն ու նորի ստեղծումը, հենվում են հիշողության զուգորդությունների ու մտապատկերների մեծ ծավալի վրա:

## — ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՂԱՆԴԻ ԲՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ժամանակակից գիտական հոգեբանության մեջ ընդունված է համարել, որ մարդու յուրաքանչյուր ժառանգական նախադրյալ միջավայրի գործոնների փոխներգործության արդյունք է: Սակայն պետք է պարզել, թե ինչ պետք է հասկանալ ընդունակությունների ժառանգական նախադրյալ ասելով:

Ընդունակություններն ի ծնե պատրաստ վիճակում չեն տրվում: Դրանք ձևավորվում են անձի անհատական, օժտվածների, ֆիզիոլոգիական ու հոգեբանական հասունացման ընթացքում:

Ընդունակությունների բնական նախադրյալներ ասելով հասկանում են ուղեղի, զգայարանների, շարժողական համակարգի բնածին կառուցվածքային առանձնահատկությունները:

Գոյություն ունեն տարբեր տեսակետներ նախադրյալների բնույթի և ընդունակությունների կապի վերաբերյալ:

**1. Ուղեղի մեծությունը, գանգի ձևը և ընդունակությունները:** Ֆրանսիացի գիտնական Գալլը, մեղկ գանգին մայելով, փորձում էր որոշել մարդու ընդունակությունները: Ըստ նրա՝ եթե ուղեղի համապատասխան բաժինը զարգացած է, ապա գլխի վրա, գանգի համապատասխան մասում պետք է ուռուցք առաջանար: Սակայն պարզվեց, որ ուղեղի մեծության ու ընդունակության միջև ուղղակի կապ չկա, և գանգն էլ գլխուղեղի ձևը չունի:

Գոյություն ունեն որոշ տվյալներ գլխուղեղի կշռի և ընդունակությունների կապի վերաբերյալ: Հասուն մարդու գլխուղեղի միջին քաշը 1400 գրամ է: Արտակարգ ընդունակություններ ունեցող մարդկանց ուղեղի կշիռն ավելի է միջին մեծությունից: Օրինակ՝ ռուս գրող Ի. Տուրգենևի ուղեղը կշռել է 2012 գ, Ջ. Բայրոնի ուղեղը՝ 1800 գ, իսկ Անատոլ Գրանսինը՝ ընդամենը 1017 գ: Սակայն լինում են նաև շատ խոշոր գլուխ և ծանր քաշի ուղեղ ունեցող մարդիկ, որոնք մտավոր հետամնացներ են: Սա ևս գալիս է ապացուցելու, որ գլխուղեղի մեծության և ընդունակությունների միջև ուղղակի կապ չկա:

Տարածված է նաև այն կարծիքը, որ մտավոր ընդունակությունները կախված են գլխուղեղի կեղևի ակոսների ու ծալքերի թվից, բայց այս տեսակետը ևս հիմնավոր չէ, և, ընդհանուր առմամբ, ուղեղի միկրոկառուցվածքի ու մտավոր ընդունակությունների միջև ուղղակի կապ գոյություն չունի:

**2. Ուղեղի միկրոկառուցվածքը և ընդունակությունները:** Տվյալներ կան այն մասին, որ օժտված մարդկանց գլխուղեղի նեյրոններից յուրաքանչյուրն այլ նեյրոնների հետ կապերի մեջ մտնելու ավելի մեծ հնարավորություններ ունի, քան միջին կամ ցածր ընդունակությունների տեր անհատների մոտ:

Օժտվածների նեյրոններն ունեն ավելի շատ ելուստներ՝ դեմոփոհներ, և սինոպտիկ կապերի թիվն ավելի մեծ է: Շատ կարևոր է, թե ուղեղն ինչպես է մատակարարվում արյունով: Որքան լավ է սնվում ուղեղը, այնքան արդյունավետ են դառնում ընդհանուր օժտվածության դրսևորումները:

**3. Խառնվածք և ընդունակություն:** Գիտության, արվեստի, գրականության պատմությունը վկայում է, որ արտակարգ ընդունակություններով օժտված են եղել տարբեր խառնվածքներ ունեցող մարդիկ: Ա. Պուշկինը ցայտունորեն արտահայտված խոլերիկ էր, Ն. Գոգոլը՝ մելանխոլիկ, Ի. Կռիլովը՝ ֆլեգմատիկ, իսկ Ա. Ի. Գերցենը՝ սանգվինիկ: Այս փաստը վկայություն է, որ այս կամ այն խառնվածքը չի կարող կանխորոշել անձի ընդունակությունների մակարդակը, սակայն խառնվածքն իր կնիքն է դնում ընդունակությունների որակական կողմերի վրա, նպաստում կամ խանգարում նրանց զարգացմանը:

Այսպիսով, ընդունակությունների բնածին նախադրյալների հարցը մինչև վերջ ուսումնասիրված չէ, սակայն պարզ է, որ առանց նախադրյալների ոչ մի ընդունակություն զարգանալ չի կարող:

Ընդունակությունների նախադրյալները տեղորոշված են գլխուղեղում, և առողջ նյարդային համակարգությունն ընդունակությունների զարգացման հիմնական պայմանն է:

Ընդունակության զարգացման անհրաժեշտ պայմաններն են՝ բնածին նախադրյալների առկայությունը և համապատասխան

գործունեությամբ ակտիվորեն զբաղվելը, քանի որ ընդունակությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ որոշակի գործունեություն արդյունավետ կատարելու ներքին հնարավորություն:

Ընդունակությունների բնական նախադրյալները ենթարկվում են զենեակային ընդհանուր օրենքներին, ժառանգվում են ոչ թե բուն ընդունակությունները, այլ նրանց նախադրյալները, ասել է թե՛ նրանց բնախոսական հիմքերը: Նույնիսկ հրաշամանուկները, որոնք ծնվում են արտակարգ օժտվածությամբ, ստեղծագործական հզոր նախադրյալներով, կարող են չհասնել իրենց տաղանդի ծնավորմանը, եթե համառ ու աշխատասեր չեն, քանի որ նախադրյալները դեռևս ընդունակություններ չեն, և շատ դեպքերում օժտված հրաշամանուկը կարող է դառնալ միջակություն:

Մինչդեռ գիտության, արվեստի, գրականության և այլ բնագավառներում ակնառու հաջողության հասած մարդկանցից շատերը հրաշամանուկներ չեն եղել: Ավելին՝ նրանցից շատերը դպրոցական տարիքում համարվել են անընդունակ (Նյուտոն, Էյնշտեյն և այլք):

#### — ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՓՈԽՉԱՏՈՒՅՈՒՄԸ

Ժխտելով այն մտայնությունը, որ ընդունակությունները ժառանգվում են պատրաստի վիճակում, գիտական հոգեբանությունը զարգացնում է այն տեսակետը, որ ընդունակությունները ծնավորվում են ուսուցման և աշխատանքի գործընթացներում. քանի որ ընդունակությունը որոշակի գործունեությամբ զբաղվելու ներքին հնարավորությունն է, ուրեմն՝ նրա զարգացման համար անհրաժեշտ է, որ անձը հետաքրքրություն համղես բերի հենց տվյալ կոնկրետ գործունեության նկատմամբ, այսինքն՝ ընդունակությունների զարգացմանը նպաստում են մարդու հատուկ հետաքրքրությունները:

Հետաքրքրությունների և համապատասխան ընդունակությունների սաղմերի զարգացման ցուցանիշներից մեկը հակումների առաջացումն է:

Շեմարիտ միտք է, որ մեր ցանկություններն ու հակումները մեր մեջ



թաքնված ընդունակությունների նախադրյալներն են և թույլ են տալիս կռահել, թե ինչ նվաճումների կարող ենք հասնել ապագայում:

Ընդունակությունների զարգացումն ունի փուլեր, որոնցից կարելի է առանձնացնել.

1. նախադրյալի նախնական դրսևորում,
2. ընդօրինակում,
3. ինքուրույնության և ստեղծագործական փուլ:

Ծնվելուց անմիջապես հետո երեխան արդեն իր մեջ կրում է ընդունակության նախադրյալներ, որոնք անհրաժեշտ են ընդունակության զարգացման համար:

Երկրորդ փուլում երեխան սկսում է զբաղվել գործունեության այնպիսի տեսակով, որը նրան սովորեցնում են մեծերը՝ համապատասխան ընդունակություն ձևավորելու համար:

Ինքնուրույն և ստեղծագործական մակարդակին ընդունակությունն անցնում է այն դեպքում, երբ երեխան կամ պատանին սովորում է լուծել խնդիրներ, որոնք ցանկալի է, որ պարունակեն ստեղծագործական տարրեր:

Ուսումնասիրությունները պարզել են, որ որևէ բարդ գործունեություն կատարելիս արդյունքներն արդյունավետ կարող են լինել, եթե զուգորդվում են տարբեր հատուկ ընդունակություններ, որոնք ինքնին առաջ են բերում ընդունակությունների փոխհատուցման հնարավորություն:

Եթե մարդը չունի տվյալ գործունեությունը հաջողությամբ կատարելու հատկություններ, ապա նա իր մեջ զարգացնում է հատկություններ, ընդունակություններ, որոնք, փոխարինելով բացականերին, հանգեցնում են նշված գործունեության արդյունավետ կատարմանը:

Ընդունակությունների փոխհատուցման երևույթը դիտվում է ինչպես առողջ, այնպես էլ ինացական գործառույթների թերություններով մարդկանց մոտ:

Օրինակ, Կեսարը չունեւր առողջություն և ֆիզիկական ուժ: Արշավանքների ժամանակ նա իրեն զրկանքների էր ենթարկում գտնելով, որ հարմարավետությունն արժանի է ուժեղներին, և այդպիսով նա փոխհատուցում էր իր ֆիզիկական թուլությունը:

## ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ԹԵՄԱ 20. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գործունեության ընդհանուր բնութագիրը
2. Գործունեության կառուցվածքը
3. Ինտերիորիզացիա և էքստերիորիզացիա
4. Սովորություն, կարողություն և հմտություն
5. Գործունեության տեսակները

#### ✓ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Գործունեությունը մարդու ակտիվության այն տեսակն է, որն ունի նպատակ, դրդապատճառներ և հստակորեն գիտակցված պլան:**

Գործունեության հոգեբանական առանձնահատկությունները ճիշտ բնութագրելու համար անհրաժեշտ է հասկանալ մի շարք հասկացություններ՝ **ակտիվություն, կենսագործունեություն, վարք, դերակատարում:**

**Ակտիվություն** ասելով պետք է հասկանալ մարդու հոգեկան ու ֆիզիկական ուժերի ամեն մի դրսևորում կյանքի ցանկացած հանգամանքներում: Կենդանիների ակտիվությունը գործունեության բնույթ չի ընդունում, քանի որ նրանում չկա նպատակի գիտակցում:

**Կենսագործունեությունը** մարդու կողմից իր կյանքի ընթացքում իրականացվող գործունեությունների գումարն է: Օրինակ մարդու կենսագործունեությունը կարող է կազմված լինել խաղից, աշխատանքից, ուսուցումից կամ, ասենք, մարզական պարսպանույթներից:

**Վարքը** գործունեության արտաքին դրսևորումն է, որի մեջ մտնում են դիմախաղը, ձեռքերի ու ոտքերի շարժումները, գործողու-

թյունները, խոսքը և մարդու արտահայտչական բոլոր դրսևորումները: Բիհեկորիստները գտնում էին, որ հոգեբանությունը պետք է զբաղվի միայն մարդու ու կենդանու վարքի ուսումնասիրությամբ: Այս տեսակետը քննադատության չի դիմանում: Չնայած, իհարկե, վարքից է ածանցվում վարքագիծը, որը ձևավորվում է որոշակի ժամանակահատվածում, որոշակի փոխհարաբերությունների համակարգում:

**Դերակատարումը** սոցիալական դերի իրագործումն է, որը մարդն ստանձնում է տվյալ խմբում:

Օրինակ, դպրոցի տնօրենի դերը ենթադրում է կազմակերպչական աշխատանք, դասավանդում, դաստիարակչական աշխատանք, տնտեսական ու ֆինանսական գործունեություն և այլն:

Մարդու ակտիվությունը դրսևորվում է նաև այլ մարդկանց հետ շփման և հաղորդակցման ընթացքում:

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ինչպես արդեն նշվել է, գործունեությունը մարդու նպատակասլաց և կազմակերպված ակտիվությունն է:

Գործունեությունն ունի կառուցվածք, որի մեջ առաջին հերթին մտնում են **դրդապատճառներն ու նպատակները**:

Յուրաքանչյուր բարդ գործունեություն ունի մի քանի դրդապատճառներ, որոնք գումարվում, ուժեղանում և եռանդ ու ակտիվություն են հաղորդում մարդուն:

Մարդն իր մասնագիտական գործունեությունը կատարում է ոչ միայն աշխատավարձ ստանալու, այլև հասարակության մեջ դիրք գրավելու, հարգանք վայելելու, արդյունքներ ստեղծելու և ինքնահաստատվելու համար: Եվ, որպեսզի մարդու ակտիվությունը նպատակասլաց և կազմակերպված լինի, անձը պետք է իր դրդապատճառներից ելնելով՝ ձևավորի գործունեության վերջնական նպատակ:

Օրինակ, աշակերտը նպատակ է դնում ուսանող դառնալ, որին հասնելու համար նա պետք է իրագործի մի քանի միջանկյալ նպատակներ՝ լավ պարապել, լավ ընկալել ընտրած մասնագիտության

էությունը, ծանոթանալ ուսանողական կյանքի առանձնահատկություններին և այլն:

Միջանկյալ նպատակներին հասնելով՝ մարդը կարող է հասնել իր գործունեության վերջնական նպատակին:

Գործունեությունը կազմված է գործողություններից, որն ըմբռնելու համար պետք է նկատի ունենալ, որ մարդկային գործունեությունն ունի ներքին (ներհոգեկան) և արտաքին (չարժողական, վարքային) կողմեր: Արտաքին ու ներքին այդ գործողությունների օգնությամբ մարդիկ դրսևորում են իրենց անձնային, իմացական ու ստեղծագործական ընդունակություններն ու ներուժը, գիտելիքներն ու հմտությունները:

Գործունեությունը գործողությունների շարք է, որը միավորված է միասնական նպատակով, դրդապատճառներով և որը հարաբերականորեն ավարտում ու ինքնուրույն գործընթաց է միջանկյալ նպատակին հասնելու համար:

Գործողության իրագործման եղանակը գործառնություններն են՝ օպերացիաները, որոնց կատարման համար անհրաժեշտ են նյութական (գործիք, հումք, շինանյութ) և իմացական (գիտելիք, կարողություն, հմտություն) միջոցներ:

Գործունեության **սուբյեկտը** կատարողն է, իսկ **օբյեկտը**՝ այն առարկան, մարդը կամ արժեքը, որի վրա սուբյեկտը ներգործություններ է կատարում:

Գործունեության բոլոր տեսակներն ունենում են պլան, որի մեջ մտնում են միջանկյալ նպատակներն ու գործողությունները, վերջնական նպատակը և դրանց իրագործման միջոցների նկարագրությունները:

Մարդը կարող է դրսևորել նաև իմպուլսիվ գործողություններ, որոնք նրա ինքնաբերական (սպոնտան) պատասխանն են այն իրադրությանը, որտեղ նա հայտնվել է: Այն հիմնականում դրսևորվում է դրդապատճառների ու նպատակի չգիտակցումից:

Սեփական իմպուլսները զսպելու և կառավարելու կարողությունը կախված է անձի սոցիալականացման և ինքնագիտակցության զարգացման աստիճանից:

Ըստ հոգեբան Լ. Ս. Վիգոտսկու՝ երեխայի զարգացման ընթացքում յուրաքանչյուր հոգեկան ֆունկցիա հանդես է գալիս երկու անգամ՝ սկզբում որպես սոցիալական գործունեություն, իսկ ավելի ուշ՝ որպես ներհոգեկան երևույթ: Եվ անձի սոցիալականացման ընթացքում գործողությունների ու հմտությունների յուրացման ընթացքը բացատրվում է ինտերիորիզացիայի և էքստերիորիզացիայի գործընթացով:

Այս երևույթի բացատրությանն անդրադարձել են նաև հոգեբաններ Պ.Յ. Գալպերինը, Ա.Ն. Լեոնտևը, որոնք գտել են, որ արտաքին գործողություններն աստիճանաբար ձևափոխվում են ներհոգեկան մտավոր գործողությունների, և հենց այդ պատճառով էլ երեխան իր օնտոգենետիկ զարգացման ընթացքում յուրացնում է մարդկային մտքի նվաճումները: Եվ, ընդհանրապես, մտապատկերների, մտքերի, գիտելիքների կուտակման ամեն մի գործընթաց մեկնաբանվում է որպես ինտերիորիզացիա (ներքնայնացում):

Ներքնայնացված (ինտերիորիզացված) բովանդակությունների կամ գործողությունների էքստերիորիզացիան (արտաքնայնացումը) առարկայական գործողությունների դրսևորումն ու կիրառությունն են<sup>39</sup>:

Հոգեկան ցանկացած գործունեություն կատարելիս՝ մարդն անվերջ անցումներ է կատարում ներքնայնացումից դեպի դրսևորում՝ արտաքնայնացում և հակառակը:

Սովորելիս գերակշռում է ներքնայնացումը (ինտերիորիզացիա), իսկ գիտելիքները կիրառելիս՝ դրսևորումը (էքստերիորիզացիա):

Հոգեկանի և գործունեության միջև գոյություն ունի բարդ հարաբերակցություն: Մի կողմից հոգեկանը հանդես է գալիս գործունեության մեջ, իսկ մյուս կողմից՝ հոգեկանը կարգավորում է գործունեությունը:

39. Լեոնտև Ա.Ն., «Հոգեկանի զարգացման պրոբլեմները», Երևան, 1968թ.

**Սովորությունը** որոշակի գործողություն կատարելու պահանջումն է:

Առավոտյան արթնանում և սկսում ենք լվացվել, մաքրել ատամները, կատարել ֆիզիկական վարժություններ և այլն: Դրանք սովորություններ են, քանի որ կազմված են գործողություններից և դրանց կատարման ներքին մղումից, պահանջումներին:

Մարդու սովորությունները ձևավորվում են սկսած մանկության տարիներից: Երեխան առաջին անգամ ինքնաբերաբար կամ մեծերի պահանջով կատարում է անհրաժեշտ գործողություն, որը հետագայում ենթարկվում է ներքին ու արտաքին ամրապնդման ու խրախուսման և առաջացնում կրկին կատարելու մղում՝ ցանկություն:

Սովորությունները, ինչ խոսք, կապված են գիտելիքների ու հմտությունների հետ: Երբ մարդուն առաջին անգամ որևէ գործողություն են սովորեցնում, որը նա հասկանում է, դա գիտելիք է: Սակայն սովորություն դառնալու համար այդ գործողությունը պետք է կրկնվի այնքան, որ հասնի հմտության մակարդակին՝ կատարվելով ինքնաբերաբար՝ ավտոմատ ձևով:

Գործողություններն ավտոմատացվում և հմտություններ ու սովորություններ են դառնում այն դեպքում, երբ առկա է կրկին ու կրկին կատարելու ներքին մոտիվացիան, երբ գործողությունը հաճելի է, օգտակար, խրախուսվում է՝ թեկուզ երբեմն սուբյեկտիվ ձևով:

Ընդունված է սովորությունները դասակարգել ըստ անձի կյանքի վրա թողած ազդեցության: Առանձնացվում են **օգտակար** և **վնասակար** սովորություններ:

**Կարողությունը** գործողության կատարման եղանակն է և այն իրագործելու հնարավորությունը, որը հենվում է անձի գիտելիքների ու հմտությունների վրա:

Կարողությունները լինում են տարրական և ձևավորված ու բարդ, որոնք մարդու գործունեության համապատասխան բնագավառում նրան դարձնում են վարպետ:

Կարողությունները ձեռք են բերվում վարժությունների, մարզումների օգնությամբ, որոնց հետագա կրկնությունները հանգեցնում են հմտությունների ձևավորմանը:

**Հմտությունները** նպատակալաց գործողությունների ավտոմատացումն են, անսխալ ու արագ կատարումն ու կարգավորումը:

Օրինակ, հմուտ վարորդը քաղաքի մարդաշատ փողոցներում մեքենան վարում է առանց վնասելու որևէ մեկին:

Հմտությունները չափազանց օգտակար են ցանկացած գործունեության կատարման համար: Ըստ հմտության կատարման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների՝ առանձնացվում են **շարժողական, զգայական և մտավոր** հմտություններ:

Շատ կարևոր են **շարժողական** հմտությունները, առանց որոնց հնարավոր չէ իրագործել գործունեության ոչ մի տեսակ: Շարժողական հմտությունները մտնում են ուսումնական, աշխատանքային և խաղային գործունեության բոլոր տեսակների կազմի մեջ:

**Զգայական** հմտություններին վերաբերում է մարդու զգայարանների աշխատանքը: Գործունեության բոլոր տեսակների հաջող կատարման համար անհրաժեշտ են տեսողական, լսողական, մաշկային զգայունակության բարձր աստիճաններ:

**Մտավոր** հմտություններ են հաշվելը, գրելը, սովորելը, զանազան գծագրեր «կարդալը» և այլն:

Կան նաև խառը տեսակի՝ **զգայամտավոր** հմտություններ, երբ գործողության կատարման համար անհրաժեշտ է ստեղծել զգայարանների ու մտավոր գործողությունների կապեր:

Գոյություն ունեն նաև **սոցիալական** հմտություններ, որոնք վերաբերում են միջանձնային հարաբերություններին, մարդկանց հետ շփմանն ու հաղորդակցմանը:

Հմտությունների ձևավորումն իրագործվում է բազմիցս կրկնվող վարժությունների շնորհիվ, որը գործողության կատարումն է՝ նրա մեջ մտնող հնարներին տիրապետելու, դրանք հիշողության մեջ ամրապնդելու և ճիշտ ու արագ վերարտադրելու նպատակով: Վարժվելու դեպքում գործողության գիտակցվող շատ տարրեր դառնում են ենթագիտակցական և կատարվում են ավտոմատացված:

Երեխան սկզբում գրել սովորում է մեծ դժվարությամբ, իսկ այնուհետև բազում կրկնությունները հանգեցնում են վարժ գրության և գրելու գործողության կատարման արագության:

Բարդ հմտությունների ձևավորումն իրագործվում է ինդուկցիայի ձևավորման հետ միասին, որը և նպաստում է անձի հոգեկան զարգացմանն ու աճին, նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

### ✓ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3 Հոգեբանության մեջ ընդունված է տարբերակել գործունեության հիմնական տեսակ՝ **խաղ, ուսուցում և աշխատանք:**

**Խաղն** ակտիվության տեսակ է, որն իրագործվում է հանուն հենց այդ ակտիվության ու նրա առաջացրած հաճույքի:

Ծննդյան օրից երեխան օժտված է կենսաբանական, հոգեֆիզիոլոգիական ակտիվությամբ, որն սկսում է աստիճանաբար ձևավորվել որպես գործունեություն: Այս անցումը պայմանավորված է անձի սոցիոգեն պահանջումների առաջացմամբ, որոնց բավարարման համար հենց պետք են գործունեության ձևեր:

Մարդուն անվանում են բանական՝ հոմո սափիենս, սակայն խաղալն այնքան բնորոշ է նրան, որ կարող ենք նույն հաջողությամբ անվանել հոմո լուդենս՝ խաղացող մարդ:

Խաղերը բազմազան են, և նրանցից կարելի է առանձնացնել՝ **ֆունկցիոնալ, սիմվոլիկ, դերային, խաղեր ըստ կանոնների, էլ-մինացիոն, մոլեգին** ու այլ տեսակներ:

**Ֆունկցիոնալ խաղերը** բնորոշ են փոքրիկներին, որոնց հիմնական դրդապատճառը հաճելի հույզեր ունենալու ցանկությունն է, որը դիտվում է մարդու կյանքի ողջ ընթացքում, բայց, որպես խաղային ակտիվության առաջատար տեսակ՝ պահպանվում է մինչև 2 տարեկանը:

**Սիմվոլիկ խաղերը** դրսևորվում են 2-3 տարեկանում, երբ խաղի ընթացքում երեխան բացակայող առարկաները փոխարինում է սիմվոլներով, պայմանականությամբ: Օրինակ, երեխան «հեծնում

է» երկար մի ծող և ասում՝ «Սա իմ ձին է», կամ կաթսայի կափարիչը շուռումուռ է տալիս՝ բերանով մեքենայի ծայն հանելով, երևակայելով, որ այն դեկ է:

Սիմվոլիկ խաղերում արդեն նկատելի են խաղի հաջորդ, ավելի քարձր տեսակի՝ դերային խաղերի որոշ տարրեր:

**Դերային խաղերն** արդեն ձևավորվում են 3-4 տարեկան երեխաների սիմվոլիկ խաղերի եռուն շրջանում:

Օրինակ՝ երեխան արդեն տիկնիկին «քնեցնելիս» ընդօրինակում է մոր գործողությունները, վարքը:

Դերային խաղերը նպաստում են անձի սոցիալականացմանն ու հասունացմանը, սոցիալական հմտությունների ձևավորմանը:

**Խաղերն ըստ կանոնների** դրսևորվում են արդեն 6-7 տարեկանում, երբ երեխան իր ֆունկցիոնալ ու դերային խաղերի մեջ մտցնում է կարգուկանոն:

Օրինակ, երեխաները «տուն-տուն» կամ «կռիվ-կռիվ» են խաղում և սահմանում են որոշակի կարգ՝ ով ինչով պետք է զբաղվի խաղի ընթացքում:

Ըստ կանոնների խաղն աստիճանաբար դառնում է առաջատար, և խաղում առկա կանոններն ավելի են քարդանում, քանի որ այդ տարիքի երեխաների համար կանոններն ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քան խաղի ընթացքն ու վերջնական նպատակը:

Խաղի այս տեսակը շատ մեծ դեր է կատարում երեխայի հոգեկան զարգացման և վարքի սոցիալականացման գործում:

**Էլմինացիոն** խաղերի ընթացքում՝ դրսևորվող վարքն ունի շատ օգտակար հոգեբանական գործառույթ, որը շատ լավ է ուսումնասիրել Ժ. Պիաժեն:

Փոքրիկ աղջիկը տեսնում է սատկած աղավնի և, վերադառնալով տուն, կրծքի վրա պառկում է հատակին և ասում. «Ես մեռած աղավնի եմ»: Խորապես ազդված երեխան այս տեսարանը կրկնում է այնքան, մինչև ազատվում է լարվածությունից և տհաճ հույզերից:

Կամ ծնողները երեխային իրենց հետ հյուր եմ տանում և այնտեղ սաստում են նրան, որ խելոք նստի ու համբերի մինչև տուն

զնալը: Տուն վերադառնալով՝ երեխան արդեն նստեցնում է իր տիկնիկին և սկսում «համոզել», որ մի քիչ էլ համբերի, որով երեխան ազատվում է այն ներքին լարվածությունից, որն առաջ է եկել ենթարկվելու և տհաճ վիճակում երկար մնալու անհրաժեշտությունից:

Էլմինացիոն խաղերը բնորոշ են ոչ միայն երեխաներին, այլև հասուն մարդկանց:

**Սուլեզին (ազարտային)** խաղերն արդեն դրսևորվում են դեռահասության ու պատանեկության շրջանում, երբ խաղի որոշ տեսակներ դառնում են մոլուցք:

Այդ խաղերի հիմնական մոտիվացիան ինքնահաստատումն է, հաղթանակի հասնելու ցանկությունը և հուզական ուժգին վիճակների ապրումը:

Սուլեզին խաղեր են թղթախաղը, զառ խաղալը, լոտոն, խաղատնային խաղերը, որոնցով տարվելու դեպքում անձը չի կարողանում չխաղալ, և որը հաճախ ճակատագրական ու ողբերգական վախճան է ունենում<sup>40</sup>:

**Ուսումնական գործունեություն:** Անձը սոցիալականացման արդյունք է, որը կատարվում է այլ մարդկանց ու մշակութային արժեքների հետ հաղորդակցման ընթացքում և հանգեցվում վարքի ձևերի առաջացման: Բայց կա սոցիալականացման հզոր միջոց, որն առավել վճռական է անձի զարգացման գործում. դա ուսուցումն է: Ուսուցումը հիմնականում սկսվում է դպրոցում, սակայն մինչև դպրոց հաճախելը երեխան արդեն հսկայական քանակությամբ գիտելիքներ է ստանում աշխարհի, մարդկանց և հենց իր մասին: 2. Ֆրոյդը նույնիսկ գտնում է, որ մինչև 5-6 տարեկանը երեխան ավելի շատ գիտելիքներ է ստանում, քան հետագա ողջ կյանքի ընթացքում: Մինչդեռ մինչև ուսումնական գործունեության սկսելը երեխան իր առջև գիտելիքների յուրացման խնդիր չի դնում: Այդպիսի խնդիր չեն դնում նաև մեծերը:

40. Խաղի տեսակները բնութագրված են ըստ Ա.Ա. Նալչաջյանի «Հոգեբանության հիմունքները» գրքի: Երևան, «Հոգեբան», 1997:

Գործունեության այդ տեսակը, որի հիմնական նպատակը գիտելիքների յուրացումն է, կոչվում է **ուսուցում** կամ **ուսումնառություն**:

Ուսումնական գործունեության նպատակը գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացումն է:

Մարդն իր առջև գիտակցորեն նպատակ է դնում ձեռք բերել գիտելիքներ և կառավարում սեփական վարքը, որպեսզի հասնի այդ նպատակին: Ոչ մի կենդանի իր առջև նման նպատակ դնել չի կարող:

Ուսումնական գործունեություն կարելի է իրականացնել նաև ինքնուսուցմամբ, սակայն արդյունավետ ձևն ուսումնական ծրագրերով ուսուցումն է, որում մեծ է ուսուցչի դերը, որը ոչ միայն գիտելիքներ է սովորեցնում, այլև կրթում ու դաստիարակում է աշակերտին՝ ելնելով սոցիալական ու ազգային իդեալներից: Ուսուցման գործընթացն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ու փոխներգործության գործընթաց է, որի խնդիրն անձի համակողմանի ձևավորումն է:

Ուսումնական գործունեության այդ երկակի բնույթը՝ **ուսուցում և դաստիարակություն**, ներառվում է մեկ հասկացության մեջ, որն անվանում ենք **կրթություն**:

Կրթելով սերնդին՝ մենք նրան պատրաստում ենք հասարակության մեջ կատարելու հասուն սոցիալական դերեր: Այդ նպատակին հասնելու համար ծնողներն ու մանկավարժները կատարում են հետևողական ու համառ ուսումնադաստիարակչական աշխատանքներ:

**Աշխատանքը** մարդու ակտիվության այն տեսակն է, որի նպատակը նյութական կամ հոգևոր արժեքների ստեղծումն է, որոնք նախատեսված են մարդկանց պահանջմունքները բավարարելու համար:

Եթե խաղը որոշ իմաստով ինքնանպատակ է, ապա աշխատանքը միշտ միտված է ստեղծելու օգտակար արդյունքներ: Աշխատանքը դառնում է առավել արդյունավետ, եթե այն հաճելի է մարդու համար և նպաստում է նրա ինքնահաստատմանն ու զարգացմանը:

Եթե ասում ենք. «Մարդը բանական կենդանի է» կամ «Մարդը խաղացող կենդանի է», ապա ավելի մեծ համարձակությամբ կարող ենք ասել նաև, որ **մարդն աշխատող կենդանի է**:

Աշխատանքն իր բնույթով հասարակական երևույթ է, և այն, ինչ մարդն ստանում է իր պահանջմունքները բավարարելու համար, ստանում է հասարակությունից իր՝ աշխատանքի դիմաց: Հասարակությունից և աշխատանքային հարաբերություններից դուրս նա չի կարող բավարարել իր պահանջմունքները:

Աշխատանքը կատարվում է գործիքների, սարքերի օգնությամբ և ունի կոլեկտիվ կամ խմբային բնույթ:

Աշխատանքային գործունեությունն ունի ներքին և արտաքին մոտիվացիա, այսինքն՝ մարդն աշխատում է իր ներհոգեկան ուժերի, պահանջմունքների մղումով և արտաքին պահանջների ազդեցության տակ:

Ներքին դրդապատճառ է աշխատանքային էթիկան՝ աշխատելու բարոյական պարտավորությունը, հասարակությանն օգուտ բերելը: Նորմալ մարդը գտնում է, որ ծուլությունն ու անբանությունն անբարոյական է:

Մարդու կատարած աշխատանքը և գրաված դիրքը թափանցում է ինքնագիտակցության մեջ և ձևավորում, թե ով է ինքը, ինչ գործով է զբաղված. «Ես ուսուցիչ եմ», «Ես գյուղատնտես եմ», «Ես շինարար եմ», «Ես գինվոր եմ» և այլն, այսինքն՝ դերային այն բնորոշումը, որը մարդը տալիս է ինքն իրեն:

Աշխատանքի շատ տեսակներ ունեն ինքնադրսևորման, ինքնաիրականացման բնույթ, և եթե մարդու կատարած աշխատանքը բարձր են գնահատում՝ ուժեղանում է նրա արժանապատվության զգացումը:

Աշխատանքի շնորհիվ է, որ մարդը հնարավորություն է ստանում հասարակության մեջ ստանձնելու որոշակի ֆունկցիաներ, ձեռք բերում ընկերներ ու բարեկամներ, մրցակիցներ ու հակառակորդներ:

Քաղմազան են աշխատանքային գործունեության դրդապատճառները, որոնք բավարարում են մարդկային ծագող պահանջմունքները և նպաստում անձի զարգացմանը:

## ԹԵՄԱ 21. ԱՆՁԻ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Անհատ, անձ և անհատականություն
2. Պահանջմունքներ և անձի ակտիվությունը
3. Մոտիվացիա
4. Անձի նպատակները և հավակնությունների մակարդակը
5. Անձի հոգեբանական տեսությունները
6. Անձի զարգացման փուլերը
7. Կենսաբանականը և սոցիալականը անձի հոգեբանական կառուցվածքում

## ԱՆՀԱՏ, ԱՆՁ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Անհատ** հասկացությունը, ինչպես նշել է հոգեբան Բ. Գ. Անանևը, կենսաբանական է և նշանակում է ինքնուրույնաբար՝ գոյություն ունեցող ցանկացած օրգանիզմ: Մարդկային անհատ համարվում է «մարդկային ցեղի» ներկայացուցիչը, որի կառուցվածքի մեջ մտնում են մարմնային, տարիքային, սեռային գծերը, օրգանական պահանջմունքները և հոգեբանական բարդ համակարգերը՝ խառնվածքի ու ընդունակությունների բնածին նախադրյալները: Աշխարհ գալով որպես անհատ՝ մարդը դառնում է անձնավորություն<sup>41</sup>:

Մարդկային անհատի առանձնահատկությունների հիմնական յուրահատկությունն այն է, որ դրանք կանխորոշված են ժառանգականությամբ: Անհատի զարգացումը՝ օնտոգենեզը, նրա ֆիլոգենետիկ (ժառանգական) ծրագրերի իրականացման գործընթաց է:

**Անձը կամ անձնավորությունն այն անհատն է, որն ունի գիտակցություն և ինքնագիտակցություն, որոշակի սոցիալական դեր և դիրք, մտնում է հասարակական փոխհարաբերություն-**

**ների մեջ և ձեռք է բերում իրավունքներ ու պարտականություններ:**

Անձը ձևավորվում է անհատի հիմնական գունարային հատկությունների՝ խառնվածքի և ընդունակությունների նախադրյալների հիման վրա: Անձի ձևավորումը հասարակական փորձի յուրացման և սոցիալականացման երկարատև գործընթաց է, որը նաև սեփական ակտիվության, գործունեության և շրջապատի հետ փոխներգործությունների արդյունք է:

**Անհատականությունն** անձի առանձնահատուկ և անկրկնելի գծերի ամբողջությունն է, այսինքն՝ յուրաքանչյուր մարդ հոգեբանորեն անկրկնելի է, և հաճախ անհրաժեշտ է լինում բացահայտել այս լայն այն անձնավորության անհատականությունը: Օրինակ տալ որևէ ականավոր գիտնականի կամ արվեստագետի հոգեբանական նկարագիրը:

Անձի անհատականությունը կազմված է նրա բնավորության, խառնվածքի, իմացական գործընթացների, ընդունակությունների, առաջատար դրդապատճառների ու զգացմունքների անկրկնելի գույզորդություններից, և յուրաքանչյուր մարդու մեջ այդ գույզորդություններն անկրկնելի են:

Անձի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեն հասարակության մեջ նրա կատարած **դերն** ու ունեցած **դիրքը**:

## ՊԱՀԱՆՋՍՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՆՁԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչն է մարդուն մղում ակտիվության: Հոգեբանների մեծ մասը եկել է այն եզրակացության, որ անձի ակտիվության աղբյուրը պահանջմունքներն են: Պահանջմունքներն անձի կախվածությունն է գոյության կոնկրետ պայմաններից: Պրանք ինչ-որ բանի կարիքն է, որ զգում է մարդը, ինչպես նաև կենդանին: Ապրելու համար մարդը պետք է բավարարի սնվելու, խմելու, շարժվելու, սեռական, ինչպես նաև իր նմանների հետ շփվելու, հաղորդակցվելու և այլ պահանջմունքներ:

41. Апаньев Б.Г. Избранные психологические труды. т.1. М., "Педагогика", 1980.

Պահանջները ակտիվացած վիճակը դառնում է գործունեության դրդապատճառ:

Մարդկային պահանջները շատ են և կարող են դասակարգվել երկու սկզբունքով.

1. ըստ ծագման,
2. ըստ առարկայի:

**Ըստ ծագման՝** պահանջները բաժանվում են երկու տեսակի՝ բնական և մշակութային:

**Բնական** են այն պահանջները, որոնք մարդուն տրված են ի ծննդից: Անունդ և ջուր ընդունելու, սեռական, քնելու, ցրտից ու շոգից պաշտպանվելու և կենսաբանական այլ պահանջներ, անշուշտ, բնածին են:

Բնական պահանջները բավարարումն անհրաժեշտ է օրգանիզմի նորմալ կենսագործունեության պահպանման համար:

**Մշակութային** են այն պահանջները, որոնց առաջացումն ու բավարարումը պայմանավորված են մարդկային մշակույթի, քաղաքակրթության զարգացմամբ: Այդ պահանջներն ունեն սոցիալ-պատմական բնույթ, տարբեր մակարդակներ և սոցիալ-բարոյական տարբեր գնահատականներ:

Քանի որ մշակութային արժեքները տարբեր են և կարող են լինել ինչպես նյութական (կենցաղային առարկաներ, մեքենաներ, գործիքներ), այնպես էլ հոգևոր (արվեստի, գրականության, գիտության, սովորությունների ու բարքերի, գիտելիքների ու հմտությունների և այլն), հասկանալի է, որ անձն իր զարգացման ընթացքում հաղորդակցվելով այդ արժեքներին՝ ձեռք է բերում մշակութային բազում պահանջներ:

Եթե անձն իր սոցիալականացման ընթացքում ձեռք չի բերում բարձր մշակութային պահանջներ, ապա նրա զարգացումը մնում է ցածր աստիճանի: Անձի զարգացումը տուժում է նաև, երբ ձևավորվում են մշակութային բարձր պահանջներ, սակայն անհնարին է դառնում դրանց բավարարումը:

**Ըստ առարկայի՝** պահանջները նորից բաժանվում են երկու տեսակի՝ նյութական և հոգևոր:

**Նյութական** պահանջները բավարարվում են նյութական արժեքների ծգնությամբ, որոնք կամ պատրաստի վիճակում կան բնության մեջ, կամ ստեղծվում են մարդկային գործունեության շնորհիվ:

Օրինակ՝ բնակարանի, հագուստի, կահույքի, աշխատանքային գործիքների ու տարբեր առարկաների պահանջները:

**Հոգևոր** պահանջները բավարարվում են հոգևոր մշակույթի արժեքների օգնությամբ: Օրինակ՝ արվեստի, երաժշտության, ճարտարապետության հետ հաղորդակցումը հոգևոր բնույթ ունի: Այդպիսի պահանջներ է նաև այլ մարդկանց հետ շփումը, խոսքային հաղորդակցումը, աշխատանք կատարելու ներքին դիրքորոշումը և այլն:

## ՄՈՏԻՎԱՑԻԱ

**Մոտիվացիան** գործունեության առաջացման գործընթացն է, որն իրագործվում է դրդապատճառների առկայությամբ:

**Դրդապատճառներն** ակտիվանալով՝ մարդուն մղում են որոշակի նպատակի ընտրության, պլանի մշակման և իրագործման: Մոտիվացիան հոգեվիճակ է, որն անձին ստիպում է օբյեկտների ու գործողությունների ընտրություն կատարել, քանի որ յուրաքանչյուր դրդապատճառ իր հիմքում ունի անձի որևէ պահանջներ և համապատասխանում է տվյալ իրադրությանը: Ուրեմն, դրդապատճառն անձի պահանջներին մտահուզական դրսևորումն է տվյալ իրադրության մեջ, և այդ դրդապատճառների համատեղ աշխատանքը հենց անձի մոտիվացիան է:

Անձը կարող է ունենալ հակասական, կոնֆլիկտային ու տարամիտվող դրդապատճառներ: Օրինակ՝ ուսանողն ուզում է պատրաստվել քննության, որը բավականին ուժեղ դրդապատճառ է, սակայն նա մեծ ցանկություն ունի նաև հանդիպել ընկերներին ու հաճելի ժամանակ անցկացնել: Այս դեպքում գործ ունենք տարամիտվող դրդապատճառների հետ, որոնք կարող են հանգեցվել անձի ներքին կոնֆլիկտի:



Ընդունված է տարբերակել **գիտակցված** և **չգիտակցված** դրդապատճառներ: Գիտակցված դրդապատճառները, հանդիսանալով պահանջմունքների դրսևորումներ, ընդունում են **հետաքրքրությունների, համոզմունքների և ձգտումների ձև:**

Հետաքրքրություններն անձի իմացական պահանջմունքների հուզական դրսևորումներն են: Հետաքրքրվել ինչ-որ բանով՝ նշանակում է հատուկ և հուզականորեն հագեցած վերաբերմունք հանդես բերել դրա նկատմամբ:

Իր աշխատանքային գործունեության նկատմամբ հետաքրքրություն դրսևորող մարդը կարողանում է բավարարել ինքնահաստատման, ներքին հնարավորությունների բացահայտման, ընդունակությունների զարգացման, նոր կապերի մեջ մտնելու, ընտանիքի նյութական կարիքները բավարարելու և այլ պահանջմունքներ: Իսկ երբ նյութական հետաքրքրությունը դուրս է գալիս պատշաճության սահմաններից՝ դառնում է նյութապաշտություն:

Հետաքրքրությունները կարող են դասակարգվել ըստ բովանդակության, նպատակի, լայնության ու կայունության:

**Ըստ բովանդակության հետաքրքրությունների** իմաստը անձի իմացական պահանջմունքների հասարակական արժեքն է, նրա բովանդակությունը:

Ինչ խոսք, ըստ բովանդակության անհամեմատելի է հարևանի անձնական կյանքի և որևէ խոշոր գիտնականի ուսմունքի նկատմամբ դրսևորվող հետաքրքրությունը:

**Ըստ նպատակի հետաքրքրությունները** լինում են անմիջական և միջնորդված: Անմիջականն առաջ է գալիս օբյեկտի հուզական գրավչությամբ, միջնորդված հետաքրքրությունն իմացական պահանջմունք է, որի դրսևորումը միջնորդված է գործունեության նպատակի գիտակցմամբ:

**Ըստ լայնության հետաքրքրությունները** կարող են կենտրոնացված լինել որևէ մեկ, իսկ մյուսների մոտ՝ մի քանի բնագավառների վրա:

**Ըստ կայունության հետաքրքրություններն** արտահայտում են նրա ինտենսիվության պահպանման տևողությունը: Կայուն հե-

տաքրքրություններն արթնացող ընդունակությունների վկայություններից մեկն են:

Գիտակցված դրդապատճառներ են **համոզմունքները, երազանքներն ու ձգտումները:**

**Համոզմունքներն** անձի իմացական, սոցիալական ու սոցիոգեն պահանջմունքների կոնկրետ ու հուզական դրսևորումներն են հիմնված նրա գիտելիքների, հայացքների, սկզբունքների այնպիսի համակարգի վրա, որը նա ճշմարիտ է համարում: Դրանք անձի գիտակցված պահանջմունքների համակարգերն են, որոնք ստիպում են անձին վարվել համաձայն իր հայացքների, համոզմունքների ու աշխարհայացքի:

Համոզմունքների բարձրագույն տեսակն է **աշխարհայացքը՝** բնության, հասարակության, մարդու մասին ունեցած հայացքների համակարգը, որը խմբային մշակվածության դեպքում կարող է դառնալ **գաղափարախոսություն:**

**Երազանքը** նպատակադրված գործընթաց է, որի շնորհիվ մարդը երևակայության մեջ կարծես հասնում է նպատակին: Մարդը կարող է երազել անձնական հաջողություններ, հայրենիքի հաղթանակ, մերձավորների հաջողություն, հասարակության բարվոք վիճակ և այլն:

Երբ մարդու երազանքներն ստանում են գործուն բնույթ՝ վերածվում են ձգտումների, որոնք նպատակի, պատկերի ու գործողությունների ծրագրի միասնությունն են: Ձգտումներն ունեն գիտակցվածության ամբողջ բարձր մակարդակ, քան երազանքները:

**Ձգտումներն** ակտիվության այնպիսի դրդապատճառներ են, որոնցում արտահայտվում են այն պահանջմունքները, որոնք տվյալ իրադրության մեջ ներկայացված չեն, բայց կարող են ստեղծվել հատուկ կազմակերպված գործունեության միջոցով:

Չգիտակցված դրդապատճառները մարդուն ակտիվացնող ներհոգեկան այն կազմավորումներն են, որոնք նրան մղում են գործունեության, սակայն մնում են այս կամ այն չափով անհայտ: Նման պայմաններում մարդը չի գիտակցում իր վարքի իրական դրդապատճառները:

Բնական, կենսաբանական պահանջումներին շատերն անգիտակցական են, որոնք գիտակցվում են միայն շատ ուժեղանալու դեպքում:

Օրինակ մենք չենք գիտակցում, որ ունենք շնչելու, թթվածնի պահանջումը, մինչև որ շնչելը չի դառնում դժվարին:

Մարդուն գործել ստիպող չգիտակցված մղումներից լավ է ուսումնասիրված դիրքորոշումը (установка), որն իմացական պահանջումները բավարարելու պատրաստականությունն է, անձի չգիտակցվող վիճակը:

Դիրքորոշումների առկայությունը և դրսևորման օրինաչափություններն ուսումնասիրել է վրաց հոգեբան Գ. Ուզնաձեն, որը նկատագրում է շատ հետաքրքիր մի գիտափորձ:

Փորձարկվողին առաջարկվում է փակ աչքերով 10-15 անգամ շոշափել և համեմատել 2 անհավասար գնդեր, և գիտափորձի ամենավճռական պահին (գաղտնի) գնդերը դարձվում են հավասար, սակայն փորձարկվողի մոտ շարունակվում է անհավասարության պատրանքը<sup>42</sup>:

Դեպի գործունեություն մղող ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված դրդիչները կազմում են մարդու վարքի մոտիվացիան, որը և պահանջումներին դրսևորումներն են:

### ԱՆՁԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Նպատակն այն առարկան է, երևույթը, որն անձը ձգտում է ձեռք բերել իր պահանջումները բավարարելու համար, սակայն նպատակներն ըստ ձեռքբերման դժվարության և արժեքավորության տարբեր են: Այս տարբերություններից ելնելով էլ ասում են, որ մարդն ունի հավակնությունների մակարդակ՝ արդյունքների այն

42. Узнатзе Д.Н., "Психологические исследования", М., "Наука", 1966г.

մակարդակը, որին ցանկանում է հասնել անձը տվյալ խնդիրը լուծելիս, այն, ինչ նա ցանկանում է իրականացնել:

Հավակնությունների մակարդակը որոշվում է նրանով, թե նշանակալից օբյեկտներից անձը ինչպիսի՞ դժվար, թե՞ հեշտ նպատակներ է ընտրում:

Գործունեությունը հաջողված է համարվում, երբ ստացված իրական արդյունքը համապատասխանում է հավակնությունների մակարդակին կամ ավելի բարձր է և անհաջող, եթե արդյունքը ցածր է:

Հաջողության դեպքում անձի հավակնությունների մակարդակը բարձրանում է, իսկ ձախողվելիս՝ հակառակը՝ իջնում: Մարդը որքան ավելի դժվար նպատակ է դնում, այնքան ավելի բարձր է նրա հավակնությունների մակարդակը:

Հավակնությունների մակարդակների ուսումնասիրությունները քույլ են տալիս մարդկանց բաժանել երեք խմբի.

- ա) բարձր հավակնություններ ունեցողներ, որոնց միտումը բարձր արդյունքների ձգտելն է,
- բ) միջին հավակնություններ ունեցողներ,
- գ) ցածր հավակնություններ ունեցողներ, ովքեր հիմնականում խուսափում են անհաջողություններից:


### ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգեբանության պատմության մեջ անձի ակտիվության շարժիչ ուժերի, նրա հոգեբանական կառուցվածքի, օնտոգենեզի ընթացքում նրա փոփոխությունների մեխանիզմների ու օրինաչափությունների ուսումնասիրությանը զբաղվել են բազում հոգեբաններ՝ Զ. ֆրոյդը, Կ. Յունգը, Գ. Ալֆրեդ Ադլերը, Դ. Հորնին, Է. Ֆրոմը և ուրիշներ:

**2. Ֆրոյդ:** Անձի ակտիվության մասին գաղափարն անցյալ դարակզբում առավելապես կապվեց ավստրիացի հոգեբույժ և հոգեբան Զ. Ֆրոյդի ուսմունքի հետ, ըստ որի՝ մարդու ակտիվությունն արդյունք է ժառանգական բնազդային մղումների:

Ձ. Ֆրոյդի տեսության դրույթները նոր չէին: Դրանց հանդիպում ենք գերմանացի հայտնի փիլիսոփա Ֆ. Նիցշեի ուսումնասիրություններում: Այնուամենայնիվ, անձի հոգեբանության բնագավառում Ֆրոյդը կատարել է հսկայական ներդրում: Նա զարգացրել է մի տեսություն, որը ստացավ հոգեվերլուծություն (փսիխոանալիզ) անունը, և Ֆրոյդիզմի ձևավորումը հոգեբանության բնագավառում համարվեց հեղափոխություն:

Ըստ Ֆրոյդի՝ անձի ակտիվության շարժիչ ուժերը երկուսն են. սեռական կամ կյանքի բնազդ (էրոս) և մահվան բնազդ (թանատոս), և անձը նա համարում է համակարգ, որը կազմված է երեք ենթահամակարգերից՝ Այն (Իդ), Ես (Էգո) և Գեր-Ես (Սուպեր-Էգո), որոնք գտնվում են դինամիկ փոխներգործության մեջ (Նկ. 1):



Նկ.1. Անձի կառուցվածքը՝ ըստ Ֆրոյդի

Ամենապարզը Այն-Ն է, որը բնածին է, և որից «դուրս են գալիս» մյուս երկու կառույցները:

Իդ-ը հոգեկան եռանդի (լիբիդո) աղբյուրն է, որն անգիտակցական բնազդների ձևով ակտիվացնում է անհատին:

Բոլոր բնազդները Ձ. Ֆրոյդը բաժանում է երկու խմբի.

- 1) կյանքի բնազդներ (քաղց, ծարավ, հատկապես՝ սեռական),
- 2) ավերիչ կամ ագրեսիվ (դեստրուկտիվ) բնազդներ, որոնք դրսևորվում են ագրեսիվ գործողությունների ձևով: Ֆրոյդն առաջին խումբն անվանեց **լիբիդո**, իսկ երկրորդը՝ **դեստրուկտո**:

Այն-ի մեջ մտնող բնազդներն անմիջական են, «կույր» և անհետաձգելի բավարարում են պահանջում, որից և մարդու մեջ բավարարության ու հաճույքի զգացումներ են առաջանում: Ահա ինչու Ֆրոյդը գտնում է, որ մարդու վարքը ենթարկվում է **հաճույքի սկզբունքին**:

Բնազդային պահանջմունքները բավարարելիս՝ մարդը չի կարող հաշվի չառնել շրջապատի պայմանները, որը Այն-ը չունի: Եվ անձի զարգացման ընթացքում առաջանում է Ես-ը, որի խնդիրն է հաշվի առնել շրջապատի իրադրությունը և նպաստել անձի պահանջմունքների բավարարմանը:

Ես-ը ղեկավարվում է իրականության սկզբունքով և սկսում է ձևավորել օբյեկտիվ իրականությանը համապատասխան վարք, որովհետև Ես-ը հիմնականում գիտակցական կազմավորում է և իրագործում է գիտակցական վերահսկողություն բնազդների դրսևորումների վրա:

Ես-ի մեջ մտնում են անձի իմացական պրոցեսները, որոնց օգնությամբ անձն արտացոլում է աշխարհը, շրջապատող իրականությունը: Սակայն անձը գործում է հասարակության մեջ, որտեղ կան վարքի տարբեր նորմեր ու կանոններ, որոնք նա յուրացնում է իր զարգացման ընթացքում, և իր մեջ աստիճանաբար ձևավորվում է հոգեբանական երրորդ համակարգը՝ Գեր-Ես-ը:

Գեր-Ես-ը խիստ վերահսկողություն է սահմանում մարդու սեռական և ագրեսիվ բնազդների վրա և կարգավորում է բնազդների դրսևորումները կամ պարզապես արգելակում դրանք, քանի որ դրանց ազատ դրսևորումները գրեթե միշտ հասարակության հա-

մար համարվել են անընդունելի:

Հետևաբար, Գեր-ես-ը դառնում է անձի ներքին վերահսկողության միջոց՝ փոխարինելով արտաքին սոցիալական վերահսկողությանը:

Գեր-ես-ը անձի խիղճն է, և եթե այն ձևավորման բարձր աստիճանի է, ապա անձի ինքնակարգավորումը կատարվում է սպոնտան (ինքնաբերաբար) առանց նույնիսկ գիտակցության մասնակցության:

Ձ. Ֆրոյդը գտնում է, որ եթե բնագոյային հակումները բավարարում չեն ստանում, ապա եռանդը՝ լիբիդոն, փոփոխություններ է կրում և հաճախ տեղափոխվում այլ առարկաների վրա, որոնք, սակայն, վերջին հաշվով հանգում են Այն-ի մեջ մտնող բնագոյային հակումներին: Այս տեսակետը հանգեց հոգեբանական մի նոր՝ ֆրոյստրացիայի և պաշտպանական մեխանիզմների մասին տեսության<sup>43</sup>:

Ավելին Ձ. Ֆրոյդը ցույց տվեց, որ Այն-ը, Ես-ը և Գեր-ես-ը կազմող հոգեկան գործընթացների միջև հաճախ ծագում են կոնֆլիկտներ, որոնք հանգեցնում են խռովահույզ վիճակների և, բնականաբար, պաշտպանական մեխանիզմների առաջացման:

**Ձ. Յունգը** շվեյցարացի ականավոր հոգեբույժ-հոգեբան էր, Ձ. Ֆրոյդի հետևորդը: Նա շատ շուտ ընթրոնեց, որ իր ուսուցիչը չափազանցնում է սեռական կյանքի լիբիդոյի նշանակությունը: Ֆրոյդյան Այն-ի, Ես-ի և Գեր-ես-ի փոխարեն Յունգը ներկայացրեց «անձի ֆունկցիաները»՝ կյանքի իրադարձությունները տեսնելու և դատողություններ անելու ձևերը: Այդ ձևերն, ըստ նրա, կոչվում են զգայական, ինտուիտիվ:

Երևույթների մասին դատողություններ կատարելիս մարդիկ օգտագործում են ինչպես տրամաբանական մտածողությունը, այնպես էլ զգացմունքները:

4. Գ. Յունգը տարբերակեց ինտրովերտներ և էքստրովերտներ և

43. Ֆրոյդ Ձ., «Հոգեվերլուծության ներածություն», Երևան, «Զանգակ 97», 2002թ.

ի տարբերություն Ձ. Ֆրոյդի, կարևորեց մարդու մտավոր, բարձրագույն հոգեկան ընդունակությունները:

**Ալֆրեդ Ադլերը** ևս Ձ. Ֆրոյդի հետևորդներից էր, որը, սակայն, ավելի մեծ նշանակություն էր տալիս անձի ձևավորման գործում սոցիալական ազդեցություններին: Ըստ Ադլերի՝ մարդու վարքի մոտիվացիայի հիմնական աղբյուրն ուրիշների նկատմամբ առավելության, գերազանցության ու կատարելության հասնելու ծգտումն է, որն ընկած է կյանքի բոլոր խնդիրների լուծման հիմքում:

Նա ներկայացրեց նաև փոխհատուցման, թերաթեքության բարդույթի, յուրահատուկ ուղղվածության և անձի զարգացումը բացատրող տեսակետներ, և նեոֆրոյդիզմի ներկայացուցիչ լինելով, նահանջեց ֆրոյդիզմի ուսմունքից գտնելով, որ անձի ակտիվության համար առաջատարը սեռական հակումները չեն, այլ՝ անձի կախվածությունը միջավայրից:

**Դ. Կ. Յորնին** հոգեվերլուծական դպրոցի ներկայացուցիչ է, որը փորձել է անձի ակտիվության հիմնական աղբյուրը համարել «հիմնային տագնապ»: Ըստ նրա՝ անձին հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է ծագել այն տագնապը, որն ավելի կարևոր է, քան ազդեսիան և սեռական հակումը:

Երեխան կարող է ամեն անգամ նման տագնապ ապրել անապահով վիճակում հայտնվելիս, և եթե այդ տագնապն ուժեղ ու տևական է ստանում է ներոտիկ պահանջմունքի բնույթ:

Ներոտիկ պահանջմունքն սյն է, երբ անձն ունի անհագուրդ, չափազանց ուժեղ և ոչ իրատեսական ծգտումներ: Նման ծգտումներ են անկախ և ինքնաբավ լինելու, հիացմունք առաջ բերելու, անձնական նվաճումների, իշխանության հասնելու և այլ միտումներ:

Օրինակ՝ որևէ մեկը ծգտում է իշխանության և բավականին ագրեսիվ է, սակայն զարմանալիորեն ունի սիրված և հարգված լինելու պահանջմունք, որոնք անհամեմատելի են:

Կ. Յորնին գտնում է, որ տագնապը, ներոտիկ պահանջմունքներն ու դրանցից ծագած կոնֆլիկտները չունեն կենսաբանական ծագում, դրանք սոցիալական են, ձևավորվում են երեխայի զարգացման ընթացքում:

**Էրիխ Ֆրոմը** նույնպես նեոֆրոյդիստ է և իր տեսությամբ հիմնավորում է անձի զարգացման մեջ սոցիալական միջավայրի ու մշակույթի դերը, առավել ևս՝ ընտանիքի ու հասարակության:

Ըստ Ֆրոմի՝ յուրաքանչյուր հասարակարգ ձգտում է ձևավորել համապատասխան տիպի մարդ: Եւ գտնում է, որ բուրժուական հասարակությունը հիվանդ է և չի կարող նոր ու առողջ հասարակություն կառուցել, կառուցելու դեպքում էլ՝ հիվանդ մարդիկ կկառուցեն նոր՝ էլ ավելի հիվանդ հասարակություն:

**Կարլ Ռոջերսն** անձի մարդասիրական (հումանիստական) տեսության ներկայացուցիչ է, որը, ինչպես Զ. Ֆրոյդը, անձի մասին իր պատկերացումներն ստեղծելիս ելնում է կլինիկական հոգեբուժական փաստերից: Ռոջերսի կարծիքով՝ յուրաքանչյուր անձ ունի սեփական հնարավորություններն իրագործելու ցանկություն, և կյանքի իդեալական պայմաններում յուրաքանչյուրը կլինի վստահող, անկաշկանդ, ճկուն, հոգեպես հարուստ և այլ մարդկանց հետ ներդաշնակ հարաբերությունների մեջ:

## ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Մարդու օնտոգենետիկ զարգացումն ունի հետևյալ փուլերը.

**1. Մինչծննդյան փուլ**, որն ընդգրկում է սաղմի բեղմնավորման պահից մինչև ծնվելը:

**2. Նորածնության փուլ** (մանկիկային տարիք), որը հաշվում են ծննդյան պահից մինչև 18 ամսականը. այս ընթացքում երեխան քայլում է և արտասանում որոշ բառեր, շրջապատի հետ մտնում սոցիալական կապերի մեջ:

**3. Վաղ մանկություն**, 18 ամսականից մինչև վեց տարեկանը, որի ընթացքում երեխան ազատ խոսում է, գիտակցում իր սեռը,

մասնակցում խմբային խաղերի և փուլի ավարտին պատրաստ է դպրոցական դառնալուն:

**4. Կրտսեր դպրոցական տարիք**, որն, ըստ ժամանակակից հոգեբանների, ընդգրկում է 6-13 տարեկանը. այս ընթացքում անձի իմացական զարգացումը հասնում է բարձր մակարդակի:

**5. Դեռահասության ու պատանեկության տարիք**. այն սկսվում է 13 տարեկանից մինչև 20 տարեկանը, որի ընթացքում անձը հասնում է իմացական զարգացման ավելի բարձր աստիճանի, դառնում հարաբերականորեն անկախ և կարող է մտնել սեռական հարաբերությունների մեջ:

**6. Հասունություն, 20-45 տարեկանը**, որի ընթացքում անձը զբաղվում է մասնագիտական գործունեությամբ և ստեղծում ընտանիք:

**7. Միջին տարիք, 45-65 տարեկանը**, երբ անձն աշխատանքային գործունեության (կարիերայի) ոլորտում հասնում է բարձրագույն աստիճանի և փուլի վերջում անցնում թոշակի:

**8. Ծերություն՝ 65 տարեկանից մինչև մահ:**

Առողջ հոգեկան ունենալու դեպքում անձը կարող է դեռևս շարունակել աշխատանքային ակտիվ գործունեությունը կամ վայելել ընտանիքի, հանգստի հաճույքը:

## ԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԸ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Անձնային ամեն մի գիծ և վարքի յուրաքանչյուր ձև ժառանգականության և միջավայրի գործոնների փոխներգործության արդյունք են: Ժառանգականությունը տալիս է հոգեկան որևէ հատկության սահմաններ, իսկ միջավայրն իր հերթին պայմաններ է ստեղծում ժառանգական գործոնների դրսևորման ճանապարհին:

Կենսաբանական նախադրյալներով է պայմանավորված որևէ անձնային հատկության զարգացման վերին սահմանը, իսկ սոցիալական միջավայրը, ուսուցումն ու դաստիարակությունը թույլ են տալիս մոտենալ այդ սահմանին:

Ժառանգականությամբ է, ասենք, կանխորոշված հասակի առավելագույն բարձրությունը, որին կարող է հասնել մարդը, բայց թե իրականում ինչպիսին կլինի նրա հասակը՝ պայմանավորված է միջավայրի գործոններով, հատկապես՝ սննդով:

Ժառանգականության և սոցիալական միջավայրի նշանակության վերաբերյալ կատարվել են մեծաթիվ հետազոտություններ, և պատահական չէ, որ գիտության մեջ դեռևս շատ վաղուց անձի զարգացման վերաբերյալ գոյություն ունեն երկու իրարամերժ տեսություններ.

**1. Բիոգենետիկական** կամ կենսաբանական, ըստ որի՝ անձի զարգացման համար վճռական են համարվում ժառանգական նախադրյալները:

**2. Սոցիոգենետիկական**, ըստ որի՝ կարևորվում է սոցիալական միջավայրը և ժխտվում՝ ժառանգականությունը:

Այս երկու տեսություններն էլ առանձին-առանձին համարվում են ծայրահեղ և իրար հակասող, սակայն ժամանակակից գիտությունը գտնում է, որ անձի զարգացման համար կարևոր են և՛ կենսաբանական նախադրյալները, և՛ այն միջավայրը, որում ծնավորվում,

ուսուցում ու դաստիարակություն է ստանում մարդը:

Հետաքրքիր տվյալներ են ստացվել միաձու և երկձու երկվորյակների ուսումնասիրության արդյունքում: Պարզվում է, որ ժառանգվում է մարդու խառնվածքը, որը միաձու (հոմոզիգոտ) երկվորյակների համար նույնն է նույնիսկ այն դեպքում, երբ նրանք մեծանում են սոցիալական տարբեր միջավայրերում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նույնիսկ միևնույն ընտանիքում մեծացած հոմոզիգոտ երկվորյակներն ունենում են անձնային լուրջ տարբերություններ:

## ԹԵՄԱ 21. ՄԻՋԱՆԶՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սոցիալական խմբերի տեսակները
2. Ներխմբային հարաբերությունների ուսումնասիրություն
3. Խմբի լիդերը

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդու գոյությունը հասարակությունից դուրս հնարավոր չէ, և նա չի կարող ծևավորվել որպես անձնավորություն:

Սոցիալական տարբեր իրադրություններում մարդն իրեն տարբեր կերպ է պահում և դեռ ավելին՝ նույն իրադրության մեջ տարբեր մարդիկ գործում են երբեմն խիստ տարբեր:

Սոցիալական հոգեբանությունն ուսումնասիրում է անձ-հասարակություն փոխհարաբերությունների առանձնահատկությունները, սոցիալական գործոնների ազդեցության տակ անձի հոգեկան տեղաշարժերի դրսևորումները:

Մարդիկ ապրում են խմբերով և, իրենց պահանջմունքները բավարարելու համար, գտնվում են մշտական փոխներգործությունների մեջ:

Խումբը մարդկանց այն հանրույթն է, որի անդամները միավորվում են ընդհանուր առանձնահատկությունների և դրդապատճառների հիման վրա և կատարում համատեղ գործողություններ, և որոնց վարքը կարգավորվում է խմբային նորմերով, աշխարհընկալմամբ ու դրդապատճառներով:

Հասարակությունը կազմված է բազում խմբերից, որոնցում անձը կատարում է որոշակի դեր: Խումբը մարդկանց մեխանիկական գումար չէ, այլ նոր որակ, իսկ հասարակությունն էլ առավել նոր որակ է, քան խումբը:

Սոցիալ-հոգեբանական հետազոտություններում ներկայացվում են խմբերի հետևյալ տեսակները:

**1. Փոքր խմբեր**, որոնց անդամների թիվը չի գերազանցում հիսունը: Երկու, երեք հոգին ևս կազմում են խումբ՝ երկյակ, եռյակ: Երեք հոգուց կազմված խմբում արդեն իսկ առաջանում են բարդ փոխհարաբերություններ:

**2. Մեծ խմբեր**, որոնք ունենում են հիսունից մինչև հազարավոր և միլիոնավոր անդամներ: Այդպիսի խմբեր են աշխատանքային կոլեկտիվները, սոցիալական շերտերը, նույնիսկ ազգերը: Ողջ մարդկությունը ևս մեծ խումբ է:

#### 3. Իրական և պայմանական խմբեր

**Իրական** է այն սոցիալական խումբը, որի անդամները հավաքվում են մեկ վայրում և անմիջական փոխհարաբերությունների մեջ մտնում:

Օրինակ՝ իրական խումբ է ընտանիքը, գործարանի կամ արտադրամասի աշխատանքային խումբը և այլն:

**Պայմանական** են կոչվում այն խմբերը, որոնց բոլոր անդամները չեն կարող հավաքվել մեկ վայրում և մտնել անմիջական փոխհարաբերությունների մեջ:

Օրինակ՝ երիտասարդությունը, այս կամ այն դասակարգը, գործարար մարդիկ, աշխարհի բժիշկները, կամ նման այլ խմբեր:

#### 4. Առաջնային և երկրորդային խմբեր

Այս տիպի խմբերի անդամների միջև հարաբերություններն անմիջական են, հուզականորեն հազեցած և առաջնային:

Մարդու համար ամենաառաջնային և կարևորագույն խումբն ընտանիքն է, որը կատարում է հսկայական դերակատարություն անձի սոցիալականացման և ծևավորման համար:

**Երկրորդային խմբերը** պետական, պաշտոնական կազմակերպություններն են, որտեղ մարդկանց միջև ստեղծված հարաբերությունները նոր ու պաշտոնական են, սակայն այս խմբերում ևս իրագործվում և ծևավորվում են անձի սոցիալական դերերի յուրացման և պաշտոնական պարտականությունների կատարման գործընթացներ:

## 5. Ձևական և ոչ ձևական խմբեր

Ձևական խմբերն ունեն պաշտոնականացված կառուցվածք: Օրինակ՝ սոցիալական այս կամ այն կազմակերպությունը, որում մարդկային հարաբերություններն անձնական չեն և իրականացվում են ըստ նախապես որոշված դերերի, իրավունքների ու պարտականությունների:

Ոչ ձևական խմբերում՝ ընդհակառակը՝ մարդկանց հարաբերություններն անձնական են, հուզական, երբեմն մտերիմ կամ թշնամական, և խմբի կառուցվածքն առաջանում է փոխհարաբերությունների ընթացքում:

**6. Փակ և բաց խմբեր:** Սոցիալական որոշ խմբեր **փակ** են. այդ նշանակում է, որ նրանց մեջ այլևս ոչ ոք չի կարող մտնել:

Փակ խումբ է ընտանիքն իր զարգացման որոշակի փուլում, որոշ ընկերական խմբեր, աղանդներ կամ ակումբներ:

**Բաց** են այն խմբերը, որոնց մեջ կարող է մտնել յուրաքանչյուրը, եթե բավարում է խմբի պահանջները:

Նման խմբեր են հասարակական կազմակերպությունները:

**7. Ռեֆերենտային խմբեր:** Այս խմբերը ևս մեծ դեր են կատարում անձի սոցիալականացման գործում, և մարդու վարքի առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է պարզել նրա ռեֆերենտային խմբի բնույթը:

Ռեֆերենտային խումբը մարդու կյանքում կատարում է երկու գործառույթ (ֆունկցիա).

ա) համեմատական, բ) նորմատիվային:

Առաջինի դեպքում մարդն իր վարքը համեմատում է ռեֆերենտային խմբի նորմերի ու վարքի ընդունված ձևերի հետ, որոնք նրա համար **չափանմուշներ** (էտալոններ) են, իսկ ռեֆերենտային խմբի օգնությամբ նորմատիվ զննհատման են ենթարկում իրենց վարքը:

Օրինակ՝ որևէ կարևոր խնդրի վերաբերյալ վճիռ կայացնելիս՝ մարդը մտքում այն քննարկում է և փորձում կռահել, թե ինչպես այն կընդունեն իր ռեֆերենտային խմբի անդամները:

## ՆԵՐՈՒՄԲԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի իրական խմբում անխուսափելիորեն և օրինաչափորեն ծագում են օբյեկտիվ հարաբերություններ, որոնց արտացոլումը հենց հանդիսանում են միջանձնային հարաբերությունները, և որոնց ուսումնասիրման հիմնական ուղին տվյալ խմբի մարդկանց արարքների ու գործողությունների հետազոտումն է:

Դժվար չէ ուսումնասիրել որևէ խմբի պաշտոնական կառուցվածքը և նրա անդամների պաշտոնական դիրքերն ու դերերը: Սակայն ներխմբային հարաբերությունների խոր, նուրբ ու հուզականորեն հագեցած մակարդակի մասին տվյալներն ստանալուն օգնում է **սոցիոմետրական** ուսումնասիրության մեթոդը:

«Սոցիոմետրիա» հասկացությունն ունի երկու իմաստ: Նախ՝ նշանակում է այն մեթոդը, որն ստեղծել է Ջոն Մորենոն, որը բառացի կոչվում է մարդկային հարաբերությունների չափում, և երկրորդ՝ «սոցիոմետրիա» են անվանում այն գիտությունը, որը, օգտագործելով Մորենոյի մեթոդը, կուտակում և վերլուծում է մեծաքանակ տվյալներ<sup>44</sup>:

Օրինակ՝ խմբի անդամներին խնդրվում է պատասխանել հետևյալ հարցերին. «Ո՞ւմ հետ կցանկանայիր պատրաստվել քննություններին», «...տուրիստական արշավի գնալ», «Ո՞ւմ կիրավիրելիք ձեր ծննդյան տոնին»:

**Դրական ընտրությունը** խմբի անդամի արտահայտած ցանկությունն է՝ շփման մեջ մտնելու մեկ ուրիշի հետ: **Բացասական** ընտրությունը (մերժումը) մեկ այլ անդամի հետ շփվելուց խուսափումն է:

Ընտրություն կատարելու համար պետք է ունենալ չափանիշներ, որոնք լինում են.

44. Морено Дж., "Социометрия", М., 1968г.



ա) գնոստիկական (ինացական), երբ խմբի անդամին տրվում է այնպիսի հարց, որին պատասխանելով՝ նա բացահայտում է իր հուզական վերաբերմունքը խմբի մյուս անդամների նկատմամբ:

Գնոստիկական չափանիշ է՝ «Ո՞ւմ հետ կցանկանայիր պատրաստվել քննություններին»:

բ) պրոգնոստիկ կամ սոցիալական ընկալման չափանիշ, որը բացահայտում է խմբի այլ անդամների դիրքորոշումների մասին հարցվողի պատկերացումները:

Օրինակ, «Ձեր խմբից ո՞վ Ձեզ կիրավիրի իր ծննդյան տարեդարձին»:

Գնոստիկական և պրոգնոստիկ չափանիշները դրական սոցիոմետրական չափանիշներ են:

Այս հետազոտությունները մատչելի ու արդյունավետ են, երբ կատարվում են փոքր խմբերում:

Սոցիոմետրական հարցման ընթացքն ունի հետևյալ փուլերը.

ա) նախապատրաստական փուլ, երբ հետազոտողը որոշում է, թե ինչ խնդիր է լուծելու նշված հետազոտության միջոցով,

բ) առաջին փուլ, որի ընթացքում հետազոտողն անմիջական հաղորդակցման մեջ է մտնում խմբի հետ, ստեղծում հոգեբանական պատրաստականության վիճակ և ձևակերպում սոցիոմետրական չափանիշներ,

գ) երկրորդ փուլ, որի ընթացքում ուսումնասիրվողներին տրվում են հրահանգներ, բաժանվում հարցաթերթեր և, լրացվելուց հետո, հավաքվում դրանք:

դ) արդյունքների մշակման փուլ, որի տվյալները ներկայացվում են աղյուսակների, գրաֆիկների ձևով,

ե) ավարտական փուլ, որի ընթացքում կատարվում են համապատասխան սոցիալ-հոգեբանական եզրակացություններ, կազմվում սոցիոմատրիցաներ և սոցիոգրամներ:

Եթե ուշադիր ուսումնասիրենք աղ. 1, 2-ը (էջ 245, 246), կտեսնենք, որ ամենից շատ դրական ընտրություն ստացել է խմբի «Ա» անդամը, գերադասելի են «Բ»-ն և «Գ»-ն, միջին, ոչ փայլուն ընտ-

րություն ունեն «Դ»-ն, «Ե»-ն, «Է»-ն և «Ը»-ն, մեկուսացված է «Ի»-ն և մերժված են «Թ»-ն և «Ժ»-ն:

Նա, ով սոցիոմետրական տեսակետից աստղ է (օրինակ՝ «Ա»-ն), որոշ իմաստով լիդեր է, առաջնորդ, որին անվանում են խարիզմատիկ՝ Աստծո տված, բնական օժտվածությամբ, առաջնորդ, որոնք հաճախ կարող են պաշտոնական լիդեր լինել: Մինչդեռ շատ հաճախ խմբում պաշտոնական և ոչ պաշտոնական լիդերները կարող են լինել տարբեր անձնավորություններ:

| Տարգնի համարները | Տարբույթ  | Շնորհքություններ |   |   |   |
|------------------|---|------------------|---|---|---|
|                  |   | 1                | 2 | 3 | 4 |
| 1.               | Երբ դուք որոշեք երկուսը կազմակերպել՝ Ձեր ծննդյան տարեդարձը նշելու համար, սույն համադասարանիցիներից ու՞մ կիրավիրես:  |                  |   |   |   |
| ա.               | Ու՞մ չէիր կիրավիրել:  |                  |   |   |   |
| 2.               | Եթե դուք որևէ անձնական կարևոր գաղտնիք ունեիր և այն ցանկանում եիր հայտնել որևէ մտերիմ մարդու, ապա ձեր համադասարանիցիներից ու՞մ կհայտնեիր:                            |                  |   |   |   |
| ա.               | Ու՞մ չէիր հայտնել:  |                  |   |   |   |
| 3.               | Ձեր դասարանի աշակերտներից ու՞մ հետ կցանկանայիր ուսումնական տարվա ընթացքում ետևել երկու նույն նստարանին:   |                  |   |   |   |
| ա.               | Ու՞մ հետ չէիր ցանկանում նստել նույն նստարանին:  |                  |   |   |   |
| 4.               | Եթե Ձեր դասարանի աշակերտներին իրավունք տրվի համադասարանիցիներից մեկին ընտրել որպես ավագ, սույն դուք ու՞մ կընտրեիր:  |                  |   |   |   |
| ա.               | Ու՞մ չէիր ընտրել:   |                  |   |   |   |
| 5.               | Եթե Ձեր դասարանի աշակերտներին իրավունք տրվի իրենց միջից որևէ մեկին ընտրել ավագ, սույն Ձեզ ո՞վ կընտրեիր:   |                  |   |   |   |
| ա.               | Ի՞նչ եր կարծում, Ձեզ ո՞վ չի ընտրել որպես ավագ:  |                  |   |   |   |
| 6.               | Եթե Ձեր դասարանի աշակերտներից յուրաքանչյուրին իրավունք տրվի համադասարանիցիներից որևէ մեկին ընտրել ընտրությունների մասին պատրաստվելու համար, ապա դուք ու՞մ կընտրեիր: |                  |   |   |   |
| ա.               | Ձեզ ո՞վ կընտրեիր:   |                  |   |   |   |

Աղ. 1.

| Ի՛նչ է ցնորում<br>Ի՛նչ | Ո՛ւմ է ցնորում<br>Ի՛նչ |   |   |   |   |   |   |   |   |   |   | տրված<br>ընտրություններ |   | ընդամենը |
|------------------------|------------------------|---|---|---|---|---|---|---|---|---|---|-------------------------|---|----------|
|                        | Ա                      | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ճ | Ի |                         |   |          |
| Ա                      | 0                      | + | + | + | 0 | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3                       | 1 | 4        |
| Բ                      | +                      | 0 | + | 0 | 0 | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2                       | 1 | 3        |
| Գ                      | +                      | + | 0 | 0 | 0 | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2                       | 1 | 3        |
| Դ                      | +                      | 0 | 0 | 0 | + | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2                       | 1 | 3        |
| Ե                      | 0                      | 0 | 0 | + | 0 | - | 0 | + | 0 | 0 | 0 | 3                       | 0 | 2        |
| Զ                      | +                      | + | + | + | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2                       | 0 | 3        |
| Է                      | +                      | + | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3                       | 1 | 4        |
| Ը                      | +                      | 0 | 0 | 0 | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | 0 | 2                       | 0 | 2        |
| Թ                      | 0                      | 0 | 0 | 0 | + | 0 | 0 | 0 | - | - | 0 | 1                       | 2 | 3        |
| Ճ                      | 0                      | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0                       | 0 | 0        |
| Ի                      | 0                      | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0                       | 0 | 0        |
| ընտրություններ         | 6                      | 4 | 3 | 2 | 2 | 0 | 1 | 2 | 0 | 0 | 0 | 20                      | 7 |          |
| ընդամենը               | 6                      | 4 | 3 | 2 | 2 | 5 | 0 | 0 | 1 | 1 | 0 |                         |   | 27       |

Աղ.2.

### ԽՄԲԻ ԼԻՂԵՐԸ

Սոցիալական որևէ խմբի ստեղծումով սկսվում են գործընթացներ, որոնք հանգեցնում են լիդերի, ղեկավար անձի առաջադրման: Այս այն դեպքում, երբ խումբն ստեղծվում է ինքնաբերաբար, երբ հանգամանքների բերումով մարդիկ հայտնվում են միևնույն իրադրության մեջ (զնացքի վազոնում, տուրիստական արշավի զնալիս, հանրակացարանի նույն սենյակում, բանտախցում և այլն): Իսկ երբ խումբն ստեղծվում է պաշտոնապես՝ անմիջապես նշանակվում է լիդեր, ղեկավար, առանց որի հնարավոր չէ խմբի արդյունավետ կառավարում:

**Լիդերը** որոշ թվով մարդկանց վրա իշխանություն ունեցող անձն է, որն ունի հմտություն ղեկավարելու այն գործունեությունը, ինչը պետք է կատարի խումբը: Լիդերը պետք է օժտված լինի վճիռներ կայացնելու և դրանք իրագործելու ընդունակությամբ և ունենա անձնային այնպիսի հատկություններ, որոնք անհրաժեշտ են մարդկանց կառավարելու համար: Անձնային այդպիսի հատկություններ են մարդկանց վրա ազդելու և նրանց հոգեկան ու ֆիզիկական ու-

ժերը խմբի նպատակներին ծառայեցնելու ընդունակությունները: Ընտանիքում, ուսանողական խմբում, աշխատանքային կոլեկտիվում կամ ռազմական գործունեության մեջ մարդիկ միշտ ներգործում են միմյանց վրա և ուրիշի վարքը փոխելու կամ կարգավորելու համար կիրառում իշխանություն<sup>45</sup>:

Սոցիալական հոգեբանության մեջ բնութագրվում են իշխանության հետևյալ տեսակները՝ **խրախույսի, ռեֆերենտային, օրինական, փորձագիտական և տեղեկատվական**:

**1. Խրախույսի** կամ պարզևատրման իշխանություն կիրառում են այն լիդերները, որոնք որոշակի միջոցների դիմաց պահանջում են ցանկալի վարք: Այս դեպքում խրախույսը փոխանակվում է ակնկալվող վարքի հետ, որն ակամայից հիշեցնում է երեխային տրվող կոնֆետի բովանդակություն: Կան նաև խրախույսի հոգեբանական միջոցներ (զովասանք, փառաբանում, դրական զգացմունքներ), որոնք պակաս արդյունավետ չեն:

**2. Ստիպողական** իշխանություն ունենալու դեպքում օգտագործվում է «մտրակը» և ոչ «քաղցրավենիքը» (աշխատավարձի, պաշտոնի բարձրացում), որի արդյունքում ենթակաները հարաբերվում են պատժից վախենալու հանգամանքով: Պատժի հոգեբանությունը բավականին նուրբ է, և այն լիդերը, ով այդ չի հասկանում, շատ հաճախ ծախողվում է:

**3. Ռեֆերենտային** իշխանություն ունեն այն լիդերները, որոնք ենթակաները ղեկավարներին մանավելու ցանկություն ունեն և որոնք բավականին գրավիչ են: Այսպիսի իշխանության ենթարկվող անձի մեջ դրական հոգեբանական նույնացում է առաջանում իշխանություն կրողի հետ:

**4. Օրինական** իշխանություն ունեն այն ղեկավարները, որոնք խմբում զբաղեցնում են որոշակի դիրք (ստատուս) և իրավունք ունեն ուրիշներին հրահանգներ տալ, իսկ մյուսները պարտավոր են ենթարկվել: Օրինական (լեգիտիմ) իշխանավորի պահանջները

45. Նալչանյան Ա.Ա., «Հոգեբանության հիմունքներ», Երևան, «Հոգեբան», 1997թ.

պարտավոր են կատարել ենթակաները, սակայն այդ պահանջները սահմաններ ունեն:

Օրինակ՝ հիմնարկի ղեկավարն իրավունք ունի իր ենթակայությանը աշխատող կնոջից պահանջել, որ նա ժամանակին և ճիշտ կատարի պարտականությունները, սակայն իրավունք չունի իր նկատմամբ քննուշ վերաբերմունք դրսևորելու պահանջ ներկայացնել:

**5. Փորձագիտական** իշխանությունը մասնագետի, փորձագետի ազդեցիկ լինելն է շատերի վրա: Հայտնի մասնագետները, հեղինակությունները, գիտնականները, գրողները, ակամավոր մարդիկ ոչ մի պաշտոն չունենալու դեպքում էլ կարող են իշխանություն և ազդեցություն ունենալ մարդկանց վրա:

**6. Տեղեկատվական** իշխանությունը փաստերի ու դատողությունների օգնությամբ ուրիշների վրա ազդելու ընդունակությունն է: Սա նման է փորձագիտական իշխանությանը, սակայն առաջին դեպքում ենթակա անձն ընդունում է մասնագետի հանձնարարականները, բայց դրանք կարող է լիովին չհասկանալ, մինչդեռ տեղեկատվական իշխանությունն ազդում է այն դեպքում, երբ ենթարկվողը հասկանում է ներգործության իմաստը:

Օրինակ՝ բժիշկը հիվանդին որևէ դեղ է նշանակում, որը հիվանդն օգտագործում է առանց հասկանալու ներգործության և բուժման մեխանիզմները: Այս դեպքում բժիշկն ունի փորձագիտական իշխանություն: Իսկ եթե հիվանդն այնքան զարգացած է, որ հասկանում է, թե ինչու հատկապես այդ դեղն է իրեն տրվել, ապա բժշկի հանձնարարականներն արդեն ձեռք են բերում տեղեկատվական իշխանության բնույթ:

Ժամանակակից հոգեբանական ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել ղեկավար մարդկանց երեք տիպ.

**1. Ավտորիտարիզմը՝** որպես բնավորության գիծ, ունի բնորոշ առանձնահատկություններ: Ավտորիտար անձը ձգտում է ճնշել սեփական ներքին կոնֆլիկտները և անցանկալի մղումները, քանի որ վախենում է ձեռք բերել բացասական ես-կոնցեպցիա: Նման մարդիկ սեփական թուլությունները պրոյեկտում, վերագրում են ուրիշ-

ներին և սկսում չափազանցված մեղադրանքներ ուղղել նրանց: Նրանք կարծես ունեն ներքուստ պարտադրված ձգտում դեպի իշխանություն, սակայն ներհայեցողություն չունեն, նեղմիտ են, և ենթակաների նկատմամբ նրանց դիրքորոշումը շահագործական է:

Նման ղեկավարները ծայրահեղ կոմֆորմիստներ են, հարմարվողական, ինչը վկայում է անձի ինքնություն «կորիզի» բացակայության մասին: Նրանք ուժեղ են համարում իշխանություն ունեցողներին, նրանցով էլ ձգտում են դրան: Նրանց վարքը և մտածողությունը կոշտ է, ռիզիկո ու անգիջում, սակայն նրանք ձգտում են ունենալ պատշաճ շարժուձև, բարձր դիրք, երազում լինել հաջողակ:

**2. Դեմոկրատական** բնավորություն, որն ավտորիտարի հակառակ տիպն է, որի հարմարվողական վարքն ավելի ճկուն է, ընկալում է իր անընդունելի հակումները, ազդեցիկությունը, ծուլությունը: Սա նշանակում է, որ դեմոկրատ անձի հոգեկան շեղերի միջև անցումներն ավելի ազատ ու ճկուն են, և արտամղման մեխանիզմը չի չարաշահում, ինչպես ավտորիտար բնավորությամբ ղեկավարը: Դա նպաստում է հոգեկան առողջությանն ու հասունությանը, ինչպես նաև՝ ստեղծագործական ակտիվությանը:

Դեմոկրատ անձը հաճախ հսկայական ժամանակ է ծախսում անպտուղ ներհայեցողության վրա՝ ինքն իրեն մեղադրելով անհաջողությունների համար: Նրանք հեշտությամբ են հուզական կապերի մեջ մտնում այլ անձանց հետ, անկեղծ են ու անմիջական: Նրանց համար մարդկային հիմնական արժեքները սերն ու բարեկամությունն են:

Աշխատանքային գործունեության ոլորտում շեշտը դնում են ոչ այնքան նպատակի, որքան բուն գործունեությունից հաճույք ստանալու վրա:

**3. Լիբերալիզմն** անձնավորության այնպիսի գիծ է, որի դեպքում անձը խուսափում է պատասխանատվությունից, միանձնյա վճիռներ կայացնելուց, ինչը ղեկավարի համար՝ այնքան էլ ցանկալի չէ:

Լիբերալ մարդիկ շատախոս են, չունեն լիդերին անհրաժեշտ այնպիսի կարևոր գծեր, ինչպիսիք են վճռականությունը, դժվարություններ հաղթահարելու ընդունակությունը: Նրանք չեն պահպա-

նում ենթակաների հետ փոխհարաբերվելու նորմերը, կարծում են բոլորի հետ կարելի է լինել ընկերական՝ չհասկանալով, որ ղեկավար-ենթակա փոխհարաբերություններում ամենից կարևորը ենթակայի և իր միջև հոգեբանական ճիշտ ընտրված տարածությունն ստեղծելն ու պահպանելն է:

Լիբերալ ղեկավարները չեն կարողանում իրագործել իրենց իրավունքներն ու պարտականությունները և հաճախ խճճվում ու ծախողվում են, չնայած նրանցից ոմանք, ղեկավար դառնալով, ձեռք են բերում փառասիրություն ու շահամոլություն:

Ղեկավար ընտրելիս՝ ցանկալի է կողմնորոշվել դեպի դեմոկրատներն ու ավտորիտարները, չնայած նկարագրված երեք տիպերը գրեթե երբեք «մաքուր» ձևով նույն անձի մեջ տրված չեն, այլ գոյություն ունեն խառը տիպեր:

1. Արզումանյան Ս., Մկրտչյան Մ., Սարգսյան Վ., «Կիրառական հոգեբանության պրակտիկում», Եր., 2002 թ.
2. Լեոնտև Ա. Ն., «Հոգեկանի զարգացման պրոբլեմները», Ե., 1968թ.
3. Կովալյով Ա. Գ., «Հոգեբանություն», Եր., 1978 թ.
4. Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, «Ընտիր երկեր», 3 հատորով, հ. 1., Եր., 1972թ.
5. Մխիթարյան Ա. Մ., Թովմասյան Ա. Վ., «Հոգեբանություն», Ստեփ., 1996թ.
6. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանության հիմունքները», «Հոգեբան» հրատ., Եր., 1997թ.
7. Նալչաջյան Ա. Ա., «Հոգեբանական բառարան», Եր., 1984թ.
8. Նալչաջյան Ա. Ա., «Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա», Եր., 1985թ.
9. Նալչաջյան Ա. Ա., «Մահվան հոգեբանություն», Եր., «Փյունիկ», 1992թ.
10. Նալչաջյան Ա. Ա., «Ինտուիցիան գիտական ստեղծագործության պրոցեսում», Ե., 1976թ.
11. Սեչենով Ի.Ս., «Գլխուղեղի ռեֆլեքսները», Եր., 1965թ.
12. Պետրովսկի Ա. Վ., «Ընդհանուր հոգեբանություն», Ե., «Լույս», 1986թ.
13. Սիմոնյան Շ. Ս., Լալայան Ա. Ա., «Հոգեբանության մի քանի հարցեր», Ե., 1980թ.
14. Վուլդրիջ Դ., «Ուղեղի մեխանիզմները», Ե., «Հայաստան», 1971թ.
15. Ֆրոյդ Զ., «Հոգեվերլուծության ներածություն», Ե., 2002 թ.
16. Ананьев Б. Г., "Избранные психологические труды в двух томах", М., "Педагогика", 1980г.
17. Ананьев Б. Г., "Теория ощущений", М., Изд-во МГУ, 1961г.

18. Ананьев Б. Г., "Психология чувственного познания", М., Изд-во АПН РСФСР, 1960г.
19. Айзенк Г., "Проверьте свои способности", М., 1970г.
20. Богословский В. В., "Общая психология", М., "Просвещение", 1981г.
21. Брушлинский А.В., "Мышление и прогнозирование", М., 1979г.
22. Выгодский Л. С., "Мышление и речь", М., 1956г.
23. Гамезо М. Д., Домашенко И. А., "Атлас по психологии", М., 1986г.
24. Грегори Р., "Разумный глаз", М., "Мир", 1972г.
25. Зейгарник Б.В., "Хрестоматия по общей психологии", М., 1979г.
26. Леонтьев А. Н., "Деятельность. Сознание. Личность", М., 1975г.
27. Леонтьев А. Н., "Психология общения". Тарту, 1974г.
28. Лурия А. Р., "Эволюционное введение в психологию", Изд-во МГУ, 1975г.
29. Лурия А. Р., "Маленькая книжка о большой памяти", М., Изд., МГУ, 1968г.
30. Лурия А. Р., "Речь и мышление", МГУ, 1975г.
31. Мерлин В. С., "Вопросы теории темперамента", Пермь, 1974г.
32. Павлов И.П., "Полн. собр. соч.", т.1, М., 1951г.
33. Петровский А. В., "Хрестоматия по психологии", "Просвещение", М., 1977г.
34. Петровский А. В., "Записки психолога", М., УРАО, 2001г.
35. Пиаже Ж., "Роль действия в формировании мышления", М., 1965г.
36. Платонов К. К., "Занимательная психология", М., 1964г.
37. Практикум по общей, экспериментальной и прикладной психологии. Под ред. А. А. Крылова, СПб, Питер, 2000г.
38. Рубинштейн С. Л., "Основы общей психологии", М., 1946г.

39. Титов В. А., "Общая психология (конспект лекций)", М., 2003г.
40. Тихомиров О.К., "Психология мышления", М., 1984г.
41. Узнадзе Д.Н., "Психологические исследования", М., "Наука", 1966г.
42. Ухтомский А.А., "Доминанта", М., 1966 г.
43. Фресс П., Пааже Ж., "Экспериментальная психология", М., 1970г.
44. Хрестоматия по психологии, М., 1977г.
45. Хрестоматия по ощущению и восприятию, М., Изд-во МГУ, 1960г.
46. Шамхалова С. Ш., "Учебное пособие", Изд-во РИОР, М., 2005г.
47. Шамхалова С. Ш., "Экзамен по общей психологии", М., 2005г.
48. Рубинштейн С. Л., "Основы общей психологии", Изд-во "Питер", Санкт-Петербург, 2000г.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հեղինակի կողմից ..... 3

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ**

1. Հոգեբանության առարկան, նպատակները  
և խնդիրները ..... 5  
2. Հոգեբանության սկզբունքներն ու մեթոդները ..... 13  
3. Հոգեկանը որպես արտացոլում ..... 18  
4. Հոգեկան երևույթների դասակարգումը ..... 21  
5. Հոգեկան զարգացման ընթացքը ..... 23  
6. Մարդու գիտակցության զարգացումը ..... 27  
7. Մարդու հոգեկան ակտիվության մակարդակները ..... 38

**ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԽՈՍՔ ԵՎ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ**

1. Ուշադրություն ..... 45  
2. Ջգայություններ ..... 60  
3. Ընկալում ..... 70  
4. Հիշողություն ..... 84  
5. Լեզու և խոսք ..... 106  
6. Մտածողություն ..... 112  
7. Երևակայություն ..... 122

**ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ**

**ԱՆՁԻ ՀՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐ**

1. Զգացմունքներ ..... 133  
2. Կամք ..... 154

**ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ**

**ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Խառնվածք ..... 163  
2. Բնավորություն ..... 185  
3. Ընդունակություններ ..... 202

**ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Գործունեության հոգեբանություն ..... 213  
2. Անձի հոգեբանությունը ..... 224  
3. Միջանձնային հարաբերությունների  
հոգեբանություն ..... 240  
Օգտագործված գրականության ..... 251

# ԱՐՁԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

|            |               |
|------------|---------------|
| Սրբագրիչ՝  | Ն. Գրիգորյան  |
| Էջադրումը՝ | Լ. Գրիգորյանի |
| Շարվածքը՝  | Ի. Թևոսյանի   |
|            | Գ. Թովմասյանի |
| Նկարիչ՝    | Ս. Ղալայանց   |

Հանձնված է շարվածքի՝ 09.06.10 թ.: Ստորագրված է տպագրության  
30.11.10 թ.: Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84/16:  
Ծավալը՝ 16 տպ. մամուլ+ 8 էջ ներդիր: Տպաքանակը՝ 300:

Ստեփանակերտ  
Տպագրվել է «Ղիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
2010